2192
2576
2576
2757
281.6
Գ-89

ՄԵԾԻՖ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐՋԱՆՑ

ՍՐԲՈՅ ՎԱՐԱՊԵՏԻ

ԿԱՆՈՆ ՀՈՎԱՆԻՍԿԱՆ

282
Գ-89

257б

ՄԵԾՕՓԻ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԼՄԶՆՈՅ

ՍՐԲՈՅ ՔԱՀԱՆԱՅՊԵՏԻ

ԿԱՆՈՆ ՀՈՎՎՈՒԱԿԱՆ

ԱՅՍՈՒԳԱՍ Է 1861

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԼԱՏԻՆ ԲՆԱԳԻՐ

Հ. ՄԿՐՏՈՒՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՒԳԵՐԵԱՆ

ԱԹՈՌԱԿԱԼ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏՍ.

ԿԱՇԱՌՈՐԴ ՀՈՎՎՄԷԱԿԱՆ ԱՂԵՄԵՐԱՆԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1846 — ԹՎՈՒՆ

185

ՄԵԾԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԵԶՆՈՑ

ՍԻՐՈՅ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

ԿԱՆՈՆ ՀՈՎՎՈՒԱԿԱՆ

Ի ԽՆԴՐՈՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀՈՒԱՒԵՆՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ԱՄԵՆԱՅՈՒՐԲ ԵՂԲՕՐ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՅՑ
ԳՐԻԳՈՐԻՈՍ

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
Թիվ ... ՀՍԴ. 1984 Դասակարգ. 1909 Գրքի
Основ. Инв. Каталог. пер.
БИБЛИОТЕКА
Դրամ. Գնված ... 19 ...

Որպէս այն թէ՝ի ծանրութենէ հովուական հոգոց խոյս տալով թաքչել կամեցեալ լիցէ իմ, բարեսէր և ցածուն մտաւ ստգտանեա զիս, սիրեցեալ եղբայր։ Մայր զի մի թեթև ինչ կարծեսցին այս հոգք ինամոց յաչս ոմանց, ոչով առաջիկայ գրոցս յայտնաբանեմ զերացս ծանրութենէն զամենայն զոր ասա դատիմ։ որպէս զի որ ազատն է յայտցանէ՝ մի յանդգոյշ ցանկացող լինիցի, և որ անխորհրդաբար ձեռնամուխ եղև՝ երկիցէ յոյժ զի ստանձնեաց։

Դաժանի գիրս՝ի քառեակ խնդիրս մտանց, որպէս զի իբրու քայլափոխիւք ինն յառաջ խաղացէ՝ի սիրտ վերծանողին օրինաց։ Դանզի որպէս պէտք իրացն պահանջին, պարտ է քաջ խորհել՝ թէ զնարդ եկաւորեսցէ զք՝ի պաշտօն առաջնորդութեան. և յետ հասանելոյ՝ի նոյն ըստ կարգի զնարդ քաղաքավարեսցի. և յետ բարւոքն կելոյ զնարդ ուսուցանիցէ. և յուսուցանելանդ ուղղութեամբ՝ զնարդ ձանաչիցէ զանձին անբա-

ւակամութիւն օր ըստ օրէ, և որպիսի խորհրդածութեամբ։ Օ ի մի խոնարհութիւն իւր փախնուցու մատչել, կամ՝ թէ վարքն հակառակ ելանիցեն կոչմանն, կամ վարդապետութիւնն աղարտեսցէ զվարսն, և կամ յանդգնութիւն բարձրացուսցէ զվարդապետութիւնն։

Զ՝ սան որոյ նախ երկիւղն ցածուսցէ զյօժարութիւն. յետ այնորիկ կեանքն գովելի ընծայեսցեն զվարդապետութիւնն յոր ընտրեցաւ ոք առանց՝ի խնդիր լինելոյ։ Եւ ապա կարևոր է, զի լաւութիւն հոլուին որ վարուքն հանդիսանայ՝ բանիւ բերանոյ և ծաւալեսցի։ Եւ յետ ամենայնի զի և զամենայն գործ կատարեալ ճանչեսցէ՝ի ցածութիւն խոկումն անձին տկարութեան, զի մի փքացումն բարձրամտութեան՝ի դերև հանցէ զգործն առաջի աչաց ծածկագէտ դատաւորին։

Զ՝ԱՌ քանզի բազում են ինձ հանմանանք անիմաստութեամբ, որոց անգիտացեալ զանձանց զչափ՝ իցէ լինին ուսուցանել զոր չէ իւրեանց ուսեալ. այք զծանր բեռն վարդապետութեան այնչափ թեթևագոյն ինչ համարին, որչափ անտեղեակ են կշռոյ մեծութեանն նորին, այսպիսիքս յանդիմանեսցին՝ի մուտս անդ մատենիս. զի որովհետև տգիտաբար և գահավիժ բերմամբ ցանկան ելանել՝ի վերնաբերդն վարդապետութեան, ՝ի գահավիժութեան իւրեանց յանգգնութենէ՝ի նախադրունս անդ ճառիս մերոյ՝ի բաց մերժեսցին։

ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ ՀԻՄՆ. 1894 ՆՈՐՈՒՐՋ. 1909 Тифл.
Основ. 1894 Новр. пер. 1909
БИБЛІОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кавк.

ՄԵԱՏՆ ԵՌԵՎՈՂԻՆ

Ա. Ոչ է համարձակելի երբէք ուսուցանել զարուեստս ինչ զոր չիցէ ուրուք կանխաւ ուսեալ ուշիմ մտօք։ Այլա որպիսի ձեռներիցութեամբ իշխեն անուսմունք զբանամ ածել զհովուականն առաջնորդութիւն, ուր արուեստս արուեստից է ղեկավարութիւն հոգւոց։ Այս ո՞ոչ գիտիցէ, թէ վերբ մտաց գաղտնածածուկք են քան զվերս աղեաց։ Այս սակայն բաղում՝ այն է, զի որ ոչն գիտացին երբէք զկանոնս հոգևորականս՝ չզանգիտեն դաւանել զանձինս իւրեանց բժիշկս սրտի. ուր անգէտքն հմտութեան դեղորեից՝ ամաչեն երևել որպէս բժիշկս մարմնոյ։

Մայր քանզի տեսչութեամբն Աստուծոյ արդ ամենայն բարձրութիւն աշխարհի՝ ի պատիւ կրօնի խոնարհի, են ոմանք որ՝ ի մէջ սրբոյ եկեղեցւոյ ընդ ձեռամ առաջնորդութեան՝ի խնդիր են պատուոյ փառաց. ցանկան վարդապետս երևել, բաղձան գերազանցել զայլսկք, և ըստ բանին Աշխարտութեան՝ նախագոյնս խրնդրեն՝ի հրապարակս, գահազլուխս յընթրիս, և գնախաթոռս՝ի ժողովուրդս. որ զհովուականն ընկալեալ պաշտօն հոգաբարձութեան՝ այնչափ անկարանան ըստ արժանւոյն վարել, որչափ զի՝ի լուկ փառասիրութենէ հասին՝ի վարժապետութիւն խոնարհութեան։ Բանզի զի՝ի վարժապետութեան անդ չիտեի լեզուն, երբ այլ ինչ իցէ ուսանել և այլ ինչ ուսուցանել։ Օ՜որոց զայս օրինակ բռղոք արկանէ տէր ասելով. "Թագաւորեցին և ոչ ինձ. իշխան կացին, և ես ոչ գիտացի"։ Իբր զի անձամբ յանձանց թագաւորեն, և ոչ ըստ կամաց գերագոյն ուղղչին, որ միանգամ առանց ամրանալոյ աւաքինութեամբք՝ չեղեն բնաւ առ Աստուծոյ կոչեցեալք, այլ իւրեանց ցանկութեամբքն վառեալք՝ յափշտակեն մանաւանդ քան եթէ ժամանն լինին՝ի գլուխ առաջնորդութեան։

Լ.ՍԼ զայդպիսիս նեբբին դատաւորն միանգամայն յատաջ ձգէ, և անպիտանայ. վասն զի որոց համբերէ թոյլ տալով, անշուշտ անպիտանայ դատաստանաւ դատապարտութեան։ Ասատի և եկելոց ոմանց առ ինքն զկնի սքանչելագործութեանց անգամ՝ ասէ. «Ի բաց կացէք յինէն, մշակքդ անիրաւութեան. ոչ գիտեմ զձեզ ուստի էք.»։ Հովուացն անհանձարութիւն կրշտամբի բարբառով ճշմարտութեան՝ յասել անդ զնոցանէ, «Ո՞չ ճանաչէն զհանձար.»։ Լս դարձեալ զզուէ զնոսա տէր ասելով. «Ա՛ լերակացուք օրինաց իմոց ոչ ծանեան զիս.»։ Ուրեմն և բոզոքէ ճշմարտութիւնն՝ թէ ինքն անծանօթ է առաջի նոցա, և վկայութիւն զնէ, թէ ինքն ոչ գիտէ զերշանութիւն չգիտողաց զինքն։ Ա՛ սան զի իրաւամբք այնպիսիքն՝ ոչք զաստուծոյն անգիտանան, անգիտելի են 'ի տեառնէ. որպէս և Պօղոս վկայէ. «Ա՛յսպա թէ ոք ոգիտանայցէ, ոգիտասցի.»։

Լ.յն զի անհանձարութիւնս այս հովուաց յոլովակի 'ի ճահ պատահէ անպիտանութեան գործոց առաջնորդելոցն. զի թէպէտ և առ յանցանաց իւրեանց անմեղն են 'ի լուսոյ գիտութեան, այլ անաչառ դատաստանաւ դէպ լինի՝ զի առ ոգիտութեան նոցա և սոքա հետևողք նոցին գթեն։ Այրին աղագաւ և յաւետարանի ինքնասաց բան ճշմարտութեանն այսպէս ունի. «Լ՛թէ կոյր կուրի առաջնորդէ, երկոքին 'ի խորխորատ անկանին.»։ Ասատի և սաղմոսերգուն ոչ յօժարութեամբ սրտին, այլ արբանեկութեամբ մարգարէական ոգւոյ պատգամաւորի ասել. «Լսատարեսցին աչք նոցա՝ զի մի տեսցեն, և զթիկունս նոցա հանապազ կորացո.»։ Լ՛որ զի աչք են նոքա՝ ոչք 'ի բարձրապատիւ դէմն կառուցեալք ընկալան զարշտոն դէտ լինելոց ճանապարհի, և թիկունք նոցա կոչին՝ ոչք յարին և զհետ երթան նոցին։ Ասատի 'ի մթագնել աչաց կորանան և թիկունք. վասն զի յորժամ՝ յատաջընթացք կորուսանեն զլոյս գիտութեան, անշուշտ հետևողք նոցուն կորանան 'ի բառնալ զլեռինս մեղաց։

Բ. Լ՛ն և այլք որ մեծաւ խնամով հետաքրքրեն զպատուէրս հովուոր կանանաց. այլ յորս ընդմանանեն մնոք՝ կոխոտեն վարուք. անդէն և անդ ուսուցանել սկսանին զոր ոչ գործով ուսան, այլ խորհրդով. և զոր բանիւք

քարոզեն՝ վարուք հակառակեալ եղծանեն. ուստի 'ի գնալ հովուին ընդ առասպարս և ընդ ափափայս՝ Հօտն զՀետ երթայ 'ի խարդանումն ընդ քարավէժս։ Սո-րին վասն 'ի ձեռն մարգարէին բողոքէ տէր ընդդէմ պարտաւելի գիտութեան հովուաց, ասելով. "Օ ջուրսն յատակ ընկէք, և զմնացեալն առ ոտն պղտորէք. և խաշինք իմ՝ զկոխան ոտից ձերոց ճարակէին, և զջուրսն պղտորեալ 'ի կճղակաց ձերոց ըմպէին„. Իբր զի ջուր յատակաբուղխ ընկեն հովիւք՝ յորժամ զհոսանս ճըշ-մարտութեան ուղիղ խնայուածով յինքեանս ձգեն. այլ գնոյն զայն ջուր ոտիւք պղտորեն է զսուրբ խնամ-տին զիայեն չարաչար վարուք ապականել. քանզի զառ 'ի կճղակաց նոցա պղտորեալ ջուրս ընկեն խաշինք՝ յոր-ժամ հպատակքն ոչ զՀետ երթան բանից զորս լսեն, այլ միայն զվատթարութեան զՀետ երթան օրինակաց զորս տեսանեն։ Այլ քանզի ուր պասքեալ ծարաւին բա-նից՝ 'ի ձեռն գործոց խոտորին, Իբրու յասպականեալ աղբերաց յրմպել անդ տիրմ յինքեանս ձգեն։ Վասն որոյ գրեալ է 'ի ձեռն մարգարէին, թէ քահանայքդ չարք "Ոչոգայեն եղերուք գիտանոցին„։ Այլ դարձեալ ասէ տէր մարգարէին յաղագս քահանայից. "Այդեն որոգայթ գայթագղութեան յամենայն ճանապարհս. մոլորութիւն 'ի տան Այստուծոյ մնկեցին„։ Օ՛ի ոչ-ոք առաւել փնտռակար գտանի յեկեղեցւոջ Իբրև զայն որ չարաչար վարէ կեանս՝ անուն կամ կարգ ունելով սրբութեան։

Այանզի զայդպիսի փնտռապարտ ոչ-ոք իշխէ յանդի-մանել. և օրինակաւ յանցանքն ևս քան զևս ծաւալին, յորժամ առ յարգութեան կարգին պատուեալ լինի յանցաւորն։ Այնարժանիքս այս անձնապահ լինէին յայս-չափ յանցաւորութեան ծանրութենէ, եթէ ուշադիր ունկամբ սրտի խոկային զՀնմարտութեանն վՀիռ որ ա-սէ. "Որ ոք գայթագղեցուսցէ զմի 'ի փոքրիկանցս յայս-ցանէ յիս հաւատացելոց, լաւ էր նմա եթէ երկան ի-շոյ կախէր զպարանոցէ նորա, և ընկղմէր 'ի խորս ծո-վու„. Իբր զի երկանաւ իշոյ նշանակի հովուումն և աշ-խատութիւն աշխարհահաւէր կենաց, և խորք ծովու յայտ առնեն զյետին դատապարտութիւն։ Այսպա ուրեմն որ միանգամ 'ի տեսակ սրբութեան ամբարձեալ՝ բանիւ

և կամ՝ օրինակաւ կործանել զայլ, լաւ և՝ լինէր անշուշտ՝ եթէ զայնպիսին երկրաւոր դատաստանքն՝ ի մահ պարտաւորէին արտաքին ձեւով, քան եթէ սուրբ պաշտամունք հանդիսացուցանէին զնա՝ ի չար օրինակ այլոց առ՝ ի լինել նմանող. վասն զի եթէ ինքն միայնակ կործանեալ լինէր, թեթեւագոյն լինէին տանջանք նորա՝ ի դժոխս։

Գ. Բ.ԶԳ զայսոսիկ սուղ բանիւ ասացաք՝ ի ցուցանել՝ թէ մրչափ ծանր է բեռն առաջնորդութեան. զի մի իշխեսցէ ոք յանբաւական եղելոցն միջամուխ լինել՝ ի սուրբ ղեկավարութիւն, և առ իշխանասիրութիւն յանձին կալցի զառաջնորդութիւն կրօստեան։ Բ.անզի վասն այսորիկ իակ խրատ տայ Յակոբեան սիրով և ասէ. "Մի բազում վարդապետք լինել, եղբարք իմ,,։ Սորին աղաչաւ և ինքն միջնորդն Բ.ստուծոյ և մարդկան խոյս ետ յանձն առնուլ թագաւորել՝ ի վերայ երկրի, այն որ գեր՝ ի վերոյ գոլով քան զգիտութիւն և զիմաստութիւն վերհիցն հոգեղենացն՝ յառաջ քան զյաւիտեանս թագաւորէ յերկինս։ Բ.անզի գրեալ է. "Յիսուս իբրև գիտաց՝ եթէ գալոց են յափշտակել զնա, զի արասցէն զնա թագաւոր, խոյս ետ անդրէն՝ ի լեառն միայն,,։

Օ ի՞ոք կարող էր այնպէս առանց յանցանաց իշխան լինել մարդկան, որպէս այն որ առաջնորդելոց էր իւրոցն արարածոց։ Բ.յլ քանզի վասն այն եկեալ էր մարմնով, զի ոչ միայն փրկեսցէ զմեզ չարչարանօք, այլ զի և ուսուցցէ կենցաղավարութեամբ, օրինակ զանձն տալով յետնոց՝ ոչ կամեցաւ թագաւոր լինել, իակ՝ ի զենարան խաչի մատուիւր եկաւորեաց. փախեաւ՝ ի պատուոյ փառաց մատուցելոց ինքեան, սիրով յանձն էառ զանարգական զմահ. որպէս զի ուսցին անդամք նորա փախչել՝ ի փառաց աշխարհի, և չերկնչել յարհատաց. սիրել զհակառակս յաղագս ճշմարտութեան, խորշել երկիւղիւ՝ ի յաջողակաց. քանզի և այսոքիկ յոլովակի ապականեն զսիրտ ամբարհաւաճութեամբ, իակ այնքիկ մաքրեն ցաւովք. յայսոսիկ բարձրամտեսէ հոգին, յայնոսիկ՝ թէպէտ և իւիք ամբարձեալ ունէր զանձն՝ ի խոր խոնարհի. ՝ի սոսին մոռանայ զինքն մարդ, ՝ի նոսին հարկաւորի կամայ և ակամայ յիշել զանձն իւր. ՝ի սոսին բազում անգամ կորնչին և նախադրած բարիք,

իսկ 'ի նոսին և վաղեմի յանցանքն քաւին։

Այսն զի բազում այն է զի ընդ վարժապետութիւն հակառակաց սիրտն ձնշի ընդ կրթանօք. որ եթէ 'ի ծագ ամբարձցի առաջնորդութեան, իսկ և իսկ 'ի փքացումն փոխի յերեսաց փառաց։ Լուսանիկ Այուղ, որ երբեմն անարժան զանձն վարկանելով փախուցեալն էր, նոյնհետայն ընդ առնուլ 'ի ձեռս զղեակ թագաւորութեան փքացաւ. քանզի կամելով փառաւոր լինել առաջի ժողովրդեան, իբրև չէառ յանձն ստգտանիլ 'ի մէջ բազմութեան՝ 'ի բաց կորեաց յիւրմէ որ օձն զնա 'ի թագաւոր։

Լուսանիկ և Դաւիթ, որ ըստ վկայելոց արարչին յաւմենայնի գոգցեալ էր աստուածահաճոյ, այն ինչ ազատ ինայր 'ի ծանրութենէ, 'ի պալարս վիրաց հանակեր փքանօք. մինչև լինել անագորոյն 'ի մահ առն՝ մեղկութիւն 'ի սէր կնոջն. և որ յառաջն զթասիրեր առ չարս անգամ խնայութեամբ, յետոյ ուսաւ և 'ի սպանութիւն լաւաց բերիլ յանիմանայ. և որ յառաջն վկամեցաւ ձեռն ամբառնալ 'ի հալածիչն զբռամբ ածեալ, յետոյ հանդերձ ինասու քրանաչան զօրուն զՀաւատարիմ զօրականն իսկ մատնեաց 'ի մահ։ Լսպաքէն 'ի թուոյ ընտրելոց 'ի բաց կորզէին զնա յանցանքն՝ եթէ չառնէին զնա պատուհասքն արժանի թողութեան։

Դ. Այսպէս պատահէ, զի յանձն առեալ հոգ առաջնորդութեան 'ի զանազան իրս ձգձգէ զսիրտ, և անձն անբաւական գտանի առ իւրաքանչիւրսն, ուր չփոթեալ մնօք 'ի յոքունս բաժանի։ Այսն որոյ խորհրդով խրատէ ոմն իմաստուն', ասէ. "Ընդեակ, մի զբազմօք անկցին գործք քո..." Իբր զի ոչ երբեք տիրապէս հաւաքին 'ի պէտս իւրաքանչիւր գործոց՝ երբ 'ի զանազան ցնդին միտք։ Այլ յորժամ 'ի դուրս ձգի ոք անխորհուրդ հոգովք, յետս կասի յամրութենէ ներքին երկիւղածութեան. անձնանման լինի յարտաքինս հոգածութիւն, և անձին և եթէ անյուշ գտանի. գիտէ բազում ինչ խորհել, և զանձն անգիտանայ։ Օ՛ի յորժամ զբաղի յիրս արտաքինս քան զարժանն, տարտամ մնօք զՀանապարհայն մնռանայ՝ թէ յո՛ դէմ եդեալ գնայր. մինչ զի օ-

1 Սիրաք։

տարացեալ և 'ի փութոյ խոկման անձին՝ չածէ զմտաւ զտուդանսն զոր կրէ, և անդիտանայ թէ յորքանս յանցանէ։

Բայաքէն չէառ 'ի միտ Լ,զէկիա՝ թէ մեղս մեղանչէ 'ի ցուցանել անդ եկեղցին օտարազգեաց զշռեմարանս ինկոց. այլ 'ի դատապարտն գտանիլ յաջորդ զաւակին՝ յանձին կրեաց զցաստուն դատաւորին յիրաց անտի զոր համարձակելի ինքեան համարէր։

Բաղում անգամ ևս՝ յորժամ բաղում ինչ իւրք յաջողէն զորս մարթի է առնել, և ժողովուրդն զարմանայ ընդ եղեալսն, բարձրամտի անձն 'ի խորհուրդս սրտի իւրոյ, և իսկապէս շարժէ զբարկութիւն դատաւորին, թէպէտ և ոչ ինչ արտաքոյ յանիրաւի գործեսցի. վասն զի 'ի նեբքս է որ դատէն, և 'ի նեբքս որ դատի։ Որ սրտի յորժամ սրտիւ մեղանչեմք, ծածկեալ է 'ի մարդկանէ մերս նեբգործութիւն. այլ սակայն մեղուցեալ գտանիմք վկայութեամբ դատաւորին։ Օ՛ի և ոչ արքայն Բաբելացւոց յայնժամ յանցաւոր գտաւ ամբարտաւանութեամբ՝ յորժամ մեծամեծս խօսեցաւ փքանօք. քանզի մարգարէին բերանով և յառաջ քան զլռելն 'ի մեծաբանութենէ լուաւ զմեղիս դատապարտութեան։ Այսն զի զմեղս ամբարտաւանութեան քաւեալ էր կանխաւ, յորժամ 'ի միտ էառ՝ թէ դառնացոյց զԱ՛ստուած ամենակալ, և քարոզեաց ամենայն հնազանդելոց իւրոց. այլ յետ այնորիկ մեծամտեալ ընդ յաջողաւածս իշխանութեան իւրոյ, յորժամ ցնծայր ընդ գործել իւր զմեծամեծս, նախ ընդ միտս իւր փքացաւ, և ապա տակաւին ահ ընդ ահ բարբառեալ ասաց. "Ո՞չ այս այն մեծ Բաբելն է, զոր ես շինեցի 'ի տուն թագաւորութեան հաստատութեամբ զօրութեան իմոյ 'ի պատիւ փառաց իմոց..։

Լաւ ահա այս բարբառ նորա կրեաց յայտնապէս ըզվրէժ ցասման, զոր բորբոքեաց գաղմնի մեծամտութիւն նորա։ Բանզի նախ զանխուլ անաչառ դատաւորն անտեսաբար տեսանէ, զոր յետոյ հրապարակաւ պատուհասեալ յանդիմանէ։ Որ սրտի և յանբան անասուն ինա փոխեաց, 'ի մարդկան ընկերութենէ որոշեաց, ընդ գազանս անապատի յարեցոյց այլափոխութեամբ մտաց, մինչ զի անաչառ և արդար դատաստանաւ զմարդկու-

թիւնն անդամ կորուսանէր՝ որ զինքն 'ի վեր քան ըմբռդիկ մեծ համարէր։ Օ այսոսիկ յիշեցուցանելով՝ ոչ եթէ զլիշանութիւնն ընդ վայր հարկանեմք, այլ յիշանասիրութիւնէ զտկարութիւն սրտի 'ի բաց պարուրեմք, զի մի անխտիր համարձակեցին թերակատարքն 'ի բարձրութիւն վերանալ առաջնորդութեան, և այլ 'ի հարթայատակ վայրի կալով դողդոջեն՝ մի դնիցեն զոտս 'ի վախս գահավիժութեան։

Ե. Վանդի կան ոմանք որ զգերագոյն ընորհս առաքինութեան ընկալեալ են, և 'ի մարդութիւն այլոց մեծամեծ ձրիւք վերառեալ լինին. որք 'ի սէր ողջախոհութեան մաքրաշարդք, 'ի զօրութիւն ժուժկալութեան կորովիք, խորտկօք վարդապետութեան լիացեալք, երկայնմտութեամբ համբերութեան խոնարհք, արիութեամբ իշխանութեան ուղղաբերք, ընորհիւ զթոյ մարդասէրք, անաչառութեամբ արդարութեան անմեղ կեալք. որ եթէ 'ի կոչումն առաջնորդութեան բարձուհրաւիրեալք՝ չառնուցուն յանձն, բազում մասամբք անգործ առնեն զձիրս պարգևացն զորս ոչ վասն անձանց ևեթ՝ այլ և վասն այլոց ընկալան։ Այս յորժամ զիւրեանցն խորհին զօգուտս և ոչ զընկերացն, զրկեն զանձիս 'ի բարեաց իսկ անտի զոր առանձինն ունել ցանկան։ Որոնց վասն ասեր Հնմարտութիւնն առ աշակերտս իւր. "Ոչ կարէ քաղաք թաքչել որ 'ի վերայ լերին կայցէ. և ոչ լուսանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանակի, զի լոյս տացէ ամենեցուն որ 'ի տանն իցեն"։

Վասն որոյ և առ Պետրոս ասաց. "Սիմոն Յովհաննու, սիրես զիս". որ իբրև փոյթ ընդ փոյթ ետ պատասխանի սիրել, լուաւ. "Այնթէ սիրես զիս, արածեա զոչխարս իմ"։ Ընդ եթէ նշանակ սիրոյ է հոգն արածելոյ, որ որ առաքինութեամբ ճոխացեալ հրաժարէ 'ի հովուելոյ զհօտ տեառն, յայտ առնէ թէ ոչ սիրէ զհօտ տապետն։ Ուստի և Պօղոս ասէ. "Այնթէ Քրիստոս 'ի վերայ ամենեցուն մեռաւ, ապա ամենեքին մեռեալ էին. և եթէ վասն ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն որ կենդանիքն են՝ մի անձանց իցեն կենդանի, այլ այնմ՝ որ վասն նոցա մեռաւ և յարեաւ"։ Այս Պաւղոս ասաց՝ զի զկին եղբօր անորդի վախճանելոյ առցէ մնացեալ

եղբայր նորուն, և յարուցէ որդիս յանուն եղբօրն. ապա եթէ չառնուցու յանձն, յերեսս նորա թքցէ կինն, և զմիոյ ոտին զկօշիկ հանցէ մերձաւորն, և տուն նորա կոչեսցի տուն բոկացելոյ։ Իսկ զի վախճանեալ եղբայրն այն է՝ որ յետ փառաց յարութեան իւրոյ ասաց, "Լուրթայք ասացէք եղբարցն իմոց,,. որ իբրու թէ անարդի վախճանեցաւ, զի չէ եւ էլից զԹիւ ընտրելոց իւրոց։ Լաւ ահա զսորա կինն առնուլ հրամայի մնացեալ եղբայրն. վասն զի արժան է յիրաւի զի հոգաբարձութիւն եկեղեցւոյ յանձն ընցի այնմ՝ որ կարողն է օրինաւք առաջնորդել։ Իսկ 'ի չառնուլ դորա յանձն՝ կինն թքանի յերեսս նորա. զի որ միանգամ իւրովք աստուածաձիր պարզևաւք անտես առնէ օգտել այլոց, եկեղեցին զնորա բարին անգամ յերեսս հարկանելով նորուն՝ որպէս թէ թքակոծ առնէ զերեսս նորա։ Լաւ կօշիկն իսկ միոյ ոտին 'ի բաց հանեալ լինի, զի տուն բոկացելոյ կոչեսցի. քանզի զրեալ է, "Յուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան,,։ Լուրեանն եթէ որպէս զմեր՝ նոյնպէս և զընկերին հոգ յանձին կրեսք, զերկոսին ոտս իսկ կօշկաւք ամրացուցանեմք։ Իսկ որ զանձին և եթէ օգուտ խորհելով՝ զընկերացն անտես առնէ, իբրու անարգանաւք կորուսանէ զկօշիկ միոյ ոտինն։

Լաւ ահա էն ոմանք, որ թէպէտ և բան ասացելոցս մեծամեծ ձրիւք էն հոխացեալ, այլ վաւերաւք 'ի սեր եւեթ հայեցողութեան՝ հրաժարէն հպատակել 'ի շահ ընկերաց քարոզութեամբ, սիրէն զմիայնութիւն հանդարտութեան, և յարին յառանձնութիւն տեսութեան։ Օ որոց եթէ անաչառ դատաստան լինիցի, առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ այնքանեաց պարտական գտանին յանցանաց՝ որքան կարող էին շահս առնել հրապարակաւ։ Վասն զի որով մնօք սա որ կարող էր յօգուտ այլոց հանդիսանալ՝ նախապատիւ առնէ զլուր միայնութիւն քան զշահ այլոց, ուր ինքն միաձին հօրն էակամի վասն օգտելոց բաղմաց եւ էին 'ի ծոցս հօր 'ի մերս հրապարակ։

2. Լաւն էն և այլք, որ առ խոնարհութեան և եթէ հրաժարեն, զի մի վերակացու կարգեսցին իրաց որոց զանձինս անբաւական առնին։ Յոգարեւ այսպիսեացս խոնարհութիւն եթէ, և այլովք առաքինութեամբք ի-

ցէ Հոխացեալ, յայնժամ Հնարիցի է յաչս Աստուծոյ. միայն թէ չիցէ յամառեալ 'ի յանսալ ընդունել զՀլնա-մնչեալն 'ի շահ օգտի հասարակաց։ Ամն զի չէ ստու-գապէս խոնարհ որոյ խմացեալ զվերին ակնարկութիւն վերակացութեան՝ տակաւին անդունեացէ։ Աստ եթէ հնազանդ իցէ կարգաւորութեանն Աստուծոյ, և հեռի յիսատէ կամնկորութեան, յորժամ հրամայի նմա ելանել յաշտիճան առաջնորդական, յորժամ ունիցի ձիրս օգտելոյ և այլոց, պարտ է նմա սրտիւ փախչել, և արդեամբք ակամայ հնազանդել։

Ե. Յայսր ամենայնի վերայ գովելի է և յօժարելն ոմանց 'ի պաշտօն քարոզութեան, և այլոց ձգելն 'ի նոսին յակամայս։ Աչ այսմ քաջ խելամուտ լինիմք, եթէ քննեսցուք զարարս երկուց մարգարէից, յորոց մին ինքնակամ մատոյց զանձն յառաքելութիւն քարոզութեան, իսկ միւսն երկիւղիւ հրաժարեաց յայնմանէ։ Ասանդի Հայի 'ի հարցանել անդ տեառն՝ թէ «Օ՞ առաքեցիս», ինքնամատոյց եղև ասելով. «Ա՞սոիկ եմ ես, առաքեա զիս»։ Իսկ Հրեմիա թէպէտ և առաքի, այլ խոնարհաբար հրաժեշտ տալով առաքմանն ասէ. «Ո՜ա տէր տէր, աւանիկ խօսել իսկ ոչ գիտեմ, զի մանուկ եմ ես»։ ՆՀա յերկոցունցն առ արտաքս այլ և այլ ձայն հնչեաց, այլ ոչ յայլ և այլ աղբերէ սիրոյ բըղխեաց։ Ամն զի կրկին կանոնք կամ պատուիրանք են սիրոյ, այս ինքն աստուածասիրութեան և եղբայրսիրութեան. արդ Հայի ցանկացեալ գործնական վարուք օգտամատոյց լինել ընկերաց՝ յօժարամտի 'ի պաշտօն քարոզութեան. իսկ Հրեմիա տեսական կենաց մնադիւր յարեալ 'ի սեր արարչին՝ զՀակառակն խորհի յաւաքել 'ի քարոզութիւն. ուստի յոր մին յօժարեցաւ գովելի օրինակաւ, միւսն զանգիտեաց նոյնպէս գովելի մնաց. մին զի մի կորուսցէ զշահս լրիկ հայեցողութեան խօսելով, և միւսն՝ զի մի տուժեսցի ընելով 'ի կարեւոր գործոց։ Այլ զայս պարտ է նրբահայեաց տեսութեամբ դիտել յերկոսեան. զի և սա որ հրաժարէրն՝ ոչ տիրապէս զդէմ կալաւ, և միւսն որ ընտրեաց առաքիլ՝ ետես զի նախ սրբեցաւ կայծակամբ սեղանոյն. զի մի որ առանց կանխաւ մաքրելոյ մատչիցի առ նուրբ խորհուրդս, և կամ զոր ընարիցէ վերնական հնարն՝ ընդ

պատրուակաւ խմնարհութեան հակառակ կացցէ ամ բարտաւանութեամբ։

Զի որովհետև դժուարին է յոյժ գիտել ումեք թէ ինքն իցէ սրբեալ և մաքրեալ, առաւել անվստանգ լինի հրաժարել 'ի քարոզութէ. բայց որպէս ասացի՝ չարաչարի յամառ մնօք հրաժեշտ տալ յորժամ յայտ լինի թէ 'ի վերին կամաց է ընդունելութիւնն։ Այլ զայս ըստ երկաքանչիւր մասանց գեղեցիկ 'ի գլուխ տարաւ Աստուած. զի որ այնչափ բազմութեան վերակացու լինել չկամեցաւ զառաջինն՝ ապա հնազանդեցաւ։ Զիանցի յանձնապաստան արդեօք երեւէր եթէ անվերջ յանձն առնոյր զառաջնորդութիւն անթիւ ամբոխին. և դարձեալ ամբարտաւան հանարէր, եթէ չառնոյր յանձն հնազանդել հաստատին հրամանի. ուստի յերկոսեանն իսկ խնդարհ գտեալ, և յերկոսեանն կամակատար հրապատակ, նախ չկամեցաւ վերակացու լինել ժողովրդոց չափիտուութեամբ անձինն, և յետոյ վստահ եղեալ 'ի զօրութիւն հրամանատուին՝ հաճ և հաւան գտաւ։

Զի՞նչ ուրեմն ստոյգ խնամատարութեանն անխորհուրդ յանձնապաստանք՝ թէ որպիսի յանցաւորութիւն չգանգիտեն ինքնակամ բաղձանօք նախամեծար լինել քան զայլս. մինչդեռ սէր անձինք զանգիտելին առաջնորդ կարգել ժողովրդեան 'ի հրամանէ անգամ Աստուծոյ, և Մովսէս 'ի յորդորել անդ տեառն գողայ. և տկար ոք փափաքէ ընդունել ղծանրութիւն աշխարհի պատուոյ. և որ յիւրոյ անտի բեռանց վտանգի յանկուն, մտադիւր զուն՝ 'ի նեբբոյ արկանէ ձմիկն ընդ այլոց բեռամիջ, և որ չէ ձեռնհաս բառնալ զոր ունի՝ յաւելու բեռն 'ի բեռն 'ի տանել։

Զ. Այլ որ ցանկան վերակացութեան, յորվակի տաւտար առնուն փառասիրութեան իւրեանց զառաքելականն բան, "Եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ..։ Այլ որ գովէն զայն քաղաքաւոր, անդէն վաղվաղակի յերկիւղ շրջէ զոր գովեացին, զի յարէ առընթեր. "Այլ պարտ է եպիսկոպոսին անարատ (կամ անասպատնեալ) լինել..։ Այս առ նմին 'ի հանար արկանէ զկարեւոր առաքինութիւնս, յայտ առնելով թէ թէ անարատ գտանի ոք։ Այս այսպէս տեղի տայ ըղձին, և երկեցուցանէ 'ի կամանէն, որպէս թէ

յայտնապէս ասել. գովեմ զոր խնդրէքդ, այլ նախ ուսարուք թէ զինչ խնդրէք. զի մի չափազիտութեամբ անձանց ձերոց՝ այնչափ յուռեցոյն թուեսցի ստգիւան ձեր որչափ առաւել ոք ձեպի երևելն լինել՝ի բարձր վայրի։

Պատն զի ձարտար ուսուցչին առաջնորդութեան՝ ձեռնտուութեամբ յառաջ վարէ, ահարկութեամբք յեսս ընկրկէ. զի զունկնդիրս իւր նկարագրութեամբ անարատութեանն բարձրութեան նահանջեսցէ, յամբարտաւանութենէ, և գովութեամբ խնդրելի պաշտամանն յարդարեսցէ՝ի կեանս։ Բայց և զայն արժան է գիտել զի այս բան յայտմ ժամանակի ասացաւ, յորում որ միանգամ վերակացու լինէր ժողովրդեան՝ նախ նա քարշեալ ձգէր՝ի չարչարանս մարտիրոսութեան. վասն որոյ յայնժամ գովելի ինչ էր խնդրել զեպիսկոպոսութիւն, երբ անբերկրայ գիտէր ոք զի սովին մատնեսցի՝ի ծանր ծանր պատուհասս տանջանաց։ Որին վասն բարի գործոյ անուամբ մեծարի եպիսկոպոսութիւնն յանսել անդ. "Լաւ է ոք եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ"։ Բուրեան անձամբ անձին դատաքննող գտանի այնպիսին, որ եպիսկոպոսութեան ցանկայ՝ ոչ՝ի վարել զպաշտօն այդր բարի գործոյ, այլ զի՝ի խնդիր էր փառաց և պատուոյ։ Զանազի ոչ միայն չարիք բնաւին զուրբ պաշտօնն, այլ և չգիտէ զայն գլխովին այր որ տեսչացեալ աշտիճանի առաջնորդութեան՝՝ի գաղտնի խորհրդեան սրտի իւրոյ պարարի հրապատակեալս ինքեան տեսանելով զայլս, խնդամտէ ընդ գովեստս անձին, ամբառնայ զսիրտ իւր՝՝ի պատիւ և՝՝ի փառս, և ցնծայ ընդ բազում՝ առատութիւն պիտոյից։ Բայց ուրեմն զշահ աշխարհական խնդրէ ընդ պատրուակաւ պատուաւոր աշտիճանիս, որով պարտ էր քակել և քակտել զշահս աշխարհի։ Բս յորժամ խորհի ոք՝՝ի մտի զուռամբ ածել զաստիճան խոնարհութեան՝՝ի պէտս ամբարհաւաճութեան, զոր ինչ արտաքուստ ըղձանայ՝՝ի ներքուստ յեղափոխէ։

Թ. Բայլ ստէպ ևս ցանկացողքն հովուական առաջնորդութեան և զայլ ոչ սակաւ բարիս դնեն՝՝ի մտի. և թէպէտ ոգուով ամբարտաւանութեամբ բաղձան այնմ, բայց մեծամեծս գործել ակն ունին. և այնպէս այլ ինչ ամենևին է զոր դիտեն, և այլ ինչ արտաքուստ ցու-

ցանեն։ Այ ասն զի միտք մարդոյ բազում անգամ խաբէն զմարդ, և՝ երևեցուցանեն նմա սիրել զգործ ինչ բարի, զոր ոչն սիրէ. և չարել զփառս աշխարհի՝ զոր սիրէն. վասն որոյ և իշխանասիրութեան զհետ եղեալ՝ վերհերոտ գտանի 'ի ինդրելն, այլ յանդուգն 'ի ստանալն։ Այանգի 'ի ձգտել անդ դողայ, զի գուցէ ոչ հասանիցէ. այլ իսկ և իսկ ընդ հասանելն՝ համարի թէ պարտ և արժան էր ինքեան հասանել այնմ։ Այս այն ինչ սկսանի վայելել ըստ աշխարհի 'ի պաշտօնն գլխաւորութեան զոր ստացաւ, ինքնակամ 'ի մոռացօնս արկանել զոր ինչ խորհեալն էր բարեպարիշտ մնաց։ Այս տի հարկաւ զհետ գայ, զի յորժամ խորհուրդն արտաքոյ քան զպէտսն ձգի, վաղվաղակի ակն մնացն 'ի նախընթաց գործս յածի, և զմնաւ ածէ եթէ զինչ ինչ իւրաքանչիւր հպատակքն գործեալ իցեն. և 'ի վերայ հասանել անդէն եթէ կարող իցէ առնել 'ի վերակացութիւն զբարիս՝ զոր առաջադրեալ էր անձին. վասն զի չկարէ երբէք ուսանել նա զնոմարհութիւն 'ի բարձրութեան՝ որ 'ի ցածութեանն ոչ զգաղարեաց յամբարտաւանելոյ։ Այ զիտէ փախչել 'ի գովութենէ վասն յաջողելոյն, որ ուսաւն 'ի նոցն անձկալ՝ մինչդեռ չունէին. ոչ երբէք կարէ յաղթել արծաթասիրութեան 'ի կամէն յանձանձել զբազուսն, որում չեղեն բաւական ինչք իւր և 'ի միայնութեանն։ Այսպա 'ի նախընթաց կենաց իւրոց կշռեցէ իւրաքանչիւր զոր զանձն իւր, զի մի 'ի ցանկալն վերին աշխարհի՝ պատրեսցեն զնա խորհուրդք իւր։

Այ՞ր թողցուք և զայն զի 'ի զբաղանս առաջնորդութեան կորնչի և գործակատարութիւն բարւոյն պահեալն 'ի հանդարտութեան. վասն զի 'ի խաղաղ ծովու և անհմնաւ ոք ուղիղ վարէ զնաւն. այլ 'ի խռովելն արեաց մրրկաց՝ տարնապի և քաջահմուտ նաւապետ։ Այանգի զինչ է իշխանութիւն բարձր, բայց յոյզք իսն մրրկի մեծաց. ուր հանապազ ծփի նաւն մնաց մրրկաց խորհրդոց, և անդադար այսր և անդր հողմակոծի. ուր յեզակարծ անչափութիւնք բերանոց և գործոց խորտակին իբրև յերեսաց վիմաց պատահելոց։ Այդդ յայսպիսի անցս զինչ ինչ արժան իցէ առնել կամ պիտղ ունել, եթէ չիցէ առաքինազարդ ոք անձն հարկաւորեալ յա-

ռաջնորդութիւն. Թափուր որ յառաքինութենէ և անշմնատ յառաջ մնտիցէ։

Իսկ որ ամենայն իրօք դիմակալէ և չառնու յանձն, զգծոյ լցցի զի մի զառեալն քանքար 'ի վարշամանի ծրարեալ՝ որպէս քանքարաթաքոյց դատեսցի։ Այսուն զի ծրարել զարծաթն 'ի վարշամակի՝ է թաքուցանելն զառեալ ձիրս յանպտղութեան պղերգ յուլութեան։ Որոյ հակառակ, և նա որ ցանկաց առաջնորդութեան՝ միտ դիցէ զի մի օրինակաւ չար գործոց՝ ըստ օրինակի փարիսեցւոյ խաման լինիցի նկրտելոյն 'ի մնաց արքայութեան. զոր ըստ ձայնի երկնաւոր վարդապետին "Եւ ինքեանք մնանեն, և ոչ զայլս թողուն մնանել"։ Զ. Յիսպիսումն և զայն պարտ է ածել զմտաւ, զի յորժամ ընտրեալ որ ընդունի զկոգաբարձութիւն ժողովրդեան, իբրու բժիշկ առ հիւանդ մտցի. և արդ եթէ 'ի գործս իւր տակաւին կենդանի են ախտաւոր կիրք՝ որոմ ժրպրութեամբ վաղվաղէ 'ի բուժել զկարուածեալն, ուր ինքն 'ի դէմս իւր բարձեալ բերէ զվէրս հաբուածոց։

Ա. Այսուն որոյ զնա պարտ է ամենայն իրօք 'ի վերս հանել յօրինակ վարուց, որ ամենայն ախտից մարմնոյ մահացեալ՝ հոգեպէս կեայ. որ զյաջողուած աշխարհի առ ոսն հարեալ իցէ, որ 'ի ներհակաց ուստէք չերկրնչցի, որ 'ի ներբինս միայն իցէ ըղձակաթ։ Այր զիտաւորութեան զեղեցիկ համնձայնեալ և հոգին՝ ոչ իւիք վրդովի, ոչ բնաւ առ տկարութեան մարմնոյ, և ոչ առ թշնամանաց երբէք։ Որ ոչն ձգտի առ օտարին ինչս ցանկալ, այլ զիւրն առատապէս բաշխէ։ Որ առ գոլոյզ աղեաց փոյթ զկնամի 'ի ներել, այլ ոչ երբէք առաւել քան զարժանն ներողամիտ լինելով խոնարհի յամրէ ուղղութեան։ Որ չգործէ անարժանս ինչ, այլ զառ 'ի յայլոց գործեցեալսն որպէս զիւր մերս աւաղէ։ Որ 'ի սերտ սրտէ կարեկից լինի տկարութեան ընկերին, միանգամայն և ընդ բարիս մերձաւորին խնդայ որպէս ընդ իւր ինչ. Ծոխութիւնս։ Որ այնպէս յամենայնի օրինակ բարի զանձն ընծայեցուցանել ամենեցուն, մինչև չունել ինչ լրնթացս իւր ամնչել յորոց արարն։ Որ այնպէս ջանայ քաղաքավարել, զի և զցանաքեալ սիրոս մերձաւորաց բաւական գտանի յառուգանել ուղիւիւք վարդապետութեան։ Որոյ կրթութեամբ աղո-

թէց և փորձիլ ուսեալ իցէ, թէ կարօղ է առնուլ 'ի տեառնէ զխնդրելին. որպէս ձայնիլ բարբառոյ տիրապէս ասացաւ. "Այնչդեռ խօսիցիս, ասացիցէ թէ ահաւասիկ հասեալ կամ,,:

Վասնզի եթէ ըստ դիպոյ զայցէ ոք առ մեզ և աղաչեսցէ զի բարեխօս լիցուք վասն իւր առ հզօր ոք որ նմա ցասուցեալ իցէ, և մեզ անծանօթ, անդէն տամք պատասխանի. չկարեմք երթալ բարեխօսել, զի չիք մեր ընտանութիւն ընդ նմա: Այլ եթէ մարդ առ մարդ չիշխէ բարեխօսել, այլ ամենէ երբ ջուսի առ նա հանդարտակութիւն, զինքդ ձեռներեց լինի ոք յանձն իւր ձգել զաշտիճան բարեխօսութեան առ Աստուած 'ի դիմաց ժողովրդեան որ արդեամբք վարուց չգիտէ զանձնէ թէ ընտանի իցէ Հնոցհացն Աստուծոյ. որպէս թողութիւն հայցէ 'ի նմանէ վասն այլոց, որ ոչն գիտէ՝ թէ արդեօք հաշտ իցէ ընդ իւր: Ուր առաւել հոգ 'ի մտի պարտ է դնել մեծաս երկիւղիս, զի մի որ բաւական համարիցի 'ի ցածուցանել զցասումն Աստուծոյ՝ ինքն առաւելապէս այնմ մատնեսցի յանցաւորութեամբ իւրով. վասն զի ամենեքին յայտնի գիտեմք՝ զի յորժամ անձն անհաձոյ առաքի 'ի բարեխօսութիւն, ոգի ցասուցելոյն ևս քան զևս զայրանայ 'ի վերայ նորա: Որքին վասն այն որ տակաւին կապեալ կայ ընդ երկրաւոր ցանկութիւն, զգոյշ կացցէ զի մի զանաչաւ դատաւորին զբարկութի ևս քան զևս բորբոքեալ, մինչդեռ խնդանոի ընդ պատիւ աշտիճանին՝ լինիցի պատճառ կործանման հպատակաց:

ԺԱ. Այսպա ուրեմն սրտի մտաք կշռեսցէ ոք զանձն իւր, չհամարձակել ելանել 'ի տեղի առաջնորդութեան՝ եթէ տակաւին զօրանայ 'ի նմա ախտաւորութիւն դատապարտելի. զի մի շաղախեալն աղտեղութեամբ յանցանաց իւրոց յօժարեսցի միջնորդ և բարեխօս լինել վասն մեղայ այլոց: Ա՝ սան այսորիկ ասի առ Աստուծոյ վերնական ձայնիւ. "Խօսեաց ընդ Հարսին, և ասասցես. այր ոք յայգդ քումմէ յամենայն աղգս ձեր, յորում իցէ արատ՝ մի մատիցէ, մատուցանել պատարագ Աստուծոյ իւրոյ. զի ամենայն այր յորում իցէ արատ՝ մի մատիցէ,,: Ուր և անդէն յարի. "Այր կաղ կամ կոյր կամ կարձունչ կամ՝ ակամնջատ կամ՝ այր ձեռնրեկ

կամ ոտնաբեկ կամ սասպատոզն կամ շիլ կամ պտղակն, կամ այլ՝ յորում իցէ քոս կամ քաղցկեղ, կամ միոզձի։»։

Բանզի կայր համարի որ անգիտանայ զլոյս վերնական հայեցողութեան, և 'ի խաւար կենցաղոյս նստեալ՝ ոչ ակնարկէ տեսչանաք 'ի լոյսն վերին, և ոչ գիտէ թէ յո՛ ձգեսցէ զգնացս զոզծոց իւրոց. վասն որոյ և բանիւ մարգարէութեան Լինայի ասի. (ըստ լ. Թարգ.) «Օ՞ոտս սրբոց պահեսցէ, և ամպարիշտք 'ի խաւարի լռեալ դա՛ դարեսցեն»։

Իսկ կաղ այն է՝ որ թէպէտ և գիտէ յո՛ պարսն իցէ երթալ, այլ առ տկարութեան ոգւոյ չկարէ համարձակ յառաջ խաղալ ընդ Ճանապարհն կենաց զոր տեսանէ. վասն զի ցորչափ դիւրասահ սովորութիւնն ոչ ուղղի յառաքինութիւն անդր յոր բերի փափաքն, ոչ ընթանան արդեամբք գնացք գոզծոյն։ Ոյր վասն ասէր Պօ՞ղոս. «Օ՞ձեռս լքեալս և զծունկս կթոռոս հաստատեցէք, և՝ զշաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց. զի մի որ կաղն իցէ՝ գլորիցի, այլ մանաւանդ բժշկեսցի»։

Իսկ կարձունչ նա է որ անբաւականն է 'ի պահել զչափ ընտրութեան. քանզի ընչովք ընտրութիւն առնելոյ անոյշ և նեխ հոտոց. արդ ուղիղ ընտրողութիւն լինի իբրև հոտոտելեօք, յորժամ զառաքինութիւնս ընտրեսցէ և զյանցուածս հերքեսցէ։ Ուստի և 'ի գովութեան մնասին հարսինն ասէ. «Ընդունէր քո իբրև զաշտարակն Լիբանանու»։ Իբրու այն թէ եկեղեցի սուրբ՝ ընտրողութեամբ նկատէ զառ 'ի պէսպէս պատճառաց յառաջ եկեալ փորձութիւնս, և զապագայ մնարս ախտից 'ի բարձանց գիտեալ 'ի միտ առնու։ Այլ են ումանք որ յորժամ չկամին բթամտութեան տալ կարծիս, բազում անգամ 'ի զանազան հետազօտութիւնս բերին առաւել քան զարժանն. վասն որոյ 'ի խաբս անկանին սակս տարապայման նրբահայեցութեան։ Ուստի և աստանօր յարի (ըստ այլ թարգմանութեան փոխանակ բառիս ականջատ), «Կամ մեծունչ և կորունչ»։ քանզի ունչքն մեծ և ոլորած՝ է տարադէպ նրբութիւն ընտրութեան, որ անդր քան զվայելուչն ձկտեալ՝ չփանթէ զուղղութիւն նեղգործութեան իւրոյ։

Իսկ ոտնաբեկ կամ ձեռնաբեկ այն է՝ որ բնաւ չկարէ գնալ զձանապարհն Աստուծոյ։ և փոխանն զտանի 'ի

185

սպառ 'ի գործոց բարութեան. քանզի այնպիսին ոչ միայն որպէս զկաղ յետնի տկարութեամբ, այլ և կայ մնայ բոլորովին կասեալ և անգործ։ Իսկ սասպատողն է՝ զոր Ա՛նէլ բեռն ծանրութեան հոգոյ երկրաւորաց, զի մի 'ի վեր ակնարկեսցէ երբէք, այլ միայն ուշ ունիցի առ ոտս կոխելոյն։ Ոչ եթէ լուիցէ ինչ մի և 'ի բարեաց երկնային հայրենեաց, յամբառնայ զՀայեցուածս սրբոյն, ընկճեալ ծանրութեամբ անպիտան սովորութեց. վասն զի չկարէ 'ի վեր ուղղել զիաղրհուրդս իւր կորացեալս 'ի պէտս երկրաւոր հոգոց։ Օ՜այսպիսեացս վնա՛ն ասաց սաղմոսասուսն. "Կորացայ (կամ ջարջարեցայ), և խոնարհ եղէ մինչև յոյժ"։ Օ՜որոց զյանցանս ինքնասաց բանիւ կշտամբէ Ա՛ստուծոյ մեր ասելով. "Սերմն որ անկաւ 'ի մէջ փշոց՝ նոքա են որ լսեն զբանն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեանց և փափկութեանց հեղձուցանեն զբանն և անպտուղ լինի"։

Իսկ չինն է՝ այր հանձարն թէպէտ և ունի զբոյս 'ի գիտութիւն Ա՛ստուծոյ, այլ նսեմացուցանէն զայն գործք մարմնականք. քանզի 'ի շինն կամ 'ի գիտակն թէպէտ և բիբքն են առողջ, այլ 'ի հիւթոց ինելոց թանձրանան արտեւանունք, և 'ի մաշել նոցին 'ի հոսմանց անտի՝ խանգարի և կորսուի բբայ։ Այն և ոմանք՝ զորոց զտեսութիւն ապականեն գործք մարմնաւոր կենաց, ոչք կարող էին ուղղատես լինել նրբութեամբ հանձարոց, այլ 'ի ձեռն գործոց վատթարութեան բբանկին։ Ուստի բբանկն է՝ զորոց զմիտս քնութիւնն սրէ, այլ վատթարութիւն քաղաքավարութեան խանգարէ. որում Ա՛հողակի ասի 'ի ձեռն հրեշտակին. "Դիր գեղ յաչս քո (կամ օծ մնգուրաւ զաչս քո), զի տեսցեն"։ Ա՛ստ մնգուրաւ օծանեմք զաչս 'ի տեսանել, յորժամ առ 'ի Ա՛ստուածոյ զպայծառութիւն Ա՛ստուծոյ՝ զբիբ մարմնոյ մերոյ զօրացուցանեմք գեղով բարեգործութեան։

Իսկ պտղակն կամ որ ունի սպիտակուց յաչս նա է՝ որ չկարէ տեսանել զլոյս Ա՛ստուծոյ, վասն զի կուրացեալ է յանձնապաստանութեամբ խնամատութեան կամ արգարութեան. քանզի տեսանէ է սեաւ բիբն աչաց, և յունէն զսպիտակուց՝ ինչ ոչ տեսանէ. զի յորժամ ոք տկարամիտ և անմիտ և մեղաւոր Ա՛ստուածէ զանձն,

ընդունի զծանօթութիւն նեղբին պայծառութեան. ա-
պա եթէ անձին ընծայէ զպայծառութիւն արդարու-
թեան կամ իմաստութեան, խնու զաչս առ լոյս վեր-
նական ծանօթութեան. և այնչափ առաւել յեռնեալ
ինայ 'ի յստակ տեսութենէ Ճշմարիտ լուսոյն, որչափ
բարձրանալի յանդգնութեամբ. զոր օրինակ ասի զո-
մանց, "Զանձինս առ իմաստունս ունէին, յիմարե-
ցան"։

Իսկ որ ունի զքոս նա է, յորում տարբացեալ է և
բռնացեալ մարմնասիրութիւն. վասն զի 'ի քոսն եռա-
ցումն ախտղանաց 'ի մարթն վերբերի, որով յայտնա-
պէս երևի վաւաշոտութիւն. քանզի փորձութիւն սրբ-
տին 'ի դուրս բերի գործով, և որպէս թէ նեղբին բոլ-
բոքն յերեսս մարթոյն ձգի, և արտաքուստ ապականի
զմարմինն. զի ցորչափ հեշտասիրութիւն անսանձ իցէ
'ի խորհուրդս, ձգի և 'ի գործել. որպէս թէ և Պօղոս
զմարմնոջ մարթոյն հոգայր բառնալ յասել անդ. "Փոր-
ձութիւն 'ի ձեր վերայ մի եկեսցէ, բայց եթէ մարդ-
կային"։ Իբրու թէ յայտնապէս ասէր. մարդկային իմն
է կրել փորձութիւն 'ի որտի, այլ դիւական է յաղթել
'ի մարտի փորձութեան և գործով։

Իսկ քաղցկեղ կամ որբիւն ունի 'ի մարմնի՝ որ մնաք
գերի է ագահութեան. որ եթէ 'ի փոքունս ոչ սան-
ձեսցի, յանչափս զառաջանի. քանզի որբիւնն առանց
ցաւոց տիրէ մարմնոյ, և առանց նեղելոյ զանձն ահէ և
ապականի զվայելչութիւն անդամոց. որպէս և արծաթ-
սիրութիւնն զոգի ագահին գրաւեալ՝ մինչդեռ հեշտա-
ցուցանել թուի, վերալից առնէ խղճայթիւք. և յոր-
ժամ դրդէ զմիտս 'ի ստացումն ընչից՝ վառէ 'ի թշնա-
մութիւն, և չյաւելու ցաւ 'ի վերս անդ. քանզի սրտի
բորբոքելոյ Ճոխութիւնս խոստանայ 'ի յանցանաց. բայց
կորնչի վայելչութիւն անդամոց, քանզի սովիմբ վատթա-
ռանայ և գեղեցկութիւն այլոց առաքինութեանց, և
որպէս թէ մարմինն ողջոյն աղաւաղի. վասն զի ամենայն
ախտիւք վարակէ զհոգին, ըստ ասից առաքելոյն. "Մա-
սատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է"։

Իսկ միոքձի կամ փոշտանկ (ծանրացեալ ըստ լա.)
նա է, որ գործով չատնէ զգարշութիւն, այլ սակայն
սովին խորհրդով անընդհատ և տարապայման ծանրա-

նայ 'ի միտս. և թէպէտ և ոչ երբէք ձգի մինչև 'ի գործ անարժանութեան, այլ սիրտ նորա անառակ հեշտութեամբ առանց իրիք դիմակալութեան անկրկնտանայ։ Բանդի այս ախտ պատահէ 'ի մարմնի, յորժամ աղիքն սողին յայրութիւնս, որք տարադէպ ուռնուն հանդերձ ամենայն նեղութեամբ։ Բ. Որ հոգեպէս այսպիսի է՝ որ որ բովանդակ խորհրդովք յանառակութիւն սողոսկեալ՝ զծանրութիւն գարշութեան կրէ 'ի սրտի. և թէ և չգործիցէ զանարժանս արդեամբք, բայց ոչ քեցի մըտօք 'ի նոցունց։ Գ. Ոչ իսկ մարթի յայտնապէս յառնել 'ի գործս բարութեան, քանզի ծածկապէս վայրաբերէ զնա գարշ ծանրութիւնն։

Բ. Որդ որ միանգամ նեղքոյ անկեալ ի՝ցէ միում յախտից աստի, արգելեալ է նմա պատարագ կամ հաց առաջաւորութեան մատուցանել Աստուծոյ. վասն զի բընաւ ոչ կարէ զայլոյ մեղս սրբել ապականեալն մեղօք իւրովք։ Գ. Ահա ցուցաք սակաւուք՝ եթէ որպիսի արժանաւոր որ հարկ է զի 'ի պաշտօն հովուական կամ առաջնորդական ամբարձցի, և թէ ոչչափ երկնչելոցի անարժանն ձեռներեց լինել այնմ։ Արարեալ է ցուցանել աստանօր եթէ որ արժանապէս եհաս յայն պատիւ՝ զլսիրդ պարտի քաղաքավարել և կամ զկեանս իւր յարդարել։

ՄԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա. Աշնշանք պարտ է գերազանցել գործոց առաջնորդին քան զգործս ժողովրդեան, որչափ տարօրինակ են կենաց հովուի 'ի հօտէն։ Արանզի նախ պարտ է նմա ջանալ ինքանվ չափել եթէ որչափ հարկ ուղղութեան կայ 'ի վերայ նորա, ընդ որոյ պատկառելի առնուամբ ժողովուրդն հօտ յորջորջի։ Այս հարկ է զի մրտոք իցէ սուրբ, առաջին 'ի վաստակել, խոհական 'ի լուութեան, հոգեշահ 'ի բանս, կարեկից իւրաքանչիւրոց, խոհեմ գնացիւքն գեր 'ի վերոյ ամենեցուն, բարեգործաց խոնարհութեամբ գործակից, ընդդէմ յանցաւորացն ախտից քաջալանջ դիմակալ նախանձաւորութեամբ արդարութեան։ 'ի պատՀաս արտաքին զբաղմանց ոչ նուազեալ 'ի հոգոյութենէ ներքնոց, և ոչ 'ի հոգալ զներքինս՝ զարտաքին հոգաբարձութիւնն անտես արարեալ։ Այլ զայս ամենայն զոր 'ի կարՀոյ նը-շանակեցաք, փոքր մի Հոխագոյն բացատրութեամբ Հաւռեսցուք։

Բ. Քաջնորդն կամ վերակացուն մնօք իցէ սուրբ։ այս է ոչ իւիք անսրբութեամբ շաղախեսցի՝ որ ընկալաւ զպաշտօն մնքրելոյ և 'ի սրտից այլոց զարատս պղծութեան։ վասն զի հարկաւ պարտի մնքուր լինել ձեռն որ սրբելոյն իցէ գաղտս, զի մի չար ևս շաղախեսցէ՝ յոր ինչ մերձենայ, եթէ տղմաշաղախ իցէ աղտեղութիւք։ Արանզի և վասն այսորիկ ասի մնրգարէին։ "Ի պիղծս մի մերձենայք, որ բարձեալ բերեալ զսպաս տեառն"։ Վասն զի բարձողք սպասու տեառն են՝ որոց հաւատացաւ առաջնորդել հոգւոց 'ի սրբութիւնս յաւիտենից։ Ուստի տեսցէն, եթէ որչափ սուրբ լինել պարտիցին յանձինս՝ այք երաշխաւոր լինին տանել զկենդանի սպասս 'ի վերայ զրկոց իւրեանց 'ի տաՀարն յաւիտենական։ Որին աղագաւ պատուէր ետ բարբառն աստուածեղէն, զի 'ի լանջս Արարոնի հաստատեսցի տախտակ դատաս-

տանաց կապեալ ժապաւինօք՝ բանակն կոչեցեալ, նշանակել կամելով՝ զի զսիրտ քահանային մի երբէք գրաւեսցեն խորհուրդք մնոտիք, այլ միայն բանականն պընդեսցէ զայն. և մի խորհեսցի զանխորհուրդ ինչ կամ զանշահ՝ որ կարգեալ է յօրինակ այլոց, այլ ծանրութիւն վարուց ցուցցէ հանապազ եթէ ո՛րչափ բանաւոր պատշաւռ կրէ՝ի սրտի։ Եւ ևս խնամով պատուիրեցաւ, զի՝ի տախտակի անդ դատաստանաց գրեսցին անուանք երկոտասան նահապետաց։ Բանզի կրել՝ի վերայ լանջաց հանապազ զնշանագրութիւնս հարանց՝ է խորհել անդադար զառաջնոցն զվարս. վասն զի յայնժամ անրստգիւտ ընթանայ քահանայն՝ յորժամ անընդհատ ակնարկէ՝ի վարս նախնի հարց, և անդադար խոկայ՝ի շաւիղս սրբոց, և կոխան առնէ զխեղնէշ խորհուրդս, զի մի արտաքոյ քան զհետս կարգին դիցէ զոտս գործոց իւրոց։

Եւ այն Հահողակի տախտակ դատաստանի կոչի. վասն զի առաջնորդն պարտի միշտ քննողաբար դատել և ընտրել ընդ բարի և ընդ չար, և խնամով հայել եթէ զինչ ինչ կամ որոց կամ երբ կամ ո՛րպէս՝ի դէպ գայցեն. և ոչ իւրք զանձինն խնդրել, այլ զայլոց բարին դիւրութիւն անձին համարել։ Նմին իրի գրեալ է անդ. “Եւ դիցես՝ի վերայ տախտակի դատաստանին զյանդիմանութիւն և զՀշմարտութիւն. և եղիցի՝ի վերայ լանջացն Ահարոնի յորժամ մտանիցէ՝ի սրբութիւնն առաջի տեառն. և տարցի Ահարոն զդատաստանս որդւոցն Իսրայէլի՝ի վերայ լանջաց իւրոց առաջի տեառն հանապազ”։

Իբր զի կրել քահանային զդատաստան որդւոցն Իսրայէլի՝ի լանջս առաջի տեառն հանապազ՝ է զննել ըզդատս հպատակաց ըստ դիտաւորութեան և եթէ նեղքին դատաւորին, զի մի ինչ զանձին մարդկօրէն խառնեսցէ յիրս անդ՝ զոր որպէս փոխանորդ Աստուծոյ տնօրինէ, որպէս զի մի զսաստ յանդիմանութեանն խստացուսցէ առանձին ցաւ անձնական։ Եւ յորժամ ընդդէմ այլոցն թերութեաց նախանձայոյզ ցուցցի, մի զիւրսն՝ի դուրս տայցէ. զի մի զհանդարտութիւն դատաստանին ծածուկ նախանձն արատեսցէ, կամ անխորհուրդ բարկութիւն պղտորեսցէ։ Այլ յորժամ ոք զմտաւ ածիցէ

զահ և զերկիւղ գերագունին բոլորից՝ նեղքին դատաւորի, ոչ առանց մեծի երկիւղածութեան կարասցէ առաջնորդել հպատակաց։ Զանգի երկիւղն այն խոնարհեցուցանէ և սրբէ զմիտս առաջնորդին, զի մի բարձրամտութիւն ինչ ոգւոյ փքացուսցէ զնա, կամ հեշտութիւն մարմնոյ շաղախեսցէ, և կամ տարադէպ ցանկութիւն երկրաւորաց մնոտի մտածութեամբք աղօտացուցցէ։ Եւ թէպէտ անմարթ է այսոցիկ չանկանել 'ի սիրտ առաջնորդի, այլ հարկ է աճապարել վանել զնոսա դիմակալութեամբ. զի մի ախտն փորձիչ թելադրութիւն մեղկութեամբ զուարճանալոյ նկուն արասցէ. և այն ինչ դանդաղի ոք արագ արագ 'ի բաց վարել 'ի սրտէ, մի արդեօք սլաքաւ հաւանութեան սպանանիցէ։

Գ. Առաջնորդն լեցի և գլխաւոր յառաջադէմ 'ի գործս, որպէս զի վարուք իւրովք քարոզեսցէ հպատակաց զկենաց ճանապարհ. և հօտն որ զհետ երթայ ձայնի և ընթացից հովուին՝ օրինակօք քան բանիւք լաւ ևս յառաջ խաղայցէ։ Զի որ ըստ հարկի աստիճանին իւրոյ ստիպի բարձրագոյնս բարբառել, նովին հարկաւ բռնադատի վսեմագոյնս ցուցանել արդիւնս։ Զան զի այն բարբառ հեշտեաւ մտանէ 'ի սիրտ ունկնդրաց՝ զոր վարք ասողին գովելի ընծայեցուցանեն. զի զոր ինչ ասելոցն հրամայէ՝ յանձին ցուցանելով դիւրացուցանէ 'ի գործ դնել, վասն որոյ ասի մարգարէին. "Եա՛լ 'ի վերայ լերինդ բարձու աւետարանիչդ Սիոնի"։ Զի որ ոք պարապեսցի յերկնային քարոզութիւն, զերկրային գործոց ցածութիւն 'ի բաց թողեալ՝ 'ի ծագ բարձրութեան իրաց տեսցի արձանացեալ. և այնչափ դիւրագոյն 'ի լաւ անդր ձգեսցէ զհպատակս՝ որչափ արդեամբք վարուց 'ի բարձանց լինի ձայնատու։ Որին աղագաւ ըստ օրինացն Աստուծոյ քահանայն զերին առնու 'ի զոհ, և զաջն ուրոյն, զի ոչ միայն օգտակար լինիցի գործ նոցա, այլ և աննման. և ոչ միայն 'ի մէջ վատթարաց զլաւն առնիցէ, այլ և որպէս 'ի վեր է ինքն կարգաւ պատուոյ 'ի մէջ առաքինի հպատակաց, նոյնպէս և առաքինութեամբ վարուց գերազանց գտցի։ Որպէս և 'ի կերակուր նմին կարգեալ էր երբուծն ընդ երեւոյն. զի զոր ինչ 'ի զոհից հրամայի առնուլ, զնոյն ուսցի մատուցանել յիւրմէ հաստչին։ Եւ ոչ միայն 'ի սրտի իւրում

ուղիղս խորհեսցի, այլ և զտեսողս իւր 'ի բարձրագոյնս ձգեսցէ ձեռնտուութեամբ գործոյ։ Ոչ ցանկասցի իմիք յաջողուածոց կենցաղոյս, և ոչ 'ի հակառակաց զանգիտեսցէ. զհրապոյրս աշխարհի անդոմնեսցէ պատկառկալով ներքին երկիւղի, իսկ զերկիւղս արհամարհեսցէ՝ հայելով 'ի ճաշակ ներքին քաղցրութեան։

Ուստի և ըստ վերին հրամանի երկոքին ուսք քահանային պնդին ծածկութիւ վակասին, որպէս զի ընդդէմ աջողութեանց և ձախողութեանց ամրասցի հանապազ զարդուք առաքինութեանց. իբր զի ըստ ձայնին Պօղոսի՝ զինուք արդարութեան յաջմէ և յահեկէ գնալով, ուր առ ներքինս և ետ նկրտի՝ մի խոտորեսցի 'ի կողմն ինչ վայրաքարշ անձնդիւրութեան։ Ոչ դէպք փքացուսցեն զնա, և ոչ տարադէպք խռովեցուսցեն. ոչ ախորժականք մեղկեսցեն զնա 'ի զրգութի, և ոչ դաժանականք յանյուսութի ճնշեսցեն. զի յորժամ անյաղթ 'ի կրից ոչ դրդուի 'ի մտացն հաստատութէ, ցուցանէ եթէ քանի գեղեցիկս պատեալ էին երկոքին ուսք իւր։

Գեղեցիկ էր և հրամանն, զի վական կամ ուսանոցն լինիցի յոսկւոյ, 'ի կապուտոյ, 'ի ծիրանւոյ, 'ի կըրկին ներկելոյ կարմրոյ, և 'ի բեհեզոյ նիւթելոյ. յայտ արարեալ եթէ քանի պէսպիսութեամբ առաքինութեանց արժան է փայլել քահանային։ Վասն զի 'ի հանդերձս քահանային յառաջ քան զամենայն արտաքին ոսկի, որպէս զի գլխաւորաբար շողշողեսցէ 'ի նմա հանճար իմաստութե։ Յոր ընդելուզանի կապուտակ՝ որ 'ի դուրս շողայ 'ի գոյն ոսկւոյ, որպէս զի յոր միջամուխ լինի իմաստիւք՝ մի բնաւ 'ի գետնաքարշ հաճոյս բերիցի յայնմ, այլ 'ի սէր երկնաւորաց 'ի վեր ելանիցէ. զի մի յանզգուշից ըմբռնեալ յանձին գովութիւ՝ թափուր գտանիցի յիմաստից ճշմարտութեան։ Իսկ ծիրանի ընդխառնի յոսկին և 'ի կապուտակն յայն սակս՝ զի սիրտ քահանային յորժամ ակնկալեալ մնասցէ երկնայնոցն զորս քարոզէ՝ յանձին իսկ իւրում ճնշեսցէ զհրապոյրս ախտից, և սաստեսցէ նոցա իբրու թագաւորական իշխանութեամբ, որպէս զի տեսցէ հանապազ զաշնուականութիւն վերստին ծննդեան ներքնոյ, և զերկնաւոր արքայութեան զձև պինդ կալցի 'ի վարս իւր։ Վասնզի և վասն այսր աշնուականութեան հոգւոյ

ասացաւ 'ի ձեռն Պետրոսի. "Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորական՝ քահանայական (կամ քահանայութիւն)"։ Ի նուաճել ընդ իշխանութեամբս այսուիկ զախտս մեր՝ զօրացուցանէ զմեզ և բանն Յովհաննու, զի ասէ. "Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել"։ Ի սոյն պատիւ ազիւթեան ակնարկէ և սաղմոսերգուն յասել անդ. "Ինձ յոյժ մեծարու եղեն բարեկամք քո Աստուած, և յոյժ զօրացան իշխանք (կամ իշխանութիւնք) նոցա"։ Զան զի սրբոցն միտք առաւելապէս 'ի վերինս անդր ուղղին 'ի կրեն արտաքուստ զստորինս և զանարգս։

Իսկ ընդ ոսկի և ընդ կապուտակ և ընդ ծիրանի յեռեալ լինի որդան կարմիր կրկին ներկեալ՝ որպէս զի յանդիման աչաց ներքին դատաւորին ամենայն լաւութիւնք առաքինութեանց շքեղասցին 'ի սիրոյ. և որ ինչ իրք ցոլանան առաջի մարդկան, զնոյնս վառեսցէ առաջի գաղտնի դատաւորին բոց ներքին սիրոյ։ Եւ այս սէր, քանզի միանգամայն զԱստուած սիրէ և զընկերն, իբրև 'ի կրկին ներկուածոյ շողշողէ։ Զաստի որ միանգամ այնպէս ըղձակաթ լինի 'ի տեսիլ հաստչին մինչև անտես առնել զինամարկութեամբ ընկերաց, և կամ այնպէս անձնատուր լինի 'ի հոգս մերձաւորաց մինչև հուսանալ յաստուածսիրութենէ, ընդ անփոյթ առնելն զմիով յերկուցս՝ այնպիսին անգիտանայ ունել 'ի վակաս իւր զզարդ կրկին կարմրոյ։ Այլ յորժամ միտքն ձգտի 'ի պատուիրանս սիրոյ, կայ մնայ նմա անշուշտ մաշել զմարմին ժուժկալութեամբ. որ վասն 'ի կրկին կարմիրն յարի բեհեզ մանեալ. վասն զի բեհեզն կամ վուշն յերկրէ ելանէ սպիտակափայլ տեսլեամբ։ Եւ զի՞նչ այլ նշանակի բեհեզով՝ բայց եթէ ողջախոհութիւն մարմնոյ՝ փայլեալ պայծառ վայելչութեամբ մաքրութեան, իբր զի մանեալ զօդի 'ի գեղեցկութիւն վակասին. վասն զի յայնժամ ողջախոհութիւնն հասանէ 'ի կատարեալ պայծառութիւն մաքրութեան, յորժամ մարմինն ձգնի 'ի պահս ժուժկալութեան։ Եւ յորժամ 'ի մէջ այլոց առաքինութեանց 'ի հանդէս մտանէ և փոյթ խոշտանգելոյ զմարմին, իբրև 'ի բազմագունի տեսիլ վակասին սպիտակափայլ շողայ բեհեզն մանեալ։

Դ. Առաջնորդն լեցի և զգուշապահ կամ հսկող լու-

թեան, և հոգեշահ 'ի բանս, զի մի լցցի նման կամ զլռելոյ արժանիս՝ բարբառել, կամ լռել զարժանն 'ի խօսելոյ։ Այսուն զի զոր օրինակ անզգոյշ խօսք ձգեն 'ի սխալումն, նոյնպէս և անխորհուրդ լռութիւն 'ի սխալանս պահէ զոր կարող էին հրահանգիլ։ Բանզի բազում անգամ անխոհեմ առաջնորդք զանգիտեալ 'ի չկորուսանել զմարդկան ընորհս՝ երկիւղն համարձակ զուղղեն ասել. և ըստ ձայնի ճշմարտութեանն ոչ տանին փոյթ պահպանութեան հօտին խնամով հովուի, այլ ըստ օրինակի վարձկանաց ծառայեն, վասն որոյ 'ի գալ անդ գայլ՝ թողուն և փախչին, երբ լութեամբ զանձինս զուղակեն 'ի թաքստեան։ Այսպի յանդիմանէ տէր զնոսա մարգարէիս, ասելով. "Շունք համրացեալք, որ ոչ կարիցեն հաջել..։ Այլ դարձեալ բողոքէ և ասէ. "Այլ կացին 'ի հաստատութեան և ժողովեցին հօտս 'ի վերայ տանդ Իսրայէլի, և ոչ հաստատեցան՝ այք խօսէին յանուն տեառն..։ Այսուն զի կայն 'ի հաստատութեան՝ է համարձակաձայն պաշտպանել հօտին ընդդէմ իշխանութեանց աշխարհի։ Այլ հաստատիլն 'ի խօսելն յանուն կամ յաւուր տեառն՝ է զդէմ ունել անիրաւ հակառակելոց սիրով արդարութեան. քանզի լռելն հովուի առ ահի 'ի խօսելոյ զուղղն՝ զինչ այլ եթէ ոչ լռելով թիկնադարձայ լինել. իսկ որ 'ի վերայ հօտին դնէ զանձն իւր, որպէս պարիսպ կանգնի ընդդէմ թշնամեաց վասն տանն Իսրայէլի։

Այսրէն վասն դարձեալ ասի առ Ժողովուրդն յանցուցեալ. "Այսրդարէքն տեսին քեզ տեսիլս զուր տարապարտուց և անօգուտ, և ոչ յայտնեցին քեզ զանիրաւութիւնս քո, զի դարձ լցցի քեզ..։ Այս զի մարգարէ կոչին 'ի սուրբ տառս երբեմն վարդապետք. այք յորժամ ցուցանեն՝ թէ պարտ է փախչել յառաջիկայից, զաղասպայ լինելովն յայտ առնեն։ Իսկ զրատեսիլս յանդիմանել զնոսա լինել գիրն, յորժամ զանգիտեն կշտամբել զմեզ, և 'ի զոր մարդահաճեն յանցաւորաց զբաստուգութիւն խոստանց. և ոչ յայտնեն երբէք զանիրաւութիւն մեղուցելոց՝ լռելով 'ի սատելոյ։ Այս բանսդ բացող է ձայն յանդիմանութեան. վասն զի յանդիմանելովն յայտնին յանցանք, զոր բաղում այն է զի անպիտանայ և յանցաւորն։ Այս որոյ ասէ Պօղոս.

«Օ ի կարող իցէ և միթիթարել ողջմտութեամբ վարդապետութեան, և զհակառակորդսն կշտամբել»։ Ասեալ և 'ի ձեռն Աղաքիայ ասի. «Շ ութունք քահանային զգուշացին զիտութեան, և օրէնս խնդրեսցեն 'ի բերանոյ նորա. զի հրեշտակ տեառն ամենակալ է»։

Որպէս և Լ.սայեաւ յուշ առնէ տէր. ասէ. «Զոչեա, և մի խնայեար. բարձրացո իբրև զփողոց զբարբառ քո»։ Ա ան զի զմունետիկ քարոզի պաշտօն առնու՝ որ մատչի 'ի քահանայութիւն. որպէս զի նախ քան զգաւստ ահաւոր դատաւորին եկաւորի՝ ինքն կարապետ լինիցի մեծաձայնութեամբ։ Լ.ուդ եթէ քահանայն անպէտ իցէ քարոզութեան, զինչ ինչ կարդասցէ մունետիկ համր այդպիսի։ Լ.յս իսկ է պատճառն, զի 'ի վերայ նախկին հոլուաց հոգին էջ նստաւ 'ի տեսիլ լեզուաց. զի զոր նու, զնոսին իսկ և իսկ ինքնախօսս կացուցանէ զիւրմէ։ Լ.ս վասն այսորիկ հրաման տուաւ Մովսէսի, զի քահանայն 'ի մոանելն 'ի խորանն՝ զանգակս զիւրև ունիցի. իբր զի ձայնք քարոզութեանն իցեն 'ի նմա, զի մի լուութեամբ զեղչեսցէ զդատաստան վերին դիտապետին. քանզի գրեալ է. «Լ.ս եղիցի 'ի վերայ Հարոնի հնչիւն բարբառոյ 'ի մոանելն իւրում 'ի սրբութիւնն առաջի տեառն և յելանել նորա, զի մի մեռանիցի»։ Զանգի մեռանի քահանայն՝ որ մոանէ կամ ելանէ, եթէ ոչ լուիցի հնչիւն առ 'ի նմանէ. զի զարկութիւն զաղանի դատաւորին յինքն ձգէ եթէ առանց հնչման քարոզութեան գնայ։ Լ.ս բարոյ գրի, թէ զանգակք փոքրիկք յեռեալ էին 'ի զգեստս նորա. քանզի զինչ այլ պարտ է մեզ խմանալ զզգեստս քահանայի, եթէ ոչ զգործս ուղղութեան. ըստ որում վկայեաց մարգարէն. «Զահանայք քո, ասէ, զգեցցին զարդարութեան»։ Իսկ զանգակք էն յեռեալ 'ի զգեստս նորա, զի զձանապարհ կենաց հնչեցուսցեն զոյզ ընդ բարբառոյ լեզուին և գործք քահանային։

Լ.սէ 'ի պատրաստել առաջնորդի զանձն իւր 'ի խօսել՝ ուշ կալցի թէ որչափ խնամով զգուշութեան խօսեսցի. զի մի յորժամ անկարգաբար բերիցի 'ի խօսել, սիրաբ ունկնդրաց խոցեսցին վիրաբ սխալանաց. և ուր թերևս բաղձայ խմաստուն երևել՝ զգօդ միութեան ան-

խնստաբար քակեսցէ. քանզի վասն այսորիկ ասէ և Ճշմարտութիւնն. «Լալարուք յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս»։ Լաւ զի աղիս նշանակի խնստութիւն բանի. ուստի որ կամի խնստութեամբ խօսել՝ մեծապէս երկիցէ, զի մի՝ ի խօսից նորա միութիւն ունկնդրաց շփոթեսցի։ Այսոսն այն և Պօղոս ասէ. «Ի առաւել քան զարժանն խորհել, այլ խորհել՝ ի զգաստանալ»։ Այսինքն իբրև՝ ի զգեստ քաղանային ըստ աստուածեղէն հրամանի՝ ի զանգակս անդ յարին նռնաձևք։

Լաւ զինչ նռամիք կամ նռնաձևիւք նշանակիցի, եթէ ոչ միաբանութիւն հաւատոյ։ Վասնզի զոր օրինակ՝ ի նռան միով կեղևով որ արտաքոյ՝ բազմութիւնք հատից՝ ի ներքոս ամրացեալ գտանին, նոյնպէս զանթիւ ժողովուրդս սուրբ եկեղեցւոյ միութիւն հաւատոյ պարգևէ, զորս՝ ի ներքուստ պինդ ունի պէսպիսութիւն արդեանց։ Այլդ զի մի անխորհրդաբար յարձակեսցի առաջնորդն՝ ի խօսել, Ճշմարտութիւնն ինքնին բարբառի առ աշակերտս զնախաձառեալն բան. «Լալարուք յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս»։ Որպէս եթէ նշանակաւ քահանայական ըզգեստուն ասէր. «Լռնաձևս յեռէք՝ ի զանգակս, զի յամենայնի զոր ասէք՝ զմիաբանութիւն հաւատոյ զգուշաւոր կարգօք պահեսջիք։

Լաւ և արթուն մտօք պարտ է դիտել առաջնորդաց, զի ոչ միայն չերանիցէ ընդ բերան նոցա բան վատթար բնաւին, այլ զի և բանն ուղղութեան մի բարբառեսցի անչափութեամբ և անկարգութեամբ. վասն զի բազում անգամ զօրութիւն ասացելոցն կորնչի, յորժամ առ՝ ի սիրտս ունկնդրաց խօսեսցի սեթևեթիւք և անզգոյշ անպատեհութիւք շատիսօսութեան. զի և գբարոգ բանին ապականէ նոցն իսկ բազմաբանութիւնն, որ անօգուտ է ամենևին ունկնդրաց՝ ի պէտս յառաջադիմութեան։ Ուստի՝ ի դէպ ասացաւ՝ ի ձեռն Այսոսեսի. «Այն ուրուք ասն, որոյ լինիցի ծորումն՝ ի մարմնոյ իւրոյ, ծորումն իւր պիղծ է»։ Այսն զի՝ ի միտս ունկնդրաց սերմն խորհրդոյ՝ ի յղացումն՝ է հանգամանք լսելի խօսիցն. զոր յորժամ ընդ ունկն յղարկեալ լինի բանն, ՝ի միտս ծնանի խորհուրդ. վասն որոյ և յիմաստնոց

աշխարհի քաջ քարոզ բանին սերմանաբան կամ սեր-
մանաքաղ կոչեցաւ։ Պպա ուրեմն որ ոք ունի զծորումն
սերմանն, անսուրբ գտանի. վասն զի 'ի շատխօսութիւն
վարակեալ, նովին իսկ պղծէ զանձն իւր. զոր եթէ օ-
րինօք բղխեր 'ի բարբառէն, կարօղ էր ուղիղ խոր-
հրդոց զաւակս գոյաւորել 'ի սիրտս լսողաց. այլ յոր-
ժամ անխորհրդաբար ծորի շատխօսութեամբ, ոչ 'ի
պէտս ծնողեան՝ այլ 'ի պղծութիւն ծորեցուցանէ։ Ասա-
տի և Պօղոս 'ի խրատել զաշակերտն 'ի փոյթ քարո-
զութեան ասէր. "Ի կայեմ առաջի Պստուծոյ և Քրիս-
տոսի նորա, որ դատելոյն է զկենդանիս և զմեռեալս 'ի
գալստեան նորա և յաղքայութեան. և դու քարոզեա
զբանն, հաս 'ի վերայ ժամու և տարաժամու"։ Քան-
զի ասելոյ էր՝ տարաժամու, կանխեաց ասել՝ ժամու.
զի առաջի մնաց ունկնդրաց անձամբ զանձն եղծանել
ցաժուութեամբ իւրով, եթէ տարադէպ ժամանակն չգի-
տէ և զդիպող ժամանակ։

Ե. Պաջնորդն լեցի և ընտանի կարեկից միոյ միոյ,
և 'ի վերայ ամենայնի վսեմսխոհ և ընդմնատար քան
զամենեսին. զի և գթով մարդասիրութեան զամենե-
ցուն զկարիս տկարութեան յանձին բարձեալ բերիցէ,
և վսեմութեամբ դիտողութեան գեր 'ի վերոյ քան
զանձն ևս իւր լինիցէ՝ յանձերևոյթս ձգտելով. զի մի
կամ 'ի բարձունս վերակնելով՝ անտես արասցէ զմեր-
ձաւորսն զտկարութիւնս, և կամ 'ի կարիս ընկերացն
հաւասարեալ՝ թողուցու ձգտիլ 'ի բարձրագոյնս։ Ուս-
տի և Պօղոս թէպէտ և 'ի դրախտն վերառեալ լինի,
և զերրորդ երկնից զգաղտնիս հետաղօտէ, սակայն 'ի
յափշտակել անդ 'ի խորհուրդս անեղերութիւն՝ դարձու-
ցանէ զբիւս մնացն 'ի խշտիս մնրմնաւորաց, և տես-
տեսէ եթէ ոչպէս պարտին վարիլ և 'ի թաքունս իւ-
րեանց՝ ասելով. "Ոչայց վասն պոռնկութեան իւրաքան-
չիւր ոք զիւր կին կալցի, և իւրաքանչիւր ոք կին զիւր
այր կալցի. կնոջ այր իւր զպարտսն հատուսցէ, նոյն-
պէս և կինն առն իւրում"։ և թէ "Ոչ 'ի զրկէք զմի-
մեանս, բայց եթէ ինչ 'ի միաբանութենէ առ ժամա-
նակ մի, զի ուխտիցն (կամ աղօթիցն) պարապիցէք. և
դարձեալ 'ի նոյն դարձջիք, զի մի փորձեսցէ զձեզ
սատանայ"։

Տեսանէս, զի նա որ յերկնային գաղտնիս միջամուխ լինի, տակաւին զկնանելով առ զԹոյն՝ զմարմնաւորացն խշտիս զնոսկ. և 'ի վերակոխել յանտեսանելիս՝ զնոյն աչս սրտին դարձուցանէ զԹասիրութեամբ 'ի գաղտնիս տկարաց և խօթամտաց։ Դէր 'ի վերոյ երկնից անցանէ տեսութիւն մնաց, բայց ոչ ապահաս առնէ զանկողինս մարմնաւորաց հոգածութեամբ. քանզի զոգիս սիրոյ կապեալ ընդ գերագոյնն միանգամայն և ընդ ստորինս, յանձին իւրում զօրութեամբ հոգւոյն քաջառոյգ 'ի բարձունս յափշտակի, և հայրագութ սիրով անխառով ընդ այլս հիւանդանայ. քանզի և վասն այսորիկ իսկ ասէր. "Ո՞վ հիւանդանայ, և ես ոչ հիւանդանամ. ո՞վ դայթագղի և ոչ ես տապանամ,,։ Այսին իբրև զարձեալ ասէ. "Այդէ ընդ Հրեայսն իբրև զՀրեայ,,։ Եւ զայս առնէր՝ ոչ եթէ զՀաւատս կորուսանելով, այլ տարածանելով զգորով զԹոյ. իբրու այն թէ յինքեանս կերպարանէր զդէմս անհաւատից՝ որպէս զի յանձնէն ուսցի, եթէ զիսարդ պարտ իցէ ողորմել այլոց. վասն որոյ և զայն առնէր ընդ նոսա սիրով, զոր ինչ կամէր ողջմտութեամբ զի արասցէն ինքեանք՝ եթէ լինէր և ինքն այնպիսի ոք։ Ասատի միւս անգամ՝ ասէ. "Օ՛ի եթէ առանցաք ինչ, այն Աստուծոյ է. և եթէ զգաստանամք՝ այն ձեր է,,։ Զանգի իրագէտ էր անձին՝ զի երբեմն տեսութեամբ մնացն անցանէր զանցանէր, և դարձեալ զկնանելով ունկնդրաց չափաւորէր զանձն։

Ասա այսմ Յակոբ առ տեր 'ի վեր ձգտելով, և 'ի վայր զվէճն օգնանելով, տեսանէ զհրեշտակս որ երանէին և իջանէին. իբր զի ողջմիտ քարոզք բանին ոչ միայն տեսութեամբ 'ի վեր ձգտին 'ի սուրբ գլուխ եկեղեցւոյ 'ի տէր, այլ և 'ի խոնարհ իջանեն առ նորա անդամն՝ ողորմելով։ Որպէս և Մովսէս ասէ՝ 'ի խորանն մնաց նէ և երանէ. և թէպէտ 'ի նեբրս 'ի հայեցողութիւն յափշտակի, այլ արտաքոյ հարկաւորի բերել 'ի կարիս խօթացելոց. 'ի նեբրս խորհի զգաղտնիս Աստուծոյ, իսկ արտաքոյ բառնայ զանձն մարմնաւորաց, և 'ի տարակուսելի իրս միշտ 'ի խորան անդր դիմէ, և առաջի տապանակի ուխտին հարցանէ զտէր, խնդրէս օրինակ տալով առաջնորդաց՝ թէ զինչ արասցէն յորժամ վարանիցին արտաքոյ. 'ի միոս միշտ դարձ առնիցէն որպէս

'ի խորան, և իբրու յանդիման տապանակի ուխտին՝ խորհուրդ հարցցեն 'ի տեառնէ զնրաց՝ յորս յերկիրսյս լինին. ընդ միտս իւրեանց քաղեսցին զպատգամն տա-ուից սրբոց։

Սորին աղագաւնս ինքն Ճշմարտութիւնն, որ զմերս առեալ զմարդկութիւն երևեցաւ մեզ, 'ի լերին յաղօթս պարապի, 'ի քաղաքս առնէ սքանչելիս, Ճանապարհս վՀետ երթալոց Հորդեալ ընտիր առաքնորդաց. զի թէ և Հայեցողութեամբ 'ի բարձունս ձգտեսցին, բայց և 'ի կարիս Հիւանդացելոց կարեկցութեամբ Հաւատարեսցին. վասն զի սերն յայնժամ աքանչելապէս 'ի բարձունս վերանայ, յորժամ զթասիրապէս 'ի ստոր իջանէ 'ի կաբիս մերձաւորաց. և որչափ մարդասէր ազուլ իջանէ 'ի ստորինս, այնչափ ուժգնակի բերի 'ի դերադոյնս։ Արդ այնպէս ընծայեցուսցին զանձինս վերակացուք, զի Հպատակքն մի ամանէսցին և զգաղանիս իւրեանց մերկանալ առաջի նոցա. զի յորժամ Հողմակոծին մնանիւնք ալեօք փորձութեանց, ապաստան լցցին 'ի միտս Հովուաց իբրև 'ի գիրկս մարց. և զոր յառաջատես լինին յանձինս՝ թէ մարթին շաղախել աղտովք վերաՀաս փորձութեանց, լուացեալ սրբեսցին սփոփանօք յորդորանաց նոցա, և արտասուագին աղօթիւք։

Ասի և առ դուրս տաՃարին 'ի պէտս լուանալոյ մնանողաց զձեռս՝ ծով կամ աւազան պէնձի բարձեալ ունէին երկոտասան զուարակք. որոց դէմք արտաքս կոյս երևէին, իսկ յետոյք ներսէին։ Այս զինչ նշանակիցի երկոտասան եղամբքն, եթէ ոչ Հաճարին կարգ Հովուաց, զորոց և Պօղոս Ճառէ բանիս օրինաց, թէ "Մի կապեսցես զցուլն եղին կալոտոյ"։ Օ գործս սոցա ըզյայտնիս մեք նշմարեմք, այլ թէ առաջի անաչառ դատաւորին զինչ ինչ մնայ նոցա յետոյ 'ի գաղտնի Հատուցման, անպիտանամբ։ Այլ որ միանգամ Համբերութեամբ զինչման իւրեանց պատրաստէն զանձինս 'ի լուանալ և 'ի մաքրել զնոստովանութիւնս մերձաւորաց, իբրու աւազան առ դուրս տաՃարին բարձեալ կրեն. զի որ ոք ջանասցի մնանել ընդ դուռն յաւիտենից, զփորձութիւնս իւր յայտնեսցէ մնաց առաջնորդին, և իբրու յաւազանի եղանց լուասցէ զձեռս խորհրդոյ կամ գործոց։

Բազում անգամ պատահէ, զի յորժամ ոգի առաջնորդին զիջանելով խեղամուտ լինի այլոցն փորձութեանց, 'ի լոյս նոցին և ինքն կրէ ինչ փորձութիւն. քանզի և ջուրն որով սրբի բազմութիւն ժողովրդեան՝ անշուշտ աղտեղանայ յաւազանի անդ. զի յընդունելն զաղտս լուացելոց՝ կորուսանէ զյատակութիւն մաքրութեան իւրոյ։ Բ.ՍԼՀ՝ արժան առաջնորդին զանգիտել յայսմանէ բնաւ. քանզի որ նրբահայեաց գնիչ է ամենայնի տերամբ, այնչափ գիւրաւ ձողոպրի նա յիւրմէ փորձութենէ՝ որչափ մարդասիրութեամբ աշխատութիւն կրէ 'ի փորձութեանց այլոց։

Զ. Բաջնորդն իցէ և բարեգործաց խոնարհութիւն գործակից, և ընդդէմ յանցաւորացն ախտից քաջալանջ արձանացեալ նախանձաւորութեամբ արդարութեան. որպէս զի 'ի բարիս անդ մի նախամեծար զանձն արասցէ քան զոք, և 'ի պահանջել յանցուածոց վատթարաց՝ անդէն և անդ գիտակ լիցի իշխանութեան գահերիցութեան իւրոյ. ուստի և զանձին պատիւ զիջուցեալ՝ հաւասար զանձն առդիցէ բարեպարիշտ հպատակաց, և ընդդէմ խեղաթիւրից մի զանգիտեսցէ վարել զկրաւունս ուղղութեան։ Բանզի որպէս յիշեմ՝ ասացեալ է իմ 'ի Բարոյական գիրս, եթէ յայտ է զի բնութիւնն զամենայն մարդիկ հաւասարս ծնանի, այլ ըստ պէսպիսութեան գործոց զոմանս քան զայլս ստորին կացուցանեն յանցանք։ Այլ զի զանազանութիւն ըստ թերութեան՝ տնօրինի յաստուածային դատաստանէ. զի որովհետև չիարէ ամենայն մարդ միօրինակ կեալ, մին 'ի միւսմէ կառավարի. վասն որոյ ամենեքին որ վերանիստ գտանին՝ ոչ անձանց պարտին գրել զիշխանութիւն կարգին, այլ հայել 'ի հանգամանս վիճակին, և ոչ խնդամտիլ ընդ վերագոյն լինել իւրեանց քան զայլ մարդիկ, այլ օգտել նոցա։

Պարտին հարք մեր առաջինք ոչ եթէ թագաւորք մարդկան ճանաչին, այլ հովիւք խաշանց։ Այլ յորժամ ասաց տէր ցՊետրոս և ցորդիս նորա, "Ընձեցէք և բազմացարուք, և լցեք զերկիր,,, առ նովին 'ի վերայ ած. "Այլ եղիցի ահ և երկիւղ ձեր 'ի վերայ ամենայն գազանաց երկրի,,։ Այլ զի հրամանն է վասն լինելոյ ահի և երկիւղի նոցա 'ի վերայ անասնոց երկրի, անշուշտ

արդեաւ ապա չ լինել 'ի մարդկան վերայ։ Այլ քանզի մարդն գերազանցեալ է քան զայլ անբան կենդանիս, և ոչ եթէ քան զմարդիկ, նմին իրի ասի մարդոյն՝ զի անանցոց և ոչ մարդկան երկիւղալի լինիցի. վասն զի ընդդէմ բնութեան ամբառնալ է հպարտութեամբ՝ կամելն երկիւղալի լինել հաւասարին։

Այլ սակայն հարկ իսկ է զի հպատակք երկիցեն յառաջնորդաց՝ յորժամ ընտրեալք իցեն Յիսուսոյ. զի գէթ առ մարդկային ահի երկիցեն 'ի մեղանչելոյ՝ որք ոչն զանգիտեն յաստուածային դատաստանաց։ Այլ ոչ իւիք ամբարտաւանին վերակացուք զայս օրինակ ահ ածելով, յորում ոչ զանձանց փառս ինդրեն, այլ զՀՕպատակացն արդար գնացս։ Զ ան զի յորժամ 'ի վատթարաց պահանջեն զերկիւղ՝ ոչ որպէս մարդկան՝ այլ որպէս անբանից տիրեն նոցա. զի որով մասամբ անբանականք են հպատակք, հարկ է զի ըստ այնմ մասին ընդ երկիւղիւ նուաճեսցին։

Զ՚ամենայն ասեալս զի առաջնորդն առ գերակայ քան զայլս լինելոյ՝ ուռնու փքացմամբ մնաց. և յորժամ ամենայն ինչ ներքոյ կայ հրամանաց նորա, և ըստ հաճոյս կամաց նորա անցեալք իրքն կատարին, հպատակք ամենայն՝ եթէ բարւոք իրքն վճարեցան գովին գնա, իսկ 'ի վատթարն յանգիլ՝ չիշխեն ինչ ընդդէմ ասել, մանաւանդ թէ բաղում անգամ գովին և զոր պարտաւելի ճանաչեն. սոքիմբք պատրեալ՝ որ հիշատակի թուին՝ բարձրամտի անձն առաջնորդին. և ուր արտաքոյ անչափ պերճութեամբ ճոխանայ, 'ի ներքուստ 'ի ճշմարտութենէն նանրանայ, և մոռացող եղեալ անձին՝ օտարոտի ճայնից միտ դնէ, և այնպիսի առդնէ զանձն՝ որպիսի լսէ արտաքուստ, և ոչ որպիսի պարտ էր 'ի ներքուստ զինքն քննել։ Զ՚ինգոմնէ զընդ ձեռամբ անկեալս, և ոչ ևս ճանաչէ զնոսա իւր հաւասարս 'ի բնութեան սակի. և զորովք զանցանէ իշխանութեամբ, գերազանցել զնոքօք համարի և արդեամբք վարուց. կարծէ ի մասնանգոյն լինել քան զամենեսեան՝ զորս և կարողութեամբ 'ի վեր տեսանէ քան զանձն։

Զ կատար իմն բարձրութեան դնէ անձամբ զանձն. և որ հասարակաց բնութեան հանգամանքօք զգածեալ է միօրինակ, հաւասարս տեսանել զնոսա ոչ արժան

համարի. մինչև 'ի նմանութիւն անդր նորա երանել, զորմէ գրեալ է. "Օ ամենայն բարձունս տեսանէ, և ինքն է թագաւոր ամենայն որդւոց ամբարտաւանութեան (կամ՝ ամենայնի՝ որ 'ի ջուրսն են)"։ Որ և յանդգնագաւ կան բարձրութիւն ձգտեալ, և զհրեշտակաց անգամ ընկերութեամբ քամահեալ՝ ասէ. "Այդպէս 'ի վերոյ քան զամպս զաթոռ իմ (ընդ հիւսիս), և երթայց նմանողք բարձրելոյն"։ Այս այսպէս սոսկալի դատաստանաւ 'ի ներքուստ խորխորատ գտանել խարդաւանութեան՝ որ արտաքուստ ամբառնայ զանձն 'ի ծագ կարողութեան. քանզի ապստամբ հրեշտակին նման գտանի մարդն՝ յորժամ նման լինել մարդկան դժկամակի։

Բ՝ստ այսմ Սաւուղ յետ արգասեաց խոնարհութիւն սոնքացեալ յօրացաւ փքացմամբ ամբարտաւանութեան 'ի բարձրութեան անդ իշխանութեան. խոնարհութիւն յարգեցաւ, հպարտութեամբ անարգեցաւ, ըստ տեառն վկայելոյ՝ որ ասէր (բերանով Սամուէլի). "Որչ ապա քէն փոքր էս դու առաջի նորա (կամ՝ էիր յաչս քո). և օծ զքեզ տէր թագաւոր 'ի վերայ Իսրայէլի"։ Ահա որ փոքր էր և յաչս իւր, հասեալ յիշխանութիւն մարմնաւորդ՝ ոչ էս փոքր տեսանէր զանձն իւր. քանզի հայեցեալ 'ի պատիւ անձին գերազանցեալ զայլովք կարողութեամբ, մեծ քան զամենեսին զինքն կարծէր։ Այն իսկ ածէ զարմանս, զի ցորչափ փոքր էր յաչս իւր՝ մեծ էր առաջի Աստուծոյ. այլ յորժամ մեծ թուեցաւ անձին, փոքրկացաւ առ Աստուծոյ։

Այսպէս ուրեմն յորվակի 'ի յորդելոյ հպարտակաց զմեծարանս՝ փքանայ անձն առաջնորդին, և յաւելեալ յամբարտաւանութիւն ըստ պտղանաց մեծութեան և փառաց՝ եղծանի յապականութիւն։ Այս բարւոք վարէ զիշխանութիւնն, որ զիտէ ունել զայն միանգամայն և ասել։ Այս գիտէ բարւոք առաջնորդել, որ նոսա հանդիսանայ հակառակ մեզաց, և 'ի նմին հաւասար այլոց զանձն յարմարէ։ Այսպէսն միաք մարդոյ բազում անգամ ամբարհաւաձեն առանց ունելոյ անգամ իշխանութիւն ինչ. ապա քանի էս բարձրամտի եթէ և իշխանութիւն 'ի վերայ յաւելցի։ Այսց զնոյն իշխանութիւն ուղիղ անօրինեն՝ որ քաջ գիտացէ քաղել անտի զօդտակարս, և վանել զաւրեթս փոքռութեան, և

զուգահաւասար այլոց տեսանել զանձն իւր, միայն վերագոյն զինքն ունելով նախանձաւորութեամբ վրէժխնդրութեան ընդդէմ յանցուցելոց։

Եւ զայս անաչառ ընտրողութիւն տիրապէս 'ի միտ առնումք՝ եթէ դէտակն կացուցք յօրինակ հովուին առաջնոյ։ Զանգի Պետրոս զգլխաւորութիւն սուրբ եկեղեցւոյ ունելով առ Յիսուսէ, յորժամ Կուռնելիոս բարեսէր կամաք յոտս նորա երկիր պագանելով խոնարհաբար՝ հրաժարեաց յանչափ պատուոյ նորա, և հաւասար նմին զինքն ասաց, "Կանգնեաց զնա, և ասէ. յոտն կաց, և ես ինքն մարդ եմ"։ Եւ յորժամ յանցանս եղիտ 'ի վերայ Յնանիայի և Սափիրայ, անդէն և անդ եցոյց զմեծութիւն իշխանութեան իւրոյ 'ի վերայ այլոց. քանզի բանիւ և եթէ եհար կորոյս զկեանս նոցա, զոր ծանեաւ ծածկագէտ հոգւոյն. և գերագոյն յեկեղեցւոջ զանձն յայտնի կացոյց ընդդէմ մեղաց, զոր ոչն հանդիսացոյց յընդունելն զպատիւ տարապայման առաջի բարեսէր եղբարց։ Զնդ սրբութիւն զործոյն զհաղորդութիւն հաւասարութեան ծանոյց, ասա նախանձ վրէժխնդրութեան զնրաւունս արտայայտեաց իշխանութեան։

Պօղոս առ բարեսէր եղբարս անյայտացուցանէր զիւր վերակացութիւն, յասել անդ. "Օ՛ի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատոյվք, այլ գործակից եմք շնորհացդ ձերոց"։ ուր և յարէ. "Զանգի հաւատոյվք հաստատեալ կայք"։ իբրու բացատրելով զասացեալն. վասն այն ոչ տիրեմք 'ի վերայ հաւատոց ձերոց, վասն զի հաստատուն կայք հաւատոյվք. քանզի հաւասար գտանիմք ձեզ յայնմ, յորում զձեզ գիտեմք կալ։ Զոպէս թէ անգիտանայր զանձն վերակացու և առաջնորդ լինել եղբարց, ասէր. "Լղեաք հեզք (զոպէս տրուպք) 'ի միջն ձերում"։ և դարձեալ, "Օ՛մեզ ծառայս ձեզ (գիտեմք) վասն Քրիստոսի"։ Եւ յորժամ յանցանս եղիտ՝ զոր պարտ էր յանդիմանել և ուղղել, ասէ. "Եւ դուք զոպէս կամիք, զաւազանաւ եկիցս առ ձեզ"։

Ուրեմն բարձր աստիճան պատուոյն բարւոք մնօրինի յորժամ գահագլուխն իշխեսցէ առաւել 'ի վերայ ախոյեանց քան եղբարց։ Եւ յուղղել անդ առաջնորդաց զկպատակս՝ կարևոր է և այն, զի ինամ կացցին արթ-

նութեամբ 'ի միոյ կողմանէ օրինօք հրամանգաց պատ-
ժել զանացանս ըստ իրաւանց իշխանութեանն, և 'ի միւս
կողմանէ պահելով զնոմարհութիւն՝ ձանաչել զան-
ձինս որպէս հաւասարակիցս եղբարց ուղղելեաց. թող
զի բազում անգամ արժան է զոր խրատեմքն նախա-
մեծար քան զանձինս դնել 'ի միտս մեր։ Ա՛ն զի 'ի
ձեռն մեր պատժին ախտք նոցա ուժով կանոնաց. իսկ
'ի մեր գործս և ոչ բանիւ զան ընդեմք յումեքէ։ Ա՛յսպա
այնչափ մեծասպարտ գտանիցք առ Ա՛ստուծոյ, որչափ
առ մարդիկ բազում մեղանչեալք։ Իսկ խրատն մեր այն-
չափ ազատս կացուցանէ զՀպատակս 'ի դատաստանէն
Ա՛ստուծոյ, որչափ ստոյ չթողու անվրէժինդիր զյան-
ցանս նոցա. վասն որոյ պարտ է պահել 'ի սրտի զնո-
նարհութիւն, և 'ի գործս զՀրամանգ կանոնի։

Յորում սակի ուշ ունել պարտ է և այսմ՝ զի մի յոր-
ժամ ելցէ ըստ չափ առաքինութիւն խոնարհութեան,
լուծցին իրաւունք առաջնորդութեան. վասն զի յոր-
ժամ առաջնորդ ոք առաւել քան զարժանն ցածուցա-
նէ զանձն, չկարէ զվարս Հպատակաց սանձել կապա-
նօք խրատու։ Ասատի առաջնորդք պիտի կալցին արտա-
քոստ զիշխանութիւնն զոր առին 'ի վերայ Հպատա-
կաց, և 'ի նեղքուստ պահէսցեն զերկիւղ ընդ վարկ ան-
ձանց։ Ա՛յլ յերևել նշանաց ինչ վայելչապէս 'ի դուրս,
թող և Հպատակք խնամցին՝ զի խոնարհութեամբ վա-
րին ընդ ինքեանս. որպէս զի յիշխանութեանն նոցա տես-
ցեն զանձանց երկիւղալին, և 'ի մասին խոնարհութեան
ծանիցեն զայն որում նմանող լինին։

Ա՛յսպա գուն գործեսցեն առաջնորդք հանապազ, զի իշ-
խանութիւն նոցա որչափ մեծ տեսանի արտաքուստ,
նոյնչափ 'ի նեղքս 'ի սրտի նոցա ձնշեալ գտանիցի. զի
մի ոք յաղթեսցի խորհրդով, և մի անկցի յանձնահա-
ճութիւն, մինչև չկարել մնաց ուղղել զնորհուրդս իւր,
յորոց գերեալ իցէ։ Ա՛յդ զի մի որ վերակացուն է փքա-
նայցէ հաճութեամբ ընդ իշխանութիւն իւր, բարւոք
ասացաւ յիմաստնոյ ումեմնէ՝. "Ա՛ռաջնորդ զքեզ կա-
ցուցին, մի բարձրամտիր, այլ լեր 'ի մէջ նոցա իբրև զմի
'ի նոցանէ ,,։ Ա՛ն որոյ և Պետրոս ասէ. "Ա՛'ի իբրև

1 Սիրաք։

տիրելով վիճակաց, այլ լինել օրինակ հօտին ,, ։ Ուստի և Հնամարտութիւնն իւրև զմեզ 'ի բարձրագոյն ատոՀանս առաքինութեան կրթելով՝ ասէր. “Գիտէք, զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա. ոչ այնպէս իցէ և 'ի ձեզումն միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ, և որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ. որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել ,, ։

Որոյն վասն թէ զինչ պատիժք մնան ծառայի համբարՀաւատելոյ վերակացութեամբն յոր եղաւ՝ յայտ առնէ ասելով. “Բայց եթէ ասիցէ ծառայն ցար 'ի սրտի իւրում, թէ տէր իմ յամէ գալոյ, և սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր, և ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս, գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր յոլում՝ ոչ ակն ունիցի, և 'ի ժամուն յորում՝ ոչ գիտիցէ, և կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ ,, ։ Զանգի իրաւամբք ընդ կեղծաւորս դասի՝ որ կեղծաւորութիւն զՀարկ պաշտաման վարդապետութեան իւրոյ դարձուցանէ 'ի վարել ցտիրապետութեան։

Բայց ծանուցն մեզանէ՝ եթէ որ 'ի մէջ անսպայից հաւասարելով զիմանիցէ նոցա, և ոչ պահեսցէ զՀրշդութիւն անաչառ իրատտութեան։ Հեղի քանզի 'ի սուտ պատրանս զթոյ ըմբռնեալ՝ չկամեցաւ պատուհասել զորդիս իւր յանցաւորս, Հանդերձ որդւովք և զանձն դատապարտ արար չարաչար առաջի անաչառ դատաւորին. վասն որոյ և ասացաւ առնա քանիւ տեառն. “Գաւառարեցեր զորդիս քո առաւել քան զիս ,, ։ Զ.յլ և ըզՀովիւս յանդիմանէ մարգարէիս, ասելով. “Օ քեզ կեանն ոչ պատեցէք, զմորբեանն ոչ դարձուցէք ,, ։ Զարձ մնորելոյն լինի՝ յորժամ որ 'ի յանցանս անկեալ՝ խնամով Հովուին դառնայ յառաջին վիճակ արդարութեան։ Լակ զբեկեալն պատել այն է, յորժամ յանցանքն ՀՆղին պատուհասիւ իրատու. զի մի խոցուածն կորստեան լցցի պատՀաս, եթէ չանդեսցէ զայն խստութիւն անաչառութեան։

Զ.յլ երբեմն ևս չարագոյն խորտակի, եթէ բեկումն անխորՀրդաբար յանզգոյշ պատեսցի. մինչև ջախջախել իսկ՝ եթէ յանչափս պնդեսցի պատանաւ։ Այսին իրի Հարկ է, զի յորժամ որ զվէրս մեզաց Հպատակաց

պատեհ, խրատաւ ուղղութեան, մեծաւ խնամով չափաւորեսցէ և զխստութիւն անաչառութեան. և այնպէս վարեսցէ զիրաւունս խրատու ընդդէմ յանցուցելոց, զի մի կորուսցէ զաղիս զթութեան. քանզի պարտ է հոգ տանել, զի առաջնորդն վարեսցի զթով մայրաբար, և ստատիւ հայրաբար։ Բայց յայտնիկ հարկ է դիտել մեծաւ արթնութեամբ, զի մի անաչառութիւնն իցէ ստատիկ, և մի զթութիւնն մեղկ։

Օ. Զի որպէս ստացաք կանխաւ 'ի Բարոյական գիրս, խրատ յանդիմանութեան կամ գորով զթոյն կարի յեռնեալ գոսանի եթէ, զմին առանց միւսոյն ոչ պինդ ունիցի։ Բայլ պարտ է զի իցէ յառաջնորդս և արդարացի ողջմտութիւն, և ստատ խստութեան խառն ընդ զթոյ. և այսպէս, որպէս Հնմարտութիւնն ինքնին ուսուցանէ 'ի խնամարկութեան Յանարատոյն, կիսամանէն 'ի սանդղոկ բերի, և զենի և ձեռ 'ի վերան արկանի. իբրու զի զենեալ վերջն զկծիցին, և ձիթով սփոփեսցին։ Բանզի կարեւոր իսկ է, զի որ կարգեալն է 'ի բուժել զվերջ՝ զենեալ կսկծեցուցել, և ձիթով յայտնեսցէ զմեղմութիւն գորովոյն. որպէս զի 'ի ձեռն զենելոյն փուտ մնասուցն մաքրեսցին, և 'ի ձեռն ձիթոյ դարմանեսցին մնասուցն բուժելիք։ Բայց ուրեմն պիտի խառնել զկակղութիւն ընդ խստութեան, և առնել յերկոցունց սպեղանի բարեխառն. զի ոչ անչափ ստատութիւնքն խղեսցեն վերջն հպատակաց, և ոչ տարապայման մաքրարութեամբ լուծեալ թուլացին։

Վերոգրեալ նշանակ իբաց լինի ըստ պտղոսեան ձայնին տապանակ խորանին վկայութեան, յորում զոյգ ընդ տախտակս եղաւ գաւազան և մանանայ։ Ա. ասն զի 'ի սիրտ բարւոյ առաջնորդի եթէ, զոյգ ընդ զիտութեամբ սուրբ. զոր կայցէ գաւազան յանդիմանութեան, լեցի անդ և մանանայ քաղցրութեան։ Ա. ասն որոյ ասէ Դաւիթ. "Ցուպ քո և գաւազան նոքա մխիթարեսցեն զիս"։ քանզի գաւազանաւ Հարկանիցիս, և ցուպիւ կազդուրիցիս. արդ եթէ զոյ անաչառութիւն Հարկանող գաւազանի, լեցի և մխիթարութիւն կազդուրիչ ցուպ. լեցի և սէր, այլ ոչ մեղկացուցիչ. լեցի և ուժգնութեամբ, այլ ոչ դառնացուցիչ. լեցի և նախանձայուզութիւն, այլ ոչ տարապայման դժնեայեալ. լեցի և զթութիւն,

այլ ոչ առաւել քան զարժանն խնայող. զի յորժամ առաջնորդն յամրի անտեսութեան բարեխառնեալ ուղիղի զարդարութիւն ընդ մարդասիրութեան, զիրաս հպատակաց ահացուցանելով մեղմացուցէ, և միանգամայն մեղմացուցանելով զպակաս՝ ակն ածել և երկրնդել։

Ե. Զաջնորդն 'ի հոգ տանել նեղբին իրաց՝ մինուազ առնիցէ զպարապումն յարտաքինս, և 'ի հոգալ զարտաքինս՝ մի թողցէ զինամարկութիւն նեղբնոց։ Օ|ի մի կամ յարտաքինս անդ անձնատուր լինելով զեղծանիցի 'ի նեղբինսն, և կամ նեղբնոցն եթէ ուշ եղեալ՝ յեանեսցի 'ի պիտոյից մերձաւորաց յարտաքինս. քանզի ոմանք յոլովակի իբր 'ի մեռացեալս արկեալ՝ եթէ վերակացու եղան 'ի սակս հոգւոյ եղբարց, բոլորով սրբոյն ծառայեն աշխարհական հոգոյ կենցաղոյս. և եթէ անպակաս իցեն այդոքիկ, խնդան՝ որպէս թէ զամենայնն բարւոք առնեն. իսկ 'ի պակասել սոցա իւիք, զցաղ և զցերեկ տառապին յայլեսանչ յոյզս խորհրդոց։ Զ|ս յորժամ՝ ըստ լինելոյ աջողութեան անհոգ հանդարտիցեն յայսպիսեաց ստսի, նովին իսկ հանդարտութիւն իւրեանց չար ևս տաղնապին անհանգիստ. զի հեշտալի ինքեանց վարկանին զդմբաղ գործոց, և աշխատութիւն անձանց համարին զանաշխատն մնալ յերկրաւոր զբաղանաց։

Զ|ստի ահա զհետ գայ, զի յորժամ խնդան ընդ ստիպել իւրեանց յաշխարհական աղմուկս, անդիտանան զնեղբինս՝ զորս պարտական էին ուսուցանել այլոց։ Զ|ատն որոց հարկաւ և վայրք հպատակաց ընդարմացեալ թուլանան. զի ուր յոժարելին զարգանալ հոգևորապէս, օրինակաւ առաջնորդին իբր 'ի խոշընդոտն Հնապարհի ընդհարեալ դիմեն. քանզի յախտանալ գլխոյ՝ անպէր գտանին անդամք. և 'ի խառալ 'ի վերայ թշնամեաց՝ 'ի զուր երթալ զօրն, եթէ առաջնորդ Հնապարհին մնրրեցուցանեն զնոսա։ Զ|ս 'ի մնալ այսմ այսպէս ոչ ինչ յորդորումն շարժէ զմիտս հպատակաց, և ինչ ոչ ազդէ նոցա ստսա պատուհասի. զի յորժամ վերակացուն հոգւոյ զերկրաւոր դատաւորի վարէ զպաշտօն, դադարէ խնամ հովուի 'ի պահպանութենէ հօտին։ Զ|ս ոչ մնրթին հպատակք տեսանել զլոյս Հշմարտութ-

թեան. զի յորժամ երկրաւոր փոյթք գրաւէն զնսեալս հոգւոյն, հողմով փորձութեան վարեալ փոշին շաղուցանէ զաչս եկեղեցւոյ։

Բ. Յամ հակառակ, փրկիչն մարդկան ազգի յորժամ իրաւամբք սանձահարել զմեզ հոգացեալ 'ի շուայտութենէ որովայնի՝ ասէր, "Օ գոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ...", անդէն 'ի վերայ էած, "Լաւ հոգովք աշխարհականաց"։ Ուր և ահագին երկեղուկս արկանէ իսկոյն. "Լաւ յանկարծակի հասանիցէ, ասէ, 'ի վերայ ձեր օրն այն..։ Որպէս և զհանգամանս գալոյն յաշխարհ ասէ ասելով. "Օ՜ի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի"։ Որոյ վասն դարձեալ ասէր. "Ո՞ զոր կարէ երկուց տերանց ծառայել..։ Ուստի և Պօղոս զբարեպաշտից միտս բողոքելով և խրատելով 'ի բաց քեցէ 'ի պատատելոյ յաշխարհի իրս, ասելով. "Ոչ զոր զինուորեալ ատէն (կամ Աստուծոյ՝) ընդ կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին (կամ ում ձօնեաց զանձն) հաճոյ լինիցի"։

Ուստի և առաջնորդաց եկեղեցւոյ պատուիրէ զպաշտօնն կարևոր, և ցուցանէ զհնարս խորհրդոյ, յասել անդ. "Լեթէ զերկրաւոր ատեանս յանձն առնուցուք, զանարգան եկեղեցւոյ դատաւորս նստուցէք", իբր զի այնքիկ ծառայեսցեն երկրաւոր տնտեսութեց, ոչք չեն ձոխացեալ հոգևոր ճրիւք. որպէս թէ յայտնագոյնս ասէր. որովհետև այդպիսիք չկարեն խորամուխ լինել 'ի նեղքինս, գէթ զկարևորսն և եթէ արտաքոյ կատարեսցեն։ Ուստի և Մովսէս որ խօսակից էր ընդ Աստուծոյ, մեղադրի 'ի Յեթրոայ այլազգւոյ, զի երկրաւոր հոգոց ժողովրդեանն ծառայէ անխորհրդաբար. և խորհուրդ ընդունի 'ի նմանէ, զի զայլ փոխանակ իւր կացուցցէ 'ի դատել զվէճս, և ինքն վասն կրթելոյ անզբաղ զժողովուրդն միտ դիցէ հոգևոր գաղտնեաց։

Այլա ուրեմն հպատակաց անկ է առնել զստորին գործս, և առաջնորդաց խորհել զվերագոյն պէտս. զի զվերանիստ աչս կարգեալս ուղղել զգնացս ոտից՝ մի աղօտացուցցէ հոգ փոշւոյ։ Ա՝ ամն զի գլուխ հպատակաց են ամենեքին՝ որ կարգեալ են 'ի վերակացութեան.

և առ'ի կարող լինելոյ ոտից ընդ ուղիղ գնալ Ճանապարհս՝ զայդ անշուշտ պարտի գլուխն նկատել'ի բարձուէ, զի մի յետս կասեսցին ոտք'ի գնացից՝ յորժամ գլուխն կորացեալ յողոքաբերձ կայից մարմնոյ՝ յերկիր մածանիցի։ Այս որպէս կարող լիցի առաջնորդն հովուական պատուով վարիլ'ի մէջ այլոց, եթէ յերկրաւոր իրողութիւնս զոր պարտի յայլս կշտամբել՝ և ինքն պատաղեսցի։

Այս պատիժ է զոր սպառնայ տէր բարկութեամբ արդար վրիժու'ի ձեռն մարգարէին, յասել անդ. "Այս եղիցի որպէս ժողովուրդն, նոյնպէս և քահանայն,,։ Զանցի քահանայն գտանի որպէս ժողովուրդն, յորժամ կարգեալն'ի պաշտօն հոգևորական՝ զայն ինչ իրս առնէ զոր ինչ գործեն նոքա՝ ոչ տակաւին դատին վասն մարմնաւոր ջանից։ Յոր ակնարկեալ Երեմիայի մարգարէի աղեկէզ ցաւով սիրոյ՝ ողբայ ասելով. "Օ լիցի շլացաւ ոսկին, այլայլեսցի արծաթն սպիտակ, հալեցան սիրելեցն ականք նոցա'ի գլուխս անցից Ճանապարհաց նոցա,,։ Օ զինչ զանցանիցէ զոսկւով և զարծաթով և զայլովքն, եթէ ոչ զերազանցութիւն սրբութեան. զինչ մաքրափայլ գունովքն նշանակի, բայց ամենեցուն սիրելի յարգ սուրբ կրօնից. և զինչ ակամբք սրբութեանց է իմանալ, բայց զանձինս սուրբ կարգաց. և զինչ անցիւք Ճանապարհաց, բայց զՀրաշապակ կենցաղոյս. և զի պողոտայն՝ ըստ հելլենական πλάτος լայնութիւն լսի, 'ի դէպ պողոտայք'ի լայնութենէ անուն ընկալան կամ յընդարձակութենէ։ Որպէս ահա և Ճշմարտութիւնն ինքնին ասաց. "Լայն և ընդարձակ է Ճանապարհն որ տանի'ի կորուստ,,։

Արդ ոսկին շլանայ և նսեմանայ, յորժամ վարք սրբութեան ապականին երկրաւոր իրողութեամբ։ Զոյնն պատուական տժգունի, յորժամ ոչ թուէին բարւոք քաղաքաւարել, նախկին յարգ նոցա նուազի։ Ապան զի որ միանգամ յետ կերպարանաց սրբութեան յերկրաւոր իրս շաղի, որպէս այլայլեալ յաչս մարդկան՝ յարգ նորա անարգեալ տգեղանայ։ Այս քարինք պատուական ականք սրբութեան տաճարին յանցս փողոցաց սփռին, յորժամ յաշխարհական դատից'ի լայն և յընդարձակ Ճանապարհս գնան՝ որոց հանդերձեալ էր լինել զարդ

եկեղեցւոյ 'ի նեբբին խորհուրդս իբրև 'ի խորս խորա-
նին։ Ա՝ան զի յայն սակս լինէին ակամբ սրբութեց,
զի 'ի մէջ սրբութեանց սրբոց երևեսցին 'ի զգեստս քա-
հանայապետին։ Իսկ յորժամ պաշտօնեայք կրօնից չսպա-
հանէին 'ի հպատակաց զպատիւ փրկչին իւրեանց ար-
ժանաւոր վարուք, ոչ ևս են ակամբ սրբութեան 'ի հան-
դերձս քահանայապետին, այլ անկեալ կան նոքին 'ի փո-
ղոցս՝ յորժամ անձինք սրբոյ կարգին անճնատուր լեալ
յընդարձակութիւն փափկասիրութեան՝ 'ի կենցաղա-
կան իսկ թարթափին։ Այլ դու գիտես լինձ զայն, զի
չատաց՝ թէ սոքա 'ի փողոցս են սփռեալ, այլ 'ի գլուխս
պողոտայից կամ անցից ճանապարհաց. քանզի և 'ի գոր-
ծել զաշխարհի իսկ՝ գերադոյն կամին հանդիսանալ, զի
և զընդարձակ ճանապարհս կալցին 'ի հեշտալեացն
զուարճութենէ, և սակայն են 'ի գլուխս ճանապարհաց
ըստ պատուոյ սրբութեան։

Այլ ոչ լինչ ընդդէմ երանէ եթէ զնոյն քարինս որովք
շինեալ էին սրբութիւնք տաճարին՝ առցուք որպէս
սփռեալս 'ի գլուխս հրապարակաց, յորժամ անձինք սրբ-
բոյ կարգին դեգերին սրտի մտաք 'ի գործս երկրաւորս,
յորս երբեմն հանդիսացեալ երևէին փառաւորու-
թիւնք սրբութեան։ Զ՝որ թէպէտ և երբեմն գործք
կենցաղականք հրամային և ներելիք են, այլ ոչ երբեք
կամակար խնդրելիք. զի մի յորժամ ծանրացուցեն ըզ-
միտս յօժարամիտ եղելոյն, յաղթեալ 'ի ծանրութենէ
անտի՝ 'ի խորս ընկղմեսցեն 'ի բարձրութենէ երկնայ-
նոց։ Ուր ընդհակառակն ոմանք 'ի հօտէն թէպէտ և
յանձն առնուն զբաղանս ինչ, այլ այնպէս փոյթ յան-
ձինս ունին պարապել հոգևորաց, զի ոչ երբեք ընկղմին
յարտաքինս։

Իսկ որ միանգամ 'ի սպառ անտես առնեն հոգալ զմար-
մնաւորս, ոչ իւիք սատար լինին պիտոյից հպատակացն։
Այլ այսպիսեացն քարոզութիւն յորմիակի անգոսնի. զի
'ի կշռամբել անդ զգործս յանցուցելոց, որովհետև ոչ
մնատակարարեն զկարևոր պէտս կենաց նոցա, ոչ երբեք
սիրով լսելի լինին։ Ա՝ան զի 'ի միտս կարօտելոյն ոչ
ընդմտանէ բան խրատու վարդապետութեան, եթէ զը-
զի նորա ոչ յանձանձէ ձեռն մարդասիրութեան։ Զ՝այլ
յայնժամ սերմն բանին բուսանի, յորժամ 'ի սիրտ

լողին առոգանեալ զնոցն գթասիրութիւն քարոզ էին։ Ուստի կարեւոր է առաջնորդին՝ առ 'ի կարող լինելոյ աղաղեալ զնեբբինս՝ մանաւանդ խորհրդով և զարտաբինան հոգալ։ Ա՝ ամն որոյ այնպէս վառեալ լեցին փոյթք առաջնորդաց 'ի նեբբին հոգս հպատակաց իւրեանց, զի ոչ պակաս առնիցեն նոցա և զարտաբին պէտս կենաց։

ՎՐանզի ըստ ասացելոցս՝ եբրու իրաւամբք իմն բեկանի սիրտ հօտին յընդունելոյ զիրատ քարոզութեան, եթէ հովիւն անիրոյթ առնիցէ զարտաբին կարեաւք նոցա։ Ա՝ ամն որոյ նախկին հովիւն խնամով ազգ առնէ ասելով. "Օ՝ երիցունս այսուհետև աղաչեմ եբրև եղբիցակից և վկայ չարչարանացն ՔրիստոսԻ, որ և հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ, արածեցէք որ 'ի ձեզ հօտդ է Ա՝ստուծոյ"։ Որ և աստանօր յորդորամիտս կամելով առնել, զի արածելն լինիցի ոչ միայն ըստ հոգւոյ, այլ և ըստ մարմնոյ, առ ետեղ պարզաբանէ զնիրն՝ 'ի վերայ ածելով. "Ա՝ երսկացու լինել՝ մի իբրև ակամայ, այլ կամաւ ըստ Ա՝ստուծոյ. մի զոշաբաղութեամբ, այլ յօժարութեամբ"։ Որովք բանիւք 'ի գորով գթոյ յանձն առնէ հովուաց, զի մի 'ի ընուլ անդ զկարօտութիւն հպատակաց՝ զանձինս իւրեանց 'ի մահ հարկանիցեն սրով փառասիրութեան. զի մի յորժամ մարմնաւոր պիտոյիւք կազդուրին մերձաւորքդ, ինքեանք անսուաղ մնայցեն 'ի հացէ արդարութեան։ Օ՝ այս հոգոլութիւն հովուաց և Պօղոս արծարծանէ ասելով. "Վակ եթէ ոք իւրոցն, և մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատն է"։ Ուստի 'ի կարգի իրացս միշտ պարտ է երկնչել և դիտել արձնութեամբ, զի մի յորժամ արտաքին խնամակալութիւն պահանջիցի 'ի նոցանէ, յեսնեսցին 'ի նեբբինն ուշ ունելոյ։

ՎՐանզի բազում անգամ, որպէս կանխեցաք ասել, յորժամ սիրտք առաջնորդաց 'ի ժամանակեան հոգս ընկղմին, 'ի նեբբին սիրոյ հովանան, և 'ի գուրս զեղեալ չանգիտեն մոռանալ եթէ զՀոգւոց ընկալեալ իցեն զանտեսութիւն. վասն որոյ խնամածութիւնն արտաքին ցուցեալ առ հպատակս՝ հարկ է զի պահեսցի ընդ չափաւոր սահմանաւ. որպէս բարոյ գրեալ կայ 'ի գիրս Եզեկիելի. "ՎՐահանայք զգլուխս իւրեանց մի

գերծցեն, և զվարս իւրեանց մի անօրացուսցեն (դարմանելով), այլ ծածկելով ծածկեսցեն զգլուխս իւրեանց (չափով հատանելով զվարսն)։։։ Վասն զի քահանայքդ կոչեցան իրաւամբք, զոր առ վարելոյ զսուրբ առաջնորդութիւն՝ վերակացու են հպատակաց։

Բ. Դ վարքք գլխոյն են արտաքին խորհուրդք մտաց. քանզի 'ի վերին երեսս ուղղոյն բուսեալք՝ նշանակք են հոգոյ կենցաղոյս. և նոցն խորհուրդք երբեմն յանրզգաստից անչափութեամբ յաձախեն 'ի դուրս, և որպէս թէ առանց զգալոյ մերոյ ծաւալին։ Բ. դ քանզի ամենայն վերակացուաց հարկ է ունել հոգս ինչ արտաքինս, առ 'ի չզլաղել 'ի նոսին յոյժ՝ 'ի դէպ արգելեալ է քահանայից գերծուլ զգլուխս և դարմանել զհերս. որպէս զի զխորհուրդս մարմնոյ 'ի վարուց հպատակաց ոչ կարձնովին յապառեսցեն, և ոչ դարձեալ թողացուսցեն անձել ըստ չափ։ Այսին իրի և բարւոք ասի. "Ծածկելով ծածկեսցեն զգլուխս իւրեանց,, կամ կտրելով կտրեսցեն զվարսս չափով. իբր զի հոգք ժամանակաւոր խնամարկութեան՝ որչափ հարկ է՝ 'ի վեր երեւեսցին, բայց փութով կտրեսցին, զի մի տարապայման անձեսցեն։ Այս արդ յորժամ մատակարարութեամբ արտաքին հոգողութեան մարմնոյ պաշտպանին կենաք իբրու ընդ հովանաւորութեամբ, և ոչ ծախին չափաւոր մտադրութեամբ, վարքք գլխոյ քահանային կան մնան 'ի ծածկել զմորթն, միանգամայն և հատանին զի մի զաչս ծածկեսցեն։

Գ. Ի սոցին պակի կարեւոր է և այն, զի առաջնորդն լքմնութեամբ տքնեսցի, և մի իւրք մարդահաճութեամբ տացէ տեղի. զի մի յորժամ մտադիւր 'ի ներքինս յաւեսցի, և ինամով զարտաքինս անտեսեսցէ, ինդրեսցէ առաւել քան զարժանն սիրելի լինել հպատակաց. զի մի ուր գործոցք բարեաց ամրացեալ՝ օտարացեալ տեսանի յաշխարհէ, անձնասիրութիւնն օտարացուսցէ զինքն յարարչէն։ Այսն զի թշնամի է փրկչին նա, որ 'ի ձեռն գործոց ուղղութեան զոր առնէ՝ փոխանակ սիրելի Աստուծոյ լինելոյ ցանկանայ սիրելի գտանել եկեղեցւոյ. վասն զի միասապարտ խորհրդոյ շնութեան ձաւնայի պատանին այն ցանկացող հաճոյ լինել յայսն հարսին, յոր ձեռն ընծայս առաքեաց փեսայն։ Զանզի յոր-

ժամ անձնասիրութիւնն գրաւեսցէ զմիտս առաջնորդին, է զի յանչափ մեղկութիւն արկանէ զնա, և է զի 'ի դաժան խստութիւն։ Յանձին սիրոյ բերին միտք առաջնորդին 'ի մեղկութիւն, զի 'ի տեսանելն զհպատակս յանցուցեալս՝ չհամարձակի յանդիմանել զնոսա, զի մի պակասեսցի սէր նոցա առ ինքն։ և երբեմն ևս շողոքորթքանիւ վարի ընդ նոսա, ուր պարտականն էր կշտամբել զսխալանս նոցա։ Ոման որոյ բարւոք ասացաւ մարգարէիւ. "Ոմայ այնոցիկ որ կարէն կարկատէն զբարձ ինեարդ 'ի ներքոյ ամենայն արմկան ձեռին, և առնէն գլխադիրս գլխոյ ամենայն հասակաց՝ թիւրել զանձինս (կամ որսալ զոգիս)։" Զինել զբարձկնեար 'ի ներքոյ ամենայն արմկան ձեռին՝ է շողոմութիւն դարմանել զոգիս թուլացեալս և անկեալս յուղղութիւն, և զխոտորեալս 'ի հետալիս կենցաղոյս. քանզի արմուկն 'ի բարձկնեար և գլուխն յեց 'ի գլխադիր յանձանձի՝ յորժամ խստութիւն յանդիմանութեան կարձեսցի 'ի մեղապարտէն, և կակղութիւն նպաստից ընծայեսցի նմա, որպէս զի 'ի սխալանս իւր փափկիկ անկեալ տարածել զի չխթէ զնա խստութիւն յանդիմանութեան։ Զայլ զայսոսիկ առաջնորդք անձնասէրքն անշուշտ առ նոսա ցուցանեն՝ յորոց խիթան կրել ինչ զեան փառասիրութեան անձանց. ապա թէ ոչ, զայլս որք չկարէն ինչ սանանել ինքեանց՝ հանապազ սաստիկ կշտամբանօք նուաձեն, և ոչ երբէք սիրով դթոյ խրատեն, այլ 'ի մոռացօնս արկեալ զհովուական հեզութիւն՝ տիրապետական իշխանութիւն ահացուցանեն։ Օրոս բարւոք յանդիմանէ ասասածէ զէն բարբառն 'ի ձեռն մարգարէին՝ ասելով. "Օ հասատահարուսան աշխատ արարիք (վարելով հարստահարութեամբ և բռնակալութեամբ)։" Զանզի անձնասէրքն գոլով քան ասասուածասէրքն, փքանօք և սնոքանօք բերին առ հպատակս, առանց հայելոյ յայն՝ եթէ զինչ պարտիցին առնել, այլ թէ որչափ զօրեսցեն. և ինչ ոչ զանգիտեալ 'ի հանդերձեալ դատաստանէն՝ ապառում մնօք յանձնապաստան լինին 'ի ժամանակեան իշխանութիւն իւրեանց. կամին համարձակ կատարել և զանհամարձակելս, և չկամին զի օր 'ի հպատակաց դիմիսօս լցցի երբէք։ Զայց արդ որ ջանայ և զանարժանս գործել, և կամին զի այլք լուռ կայցեն, այնպիսին ան-

ձամբ անձին վկայէ, եթէ այսպէս ցանկայ սիրելի լինել՝ զի չկամի թէ ոք ջատագով կացցէ ընդդէմ իւր։ Վասն զի չիք ոք որ երբեմն չյանցանիցէ իւիք. ուստի այն որ կամի զի ինքն առաւել սիրեսցի քան զՀնմարտութիւնն՝ չառնու յանձն զի ոք հակառակ իւր պաշտպան կացցէ Հնմարտութեան։

Լաւ ահա վասն այսորիկ Պետրոս զյանդիմանութիւն Պօղոսի մտադիւր ընկալաւ, և Դաւիթ զիշտամբանս հպատակին խոնարհութեամբ լուաւ. քանզի բարի առաջնորդք թափուր գոլով յանձնասիրութենէ՝ անապատ բանին Հնմարտութեան անսան, որպէս խոնարհ ծառայութեան ընծայելոյ 'ի հպատակաց։

Լ.ՍԼ յայսր ամենայնի վերայ հարկ է այնպիսի Հնարտարութեամբ ուղղել զՀոգ զեկավարութեան, զի յորժամ հպատակն 'ի վերայ հասանիցէ ուղղութեան իրաց ինչ՝ այնչափ եւեթ համարձակեսցի բարբառել՝ զի աղատութիւնն մի դարձցի 'ի յանդգնութիւն. զի մի յորժամ տացի նոցա անչափ համարձակութիւն լեզուի, խոնարհութիւն վարուց պակասեսցի 'ի նոցանէ։

Լաւ զայն եւս արժան է գիտել, զի բարի առաջնորդք պարտին հաՀել զմարդիկ, այլ յայն սակս զի քարոզը և պատկառելի օրինակաւ զընկերս ձգեսցեն 'ի սէր Հրշմարտութեան, և ոչ զի ցանկայցեն սիրելի լինել, այլ զի զսիրելութիւն իւրեանց որպէս Հանապարհ իմն հորդեսցեն, ընդ որ սիրտք լսողաց յաստուածսիրութիւն առաջնորդեսցին. վասն զի դժուարին ինչ է զի քարոզ բանին որ չիցէ սիրելի՝ թէպէտ և զուղիղն բարբառեսցի յօժարութեամբ լսելի լինիցի։ Վասն որոյ պարտ է առաջնորդին 'ի միոյ կողմանէ ջանալ՝ սիրելի լինել զի անսասցեն ինքեան, և 'ի միւս կողմանէ զիւր սէր ոչ վասն իւր խնդրել, զի մի որում ըստ հարկի պաշտաման ծառայէ, գաղտնի բռնակալութիւն ցուցցէ։ Օ այս քաջ նշանակէ Պօղոս 'ի յայտնել մեզ զգաղտնիս փութոյ իւրոյ, ասելով. "Զարդս և ես ամենայնիւ ամենեցուն հաՀոյ լինիմ"։ Լ.ՍԼ յաւելու եւս. "Եթէ տակաւին մարդկան հաՀոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի"։ Լաւ այսպէս Պօղոս և հաՀոյ լինի, և ոչ լինի. վասն զի 'ի կամէն հաՀոյ լինել՝ ոչ զանձն խնդրէ, այլ խնդրէ զի իւրև Հնմարտութիւնն հաՀոյ լեցի մարդկան։

թ. Լաւ ևս պարտ է գիտել առաքինորդին, զի բազում անգամ ախտքն որպէս առաքինութիւն ձևանան ստութեամբ։ Ոման զի յոլովակի ընդ անուամբ մտտեսութեան առագաստէ զինքն ուղղութիւնն, և զսորին հակառակ՝ շռայլութիւնն ընդ յորջորջանօք առատաձեռնութեան զինքն թաքուցանէ։ Լաղում անգամ անկարգ թոյլատուութիւնն զթասիրութիւն կարծի, և անսանձ բարկութիւնն՝ հոգևոր նախանձայուզութեան առաքինութիւն համարի։ Լաղում անգամ գործ հապշտապ՝ արգասիք արագութեան թուի, և զանդաղութիւնն՝ ծանրութեան նշանակ։ Ոման որոց հարկ է զի զեկավարն հոգւոց արթուն խնամով ընտրութիւն առնիցէ ընդ առաքինութիւնս և ընդ ախտաւորութիւն. զի մի ուղղութիւն գրաւեսցէ զսիրտն, և խնդամտեսցի յանձին որպէս խոհական՝ ի մտտեսութիւնս. կամ յորժամ շռայլութեամբ վատնեսցին իրքն, պարծեսցի առատ լինել առ գթոյն, կամ ներողամիտ լինելով՝ ուր պարտ էր անխնայ հարկանել, ձգեսցէ զՀպատակս ՝ի պատուհաս յաւիտենից. կամ անագորոյն մնօք պատժելով զյանցաւորութիւն՝ ինքն ծանր ևս յանցանիցէ. կամ զոր ՝ի դէպ էր առնել ուղղութեամբ և ծանրութեամբ, տարաժամ վաղվաղկոտութեամբ եղծանիցէ, կամ զանց առնելով զպատեհաւ բարի գործոց յուլութեամբ, ՝ի վատթար անդր շրջեսցէ։

ժ. Պարտեալ գիտել պարտ է, զի պէտք են երբեմն խոհեմութեամբ չտեսող լինել պակասութեանց հպատակաց, բայց ցուցանել զանտեսն առնել. երբեմն և յայտնի ծանուցելոց համբերել. երբեմն ևս զծածուկս ճարտարութեամբ հետաքննել. երբեմն մեղմով խրատել, և երբեմն սաստիկ յանդիմանել։ Լանգի օրէն է, որպէս ասացաք, անտես առնել զիւիք, այլ արժան է տալ նշանակ անտես առնելոյն. զի յորժամ յանցաւորն իմանայ՝ եթէ ճանաչէն զինքն և համբերեն, խորհելով թէ լուիկ հանդուրժէն ինքեան՝ ամաչ յաւելու ՝ի յանցանս, և անձամբ զանձն դատի, այր վասն համբերութեան առաքինորդին անտես ձևանայ։ Լ. յսպիսի օրինակաւ քաջիկ յանդիմանել տեր զՀրեշտաստան՝ յասել անդ մարդարէին. «Լոտեցեր ինձ, և ոչ յիշեցեր զիս, և ոչ ածեր զմտաւ, և ոչ եդիր ՝ի սրտի քում. և

ես տեսի զբեզ, և անտես արարի ,, : Որ ահա յայտ առ-
նէ եթէ միանգամայն եցոյց չտեսանել, և ծանոյց զան-
սանէն. քանզի լուռ եղև առ մեղուցեալն, և սակայն
ասաց և զայն՝ եթէ լուռ եղև կամաւ :

Լրբեալ երբեալ և յայտնի իսկ ծանուցելոց՝ պարտ է
տանել ոչ վայրապար, մանաւանդ յորժամ դէպք իրացն
չտան թոյլ յայտնապէս կշտամբել. վասն զի վերք տը-
հասք 'ի տարադէպ ժամու հատեալք՝ առաւել բորբո-
քեալ զայրանան. և եթէ 'ի դէպ ժամու մատուցին
դեղքն, յայտ է ամենեքին՝ եթէ անօգուտ պատահէ
բժշկութեանն պաշտօն : Զ.յլ յորժամ դիպող ժամա-
նակ ինդրի 'ի խրատել զՀպատակս, ըստ ծանրութե-
լանցանացն և համբերութիւն առաջնորդին հանդի-
սանայ : Աստի բարւոք ասէ սաղմոսանուագն. "Օ թի-
կունս իմ հարին մեղաւորք ,, , կամ "Ի վերայ թիկանց
իմոց շինուածս կառուցին ,, . քանզի 'ի վերայ ուսոց և
թիկանց բառնամք զբեռիս. և արդ բողոքէ՝ եթէ 'ի
վերայ թիկանց իմոց շինուած կառուցին. իբրու թէ ա-
սիցէ, զորս չկարեմ խրատել և ուղղել՝ որպէս զբեռն
ըստանձնեալ ունիմ :

Իսկ զգաղտնի իրս պէտք են Ճարտարութեամբ հե-
տաքննել, և 'ի ձեռն նշանաց ինչ 'ի վեր գոգդես երևե-
լոց՝ գտցէ առաջնորդն զծածկեալսն ամենայն 'ի միտս
հպատակաց, և 'ի գալ պահու յանդիմանութեան՝ 'ի
փոքունց զմեծամեծս 'ի միտ առցէ : Աստի գեղեցիկ
զրն 'ի գիրս Լշեկիելի. "Որդի մարդոյ բրեա զորմդ ,, :
Լա անդէն 'ի վերայ բերի. "Լա բրեցի զորմն, և ահա
դուռն մի : Լա ասէ ցիս. որդի մարդոյ, մուտ տես զանա-
րիկութիւնսդ և զաւրիսդ զոր գործեն դոքա այդր : Մտի
և տեսի, և ահա ամենայն նմանութիւն սողոնց և ան-
ասունց՝ մոտի գաղջելեաց. և տեսի զամենայն կուռս
տանն Իսրայելի նկարեալ շուրջ զնոքօք (զորմովք) ,, :
Լշեկիելիս նշանակի անձն առաջնորդին, և որմով խրա-
տութիւն հպատակաց. և զինչ է զորմն բրել, եթէ ոչ
նրբահայեաց հետազօտութեամբ բանալ զխոտութիւն
սրտի : Իսկ 'ի բրել անդ երևեցաւ դուռն. վասն զի
յորժամ խոտութիւն սրտին պատուի կամ փութա-
ջան հարցաքննութեամբք, կամ հասուն յանդիմանու-
թեամբք, իբրու դուռն ինն ցուցանի, ընդ որ տեսանին

ամենայն գաղտնիք խորհրդոց յանցաւորին։ Ա ամն որոյ բարւոք յարի. «Ա՛ռա և տես զանօրէնութիւնդ և զչարիսդ, զորս գործեն դոքա այդր ...» որպէս թէ մնանէ՛ի տեսանել զգարշութիւնն որ հետաքննեալ՝ի ձեռն նշանաց արտաքոյ երևելոց՝ այնպէս միջամուխ լինի՛ի սիրտս հպատակաց, մինչև իրաղեկ լինել ամենայն անարժան խորհրդոց նոցա. վասն որոյ գրեալ է. «Ա՛տի և տեսի, և ահա ամենայն նմանութի՛ սողոց և անասնոց՝ մոտի գարշելեաց ...» Սողնովք նշանակին խորհուրդք՝ի սպառ երկրաւորք, և անասնովք այնոքիկ՝ որք թէպէտ և իւիք՝ի վեր են յերկրէ, այլ տակաւին երկրաւոր վարձուց՝ի խնդիր են։ Զանազի սողունք մարմնով ողջոյն յերկիր են մածեալ. իսկ անասունք մեծաւ մասամբ մարմնոյ՝ի վեր են յերկրէ, այլ յօժարութեամբ որկորոյ հանապազ յերկիր խոնարհին։

Զդրդ սողունքն են՝ի մէջ որմոյ՝ ցորչափ խորհուրդք յածին՝ի միտս, որ ոչ վերանան երբէք յերկրաւոր ցանկութենէն. անասունքն ևս գտանին՝ի մէջ որմոյ՝ ցորչափ զմտաւ ածիցեն զանարժան իրս թէպէտ և արդարացիս և համեստս, զի տակաւին զերի են ժամանակեան շահու և պատուոյ. և թէպէտ ըստ ինքեան են յերկրէ և՝ի վեր, այլ տակաւին շուրջանակի մասամբք իբրու ցանկութեամբ որկորոյ կորացուցանեն զինքեանս՝ի ստորինս։ Զմին երի՝ի զէպ յարի, «Ցեսի և զամենայն կուռս տանն Իսրայէլի նկարեալ շուրջ զորմանքդ...» քանզի գրեալ է. «Զչ արծաթասիրութիւն, որ է կռապաշտութիւն...» Ա ամն այսորիկ ուղղութեամբ զինի անասնոց նկարեալ տեսանին կուռք. վասն զի թէպէտ և պարկեշտ գործով՝ի վեր կանգնեն ոմանք զանձինս յերկրէ, այլ անպարկեշտ փառասիրութեամբ յերկիր կորացուցանեն զինքեանս։

Զչ բարւոք ասին «Նկարեալ...» վասն զի յորժամ պատկերք արտաքին իրաց՝ի ներքս ձգին, և որ ինչ յեղյեղէ որ՝ի մտի խորհուրդս՝ուրուական ցնորիւքնկարին իմն՝ի սրտի։ Զդրդ յուշ լիցի, զի նախ ծակ տեսանի յորմն, և ապա դուռն, և յետոյ գարշելիքն ծածկեալք ցուցանին. քանզի և՝ամ մեղայ նշանքն նախ արտաքուստ երևին, ապա յերևան գայ դուռն անօրէնութե, և զինի՝ամ ջարիք՝ի ներքս զողեալք բացերև տեսանին։

Ա՛յլ են և ինչ ինչ, զոր պարտ է մեղմով յանդիմանել. զի ուր ոչ առ չարութեան, այլ առ տգիտութեան և եթէ կամ տկարութեան յանցանէ ոք, հարկ 'ի վերայ կայ մեծաւ զգուշութեամբ չափաւորել զկշտամբութիւն այնպիսի յանցուածոյ. քանզի ամենեքին ցորչափ եմք 'ի մարմնեալս՝ ազգի ազգի տկարութեամբք մերովք նեղեալք անկանիմք խրատու և յանդիմանութեան։ Այսն որոյ իւրաքանչիւր ոք յանձնէ իսկ չափելոց է՝ եթէ որպէս արժան է ողորմել տկարութեան այլոց. զի մի 'ի սաստիկ բորբոքեն ընդդէմ տկարութեան ընկերին ահագին ցասմամբ՝ 'ի մոռացմանս ունել թուիցի ոք զանձն իւր. և յայս սակս բարւոք յուշ առնէ Պօղոս առելով. "Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք 'ի ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգևորքդ էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան. զդոյշ լինիջիք անձանց, զի մի և դուք փորձիցիք"։ Որպէս թէ յայտնապէս առել. եթէ անհաճոյ քեզ թուիցի տկարութիւն ընկերին զոր տեսանես, խորհեա զոր ինչ դուդ ես. որպէս զի 'ի նախանձաւորութեան անդ կրկնատմբելոյ՝ պատկառ կացցէ չափաւորութեան անձն քո, յորժամ և զնոսա ածիցէ եթէ և ինքեան ևս երկիւղ կայ անձամբ անձին կշտամբիչ լինելոյ։

Այլ են և ինչ ինչ սաստիկ յանդիմանութեան արժանիք. զի ուր յանցաւոցն չնմանալ զիւրոց յանցանացն զծանրութիւն, պարտի լսել զայն 'ի բերանոյ յանդիմանչին. և յորժամ ոք մեղմացուցանէ զիւր զդրծեալ չարիս, թող երկիցէ՝ զի սովին ծանրացուցանէ զսատկութիւն յանդիմանութեանն։ Այսն զի պարտք են ա ուսմնորդին ցուցանել բարբառով՝ քարոզութեան իւրոյ զփառս վերին հայրենեաց, և 'ի յայտ ածել զպէսպէս դաշանակալութիւնս հին թշնամւոյն թաքուցեալս 'ի ճանապարհի կենցաղոյս, և զմնեալեալն չարիս հպատակաց մեծաւ առաւելութեամբ նախանձաւորութեան յուղղութիւն ածել. զի թէ զանց արասցէ զծանր յանցանօք, ինքն մնասցէ պարտաւոր ամենայն յանցանաց։

Որին վասն բարւոք ասի 'ի դերս Եզեկիելի. "Ա՛ռ դու քեզ աղիս մի, և դիցես դնա առաջի երեսաց քոց, և նկարեսցես 'ի նմա զքաղաքն Երուսաղէմ"։ և առ նմին. "Եւ տասցես շուրջ զնովաւ պաշարումն, և շի-

նեսցես շուրջ զնովաւ մարտկոցս, և պատեսցես շուրջ զնովաւ պատնէշ, և տացես շուրջ զնովաւ բանակս, և ածցես շուրջ զնովաւ նետակալս։» Այս՝ ի պատսպարութիւն անձինն եդաւ առնելեր. «Այլ առցես դու քեզ տապակ երկաթի, և կանգնեսցես զնա իբրև զպարիսպ երկաթի ընդ քեզ և ընդ քաղաքն։» Այլ զոյց ոմանց զգէմն Այզեկիէլ յինքեան բերիցէ, եթէ ոչ ըզվարդապետաց. որպէս և ասացաւն առնս. «Այլ դու քեզ աղիւս մի, և դիցես զնա առաջի երեսաց քոց, և նկարեսցես ի նմա զքաղաքն Այրուսաղէմի։»

Այանչի սուրբ վարդապետաքն՝ յայնժամ աղիւս առնուն, յորժամ ուսուցանել զկաւեղէն սիրտ ունկնդրաց բուռն հարկանէն. և զայն աղիւս առաջի դնէն երեսաց իւրեանց, վասն զի ամենայն դիտողութեամբ մնաց պահէն։ Իսկ զԱյրուսաղէմ նկարել՝ ի նմին պատուէր առնուն, վասն զի քարոզելով սրտից հողեղինաց՝ զամենայն փոյթ՝ ի մէջ փակէն ցուցանել զկերպարան վերին խաղաղութեան։ Այլ քանզի ընդունայն լինի ձանաչէն դիտաւս երկնից հարեսնեաց՝ եթէ ոչ ծանիցի թէ քանի փորձութիւնք յայսմ վայրի յարձակին՝ ի խորամանկ թշնամւոյն, վայելապէս՝ ի վերայ ածի. «Տացես շուրջ զնովաւ պաշարումն, և շինեսցես շուրջ զնովաւ մարտկոցս»։ Իբր զի ընտիր քարոզք բանին յայնժամ պաշարումն կարգէն շուրջ զաղիւսամ յորում Այրուսաղէմ է նկարեալ, յորժամ ցուցանէն թէ հակառակ մըտաց հողեղինաց կրթելոց՝ ի խնդիր վերին հայրենեաց, քանի մարտս յարուցանէ յասաի կեանս հակառակութիւն ախտից։ Այլ յորժամ ցուցանի՝ թէ մեղք իւրաքանչիւր որպէս դարանակալ լինին ընդդէմ յառաջադէմ եղելոց, իբրու պաշարումն դնի ձայնիւ քարոզ չին շուրջ զԱյրուսաղէմ քաղաքաւ։

Այլ քանզի ոչ լոկ այնմ պարտ է գալ՝ ի ծանօթս՝ եթէ քանի ախաք դիմանարտին, այլ և այսմ՝ եթէ որպէս ամենայնսցեն զմեզ առաքինութիւնքն պահեալք, բարւոք յարի առընթեր. «Այլ շինեսցես շուրջ զնովաւ մարտկոցս»։ Այանչի մարտկոցս կանգնէ ընտիր քարոզնչ, յորժամ ցուցանի՝ թէ որ առաքինութիւնք դիմակալեն այսց և այնց ախտից։ Այլ որովհետև՝ ի զօրանալ ամրութեանց առաքինութեան՝ բազում այն է զի յա-

Հախեն մարտք փորձութեանց, 'ի դէպ 'ի վերայ ածի և ասա. "Այս պատեսցես շուրջ զնովսա պատնէշ, և տա-ցես շուրջ զնովսա բանակս, և ածցես շուրջ զնովսա նե-տակաս ,, : Պատնէշ պատէ քարոզիչն, յորժամ ազգ առնէ զամբառնալ ամբարտակի փորձութեան. և բա-նակ յարուցանէ շուրջ զ'Յրուսաղէմս, յորժամ կան-խաւ յուշ առնէ ունկնդրաց զդարանս խորամանկ թշ-նամւոյն ընդդէմ ուղիղ դիտաւորութեան՝ զայսանիս և զդաղտնածածուկս : Այս նետակաս կամ խոյս մանդ-ղիոնից ածէ զնովսա, յորժամ տայ 'ի միտ առնուլ ըզ-խայթոցս փորձութեանց, որ 'ի կենցաղումն շուրջ պա-տէն զմեօք, և հնարին խորամտել զպարիսպ առաքի-նութեանց :

Մայր թէպէտ և զայս ամենայն մանրամասն յիշե-ցուսցէ առաջնորդն, ցորչափ ոչ վառեսցէ 'ի նմա նախան-ձաւորութիւն հմայական միոյ միոյ յախտից, ոչ ինչ ար-ձակուրդ գոցէ անձին երբէք : Այրին աղաղաւ բարւոք յարի և ասա. "Այս առցես զոմ քեզ տապակ երկաթի, և կանգնեսցես զնա իբրև պարիսպ երկաթի ընդ քեզ և ընդ քաղաքն ,, : Տապակաս նշանակի եռանդն ոգւոյ, և երկաթով արտապինդ արիութիւն 'ի յանդիմանել : Այս զինչ այլ այնպէս տապագին և եռանդուն գործեալ զոգի վարդապետին որպէս նախանձն Այսուծոյ տո-ջորիչ. և ահա Պօղոս այսր տապակի տապով վառէր յասել անդ. "Ո՞ հիւանդանայ, և ես ոչ հիւանդա-նամ: ո՞ գայթագղի, և ոչ ես տապանամ ,, : Այս զի մի լեցի վառեալն 'ի նախանձն Այսուծոյ՝ առ անհոգու-թեան իւրոյ գատապարտ գտանել, զնոգագոյն պահ-պանութիւն յաւէժ ամրանալ պարտի. նմին իրի բարւոք ասի, "Կանգնեսցես զնա իբրև զպարիսպ երկաթի ընդ քեզ և ընդ քաղաքն ,, : Այդ տապակ երկաթի որպէս պարիսպ երկաթի դնի ընդ մարգարէն և ընդ քաղաքն. քանզի ուր երբեմն զանկնկՃելի նախանձ ցուցանէն ա-ռաջնորդք, զնոյն նախանձ յետոյ իբրու անվանելի ամ-բութիւն ունին ընդ մէջ իւրեանց և ունկնդրաց. զի մի յայտաժամ յեռանեսցին 'ի վրէժիմնդրութենէ, եթէ այժմ թուլացին 'ի յանդիմանելոյ :

Այս այսոքիւք և զայն պիտի գիտել, զի ցորչափ ոգի վարդապետին բորբոքի 'ի կրամբել դժուարին է յոյժ

եթէ երբեմն չելանիցէ ընդ բերանն և բան ինչ՝ զոր չէր արժան ասել։ Այլ տեսլ իսկ պատահէ, զի յորժամ յանցանք հպատակաց բուռն սաստիւ կշտամբին, լեզու վարդապետին 'ի տարապայման բանս ձգի. իսկ 'ի սաստ կանալ յանդիմանութեան յանչափ բորբոքումն՝ սիրտք յանցուցելոց կբին 'ի յուսահատութիւն։ Ա՛ն որ ոչ հարկ է, զի ծանրացաւումն առաջնորդ՝ յորժամ 'ի միտ առցէ եթէ առաւել քան զարժանն խոցեաց զոգի հպատակաց, յանձին իւրում միտս յապաշխարութիւն ապաստան լեցի. որպէս զի ողբալով թողութիւն գտանիցէ առաջի ատենի Աշմարտութեան վասն այնր իսկ զոր մեղանէ փութով ատուածային նախանձու։

Այլ զայս նշանակաւ պատուիրէ տեր 'ի ձեռն Պողոսեսի՝ ասելով, "Որ ոք մնանիցէ ընդ ընկերի իւրում 'ի մեղբի հարկանել փայտ, և ամբառնայցէ զձեռն իւր փայտատուն հարկանել փայտ, և անկանիցի երկաթն 'ի մեղեխէ անտի, և դիպիցի ընկերին, և մեռանիցի, փախիցէ նա, և անկցի 'ի մի 'ի քաղաքացն այնոցիկ, և կեցցէ։ Օ՛ի մի սնդեսցի մեղաւոր արեանն զկնի սպանողին, մինչդեռ այրիցի սիրտ նորա, և հասանիցէ նմա, և հարկանիցէ զանձն նորա,,։ Վասանզի զոգեաս 'ի մայրին երթամք ընդ ընկերին՝ ցորչափ ուշ ունիմք դիտել զյանցանս հպատակաց. այլ տապարն երանէ 'ի ձեռաց, յորժամ յանդիմանութիւնն աւելի քան զարժանն 'ի խստութիւն բերի, և երկաթն 'ի մեղեխէն 'ի բաց ոստնու. յորժամ բան խստագոյն 'ի յանդիմանութենէ 'ի դուրս արձակի, և զընկերն կամ զբարեկամն հարկանէ և սպանանէ, վասն զի թշնամանագրութիւն բարբառեալ՝ զոգի սիրոյ մեռուցանէ զլսողին. զի սիրտ յանդիմանեցելոյն իսկ և իսկ 'ի թշնամութիւն դառնայ, յորժամ յոգի հարկանէ զնա տարապայման սաստ կրշտամբութեան։

Այլ անզգոյշ փայտահարն՝ մահացուցիչ ընկերին հարկաւորի փախչել յերիս քաղաքս ապաստանի. զի 'ի միում 'ի նոցանէ պատսպարեալ կեցցէ. զի եթէ յողբս ապաշխարութեան դիմեալ՝ 'ի հաղորդութեան սուրբ խորհրդոյ ամենայն յուսով և սիրով, ոչ լինի պարտաւոր արեան. և մերձաւորն մեռելոյն թէ և գոյցէ զնա՝ չսպանանէ. վասն զի յորժամ եկեսցէ անաչառ

զատաւորն որ հաղորդեցան ընդ մեզ բնութեամբ, ջատՀանՊէ բնաւ 'ի նմանէ զՊնաստարտութիւնն, զոր ընդ նորին ներողութեամբ ծածկեն հաւատք, յոյս և սէր։

ԺԱ. Բայլ զոյս ամենայն օրինօք կատարէ առաջնորդն, եթէ հոգւով առցեալ վերնաւոր երկիւղածութեան և սիրոյ՝ սրտի մտօք զոր Հանապազ խոկայցէ զՀրամանս աստուածեղէն պատգամաց. զի յանձին նոքա նորոգեսցեն բանք աստուածային աղդեցութեանց զիսկութիւն փութոյ և խնամոտ դիտողութեան երկնաւոր ՀանապարՀին, զոր ընթացք մարդկային վարուց անդադար աղաւաղեն. և նա որ կենակցութեամբ ընդ աշխարՀիկս բերի 'ի Հնութիւն վարուց, Հանապազ սիրով Հոգւոր Հայրենեաց նորոգեսցի յոգի զգջութիւն. վասն զի 'ի մարդկային զրուցաց միջի մեղկանայ յոյժ սիրան. և քանզի առանց ընդ բանս ինչ ածելոյ յայտ է՝ զի յաղմիկ արտաքին զբաղանաց շարժեալ ինչինին կործանի, պարտ է նմա անբնդՀատ ջան դնել, զի կանոնեսցի ուսումնասիրութեամբ։

Սորին վասն յուշ առնէ Պօղոս աշակերտի իւրում՝ վերակացու կարգելոյ Հօտին՝ թէ "Մինչև գամ ես միտ դիր ընթերցուածոց,,։ Եւ Դաւիթ ասէ. "Որպէս սիրեցի զօրէնս քո տէր, զօրՀանապազ խօսք իմ է ('ի խորՀուրդս),,։ Ուստի և Մովսէսի պատուիրեաց տէր վասն կրելոյ զտապանակն՝ օրինակ զայս. "Զուլեսցես նմա չորս օղամանեակս ոսկիս, և դիցես 'ի չորեցունց կողմանց նորա։ Եւ արասցես լծակս յանփայտս փայտից, և պատեսցես զնոսա ոսկւով. և ապուսցես զլծակսն յօղամանեակսն 'ի կողմանս տապանակին, բառնալ նոքօք զտապանակն. զի յօղամանեակս կայցեն միշտ լծակքն՝ անշարժք անդատին 'ի նմանէ (կամ՝ 'ի նոցանէ),,։

Բայդ զինչ նշանակի տապանակաւ, եթէ ոչ եկեղեցի սուրբ. յոր Հրամայի զնել չորս օղամանեակս ոսկիս 'ի չորեսին կողմանս. զի 'ի նմա՝ որ 'ի չորեսին կողմանս աշխարՀի ընդարձակեալ ծաւալի, պարտնակեալ չարիւք զրեամբք սրբոյ աւետարանին քարոզի։ Իսկ լծակքն յանփատս փայտից են, որ 'ի նոցն օղամանեակս ապուցանին առ 'ի բառնալ. վասն զի արի և անյողդողդ

վարդապետք իբրև զանփութ փայտս ինդրելն են, որոց միշտ յարեալ 'ի հրահանգս սուրբ տաճարից՝ զմիութիւն եկեղեցւոյ սրբոյ առաքելականացն, և իբրու միջամուխք յօրամանեակս՝ բարձցին զտապանակն։ Ա՛ն զի լծակքը բառնալ զտապանակն՝ է ընարելով՝ վարդապետաց առնուլ տանել քարոզութեամբ զսուրբ եկեղեցի առ տխմար միտս անհաւատից։

Լա՛ զայսոսիկ ոսկւով պատել հրամայի. զի ուր այլոց բանիւ ազդեն, ինքեանք ևս մաքրութեամբ վարուց փայլեսցին։ Ա՛յմն իբրև կարի 'ի դէպ 'ի վերայ բերի. "Յօրամանեակս կայցեն լծակքն միշտ, անշարժք անդրմանն 'ի նոցանէ"։ Իբր զի հարկ է որոց պարապիցին 'ի պաշտօն քարոզութեան՝ չհեռանալ 'ի փութոյ սուրբ ընթերցուածոց. քանզի և վասն այսորիկ պատուիրի միշտ կալ մնալ լծակաց ապուցեալ յօրամանեակս, զի յորժամ՝ պէտք լինիցին բառնալ զտապանակն՝ մի լոյսն դանդաղումն ինչ յամենալ յապուցանել զլծակս առ 'ի բառնալ։ Ա՛ն զի յորժամ՝ զհոգեւոր ինչ իրաց հարցանեն հպատակքն ցհովիւն, ամենայն է յոյժ՝ եթէ յայնժամ՝ սկսանիցի ուսանել յորժամ պարտ է լուծանել զմենդիրն։ Լա՛յլ ապուցեալ կայցեն լծակքն յօրամանեակս, որպէս զի վարդապետք հանապազ 'ի սիրոյ իւրեանց յեղյեղելով զսուրբ պատգամն՝ անյապաղ ըստանձնեսցեն զտապանակ կուսակրանաց. զի թէ պէտք ինչ հարկեցուսցեն, նոյնժամայն վարդապետեսցեն. որպէս բարուք իրատեւ նախկին հովիւն եկեղեցւոյ զայլ հովիւս՝ ասելով. "Պատրաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ ինդրիցէ զձանն՝ որ է վասն յուսոյն ձերոյ"։ որպէս թէ բացայայտ ասէր, մի երբէք զատցին լծակքն յօրամանեակաց, զի և ոչ մի ինչ դանդաղութիւն խափան լիցի բառնալոյ զտապանակն։

ՄԵԱՆ ԵՐՐՈՐԴ

Ա. ԳԼՈՒԽ որովհետև ցուցաք եթէ ոչպիսի լինել հարկ իցէ հովիւն, այժմ զայն առաջի արասցուք, թէ ոչպէս պարտիցի վարդապետել։ Քանզի զոր օրինակ կանխագոյն յոյժ քան զմեզ ուսոյց արժանին անմոռաց յիշատակի Գրիգոր Լազիանզացի, ոչ մի և նոյն յորդոր 'ի դէպ գայ ամենեցուն, զի և պէսպիսութիւն բարուց է անմնան. վասն զի քաղում այն է, զի վնասէ ոմանց՝ որ ինչ այլոց օգտէ. որպէս և յորմէկի դարմանիչք դարմանիչք այս ինչ կենդանեաց՝ մահաւորէ են այլոց. և չ՚ինն մեզմ հեզացուցանէ զերիվարս, այլ գրգռէ զկոնիւնս շանց։ Այս դեղ՝ որ այսմ հիւանդի գիւրիչ է, այլոմ դեղիչ լինի. և հայ հաստատիչ կենաց 'ի չափ հաստելոց՝ մահարար է մնտաղ տղայոց։ Վասն այսորիկ ըստ հանգամանաց լսողացն պարտին պատկանիլ բանք վարդապետաց, զի իւրաքանչիւրոցն յարմարեսցին բնաւորութեանց. այլ սակայն ոչ երբէք արժան է, զի խոտորեսցին 'ի կարգէ արուեստին հասարակաց շինութեանէ։

Քանզի զինչ այլ են ուշադիր միտք լսողաց, բայց եթէ՝ որպէս կամք են ասել բանիս, շարք իմն լարից ձկտելոց 'ի քնարի. զոր արուեստագէտն պէսպէս բախէ, զի մի նուազն անմնան յինքեանն գոցի։ Այս վասն այն լարքն զմիաբանական գեղգեղ ձայնից յօրինեն, զի թէպէտ և միով կենդոցաւ հարկանէն, այլ ոչ միօրինակ բախմամբ։ Ոստ այսմ օրինակի և իւրաքանչիւր վարդապետ՝ առ 'ի՝ տալ շինութիւն բոլորից միով սիրոյ առաքինութեամբ՝ պարտի շօշափել զսիրտս ունկնդրաց միով վարդապետութեամբ, այլ ոչ միօրինակ յորդորմամբ։

Վասն զի այլազգ պարտ է խրատել զարս, և այլազգ զկանայս. այլազգ զերիտասարդս, և այլազգ զծերս. այլազգ զաղքատս, և այլազգ զմեծատունս. այլազգ

զուրախս, և այլազգ զարտմեալս. այլազգ զՀպատակս, և այլազգ զառաջնորդս. այլազգ զծառայս, և այլազգ զտեառս. այլազգ զնմաստուսս Տիս, և այլազգ զտիմարս. այլազգ զանամեթս, և այլազգ զամեթխածս. այլազգ զապառուսն, և այլազգ զվեհերոտս. այլազգ զանհամբերս, և այլազգ զերկայնամիտս. այլազգ զբարեսէրս, և այլազգ զյաչաղկոտս. այլազգ զանկեղծս, և այլազգ զանմաքուրս. այլազգ զառողջս, և այլազգ զհիւանդս. այլազգ զորս երկնչին 'ի գանից՝ ոչ զանմեղս, և այլազգ զխստացեալս 'ի չարիս, մինչև չուղղել և գաւազանօք. այլազգ զլուռ լուռս, և այլազգ զդեգերեալս 'ի շատխօսութիւն։ Ապրեցէք և այլազգ զծոյլս, և այլազգ զխուճապողս հաստատաս. այլազգ զհեղս, և այլազգ զբարկասիրտս. այլազգ զխոնարհս և այլազգ զբարձրամիտս. այլազգ զխստապարանոցս, և այլազգ զյողդողս, այլազգ զորկորաժէտս, և այլազգ զպահացողս. այլազգ զայնոսիկ՝ որ զիւրեանցն բաշխեն ողորմածութեամբ, և այլազգ զորս Ձգնին յափշտակել զայլոցն. այլազգ զնոսա՝ որք ոչ զօտարին յափշտակեն, և ոչ զիւրսն առատաձեռնեն, և այլազգ զնոսա՝ որք զոր ունին տան, բայց ոչ յետս կան և 'ի յափշտակելոյ զօտարինս. այլազգ զերկպառակս, և այլազգ զհանդարտս. այլազգ զբանսարկուս, և այլազգ զխաղաղարարս։ Լաւ է՝ այլազգ զորս ոչ ուղիղ իմանան զբանս օրինաց, և այլազգ զայնոսիկ՝ որք իմանալ իմանան ուղիղ, այլ ոչ խոնարհութեամբ բարբառին. այլազգ զնոսա, որք թէպէտ և կարօղ են օրինաւք քարոզել՝ այլ առ կարի խոնարհութեան զանգիտեն, և այլազգ զնոսա՝ զորս թէպէտ և արդելու 'ի քարոզելոյ անկատարութիւնն կամ հասակ՝ սակայն փոյթն ստիպէ. այլազգ զայնոսիկ՝ զոր յաջողեալ են բաղձալիք նոցա ժամանակաւորք, և այլազգ զայնոսիկ՝ որք թէպէտ և ցանկան աշխարհի իրաց, այլ լքանին յաշխատութենէ ընդդիմակաց. այլազգ զամուսնացեալս, և այլազգ զազատս 'ի կալոյ լըծակցութենէ. այլազգ զորս զիտենն զփոքր խառնակութեան մարմնոյ, և այլազգ զանդգիտս. այլազգ զորս ողբանն զմեղս գործոց, և այլազգ զորս զնորհրդոց. այլազգ զորս լանն զգործեցեալս, այլ ոչ 'ի բաց թողուն, և այլազգ զորս թողուն, այլ ոչ լան։ Դարձեալ՝ այլ

ազգ զորս ոչ միայն զործէն զանարժանս, այլ և զովէն իսկ, և այլազգ զորս ամբաստան լինին զվատթարութեանցն, այլ տակաւին չխորշին. այլազգ զայնոսիկ՝ ոչ յեղակարծ ցանկութիւն յաղթին, և այլազգ զնոսա ոչ 'ի յանցանս կալին գիտութիւն. այլազգ ոչ 'ի մանունս մեղանչեն՝ այլ սահմ, և այլազգ ոչ 'ի փոքունս պահեն զանձինս, այլ երբեմն 'ի մեծամեծս սահին. այլազգ ոչ և ոչ սիրզեն առնեն բարւոյ, և այլազգ ոչ զսկսեալն կատարեն ոչ. այլազգ ոչ զարիս 'ի ծածուկ գործեն, և զարիս հրապարակաւ, այլազգ ոչ թաքուցանեն զարիս զոր գործեն, բայց իւիք իւիք գործով թողացուցանեն կարծել հրապարակաւ զանձանց զարիս։

Բ. Այլ զինչ օգուտ իցէ անցանելն մեր թուարկութեամբ ընդ այս ամենայն գումարտակս, եթէ չարաբերացուք առաջի և զորինակ խրատելոյ զիւրաքանչիւրն՝ ըստ կարի համառօտագիծ ոճով։ Արդ այլազգ պարտ է սահմ խրատել զարս, և այլազգ զիմանալս. քանզի նոցա պիտի ծանր բեռինս դնել, և սոցա թեթեւս. զի զնոսա ծանուցանէն Ճնչեսցեն և զգաստացուցեն, և զսոսա թեթեւքն ամբարեալ զարձուսցեն։

Այլազգ պէտք են խրատել զերիտասարդս, և այլազգ զծերս. վասն զի յոլովակի զնոսա խստութիւն խրատուն յուզութիւն ածէ, իսկ զսոսա ողբաբանն աղերսք 'ի լաւ անդր ուղղեն, քանզի գրեալ է. "Օ ծերն մի պատուհասեսցես, այլ մխիթարեսջիր (աղաչելով) իբրև զհայր"։

Այլազգ խրատել պարտ է զազքատս, և այլազգ զմեծատունս. քանզի նոցա պարտիսք մխիթար մատուցանել 'ի սփոփանս վշտաց, և սոցա 'ի դէմս ածել զարիս ամբարտաւանութիւն իւրեանց. զի առ տնանէն ասի 'ի տեառնէ մարգարէիս, "Ո՞ի երկնչիցիս, զի յամենի աբարին գքեզ". և յետ բազում այլ ողբանաց, "Հաշտեաւ եմ ընդ քեզ տառապեալդ և խախտեալ, մինչև մխիթարեսցիս". և թէ "Կնարեցի գքեզ 'ի հնոցի աղքատութեան"։ Օ սորին հակառակն վասն մեծատանց զրկ Պօղոս առ աշակերտն. "Պեծատանց որ են յայսմ աշխարհի պատուէր տացիր մի հպարտանալ, և մի յուսալ 'ի մեծութիւն մնոտի"։ Տես ինձ ասասանօր, զի վարդապետս խնարհութեան 'ի յիշէն զմեծատունս՝

չասաց՝ մխիթարեա, աղաչեա. այլ պատուէր տուր, զի թէպէտ և զգութ ցուցանել պարտ է առ տկարութիւն, այլ չէ արժան զի պատիւն և փառքն տացին նոցա որոնք ամբարհաւաճուութեան. վասն որոյ որ ինչ ուղիղ ասի առ այսպիսիս, այնչափ ևս ուղղութեամբ հրամայի՝ որչափ փքանան խորհրդովք բարձրամտութեան յիրս անցաւորս. առ որս և տէրն ասաց յաւետարանի. "Վա՜յ ձեզ մեծատանց, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր..։ Լաւ քանզի անդիտանան զյաւիտենից ուրախութիւնն, յաստի կենացս Ձոխութենէ ընդունին զմխիթարութիւն. վասն որոյ նոցա պարտ է մխիթարութիւն մատուցանել զորս տոչորէ հնոցն աղքատութեան. իսկ զորս հպարտացուցանէ մխիթարութիւն ժամանակեան փառաց, պարտ է երկեղու

տելոյ զայսպիսի հզօրս աշխարհի՝ նախ պարտ է նմա նութեամբ իւիք զայլոյ ուրուք արարուած 'ի մէջ առնուլ. և յորժամ ուղիղ վճիռ տայցէն զայնմանէ, յայն ժամ դիպող եղանակաւ 'ի բուն յանցանն նոցա ուղղել զյանդիմանութիւնն. որպէս զի միտք ուռուցեալ ժամանակեան իշխանութեամբ չկարիցէ ամբառնալ զինքն հակառակ ազգման խրատուութեան, որ նորին դատաստանաւ կոխէ զբարձրամտութիւն նորա, և ոչ ունիցի տեղի չքմեղութեան անձին՝ կապեալ կաշկանդեալ վկայութեամբ բերանոյ իւրոյ։ Օ որ օրինակ Լաթան մարգարէ եկեալ 'ի յանդիմանել զԴաւիթ՝ որպէս այն թէ զդատաստան նորա ինդրէր ընդդէմ մեծատան անիրաւելոյ առ աղքատն. որպէս զի նախ արքայ վճիռ տայցէ, և ապա զիւր յանցաւորութիւն լուիցէ. զի մի իւիք կարող լեցի հակառակ կալ արդարութեան, զոր ինքն 'ի վերայ անձին իւրոյ դատակնքեսցէ։ Ա՝ ասն որոյ այրն Աստուծոյ ակնարկեալ 'ի Դաւիթ՝ իբր 'ի մեղուցեալ և իբր 'ի թագաւոր, զարմանալի կարգաբանութեամբ գուն գործեաց նախ կապել զյոխորտ յանցաւորն 'ի ձեռն խոստովանութեան նորուն, և ապա խարել և կտրել զվերս յանդիմանողական բանիւ։ Զ՝ վայր մի ծածկեաց զոր խնդրէին, այլ յանկարծ ելեալ՝ զոր պինդ կալան. զի ոչ այնչափ ուժգին հատանէր, եթէ 'ի սկզբան անդ բանիցն յայտնապէս զմեղս նորա հարկանել կամէր, այլ կանխաւ նմանութիւն 'ի կիր արկեալ՝ ապա 'ի գործ եւ զծածկեալ կրտամութիւն։ Զ՝ հիւանդ ոք էր բժիշկն եկեալ, և կամէր զվերսն կտրել, այլ յերկուաւայր ընդ տոկալ հիւանդին. վասն որոյ թաքոյց ընդ հանդերձիւ զերկաթն բժշկական, զոր յեղակարծուց մխեաց 'ի վերս անդր. զի չև տեսեալ հիւանդին զգործն հատման մի զգասցի զհատումն. զի գուցէ չառնոյր յանձն, եթէ յառաջագոյն տեսանէր։

Գ. Զ՝ ասլազգ պարտ է խրատել զգուարթս, և այլազգ զտխուրս. քանզի ինդամիտ եղելոց պիտի յուշ առնել զարտմանական՝ որ զհետ գան 'ի պատուհասէն. իսկ տրամեցելոյց յուշ ածել զուրախալիս զիսոստացեալս յարքայութեան։ Ա՝ ուրախամիտք ուսցին 'ի խստութենէ ըստանալեաց զերկիւղալիս. և տրտումքն լուիցեն զուրախալիս վարձուցն 'ի յուսադրութիւն։ Զ՝ ամենայն ա-

սի. “Ո՛ այ ձեզ, որ ծիծաղիք այժմ, զի լայցէք,,. և յետինքն լսէն 'ի նմին վարդապետէ, զի ասէ. “Դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լինիցին սիրտք ձեր. և զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ,,։

Դայց են և ուրախ միտք ոմանք և տրտունջ ոչ եթէ յիրաց ուստեք այլ 'ի խառնուածոց բնութեան. և այս պիսեացս ազդել պարտ է՝ եթէ են ախտք ինչ ընդակիցք բնաւորութեան. զոր օրինակ ուրախամտոյց դրակից է զեղծութիւն, և տխուր եղելոյց 'ի բնէ՝ ցաստուն. վասն որոյ արժան է, զի ոչ զայն և եթէ խորհեսցի ոք զոր կրէ 'ի բնաւորութենէն, այլ և զայն՝ զոր մերձաւոր վատթարութիւնն սադրէ. զի մի յորժամ անընդդիմակ կացցէ իսկ առ ընդաբոյս կրից, նեղեցոյ անկցի և ախտին՝ յորմէ ազատ զանձն կարծէր։

Դ. Ա՛յլով օրինակաւ խրատել պիտի զՀպատակս, և այլով զառաջնորդս կամ զդիւանորս, զի զնոսա մի ընկճեսցէ ցածութիւնն, և մի զսոսա հպարտացուսցէ բարձրութիւնն. նոքա մի թերասցին 'ի կատարելոյ ըղձրանայելոյ, և սոքա մի աւելի քան զչափ 'ի հրամանատարութիւն բերցին. նոքա խոնարհութեամբ զիւրանաց գոցին, և սոքա 'ի չափու զանձինս ունիցին վերակացութեան. ասի առ նոսա նմանութեամբ օրինակի, “Ոբգիք հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի 'ի տէր,,։ Ա՛ս սոցա պատուէր դնի, “Հարք մի զայրացուցանէք զորդիս ձեր,,։ Ասացեալ նոքա եթէ որպէս յարդարեսցեն զանձինս առաջի ծածկագէտ դատաւորին. և սոքա՝ թէ որպէս յանձն եղելոյն ինքեանց օրինակ տայցեն արտաքուստ բարւոք քաղաքավարութեամբ։

Զայս գիտասցեն վերակացուք, զի թէ խոտորնակս ինչ արասցեն, այնչափ մահուոյ են արժանի՝ որչափ օրինակս կորստեան փոխանցեն 'ի հնազանդեալս իւրեանց. վասն որոյ պարտին մեծաւ զգուշութեամբ անձնապահ լինել 'ի մեղաց, զի չարեաք իւրեանց ոչ ինքեանք միայն մեռանին, այլ և պարտական զանձին հոգւոյն՝ զոր կործանեցին վատթար օրինակաւ։ Ա՛յդ պէտք են խրատել զՀպատակս, զի մի սատակապահանջ պատուհաս կրեսցեն՝ եթէ չգտանիցին ազատ զԼեթ մասամբք յանցանաց իւրեանց. իսկ զմեծաւորս, զի մի դատաստանս ընկալցին վասն սխալանաց հպատակաց, թէ-

պէտ և աներկեան լինիցին զանձանց իւրեանց։ Հպատակքն այնչափ առաւել զգուշեաւ կեցցեն, որչափ զի ազատ են 'ի հոգոց կենաց այլոց. և վերակացուք այնպէս 'ի գլուխս տայցին զհոգս այլոց, զի և զանձանց մի անհոգացցին. և այնպէս վարեսցին 'ի հոգոցուլթեան անձանց, զի ոչ իւիք թուլացցին և 'ի պահպանուլթենէ ընդ ձեռամբ եղելոցն։ Աբ հպատակն՝ որում անկ է անձին իւրում պարապել, ասի. "Յրլթ առ մրջևնն ով վատ, և նախանձեաց ընդ ձանապարհս նորա. և լեր իմաստնագոյն ևս քան զնա„։ Աբ մեծաւորին ազգ լինի ահաւոր բանիւս. "Որդեակ, եթէ լինիցիս երաշխաւոր բարեկամի քում, մատնեցեր զանձն քո թշնամոյ. զի որոգայթ բուռն են առն շրթունք իւր, և ըմբռնի բանիւ բերանոյ իւրոյ„։ Ա ասն զի երաշխաւոր լինել բարեկամին՝ է զայլոց հոգին յանձն առնուլ 'ի վըտանգի քաղաքավարուլթեան իւրոյ. վասն որոյ և լինի ձեռն մխել յօտար ոք կամ մատնել 'ի ձեռս օտարի, քանզի միտքն կապին 'ի հոգս տատանուլթեան, յորմէ ազատ էր յառաջագոյն. և բանիւ բերանոյ իւրոյ յորոգայթ անկանի և ըմբռնի, զի ուր ստիպի բանս բարիս ասել առ հպատակս, ինքն նախ պարտական գտանի պահել զոր ասացն։ Աբդ յորոգայթ ըմբռնի բանիւ բերանոյ իւրոյ, յորժամ բանաւոր պատճառաւ պարապլին զի, զի վարք իւր չթուլանայցին յիրս զոր այլոց ազգ առնել. վասն որոյ և առ անաչառ դատաւորին պարտաւորի հատուցանել գործով որչափ ինչ բանիւ պատուիլ բերայ այլոց։ Աբլ և առ ետեղ յորդոր մատուցանել գիրն՝ յասել անդ. "Աբդ արա որդեակ զոր ինչ ես պատուիրեմ քեզ, և կեցցես. զի անկար 'ի ձեռս չապրայ վասն բարեկամի քոյ։ Աբդ սնդեա, և մի լքանիր. յորդորեա և զբարեկամն զոր առեր յերաշխի. մի տար քուն աչաց, և մի նիրհ արտեւանաց քոց„։ Ա ասն զի որ միանգամ յօրինակ կենաց այլոց կարգեսցի, հարկ է զի ոչ միայն ինքն աքնեսցի, այլ և զբարեկամն զարթուցանիցէ. զի չէ բաւական տքնելն բարւոք քաղաքավարուլթեամբ իւրով, եթէ ոչ յարուսցէ 'ի թմբրուլթենէ մեղաց և զնա ևս յորոյ վերայ ստիպան է կարգեալ։ Աբ 'ի դէպ ասացաւ. "Ա՝ի տար քուն աչաց քոց, և մի նիրհ արտեւանաց քոց„։ Ա ասն զի քուն տալ աչացն

է առ 'ի չգոյէ հսկողութեան անփոյթ առնել 'ի սպառ զհոգաբարձութեամբ հպատակաց։ Իսկ արտաքսումնք ինչքն յորժամ խորհուրդք մեր զոր ինչ արժանի յանդիմանութեան ճանաչեն 'ի հպատակս՝ ծանրացեալ 'ի պղերգութենէ՝ անտես առնեն. վասն զի տիրապէս 'ի քուն լինելն է ոչ գիտել և ոչ ուղղել զգործս եղելոյն ընդ ձեռամբ. իսկ ներհել է, և ոչ եթէ ինքեան զի-տելն յիրաւի զարժանիս կշռամբութեան, այլ առ յու-լութեան սրտի յուղղել զնոսա արժանաւոր սաստիւք։ Իսայ ներհելով ևս աչքն 'ի կատարեալ քուն բերին, զի ուր յոլովակի վերակացուն չհատանէ զչարն զոր գի-տէ, իւրով հեղգութեամբ երբեմն և յայն անհոգու-թիւն հասանէ, մինչև չգիտել և զյանցանել իւրոյն։ Պաս այսորիկ պիտոյ է խրատել զվերակացուս, զի պա-տնէայեաց տեսութեամբ արթուն ունիցին զաչս ներ-քուստ և շուրջանակի, և ջան դիցեն լինել իբրև գերկ-նային կենդանիս բազմաչեայս՝ ըստ գրոյն կենդանա-գրութեան։ Վանզի և արժան իսկ է, զի ամենայն վե-րակացուք հոգւոց ունիցին աչս ներքոյ և շուրջ գլու-բեամբք, որպէս զի փոյթ կալցին հաճոյ լինել ներքին դատաւորի յանձինս իւրեանց, և օրինակ վարուց տա-լով և արտաքոյ՝ խելամուտ լինիցին և ուղղելեացն յան-ձինս այլոց։

Պիտոյ է խրատել և զհպատակս, զի մի յանդուգն դատաւոր լինիցին կենաց առաջնորդաց իւրեանց, եթէ երբէք և արժանի ստգտանայ ինչ տեսցին 'ի նոսա, զի մի ուղղոյ կշռելոյն զպակասութիս մեղադրելիս՝ հանար-ձակեսցին բարձրամտութեամբ վարել և խորասուզեալ ընկղմեսցին. և դարձեալ 'ի տեսանել զյանցանս զլսա-ւորաց՝ մի յանդգնագոյնս զնասցին ընդ նոսա. այլ թէ-պէտ և վատթարագոյն ինչ նշմարել 'ի նոսա վարկա-նիցին, տակաւին ահիւ երկիւղին Աստուծոյ՝ մի իշխես-ցեն թօթափել յանձանց զլուծ յարգանաց։ Վասն տարացոյց լինիցին իրացս գնացք Դաւթի. զի յորժամ Սաուղ հալածիչն եմուտ յայրն 'ի պէտս իւր, անդ 'ի ներքս էր Դաւթի արամբք իւրովք, որ այնչափ ժամա-նակս համբերէր չարեաց նորա. և 'ի յորդորել զնա ա-ռանցն հարկանել զՍաուղ՝ ցածոյց զնոսա ամենք բա-նիւք՝ եթէ չէ օրէն ձեռս ամբառնալ յօծեալն տեառն.

միայն յարեաւ գաղտ, և Եհատ զտուսն լոգկի նորա։ Բ.զդ յայտ է եթէ Սաւուղ էր նշանակ չար առաջնորդաց, և Դաւիթ բարւոյ հպատակի։ Բ.զդ նոտեին Սաւուղայ 'ի պէտս մարմնոյ՝ է 'ի գործս տալ վատթարը վերակացուաց զամբարեալն 'ի սրտի զչարիս մինչ 'ի բուսն հոտոյ գարշութեան, և զնեբբին խոհերս արդեամբք ցուցանել արտաքին գործոց։ Բ.այց Դաւիթ երկեաւ հարկանել զնա, վասն զի առաքինի հպատակք պահեն զանձինս յամենայն ժամանից բամբասանաց, և ոչ հարկանեն սրով լեզուի զկեանս առաջնորդաց՝ 'ի տեսանելն անգամ զթերութիւնս նոցա։ Բ.և եթէ երբեք առ տկարութեան չկարեն ժայժ ունել յանձինս 'ի չպախարակելոյ զյետին և զարտաքին չարիս նոցա, իբրու լռելեայն հատանեն զտուսն լոգկին։ սակայն և այնպէս յորժամ անվնաս և լրիվ օրինակաւ պակաս առնեն զպատիւ մեծին, որպէս թէ զարքունի քղամիդն զդրոշակ կորելով, անդրէն խելաբերին յինքեանս, և սասիկ յանդիմանեն անձամբ զանձինս վասն դոյզն իսկ բանիւ պատառումն գործելոյ։ Ա՝ ան որոյ Ճահոդակի զրի անդանօր։ "Բ.և եղև յետ այնորիկ զղջացոյց զ'Դաւիթ սիրտն իւր, զի Եհատ զտուսն լոգկի նորա,,։ վասն զի չէ արժան զգործս առաջնորդաց հարկանել սուսերաւ բերանոյ, թէպէտ և արժանի սպանանոյ թուիցին։ Բ.և եթէ երբեք ընդդէմ նոցա յանցանէ լեզու 'ի թեթեթև իսկ բանս, հարկ է Ճնշմամբ ապաշխարութեան Ճնշել զսիրտ։ որպէս զի զգաստացեալ երկիւղ 'ի դատաստանէ տեառն, որ զնա կարզեաց 'ի վերակացութիւր, զի առ նա 'ի վեր ելանէ յանցանէլ առ սա։ վասն զի մեղանչելով ընդդէմ առաջնորդին՝ հակառակ ելանէանք այնմ, որ զնա կացոյց 'ի մեր վերայ։ յայս սակս և Մովսէս իբրև լուաւ զբամբասանս ժողովրդեան զուրբ մէ և զ'Հարոնէ՝ ասէր։ "Դանդի մեք ով եմք։ զի ոչ զմէնջ է արտունջդ ձեր, այլ զ'Տուծոյ,,։

Ե։ Բ.յլով օրինակաւ խրատել պէտք էն զծառայս, և այլով զտեարս։ Օ ծառայս, զի միշտ զիտեսցեն յանձինս զցածութիւն վիճակին։ և զտեարս, զի զբբնութեան իւրեանց հաւասարութիւն ընդ ծառայս 'ի հաստատածոյ անտի, մի արկցեն 'ի մոռացմանս։ Օ ծառայս խրատել պիտի չանդգանել զտեարս, զի մի դառնացուս-

ցեն զԱստուած՝ հպարտութիւն զիմակաց լինելով կարգաւորութեան նորա. և զտեարս իրատել, զի գիտասցեն եթէ ընդդէմ Աստուծոյ փրանան ընդ պարզև նորա, յորժամ չծանիցեն զուգահաւասարս անձանց խոկութիւն բնութեան զորս ըստ դիպաց վիճակի հպատակս ունին ինքեանց։ Օտառաչք իրատեսցին Ճանաչել զին քեանս ծառայս տերանց իւրեանց, և տեարք՝ գիտել զանձինս ծառայակիցս ծառայից իւրեանց. քանզի առ նոսա ասացաւ. «Օտառաչք, հնազանդ լերուք տերանց ձերոց»։ և թէ «Ոչ միանգամ ընդ ջրով ծառայութեան իցեն՝ զտեարս իւրեանց ամենայն պատուոյ արժանիս համարեսցին»։ Այլ առ սոսա. «Այլ գուք տեարք զնոսն առնիջիք առ նոսա, ներելով առնել զպատուհասն. գիտասջիք թէ և նոցա և ձեր տէր գոյ յերկինս»։

Զ. Այլազգ պարտ է իրատել զիմաստունս աշխարհիս, և այլազգ զտխմարս. քանզի զիմաստունս իրատել պէտք են, զի մի ինչ գիտել համարեսցին՝ զոր գիտենն. և զտխմարս, զի փոյթ ունիցին գիտել զոր ոչն գիտեն։ Ի նոսա զայն պարտ է եղծանել՝ զի զանձինս առ իմաստունս ունին. և 'ի սոսա զայն պարտ է շինել՝ որ ինչ վերին իմաստութեամբ Ճանաչի. զի յորժամ չունին ինչ՝ հպարտանալոյ՝ նոքին իսկ պատրաստ կացուցանեն զսիրտս իւրեանց առ 'ի կատուցումն շինուածոյ 'ի վերայ նոցա. վասն նոցա պարտ է աշխատ լինել՝ զի իմաստնագոյնս յիմար լինիցին. թողցեն զանմիտ իմաստութիւն, և ուսցին զիմաստուն յիմարութիւնն առ Աստուած. և առ սոսա քարոզել՝ զի 'ի կարծեցեալ յիմարութենէն անցցեն և մերձ մատչիցին առ Ճշմարիտն իմաստութիւն։ Ա՛ն զի առ նոսա ասացաւ. «Եթէ ոք կամեսցի 'ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ, յիմար լեցի՝ զի եղեցի իմաստուն»։ Եւ առ սոսա ասացաւ. «Եւ ոչ քաղցեմ իմաստունք ըստ մարմնոյ». և թէ «Օ՜ յիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս»։ Օ՜նոսա յոլովակի զարձուցանեն բանաւոր ձեռնարկութիւնք, և զոսա երբեմն լաւ ևս օրինակք. քանզի նոցա օգտէ, զի 'ի պատճառաբանութիւս իւրեանց անպատասխանի մնասցեն, և յաղթահարեսցին. իսկ սոցա շատ է երբեմն զայլոց գովելի օրինակս 'ի միտ առնուլ։

Այրին աղագաւ և վսեմական վարդապետն՝ որ պարտական ասէր զանձն խնամանոյ և անմոռաց, 'ի խրատել իւրում զԼչբայեցւոցն զիմաստուն ոմանս և զտիմաթս, այն ինչ խօսէր զլրմանէ հնոյ կտակի, զիմաստնոցն զիմաստութիւն ձեռնարկութեամբ յաղթահարեաց՝ ասելով. "Օ՛ի որ հնանայ և ծերանայ, մերձ է յապականութիւն,,. այլ տեսեալ՝ զի զայրն օրինակօք ևեթ պարտ է ամոքել, յարէ 'ի նմին թղթի. "Կէսք ('ի սրբոց) զտանջանաց և զգանից զիրտ առին, զկապանաց և զանտից. քարկոծեցան, սղոցեցան, սպանմամբ սրոյ մեռան,,։ Եւ զարձեալ, "Յիշեցեք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն,,։ Ապրկէս զի զառաջինսն խորտակեսցէ ամենայաղթ փաստն բանական, և զյետինսն դիւրամոք նմանողութիւն յօժարեսցէ առ մեծագոյնս 'ի վեր երանել։

Ե։ Գ.յլով տարազու պարտ է խրատել զանամեթս, և այլով զամենի խածս։ Օ՛նոսա՝ վասն զի սիրտ անամեթութեան ոչ այլազգ նկուն լինի բայց մեծաստաստ կշտամբութեամբ. իսկ զոսա յոլովակի յորդոր բարեպատեհ 'ի լաւ անպղ ուղղէ։ Լոքա չիմանան եթէ յանցանիցեն՝ յորժամ ոչ 'ի բաղմաց յանդիմանեսցին. իսկ առ իիղՀ սոցա շատ է բաղում անգամ զի վարդապետն յուշ արասցէ մեղմով ևեթ զչարիս իւրեանց։ Օ՛ անամեթս լաւ ևս զգաստացուցանէ սաստիկ կշտամբողն. իսկ ամենի խածից օգուտ մեծ լինի, եթէ ստգըտանելի գործք՝ նոցա կողմնակի ինն կծանիցին։

Որպէս տէրն զլրբենի ժողովուրդն Հրէից յայտնաբարբառ կշտամբէ՝ յասել անդ. "Լչբեաք կնՀ պոռնկի եղէն քեզ, անամեթեցար առ ամենեսեան,,։ Իսկ զանամեթ խածն յանձանձէ ասելով. "Օ՛ անամեթն յաւիտենից (կամ զմանկութեան քոյ) մոռասցիս, և նախատինք այրութեան քոյ ոչ ևս յուշ լիցին քեզ,,։ Եւ Պօղոս զանպատկառ յանցուցեալս զԿորնթացիս Համարձակ յանդիմանէ, ասելով. "Ո՛ անմիտ Կորնթացիք, ո՞ նախանձ արար զձեզ,,. և թէ "Գ.յլչափ անմիտք էք. սկսեալ Հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք,,։ Իսկ զյանցուածս պատկառոտաց իբրու կարեկցութիւն ստգտանէ, ասելով. "Ուրախ եղէ ես 'ի տէր յոյժ, զի

և դուք զմտաւ ածիք հոգալ ինչ վասն իմ։ որպէս և հոգայիքն, բայց բարբարիք ինեմ (զտնդաղելով իբրու զլաղելք անպարապ)։ Որպէս զի զառաջնոցն զյանցանս 'ի վեր հանցէ սատակութիւն կրտամբութեան, և զյետնոցն անհոգութիւն յայտնի արասցէ մեղմութիւն բանին։

Ը. Լաղագ պարտ է խրատել զապառումն յանդգնութեան, և այլագ զվատասիրտ վերոտս. քանզի նոքա յանձնապաստան գտեալք՝ դժկամակ լինին 'ի պատարակին. իսկ սոքա արդէն իրագէտք տկարութեան անձանց՝ յորմէ՝ յանցութիւն ընկղմին։ Այրքա զանձնայն զոր առնեն՝ մեծ և անզուգական ինչ համարին, իսկ սոքա կարծեն թէ արհամարհ իցեն յաչս այլոց գործք իւրեանց. և վասն այն յուսաբեկ անկանին. վասն որոյ նրբահայեաց տեսութեամբ պարտի զնոսա յանդիմանողն զգործս յանդգնելոցն, որպէս զի ցուցցէ նոցա եթէ որով իւիք հաձեալ են ընդ ինքեանս՝ նոսիմբ անհաձոյ գտանին յաչս Աստուծոյ։ Վասն զի յայնժամ աջողակի յուղղութեան ածեսցի զյանձնապաստանն, յորժամ զբարւոք գործեալ կարծեցեալս յինքեանց՝ ցուցանեսցի եթէ ոչ բարւոք են գործեալ. որպէս զի ուստի փառս կարծէին ստանալ, անտուստ յառաջ գայցէ շահեկանն խոնարհութիւն։ Այրբեւին և ս ցորչափ ստնուն 'ի միտ զախտ յանդգնոյն յանձնապաստանութեան, սուղ բանիւ ուղղին՝ եթէ այլ թերութիւնք նոցա ձարտարութեամբ զնեսցեալք յայտնագոյնս յերևան գայցեն, և ինքեանք ամենապարտ ցուցցին. զի ուր չկարեն թանգուզել և արդարացուցանել զանձինս, խելամուտ լինցին եթէ սխալեն չարաչար յայմմ զոր ջատագովեին։ Որպէս տեսեալ Պօղոսի եթէ Կորնթացիք հպարտանան յիրերաց վերայ յանձնապաստանութեամբ, քանզի ոմն պօղոսեան ասէր զինքն և ոմն ապօղոսեան, ոմն կեփայեան, և ոմն քրիստոսեան, 'ի մէջ եբեր զոձիին մծղնութեան՝ զգործեցեալն 'ի նոսա և տակաւին չուղղեալ, և ասէ. "Մինչև և անուանի իսկ 'ի ձեզ ընդէր պոռնկութիւն. և այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և 'ի հեթանոսս, որպէս թէ զկին հօր իւրոց ունել։ Այլ դուք հպարտացեալ էք, և ոչ առաւել սգացաք, զի բարձցի 'ի միջոյ ձերմէ որ զգործն զայն գոր-

ծեաց ,, ։ Որպէս թէ յայտնապէս ասել. զի է ձեզ ամ-
բարշտաւանութեամբ սորա կամ նորա աշակերտս զձեզ
ասել, ուր առ ցոփակեաց անհոգութեան ձերոյ և ոչ
միոյ ի նոցանէ աշակերտս զանձինս ցուցանէք ։

Օ սրբին Հակոբոսի՝ զվատասրտս հեշտասէր ածեմք
ի ձանապարհ բարոյ գործելոյ եթէ զարարի ինչ գործս
նոցա կոչիմակի զնեսցուք. զի թէ ինչ մի ի նոսին պա-
խարակելի ցուցցուք, զայլն սկրով գովեսցուք. որպէս զի
գրիչքս բարս նոցա պարարեսցէ, գովութիւնն զոր ասեն,
ուր ի կշռամբէն զպակասութիւնն վհատեսցին նոքա ։
Այսպէս ևս օգուտ գործեմք նոցա, եթէ և զբարի բարի
գործս նոցա յիշատակեսցուք. և եթէ ինչ ինչ չարիս
գործեալ իցեն նոցա, ոչ որպէս եղեալս ի դէմս ածցուք,
այլ որպէս թէ չէ արժան լինել՝ արգելուցուք. որպէս
զի գովելի մեր զՀաւանելիս՝ ածեցուցէ զփոյթ նոցա
ինդանութեամբ. և սոդոմանելի մեր զկիս իսկ՝ ազ-
դոյ գործեսցէ զպատկառելի յորդորումն առաւելութեամբ ։

Այլ ըստ այսմ Պօղոս իբրև լուաւ թէ հաստատուն
կան թէսաղոնիկեցիք ի քարոզութեանն զոր ընկալան,
այլ զիսաց՝ թէ վրդովեալ են կարծմամբ եթեմբ վասն
մերձակայ կարծեցեալ կատարածի աշխարհի, նախ զա-
վն զկիսն լաւ երևեալսաք ի նոսա, և ապա զգուշեալ խրա-
տէ և զբարացուցանէ ըստ սակաւ մասին, ունելով բանին
այսպէս. ,, Խոհանալ պարտիմք զԿատուծոյ յամենայն
ժամ վասն ձեր եղբարք, որպէս և արժան իսկ է, զի
եւս քան զեւս աճին հաւատքն ձեր, և յամենեսին սէր իւ-
լաքանչիւր ձեր ամենեցուն առ միմեանս. որպէս և մեզ
ձեզք պարծել յեկեղեցիսն Կատուծոյ վասն համբերու-
թեան ձերոյ և հաւատոց ,, ։ Հետ այսպէս ոչքք բանին
նշանակելոյ զգովութիւնն նոցա՝ սուղ ինչ զկնի յաւելու-
ցանել. ,, Կատեմ՝ զձեզ եղբարք, վասն գաղտեանին
տեսանն մերոյ Հիսուսի Քրիստոսի, և մերոյ Ժողովո-
ղին առ նա՝ մի փոփոխակի խռովել ձեզ ի մտաց, և
մի զարհուրել, մի հոգով, և մի բանիւ, և մի թղթովք՝
իբրև թէ ի մեզ, որպէս թէ եկեալ հասեալ իցէ օրն
տեսանն ,, ։ Այսպէս ճշմարիտ վարդապետն հնարե-
ցաւ՝ զի նախ լսողքն քաջալերեսցէն գովելի գործովք,
և ապա յոր յորդորիցն՝ բերիցին. որպէս զի մի հեռանալ

ազգումն խրատու ընդհարցի ընդ միտս նոցա, նախա-
կարգեալ զոմանք թիւն սրատարդեսցի զնոսա. և զոր
գիտէր վրդովեաւ կասկածանաւք մնասցուս կատարա-
ծի, ոչ պակս թէ վրդովեալ իցեն՝ յանդիմանել, այլ
իբրև անդէտ եղելոյն՝ արդելու չվրդովել տատանեն.
պակս զի յորժամ՝ կարծիցեն՝ եթէ չիցէ քարոզիչն զի-
տակ թեթեւամտութեան նոցա ցվրդովումն, այնչափ
առաւել ստգատանելոս հանդարտիցին զինքեանս՝ արչափ
զանգիտելին թէ մի լինիցի նա իրաւդէտ։

Թ. Լայազգ խրատել պիտի զանհամբերս կարձա-
միտս, և այլազգ զերկայնամիտս համբերողս. քանզի
առ անհամբերս պարտ է ասել, թէ ցորչափ անիրաւդի
լինին սանձել զանձս՝ ընդ բազում զահաւանդս անտ-
բնութեանց սահին, զոր ոչն իսկ կամիին. վասն զի ցա-
սումն զրդել զմիտս՝ յոր ոչն ձգիր ցանկութիւնն. և 'ի
զրգռիլն առնել յանգիտս զայն ինչ իրս, ընդ որ ստրջա-
նայ յետ գիտելոյն։ Լաւ և ապարդ է ասել առ այնպիսի
կարձամիտս, թէ յորժամ մեղեալք 'ի նեղութեան թենել,
զահավէժ բերին գործել ինչ իբրու օտարացեալք 'ի
մտաց, հազիւ ձանաչեն և յետ լինելոյն զգործեցեալ
չարին. միանգամայն և յորժամ ոչ լինին զիմակալ
յանգանց արարչի իւրեանց, խառնակեն և զայն ևս բա-
բի գործ՝ զոր հանդարտ մտաւք արարեալ էր նոցա, և
յեղակարծուց յարձակումն կարձանեն՝ զոր ինչ թէ-
բև ընդ երկար աշխատութեամբ և խնամով կանգնեալ
էր նոցա։ Ապա զի կարեւոր զառաքինութիւն սի-
բոց ախտիս անհամբերութեան, զմնայնն և զարդասիրեն
ամենայն առաքինութեանց. քանզի գրեալ է, "Ամբ
երկայնամիտ է,,. ասելն եթէ կարձամիտ իցի, ոչ ևս
է սէր։ Ամենն ախտիս անհամբերութեան ցնդի և վար-
դապետութիւնն զայնակ առաքինութեանց. քանզի
գրեալ է, "Ամբարձակութիւն առն համբերութեամբ
ձանաչի,,. կամ "Լայր ողորմեսն երկայնամիտ լինի, և
արդարութեամբ նոցա զեր 'ի վերոյ լինին անդգամանց,,։ Լայրա
այնչափ անիմաստս զասնի որ, որչափ անհամբերս ցուցցի.
քանզի և չկարէ իսկ ձմարիտ բանիւք բերիլ յուսա-
ցանել զարարին, որ 'ի կեանս իւր չգիտէ անդորրամիտ
համբերել չարի առ 'ի յոյլոց։

Ամենն ախտիս անհամբերութեան առեղծեալ զառ-

նէն 'ի միտս և յանցանք յանդուգն յանձնապատուհանութեան. զի ցորչափ ջանուս որ յանձն անդամնիլ 'ի կենցաղումս, եթէ ունի ինչ բարի թաքուն ջանայ 'ի ցոյցս առնել. և այսպէս անհամբերութեամբ ձգի յամբարհաւաճութիւն. և երբ չկարէ տանել արհամարհանաց, մերկանալով զանձն՝ պարծի ցուցակութեամբ. վասն որոյ զրեալ է, "Բարի է երկայնամիտ քան զկարատացեալն ոգւով..: Այսն զի ընտրէ երկայնամիտն կրել զամենայն չարիս, քան ախտիւ ցուցակութեան անձին՝ տալ խնամալ այլոց զծածկեալ բարիս իւր: Ամին հաւատակ ընտրէ ամբարհաւաճն պանծալ ընդ բարիս անձին, և այն ստասպատիրս, զի մի կրեսցէ և զթերեթև ինչ չարիս:

Այլ քանզի ընդ թողուլ զքանել զհամբերութիւն՝ եղծանէն և այլ ևս նախագործակ բարիք, 'ի զկայ եդեալ է պատուէրն առ Յեզեկիէլ, զի 'ի սեղանի տեառն լինիցի գոգած խորութեան, յորում պահեսցին ողջակէզք 'ի վերայ եդեալք. զի թէ գոգած խորութեան չլինէր 'ի սեղանի անդ, զամենայն որ 'ի նմայն գտեալ զողջակէզ՝ ցրէր մեղմ օդն եկեալ 'ի վերայ: Արդ զինչ խմացուք սեղան Աստուծոյ, բայց զոգի արդարոյն. որ որչափ բարիս գործիցէ, նոյնչափ յանձն իւր ողջակէզս դիզու առաջի աչաց տեառն: Այլ զինչ գոգածն լցել խորութեան, եթէ ոչ առաքինեացն համբերութիւն, որ յորժամ խնարհեցուցանի զմիտս 'ի տանել հակառակաց, հանգոյն գոգածի 'ի խորս եդեալ զինքն ցուցանել: Այլ արդ գոգած լցցի 'ի սեղանի, զի մի զվերադիր ողջակէզն ցրուեսցէ օդն հողմնավար. այսինքն է միտք ընտրելոց պահեսցին զհամբերութիւն, զի մի յուզեալ հողմով անհամբերութեան՝ կորուսցէ և զոր բարւոքն գործեաց: Այլ 'ի զկայ նշանակի, թէ գոգածն էր կամ գուն մի. զի եթէ համբերութիւնն ոչ թողցի 'ի ձեռանէ, միութեանն չափ պահի սիրով:

Այսն որոյ և Պօղոս ասէ. "Օ միաբանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք զօրէնս Քրիստոսի..: Այսն զի օրէնք Քրիստոսի է սէր միութեան. զոր նոքա միայն կատարեն, որ և 'ի կրեալն զծանրութիւն ինչ՝ ոչ մեկնին 'ի սիրոյ: Լուցեն անհամբերքդ զգրեալն. "Լաւ է այր երկայնամիտ քան զհզոր, և որ յաղթէ

բարկութիւն՝ քան որ առնուցու զքաղաք հզօր ,, ։ Քան-զի փոքր է տիրել քաղաքաց, զի արտաքին են նուա-ճեալքն . այլ մեծ է յոյժ յաղթելն համբերութեամբ, վասն զի անձամբ անձին յաղթէ ոք, և զինքն ընդ իւրև նուաճէ, յորժամ՝ համբերութիւնն ստիպէ զնա՝ի սանձ ել զինքն՝ի ներքուստ ։

Լուիցեն կարճամիտք և զոր ճշմարտութիւնն ասէ իւրոյն . “ Համբերութեամբ ձերով ստացջիք զոգիս ձեր ,, ։ Այսն զի այնպէս հաստեալ եմք սքանչելի օրի-նակաւ , զի բանն զոգին , և ոգին զմարմինն ստասցի ։ Իսկ իրաւունք հոգւոյն՝ի ստանալոյ զմարմինն բառնին , եթէ ոչ նախ բանն ստասցի զոգին . վասն որոյ և տէրն մեր յայտ արար , թէ պահպանիչ հաստատածոյ մերոյ համբերութիւնն է , յուսուցանել անդ մեզ ստանալ զանձինս ։ Այլ ոմքան է անհամբերութեանն յանցանք վնասաստարտ , որով կորուսանեմք ստանալ և զայն՝ որ ինչ եմքս ։

Լուիցեն անժայժք և զառ՝ի Այոդոմանէ ասացեալն . “ Օ՜ամենայն բարկութիւն (կամ զոգի) իւր միանգամ մայն՝ թափէ անզգամն . իսկ իմաստունն մեղմով համբերէ , և պահէ առ յապայն ,, ։ Քանզի՝ի սաղրելոյ անհամբերութեան՝ ոգին բռվանդակ՝ի դուրս ծաւալի , և յայն սակս փութով արտաքս վարէ զնայն յուզումն խռովութեան , զի և ոչ մի կրթութիւն իմաստութեան՝ի ներքս փակէ զայն . իսկ իմաստունն յապաղէ , և առ յապայն պահէ , և՝ի հարստահարելն իւրում յուզեալ՝ չկամի անդէն զվրէժ անձին խնդրել , մնաւանդ թէ և հանդուրժելով բաղձայ ներել նմին . այլ սակայն ոչ անգիտանայ , թէ արդարութեամբ վրէժխնդրութիւն լինի ամենայնի՝ի վերջնումն դատաստանի ։

Այսմ հակառակ՝ պարտ է խրատտու լինել համբե-րողաց , զի մի վասն այնր զոր արտաքուստ կրեն՝ տրտմ-ջեսցեն՝ի ներքուստ . և զզոհն առաքինութեան զոր արտաքոյ պատարագեն ողջակիզմամբ , ՝ի ներքոյ տապ-կանեսցեն ժանտախտիւ ջարուեալ . և եթէ առ մարդ-կան անծանօթ իցէ այն , սակայն մեղանչեն ընդ աս-տուածային քննութեամբ . և այնչափ ծանրագոյն գտա-նի յանցուած տրանջման , որչափ առաւել ցուցանեն ա-ռաջի մարդկան զտեսիլ առաքինութեան . վասն որոյ

պարտ է ասել ցՀամբերողս, զի զուն գործեացեն սիրել զայն՝ որում Հարկաւ Համբերեն պարտիցին։ զի մի՛ ի պակասել սիրոյ՝ի Համբերութենէ, ՝ի չար և սանցանս ատելութեան չարեացի առաքինութիւնն ցուցեալ աստաքոյ։ յոյր սակս և Պօղոս յետ ասելոյն, «Սէր երկայնամիտ է», անդէն առ նմին յարէ։ «Բաղցրանայ», յայտ արարեալ, թէ որոյ Համբերէ զբ երկայնմտութիւնքն՝ մի դադարեսցէ և սիրել զնոսին քաղցրութիւն։ Այսն որոյ նոյն ինքն վեմական վարդապետն՝ի յորդորել զաշակերտս՝ի Համբերութիւն՝ յաւելու ասել։ «Լմենայն զառնութիւն և բարկութիւն և սրտմտութիւն և աղաղակ և հայհոյութիւն բարձցի՝ի ձէնջ՝ ամենայն չարութեամբն հանդերձ»։ Որպէս այն թէ յետ յարդարելոյ բարւոք զամենայնն արտաքոյ՝ի ներքինս դառնայ յաւելուածովս, «Լմենայն չարութեամբն հանդերձ»։ Այսն զի բառնալն արտաքուստ զրտմտութիւն, աղաղակ և զհայհոյութիւն, վայրապար լինի, եթէ՝ի ներքս անդ տիրեսցէ արմատն ամենայն սխտից՝ չարութիւն։ և՝ի զուր է արտաքուստ քշտել զոստս չարութեան, եթէ պահի յարմատն՝ի ներքս ընդիւղ բազմաշառաւիղ որ ընդ հուպ չաքչեսցի։ Այսն որոյ և ինքնին ճշմարտութիւնն ասէր։ «Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի՛ արարէք ատելեաց ձերոց, և աղօթս արարէք՝ի վերայ այնոցիկ որ լլկենն զձեզ և հալածեն»։ Այսպա ուրեմն առաքինութիւն է առաջի մարդկան՝ հանդուրժել հակառակորդաց։ այլ առաջի Աստուծոյ զայս զոհ եթէ ընդունի՝ զոր առաջի աչաց նորա ողջակիզէ բոց սիրոյ՝ի վերայ սեղանոյ գործոց բարեաց։ Այսն այսոքիկ իսկ ասէր դարձեալ առ ոմանս Համբերողս, այլ չսիրողս։ «Օ՜ի տեսանես զշիւղ յական եղբօր քոյ, և զգերանն՝ի քում ականդ ոչ տեսանես»։ քանզի ամբոխումն անՀամբերութեան՝ շիւղ ինի է։ իսկ չարութիւնն՝ի սրտի գերան է յաչս։ զի զառաջինն հնչիւն փոքձութեան տատանէ, իսկ զերկրորդն տարբացեալ չարութիւնն իբրու անշարժ կրէ։ Այլ քաջ՝ի վերայ բերել անդէն։ «Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ եղբօր քոյ»։ Որպէս այն թէ ասիցէ առ չարազգած միտս որ քրթմնջեցէ՝ի

ներքուստ, և սուրբ զինքն ցուցանիցէ արտաքոյ համբերութեամբ. 'ի բաց թօթափեա նախ 'ի քէն զծանր բեռն չարութեան, և յայնժամ կշտամբեա զայլս վասն թեթև ինչ անհամբերութեան. զի մի յոչ ինչոյ ինչ յաղթել կեղծաւորութեան, չար ևս լինիցի քեզ տանել վատթարութեան այլոց։

Յաճախ ևս դէպ լինի համբերողաց՝ զի 'ի պահու անդ կրելոյ զհակառակս կամ խեղդ զնշանանս՝ ոչ իւիք ցաւանին, և այնպէս համբերութիւն ցուցանեն, մինչև չպակասել և 'ի պահելոյ զանմեղութիւն սրտի. այլ յետ սակաւուց՝ երբ յուշ լինիցի նոցա զոր կրեցին, վասն հրով ցաւոցն, պատճառս որոնեն վրէժխնդրութեան, և զուրախութիւնն զոր ունէին 'ի կրել անդ՝ յետս կոչելով փոխեն 'ի չարութիւն։ Այսպիսեաց փութապէս յօդն հասանել քարոզիչն եթէ բացցէ առաջի նոցա զպատճառ փոփոխութեանս. քանզի խորամանկ բանարկուն կրկին պատերազմ յարուցանէ. զմին գրգռելոյ 'ի թշնամանել, և զմիւսն՝ զի հատուցցէ զհատուցումն թշնամանաւք։ Այլ յոլովակի յորժամ յաղթէ այնմ, որ ինքնակամ անիրաւեցաւ և թշնամանեաց, 'ի միւսմէն յաղթի՝ որ սիրով տարաւ թշնամանացն։ Այդ յետ յաղթող լինելոյ 'ի վերայ այնր՝ զոր գրգռելով արկ ընդ լծով իւրով, ընդդէմ միւսոյն յանել աստենայն զօրութեամբ, և դժկամակ լինի՝ զի նա արիաբար ընդդէմ եկաց և յաղթող հանդիսացաւ. և զի չկարաց 'ի ժամու նեղտաձգութեան թշնամանացն շարժել զնա, առ ժամն յետս կայ 'ի յայնմի պատերազմելոյ, և ասպա գաղտնի թեղադրութեամբ պղտորելով զխորհուրդս նորա՝ խնդրէ զդէպ ժամանակ խաբելոյ զնա. և զի կորոյս 'ի հանդիսացեալ մարտի, վասն բորբոքի 'ի գաղտնի դարանակալութիւն. քանզի 'ի պահու հանդարտութեան դարձ առնէ 'ի սիրտ յաղթականին, և յուշ առնէ նմին զտուգանս իրացն և կամ զնեղտաձգութիւնս նախատանաց. և կուտակելով զամենայն ըզկրեալսն բարդ 'ի բարդ՝ անբերելիս ցուցանէ զայնսոսիկ, և այնչափ սիրութեամբ զմիտսն պղտորէ, մինչ զի բազում անգամ համբերողին 'ի պարտութիւն մատնեալ զինի յաղթութեան՝ սկսանի ասեթ հանարել ինքեան զսերով տանելն իւր, և սարջանալ զի ոչ հատոյց թըշ-

նամանս ընդ թշնամանաց, և խորհել չար և փոխարի-
նել 'ի պատեհ ժամու։

Լ. Ըդ ոմ նամանեացին սոքա, բայց այնոցիկ ոչք յետ
քաջայաղթ հանդիսանալոյ յասպարէզ մարտի, առ պր-
ղերգութեան իւրեանց ձերբակալ լինին 'ի նեղբս 'ի քա-
զաքի. ոմ նամանիցեն, բայց եթէ որոց ոչն մեռան 'ի
մահաւորեթ ցաւոց, այլ կրկնեալ տենդ ինչ թեթև մա-
հացոյց զնոսա. վասն որոյ պարտ է խրատ տալ համբե-
ղողաց, զի սրտաբնդեացին յետ յաղթութեան, և դէտ-
ակն ունիցին՝ թէ թշնամին 'ի պարտութիւն մատ-
նեալ 'ի դաշտի կռուոյն դարանի ընդդէմ պարսպաց
մտաց. և զի երկիցեն 'ի հիւանդութէ որ ստէպ դարձ
առնէ, զի մի չարարուեստ թշնամին խնդասցէ մեծ և
ուրախութեամբ ընդ պատրանս իւր, որովք զերբեանն
անխոնարհելի պարանոցս յաղթողաց յետոյ ուրեմն կո-
խան առնէ ոտից իւրոց։

Ա. Յլազգ պարտ է խրատել զաբեսէրս, և այլ-
ազգ զյաչաղկոտս։ Խարեսէրք և բարեմտիք պէտս ու-
նին խրատու, զի այնպէս խնդամտեսցին ընդ բարիս ըն-
կերին՝ որպէս ցանկացին բարւոյ անձանց իւրեանց։ Լ. յն-
պէս սիրով գովեսցին զգողջս մերձաւորաց, զի և նման-
նող լինելով նոցա՝ բազմապատիկ զնոսս առնիցեն. զի
մի գուցէ յասպարիզն կենցաղոյս՝ այլոցն և եթ մրցանաց 'ի
սրտէ կուսակիցս երևեալք՝ ինքեանք որպէս յոյլ և ծոյլ
հանդիսատեսք գտանիցին. որով և զկնի մրցանաց առանց
բաբախանի մնայցեն. զի եթէ այժմ ոչ ձգնիցին 'ի մրցս-
մանս, յայնժամ կկոծեալ աչօք հայեսցին յարմաւեխս
այնոցիկ՝ յորոց 'ի ձգնելն այժմ ինքեանք պարապող կան։
Լ. ա արդարև մեզապարտ յոյժ գտանիմք, եթէ չարիս
ցեմք զվաստակս այլոց. և վարձ ինչ ոչ շահիմք, եթէ
զոր ինչ սիրեմք՝ այնմ չնմանիցեմք ըստ կարի. վասն որոյ
հարկ է ասել առ բարեսէրս, զի եթէ ոչ ջանասցին առ-
նել զարարին զոր գովին մեծաւ հաճութիւն, այնպէս լի-
նիցի նոցա տեսիլն սրբութեան՝ որպէս սնամիտ հան-
դիսատեսից հաճոյ թատրի ունայնութիւն մտոտի խա-
զուց. քանզի նոքա զկատարչաւաց, զնեղկատակացն
իւր մեծաձայն գրուատեն, բայց չունին յօժարութիւն
այնպիսս լինել՝ զոր տեսանեն և գովեն. զարմանան
ընդ առնել նոցա զուարճալս, բայց ինքեանք խորշին

'ի զուարճացուցիչն լինելոյ նոցնպէս։ Լաւ և պարտ է ասել առ նոսա, զի 'ի տեսանելն զբարի բարի գործս ընկերաց, 'ի սիրտս իւրեանց դարձցին, և մի զայլս դատեսցին. զի զուցէ ինքեանք զբարին գովել միայն գիտեն, և առնել հրաժարին։ և արդարև մեծապէս վրիժապարտ դատանին յորժամ ոչ գնան զհետ բարւոյն՝ ընդ որ հաճին։

Լակ զյաւաղկոտս կամ զնախանձոտս պարտ է խրատել, զի խորհեսցին եթէ յորպիսի կուրութիւն անկեալ կացցեն ոչք յետանին յառաջադիմութենէ այլոց, և հալին մաշին ընդ յաջողուածս այլոց. քանի՛ չուառացեալք են, ոչք լաւութեամբ ընկերաց վատթարանան. և 'ի տեսանելն զյաւելուած յաջողութեան այլոց՝ ինքեանք 'ի սպառ վշտացեալ զչարելով 'ի ժանտութեան սրտից իւրեանց մեռանին։ Ո՞ է հիւդացեալ որպէս զդոտա, զորս տեսութիւն բարեբաստութեան այլոց չարացուցանէ և քան զեւ 'ի պատիւ անձանց. որ սորին հակառակ՝ զընկերացն բարիս թէ և չկարելին ուներ, սակայն իւրացուցանէին՝ եթէ սիրելին զայնս խրդակցութիւն։ Ո՞ սոն զի առ հասարակ միացեալքն հաւատով են որպէս զանդամս բազմաս 'ի միում մարմնի. որք թէպէտ և զանազանեալ են ըստ պաշտանանց, այլ որով միաբանին ընդ իրեարս՝ մի լինին. որպէս այն թէ ոտք տեսանէն աչքք, և աչք գնան ոտիւք. բերանոյ ծառայէ լուր ականջաց, և 'ի սիտս ականջաց լեզուն բերանոյ ընթացակից գտանի. որովայնն սատար լինի ձեռաց, և ձեռք գործեն վասն որովայնի։ Լաւ արդ 'ի կազմածոյ մարմնոյն խելամտիք, եթէ զինչ արժան իցէ պահել 'ի գործս. վասն որոյ յետին անպիտանութեան է ջանանել այնմ՝ որ ինչ ենքս, քանզի մեր են զոր ինչ յայլս սիրեմք, թէ և չկարիցեմք հանանման լինել, և որ ինչ սիրելի կացցէ 'ի մեզ՝ սիրողացն լինի։ Ո՞ստուստ 'ի միտ առցեն մախացողք՝ եթէ որպիսի մեծ առաքինութիւն իցէ սէր, որ զայլոց գործս աշխատութեան՝ անաշխատ մեր առնէ։

Ո՞չպա պարտ է ասել առ նախանձոտս, զի յորժամ ոչ զգուշացին 'ի մախանաց, 'ի հին անզգամութիւն խորամանկ թշնամւոյն սուզանին. զորմէ գրեալ է, ««Լախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ»»։

Օ. Ի որովհետև ինքն զերկինս կորոյս, նախանձեցաւ ընդ մարդն ստեղծեալ. և կորուստ հնարելով այլոց՝ զիզեաց բարդեաց զեւբ զատապարտութիւնն կորստեանն։ Պարտ է ազգ առնել յաչաղկոտաց՝ 'ի միտ առնուլ թէ ընդ որովհի փլատակաց զոծոց չարութեան անկեալ կան, զի ցորչափ չհանեն 'ի սրտէ զմոխանս, 'ի յայսմի անզգամութիւն զոծոց թաւալին. զի թէ Կայէն չնախանձէր ընդ ընդունելի լինել պատարագի եղբօրն, ոչ երբէք խարդաւաներ յեղայրասպանութիւն. վասն որոյ գրեալ է. "Եւ հայեցաւ Աստուած Հաբէլ և 'ի պատարագս նորա. և 'ի Կայէն և 'ի զոհս նորա ոչ հայեցաւ. և արտմեցաւ (կամ զայրացաւ) Կայէն յոյժ, և խոնարհեցան անկան երեսք նորա"։ Ուստի չարակնութիւն պատարագին եղև գրգիռ եղբայրասպանութեանն. զի 'ի արտմէն ընդ լաւութիւն նորա քան զինքն՝ եղ 'ի մտի կարծել զնա 'ի կենաց, զի ոչ ևս իցէ։

Զսել պէաք են առ մխիթարս, զի ցորչափ մնացեն զանձինս դառնութեամբ 'ի նեբբուստ, կորուստանեն և զայլ ինչ բարիս 'ի թէ ունիցին յինքեանս. քանզի գրեալ է. "Զամբ հեզ բժիշկ է սրտի. ցեց ոսկերաց սիրտ հոգած"։ Զանգի հեզութեամբ է իմանալ զսիրտ փափուկ, կամ զտկար և զմեղմ իրս, իսկ ոսկերքզ զոծս հաստատիրս։ Եւ ահա ստէպ պատահէ, զի ոմանք անմեղութեամբ սրտի տկար թուին 'ի զոծս ինչ իբրեանց, և ոմանք մեծազօր կարծին զոծոքն յաչս մարդկան, այլ հաղ և մեր դատանին ցեցովք չարակնութեան 'ի նեբբուստ ընդ բարիս այլոց. վասն որոյ բարւոք ասացաւ եթէ "Զամբ հեզ բժիշկ է սրտի", կամ "Կեանք մարմնոյն՝ առողջութիւն է սրտի"։ վասն զի եթէ անմեղութիւն մնաց պահի, եթէ տկար ևս իցեն միտք երբեմն արտաքուստ զգենուն զզօրութիւն։ Որպէս և 'ի զէպ յաւելու, "Ցեց ոսկերաց՝ սիրտ հոգած", կամ "Փառութիւն ոսկերաց՝ նախանձ"։ Ա՝ ասն զի սիրտ մխիթարեսցի կոնդիցն առաջի Աստուծոյ և՝ այն գործք՝ որ զզուաւորք երևին յաչս մարդկան. քանզի փարիսն ոսկերաց նախանձու է ցնդել և զայնոսիկ կարծեցեալ գործս։

ԺԱ. Զամբ օրինակաւ պիտի խրատել զմիամիտս կամ զպարզամիտս անկեղծս, և այլով զաղուխարարոյս

կամ զնենդամիտս։ Արժան է զովել զպարզամիտս, զի ջանան ոչ երբէք սուտ խօսել. այլ պէտք են ազգել նոցա, թէ պարտ է երբեմն լռել զճշմարիտն. քանզի զոր օրինակ ստախօսն վնասէցաւ միշտ, նոյնպէս և զճշմարիտն լռել վնաս եւ ոմանց. մինչ զի և տեղւոյն ինքնին 'ի խօսելն ընդ աշակերտս՝ խառնեաց և զլռութիւն, ասելով. "Այս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ։"։

Այլ և պարտ է ազգ առնել պարզամտաց, զի որպէս միշտ օգտակարութեամբ խրատն 'ի ստախօսութենէ, նոյնպէս և օգտակարապէս բարբառեսցին միշտ զճշմարտութիւնն։ Ազգել պիտոյ է նոցա, զի 'ի լաւութիւն անկեղծութեան յաւելցեն և զնոհեմութի. և այսպէս ունիցին զանբոյթ պարզմտութիւն, զի մի կողուսցեն և զպարահայեաց զգուշութիւն խոհական. քանզի և վասն այսորիկ ասէ վարդապետն հեթանոսաց. "Լամիմ զձեզ իմաստունս լինել 'ի բարիս, և անմեղս 'ի չարիս։"։ Այս ճշմարտութիւնն ինքնին յուշ առնէ ընտրելոց իւրոց. "Լղերուք խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս։"։ զի 'ի սիրտս ընտրելոց պարտ է զի 'ի մեզ կողմանէ զմիամտութիւն աղաւնոյ սրեսցէ խորագիտութիւնն օձի, և 'ի միւս կողմանէ զխորագիտութիւն օձի չափաւորեսցէ միամտութիւն աղաւնոյ. որպէս զի ոչ խոհեմութեամբ խոտորեսցին 'ի խորամանկութիւն, և ոչ սրամտութեամբ թուլասցին յանկեղծութենէ։

Ինչ հակառակն խրատել պարտ է զնենդամիտս երկմիտս, զի 'ի միտ առցեն՝ թէ արդեսք ծանր աշխատութի է կեղծաւորութիւնն, զոր յանձինս կրեն յանցաւորութեամբ հանդերձ. քանզի ցորչափ զանգիտեն 'ի յանդիմանութենէ, միշտ զանարժան չքմեղութիւնս խընդրեն, միշտ երկիւղալի կասկածանաք ծիլին։ Սակ առ արդարացուցանել զանձն չիք ինչ անբոյթ քան զանկեղծութիւն պարզ, և չիք ինչ դիւրագոյն յասել քան զճշմարտութիւն. զի ցորչափ հնարի որ ջատագովել զիւր ստութիւն, տարտարի սիրտն ծանր աշխատութեամբ. վասն որոյ զրեալ է. "Ալ ստատակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։"։ Օ՛ի որ այժմ կուտակէ, յայնժամ ծածկէ. զի զորոյ զոգին այժմ պղտորէ մեզմ անհանդարտութեամբ, յայնժամ ձնիլ անուշաբա հա-

տուցմամբ սատկապահանջ համարոյ. վասն այսորիկ ասացաւ՝ ի ձեռն Յրեմիայի. «Ասաւ Լեզուն նոցա խօսել ստութիւն. զրկեցին, և ոչ գործարեցին (կամ աշխատ եղէն՝ ի գործել զանիրաւութիւն)..։ Որպէս այն թէ պարզապէս ասիցէ. այլ կարէին անաշխատ բարեկամ լինել Աստուծոյ, աշխատ լինին՝ ի մեղանչել. և յորժամ չկամին կեալ պարզմտութեամբ՝ կամին աշխատութեամբ մեռանել։ Ամենայն յոլովակի ըմբռնեալք՝ ի յանցանս՝ այն ինչ խուսափէն զի մի ճանաչիցին եթէ որպիսիք ոմանք իցեն, ծածկէն զանձինս ընդ քօղով խաբէութեան, և հնարին՝ ի չքմեղս լինել յայտնի յանցանաց իւրեանց. մինչ զի բազում անգամ նա որ ջանայ յուղղութիւն ածել զնոսա՝ ի չարեացն, խաբեալ միգով ստապատիր բանից նոցին՝ գրեթէ զամենայն կորուսանէ, զոր իբրև հաւատի համարէր զնոցանէ. վասն որոյ իրաւամբք ասացաւ մարգարէիս՝ ի դէմս Հրէաստանի ընդդէմ անձին մեղուցելոյ և՝ ի չքմեղս եղելոյ. «Ընդ եհան ձաղ ոգնի (կամ որջացեալ՝ ընտանեցաւ իբրև՝ ի բոյն)..։ քանզի անուամբ ոգնւոյ նշանակի նենգամիտն կեղծաւորութեն ջատագովողն զանձն խորամանկութեամբ. զի ոգնին յորժամ ըմբռնի, տանկաւին զլուխ նորա երևի, և ոտքն նշմարին, և մարմինն ողջոյն տեսանի. այլ իսկ և իսկ ընդ ըմբռնիլն ամփոփէ զինքն գնդաձև, զոտն՝ ի ներքս քաշէ, զգլուխն ծածկէ, և՝ ի մէջ ձեռաց ըմբռնողին բովանդակ կորնչի՝ որ ինչ յառաջն բովանդակ երևէր։ Այնպէս ըստ այսմ օրինակի տեսանին և նենգամիտք՝ յորժամ ըմբռնին՝ ի յանցանս իւրեանց. գլուխ ոգնւոյ նշմարի՝ ի նոսա, երբ՝ ի վեր երևի եթէ որոյ սկզբնաւորութեամբ մերձեալ իցէ մեղաւորն՝ ի չարիս անդր, և ոտք ոգնւոյ տեսանին երբ յերեւան գայ՝ եթէ ընդ որ ճանապարհ՝ ի գործ եղեալ իցէ դչարութիւնն զայն։ Այլ սակայն անդէն՝ ի մէջ բերելով զչքմեղութիւնս կեղծաւորն՝ ի ներքս ամփոփէ զոտս. զի ծածկէ զամենայն հետս անզգամութեանն, և զգլուխն՝ ի ներքս քաշէ. քանզի անհաւատալի ջատագովութեամբք ցուցանել եթէ չէ իսկ սկրսեալ իւր զսխալիսի չար, և այնպէս կայ մնայ՝ ի ձեռին ըմբռնողին որպէս գնդակ ինչ. վասն զի յանդիմանողն նոյնժամայն կորուսեալ զամենայն զոր խմացեալն էր,

ունի զմեղաւորն որպէս զկծիկ ինն գալարեալ զիրՁիւ մնաց իւրոց, և զբնովանդակն զոր տեսեալ էր 'ի քնեալ անդ իւրում՝ նոյնպէս բոլորովին կորուսանէ թիկնադարձութեամբ ապիրատ չքմեղութեանն. վասն որոյ բոյն ոչնչաց է 'ի նենգաւոր չարագործս. քանզի չարաբուեստ կեղծաւորութիւնն կծկեալ զանձն թաքուցանէ 'ի խաւարի ջատագովութեան։

Թող լուիցէն նենգամիտքս զոր գրեալն է. "Որ գնայ միամտութեամբ, գնայ յուսով (վստահութեան)." վասն զի մեծ վստահութիւն է անեղկեւանութեան անկեղծ միամտութիւն 'ի գործս։ Լուիցէն և զոր ասէ դարձեալ Հոգին սուրբ բերանով իմաստնոյն. "Այուրբ հոգին իմաստութեան փախչի 'ի նենգութենէ"։ Լու դարձեալ լուիցէն զբան գրոյն. "Ինդ անմեղս են խօսք նորա"։ Վանգի խօսքն Աստուծոյ է յայտնել զգաղտնիս իւր մնաց մարդոյ լուսաւորութեամբ առաջիկայութեան իւրոյ։ Ա՝ ան որոյ ընդ անմեղս կամ ընդ պարզամիտս խօսել է՝ յորժամ զմիտս նոցա լուսաւորել վերնական խորհրդովք այցելութեան իւրոյ, զորս ոչ նսեմացուցանէ ստուեր ինչ կեղծաւորութեան։

Լ՝ և առանձին վնաս չարութեան կեղծաւորաց, զի յորժամ խեղաթիւր և երկդիմի գործով պատրէն զայլս, պարծին յանձինս որպէս 'ի գերապանծ խոհականս. և քանզի չածեն զմտաւ զանազան հատուցումն, ընդ վնաս անձանց ցնծան չուառակամբն։ Բայլ լուիցէն եթէ ո՞ր պէս մարգարէն Աստուծոյ արկանէ զնոքօք զսաստկութիւն աստուածային ցասմանն. "Երբ է օր տեառն մեծն, մերձ է և արագ յոյժ. ձայն աւուր տեառն խիստ և դառն, կարգեալ զօրաւոր. օր բարկութեան օրն այն, օր նեղութեան և վտանգի, օր թշուառութեան և ապականութեան, օր խաւարի և մրկի, օր ամպոյ և մառախղոյ, օր փողոյ և աղաղակի 'ի վերայ ամուր քաղաքաց և 'ի վերայ անկեանց բարձանց"։ Վանգի զինչ յայտ առնիցէ անուամբս ամուր քաղաքաց, բայց եթէ զմիտս խարդախս սուտ ջատագովութեամբ միշտ պատրապարեալս. որոց յորժամ կշռամբին յանցանք, չընդունին յանձինս զնեռտագութիւնս Աշխարհատեան։ Լու զինչ նշանակիցի անուամբս անկեանց բարձանց. զի կրկին են միշտ որմանք յանկիւնս. բայց եթէ երկ-

դիմի սիրտը նենգաւորաց. որ յորժամ խոյս տան 'ի պաշտելութենէ Աստուծոյ, անզգամութեամբ կեղծաւորութեան կրկին օրմնովք կծկեն զինքեանս. և որ չար և է, 'ի խորհուրդս իւրեանց փքացմամբ խոհեմութեան ամբառնան զանձինս՝ սակս յանցանաց նենգամտութեան. վասն որոյ և օր տեառն լի վրիժուք և սաստկութեամբք գայ 'ի վերայ ամենայն քաղաքացս և անկեանց բարձանց. քանզի բարկութիւն յետին դատաստանի քակէ զմարդկան սիրտս փակեալս չքմեղութեամբք ընդդէմ Աստուծոյ և, և քակէ քանզի զշրջապատեալս կեղծաւորութեամբքս. վասն զի յայնժամ կործան անկանին քաղաքք ամենքք. զի դատապարտ գտանին միտք անմիջամուխ կարծեալք՝ թափանցանց խորամուխ լինելոյն Աստուծոյ։ Յայնժամ փլանին, տապալին անկիւնք բարձունք. քանզի սիրտք բարձրամտութեամբ կանգնեալք 'ի ձեռն խոհեմութեան կեղծաւորութեան՝ ահեղ վճռով արդարոյ հարթայատակ զգետնին։

ԺԲ. Ամենայն պէտք են խրատել զողջանդամ, և այլով զհիւանդս։ Ողջանդամքն խրատեսցին վարել զառողջութիւն մարմնոյ 'ի պէտս փրկութեան հոգւոյ կամ ողջմտութեան. զի մի 'ի շրջելն զշնորհ ողջութեան 'ի պէտս ապիրատութեան՝ վատթար եւս լինիցին պարգևաբէն. և այնչափ ծանրագոյն պատժոց արժանի գոցին, որչափ այժմ ելերկնչին զնոխութիւն բարեացն Աստուծոյ 'ի չար անդր 'ի կիր արկանել։ Այլ և խրատեսցին, զի մի զառիթն փրկութեան յաւիտենից անտես առնիցեն. քանզի զրեալ է. "Հաւասիկ ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան,,։ Խրատեսցին, զի մի արդեօք յոչ կամելն այժմ, զոր կարէն, հաճոյ լինել Աստուծոյ, չկարիցեն՝ յորժամ անագան ուրեմն կամեսցին։ Այլ վասն այսորիկ իսկ լքցէ զնոսա յետոյ խնստութիւնն, զորս կանխաւ ստէպ կոչեաց, և անսասան գտան. ըստ այնմ, "Կոչէի, և ոչ լսէիք. յերկարէի զանս իմ, և ոչ անսայիք, այլ ապախտ առնէիք զկորհուրդս իմ, և յանդիմանութեանց իմոց ոչ անսայիք։ Այսուհետև ես ծիծաղեցայց զկորստեամբ ձեզրով, և ոնոհար եղէց յորժամ գայցէ ձեզ նեղութիւն և պարաբուն,,։ և թէ "Լցէ զի կարդացցէք առ իս,

և էս ոչ լուայց. խնդրեսցեն զիս չարք, և ոչ գտանիցեն։»։

Բայց ուրեմն յորժամ որ ապաստան առնէ զողջութիւն մարմնոյ՝ որ տուեալ է 'ի գործել զբարին, յետ կորուսանելոյն խմանայ զմեծութիւն պարգևին. և յանպտուղս լինի յետոյ ուրեմն խնդրելն զայն, զոր 'ի դէպ ժամանակի չվարէ որ յօգուտ երբ 'ի ձեռին ունէր. վասն որոյ դարձեալ բարւոք ասացաւ 'ի ձեռն Սողոմոնի. «Մի մանեսցես օտարաց զկեանս քո, և զտացուածս քո անողորմիկ. զի մի լցցին օտարք 'ի զօրութենէ քումմէ, և մի վաստակք քո 'ի տունս այլոց մտանիցեն. և զղջասցիս յետոյ, յորժամ մաշիցին անդամք մարմնոյ քո»։ Լաւ ոչք են օտարքն 'ի մէնջ, բայց այսքն չարք, ոչք որոշեցան 'ի վիճակէ երկնից հայրենեաց։ Լաւ որ այն է պատիւ կենաց մերոց, բայց զի ստեղծեալքս կաւեղէն մարմնով 'ի ստեղծողին մերոյ հաստատեցաք 'ի պատկեր և 'ի նմանութիւն. կամ ո՞ այլ ոք է անողորմն, եթէ ոչ ապստամբողական հրեշտակն, որ և զանձն իւր հպարտութեամբ 'ի մահ մատնեաց, և մահ առթել ոչ խնայեաց չարն մարդկային ազգիս։ Ուրեմն զիւր կեանս կամ զպարգև օտարաց տայ, որ ոք 'ի պատկեր և 'ի նմանութիւն Աստուծոյ հաստեալ՝ զաւուրս կենաց իւրոց ընձեռէ 'ի հաճոյս այսոց չարաց. և զտացուածս իւր կամ զանձն կենաց մատնէ անողորմին, որ միանգամ զժամանակ կելոյ զաստուածապարգև՝ ծախէ ըստ կամն խաժադուժ բռնաւորին ստատանայի. վասն որոյ յաւելաւ իսկ 'ի դէպ. «Զի մի լցցին օտարք 'ի զօրութենէ քումմէ, և մի վաստակք քո 'ի տունս այլոց մտանիցեն»։ Այսն զի որ միանգամ զընկալեալ առողջութիւնն մարմնոյ՝ 'ի ձեռն խիստութեանն պարգևելոյ մնայ՝ ոչ վարէ 'ի կրթանս առաքինութեանց, այլ նկրտի 'ի հաճել զանտս, ոչ եթէ զտուն իւր զարդարէ զօրութեամբ իւրով, այլ զօտարացն Հոխացուցանէ զընակութիւնս, այսինքն զգործս այսոց պղծոց, եթէ անառակութեամբ, և եթէ ամբարտաւանութեամբ. որպէս զի և զանձն իւր յաւելցուցանէ և անհեցուցանէ զթիւ կորուսելոց։ Լաւ դարձեալ բարւոք 'ի վերայ էած. «Լաւ զղջասցիս յետոյ, յորժամ մաշիցին անդամք մարմնոյ քո»։ Այսն զի յոլովակի ընկալեալ առողջութիւն

մարմնոյ վասնի սխտիւք. այլ եթէ յանկարծ 'ի քաց բարձցի, և յորժամ մարմինն 'ի ցաւս վարակիցի, և հոգին հարկիցի մեռնիլ 'ի նմանէ, 'ի զուր խնդրէ մարդ զկրթութեանս առողջութիւնն՝ որ ընդ երկար 'ի ջարիս ծախեցաւ, իբրու թէ կամելով զայն առ 'ի բարւոք կեալ։ Եւ յայնժամ տրտմին և յոգւոց հանեն մարդիկ՝ զի չկամեցան ծառայել Աստուծոյ, յորժամ ոչ ևս կարող լինիցին երբէք կարկատել զգեստն պղերգութեան իւրեանց. վասն որոյ ասացաւ այլուր. "Յորժամ սպասնանէր գնոսա, ինդրէին զնա"։

Եւ այլ ընդ հակառակն պէտք են յորդորել զՀիւանդս, զի այնու գիտասցեն զինքեանս որդիս Աստուծոյ լինել, զի հարկանէ զնոսա տէր գաւազանաւ խրատու իւրոյ. զի եթէ չէր սահմանեալ նորա ժառանգութիւն տալ եկեղեցւոյն խրատուք յուղղութիւն, չտանէր փոյթ հրահանգել գնոսա վշտակրութեամբք։

Ա՝ ասն այսորիկ տէրն առ Յովհաննէս 'ի ձեռն հրեշտակի ասէր. "Եւ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրատեմ"։ Եւ 'ի ձեռն խնամանցն ասէ. "Ուղեակ, մի՛ եաներ 'ի խրատու տեառն, և մի՛ լուծանիցիս յանդիմանեալ 'ի նմանէ. զի զոր սիրէ տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի"։ Եւ սաղմոսերգուն նուագէ. "Խաղա՛ մեղուք ենք արդարոց, յամենայնէ փրկէ գնոսա տէր"։ Որպէս և Յոբ երանելին 'ի ցաւս անդ գոչէ. "Եթէ անպարշաւեցից, վայ է ինձ. և եթէ արդարացայց, ոչ կարեմ հայել 'ի վեր, զի լի եմ անարգանօք"։

Պէտք են ասել՝ առ սխտաժէտս, զի եթէ հաստատցին զերկնային հայրենիս սեպհականս լինել ինքեանց, պարտ է ապա զի կրիցեն ասա զարխտութիւնս իբրև յօտար գաւառի։ Ամին իբրի քարինք արտաքոյ տաշեցան, զի 'ի շինութեան տաճարի տեառն առանց ձայնի մրճոյ զետեղեսցին. այսինքն է՝ յայժմուս արտաքոյ տաշինք և կոկիմք վշտաք, որպէս զի յետոյ 'ի ներքս 'ի տաճար Աստուծոյ զետեղիցիք առանց նորոգ տանելոյ հարուածոց գանից։ Իբրու այն թէ զոր ինչ 'ի մեզ տեսլոյդ կոչութիւնք կան, այժմ հարկանելով տաշեսցին ցաւք, և յայնժամ մնասցէ միայն զոգել 'ի շինուածն միաբանութեամբ սիրոյ։

1 Սաղմ.

Այլ զարձեալ պարտ է աղդել հիւանդաց, զի խոր-հեսցին եթէ, քանի հարուածովք զանիկ խստիւ խրատեն զմարմնաւոր որդիս իւրեանց՝ առ ընդունելոյ զերկրաւոր ժառանգութիւն. որպէս ասպա ծանր թուեսցի մեզ պատիժ աստուածային խրատու, որով ստանամք զանկորուստ ժառանգութիւն յաւիտեան, կամ յորմէ գանիցս արժան իցէ խորշել։ Որոյ վասն ասէր Պօղոս. "Օ՛ի եթէ՝ի մարմնաւոր հարցն մերոց՝ զոր ունիմք խրատիչս, պատկառեմք, որչափ եւս առաւել հնազանդեսցուք հօրն հոգւոյ, եւ կեցցուք։ Օ՛ի սոքա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատեն. իսկ նա վասն օգտի՝ առ՝ի ընդունելոյ զսրբութիւն նորա"։

Այլ եւս յուշ առնել պիտի ցաւագնելոյ խօթութիւն, զի զմտաւ ածցէն եթէ, որչափ առողջութիւն է հոգւոյ վիշտն մարմնաւոր, որ զգաստացուցանէ զմիտս ծանօթութեամբ անձին, և տայ յիշել զտկարութիւն բնութեանս, զոր ստէպ՝ի մոռացօնս արկանէ առողջութիւն. որպէս զի սիրտն որ բարձրամտութեամբ սնիցանայ, ՝ի ձեռն վշտագին կրից մարմնոյն յուշ ածցէ եթէ, որպիսի՞ մեք ելցուք անկեալ կայցէ վիճակի։ Դաջ իսկ երեւի բանիցս Աշխարհութիւն՝ի յապաղմանն ուղղոյ Դաղասամ՝ եթէ, կամեցեալ էր նորա անսալ ձայնին Աստուծոյ հնազանդութեամբ. ուր Դաղասամ զեմ եղեալ գնայ՝ի հասանել զիտաւորութեան իւրում, խափանեալ գնա էշն՝ յորոյ վերայ էր նստեալ. էշն յապաղեալ արգելմամբ տեսանէ զշրեշտակն, զոր ոչն տեսանէն միտք մարդոյ. վասն զի բաղում անգամ յոյլ մարմինն գան ընկալոյ՝ ցուցանել մնաց իւրոց զԱստուած, զոր միայն՝ վերելեակ մարմնոյն՝ տեսանէր. որպէս զի արգելցէ զընդնումն հոգւոյ ցանկացողի երկրաւոր յառաջադիմութեամբ իբրու յընթացս ուղղոյն, մինչեւ ծանիցէ զանեւեւոյթ ընդ առաջ եւեալն՝ի խափանումն. վասն որոյ բարւոք ասաց Պետրոս. "Որ կշտամբանս իւրոյ անօրէնութեան (առ սիրելոյն զվարձս անիրաւութեան) ստացաւ զէշն անխօսուն. մարդկեղէն բարբառովն բարբառեալ՝ արգել զմարգարէին զանօրէնութիւն"։ զի այր անսատ և ապառում իբրու յանխօս անասնոյ յանդիմանի, յորժամ փբացեալ միայն՝ի խաշանդանայ մարմնոյ ուշաբերեալ իմանայ զարին խոնարհութեան, զոր պարտ

է նմա պինդ ունել։ Այլ Բաղասամ յայն սակս ոչ շահեցաւ 'ի շնորհէ աստի կշտամբութեան, զի յանիծանել երթեալ՝ զձայնն փոխեաց, այլ ոչ զմիտս։

Խրատել արժան է և ևս զհիւանդս, զի գիտասցեն եթէ քանի՞ օգտակար է ինքեանց վիշտ մարմնոյ, որ սրբէ զանցեալ մեղս, և խափանէ զոր կարէին մեղանչել. և արտաքին հարուած ցաւոց շարժեալ զմիտս՝ ցաւս ապաշխարութեան 'ի վերայ ածէ. և ահա գրեալ է. "Վէրք և հարուածք պատահեն չարաց ('ի մաքրութիւն), և տանջանք 'ի շտեմարանս որովայնի". վասն զի 'ի բաց սրբէ զչարիս կսկիծն վերացս. և ցաւն գանից 'ի բաց ջնջէ զչարութիւն՝ որ մտօք և որ գործով։ Սակ զմիտս սովորութիւն է որովայն յորջորջել. զի որպէս որովայնն ծախէ զկերակուրս, նոյնպէս և միտքն յեղյեղելով մարսէ և մաշէ զհոգս։ Եւ որովայն կոչմամբ մտաց ակնարկի բանն այն որ գրեալ է անդ (սուղ ինչ յառաջ). "Զայս տեսառն շունչ մարդկան, որ քննէ զշտեմարանս սրտի (կամ որովայնի)"։ Որպէս թէ ասէցէ. Ստուածազգեցիկ լեալ անձն՝ յորոյ 'ի միտս եկաւորեսցի լուսաւորութիւն, նովին լուսով ցուցանէ անձամբ անձին զայն ինչ, զոր յառաջ քան զեկաւորութի հոգւոյն սրբոյ կարող էր կրել զխորհուրդս վատթարութեան, այլ անգիտանայր 'ի միտ առնուլ։ Զոր կլսկիծ ցաւոյն սրբէ զչարիս, որպէս և հարուածքն զշտեմարանս որովայնի. վասն զի յորժամ արտաքուստ գանակոծ լինիմք, յուշ ածեմք զմեղս մեր լռութեամբ և խոշտանգանօք, և առաջի բերեմք աչաց մերոց զամենայն զառ 'ի մէջ գործեալ չարիս. և այնպէս արտաքուստ վշտացնելով 'ի ներքուստ և ս ցաւագին վշտանամք ընդ որ գործեցաքն։ Եւ այս իսկ է պատճառն, զի 'ի մէջ յայտնի վերացս մարմնոյ առաւել մաքրազարդէ զմեզ ներքին խոցումն սրտի կամ հարուած որովայնի. վասն զի զանզգամութիւնս չար գործոց բժշկեն գաղտնի վէրք ցաւոց։

Պարտ է խրատ տալ հիւանդաց՝ առ 'ի պահելոյ անարատ զառաքինութիւն համբերութեան, անդադար ածել զմտաւ՝ եթէ ո՞րչափ ինչ կրեաց փրկիչն մեր 'ի ձեռաց ստեղծուածոց իւրոց, ո՞րչափ յետին թշնամանաց տարաւ, և ապտակս ընկալաւ յապիրատաց՝ նա որ

օր ըստ օրէ կորզէ զՀոգիս գերելոց 'ի ձեռանէ հին թշնամւոյն. և 'ի թքոյ անօրինաց ոչ դարձոյց զերեսս որ լուանայ զմեզ ջրովն փրկութեան. և լուիկ հանդուրժեաց հարուածոց գանից՝ որ միջնորդ և բարեխօս կացեալ ազատէ զմեզ 'ի յաւիտենից տանջանաց. և կրփանաց ժուժեաց՝ որ յաւէժական պատիւ մեզ տայ 'ի մէջ պարուց հրեշտակաց. և ոչ հրաժարեաց փշեայ պսակ ընդունել 'ի գլուխն՝ որ ազատէ զմեզ 'ի խայթոցաց մեղաց. և 'ի ծարաւէն իւրում զդառնութիւն ճաշակեաց լեղւոյ՝ որ արբուցանէ զմեզ յաւիտենական քաղցրութեամբ. և ծաղու և այպանօք երկրպագեալ լուեաց՝ որ վասն մեր երկիր եպագ ՝ օր, որում հաւասար էր աստուածութեամբն. և մինչև 'ի մահ ևս խոնարհեցաւ կեանքն զլխովին՝ որ կեանս պատրաստեաց մեռելոց։ Օ իմարդ ապա խիստ թուեսցի կրել մարդոյ Աստուծոյ հարուածս գանից վասն չարեաց իւրոց, եթէ այնչափ ինչ չարիս կրեաց Աստուած 'ի մարդկանէ փոխանակ բարերարութեանց իւրոց. կամ ո՞ք յողջամտաց ապաշնորհ գտցի ընդ խրատել իւր 'ի ձեռանէ Աստուծոյ հարուածովք, յորժամ ինքն տէրն ոչ էլ 'ի կենցաղոյս առանց հարուածոց, որ եկեացն առանց մեղաց։

Ժ.Գ. Այլազգ պարտ է խրատել՝ զորս երկնչինն 'ի հարուածոց գանից, և վասն այն անմեղութեամբ քաղաքավարին. և այլազգ զայնոսիկ՝ ոյք յանօրէնութէ այնպէս են խստացեալ, զի և ոչ հարուածովք զգաստանան։ Զանզի որոց երկնչինն 'ի հարուածոց՝ ասել պիտի, զի և ոչ ժամանակեան բարեաց ցանկանայցեն իբրու մեծի իմիք, զորս տեսանեն և չարաց վիճակեալ. և մի՛ իւիք խորշիցին յառժամանակեայ չարեաց իբրու յանբերելեաց, զորս ոչ անգիտանան զի յոլովակի և ը բարի բարի անձինս անցանեն։ Պարտ է՞ խրատել, զի թէ կամին ստուգապէս ազատ լինել 'ի չարեաց, զարհուրեսցին 'ի յաւիտենից տանջանացն. և մի՛ կացցեն մնասցեն յայդ արհաւիրս պատժոց, այլ աճեսցեն 'ի շնորհս սիրոյ՝ աստուածսիրութեամբ և մարդասիրութիւն մնանելով. քանզի գրեալ է. "Սէր կատարեալ 'ի բաց մերժէ զերկիւղ"։ Եւ դարձեալ գրեալ է. "Օ՛ի ոչ առիք զՀոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ, այլ առիք զՀոգին որդեգրութեան, որով աղաղակեմք աբ-

բայ հայր ,, ։ Ասսի վերսին երկրորդէ նոյն վարդապետ . “ Որ հոգի տեառն է , անդ ազատութիւն է ,, ։

Այս ուրեմն եթէ տասանին երկիւղ պատժոց արգելուցու ՝ի չարագործութենէ , անշուշտ յոգւոջ զանգիտողին չէ բնակեալ բնաւ ազատութիւն հոգւոյ . զի թէ չերկնչէր ՝ի պատժոյ , անտարակոյս գործէր զչարն ։ Ոչ ասն որոյ անգէտ է շնորհաց ազատութեան միտքն այն , զոր կապեալ պահէ ծառայութիւն երկիւղին . զի բարին ըստ ինքեան է սիրելի , և ոչ առ հարկի պատժոյն ՝ի գործ դնելի . վասն զի եթէ զբ յայն սակս գործիցէ զբարին , զի ՝ի չարէ պատուհասին երկնչի , այն պիսին կամի՝ զի մի գոցի ինչ յորմէ երկիցէ , զոպէս զի հանարձակ գործեսցէ զանարժանս ։ Այսպէս յայտ է առաւել քան զլոյս պայծառ , զի առաջի Աստուծոյ կորուսանէ մարդ զանմեղութիւն , եթէ և բաղձանաբ և եթէ մեղիցէ առաջի աչաց նորա ։

Օ՞ սորին հակառակն և զայնոսիկ , զոր սանձէն յապիրատութեանց հարուածք դանիցէ , այնչափ խստագոյն սաստիւք պարտ է պատուհասակոծ առնել , որչափ առաւել խստասրտութեամբ անզգայեալք իցեն . վասն զի յոլովակի զայրանալ պարտ է ընդ նոսա առանց զայրութիւց , և անյուսութիւն ցուցանել առանց յուսահատելոյ . այլ այնպէս՝ զի և ցուցեալն անյուսութիւն երկեղուկս արկցէ նոցա , և յարակից յորդոր խրատու ՝ի յոյս ածցէ զնոսա . վասն որոյ պարտ է բարբառել ընդդէմ նոցա զանանչառ դատակնիքս Աստուծոյ , զի յաւիտենական վնասով խելաբերեսցին՝ ՝ի ծանօթութիւն անձանց գալով ։ Լուիցեն եթէ յանձինս իւրեանց լցեալ է գրեալն բան . “ Լցեալ հարկանիս զանզգամն ՝ի մէջ ատենի և անարգես զնա , սակայն ոչ մերժես զանզգամութիւնն ՝ի նմանէ ,, . կամ “ Լցեալ սանդարհարիս զանմիտն ՝ի հանել զկենդանս նորա , ոչ մերժեսցի ՝ի նմանէ յիսմարութիւն նորա ,, ։ Օ այսպիսեացս բոլոր արկանէ մարգարէն առ տէր , ասելով . “ Փչրեցեր (կամ վախճանեցեր) զնոսա , և ոչ կամեցան ընդունել զկրթաս ,, ։ Ամն որոյ ասէ տէր . “ Յողովուրդն ոչ դարձաւ , մինչև (կամ թէպէտև) վիրաւորեցաւ ,, . և թէ “ Ոչ դարձաւ ժողովուրդն առ հարկանողն իւր ,, . և ՝ի բերանոյ հարկանողացն ասացաւ բոլոքով . “ Բժշկե-

ցաք զԽաբէլն, և ոչ բժշկեցաք,,։ Խանդի դարման իմն մատուցանի բժշկութեան Խաբէլնի, այլ նա ոչ գայ յառողջութիւն, ցորչափ միաբն պղտորեալ 'ի գործս վատթարութեան՝ թէպէտ և լսէ զբանս յանդիմանութեան և ընդունի զբանս կշտամբութեան, այլ արհամարհէ, և ոչ դառնայ յուղիղ ճանապարհն փրկութեան։

Ամէն իրի այսպէս ասէ տէր սատանա առ Ժողովուրդն Խորայելի գերեալ, այլ ոչ զղջացեալ ընդ անօրէնութիւնս։ "Զդի ինձ տունդ Խորայելի խառնակեալ, որպէս խառնակեալ իցէ պղինձ և երկաթ և անագ և կապար և արծաթ 'ի հալոցի,,. Իբրու պարզապէս ասէր. Կամեցայ զտեալ զնոսա հրով նեղութեան, զի եղէցին ինձ որպէս արծաթ կամ ոսկի. այլ 'ի հալոցի անդ դարձան 'ի պղինձ, յանագ, յերկաթ և 'ի կապար. վասն զի և 'ի նեղութեան ոչ փոխեցան յառաքինութիւնն կոյս, այլ խոտորեցան 'ի չարիս ախտից։ Խանդի յորժամ ճեղէ զը զպղինձ, առաւել քան զայլ հրահալս ձայն հնչէ. ուստի որ զը ընդ հարուածով բերի 'ի ձայն սրբարանման, 'ի պղինձ է փոխեալ և 'ի հալոցի կայ։ Իսկ անագն արծնեալ յարուեստագիտէն՝ զգենու զսուտ տեսիլ արծաթոյ. ուստի որ ոչն թողու զախտ կեղծաւորութեան 'ի նեղութիւնս, նման է անագին որ 'ի հալոցին։ Իսկ զերկաթ 'ի կիր արկանէ դաւաճանն կենաց ընկերին. վասն որոյ երկաթ 'ի հալոցին է՝ որ 'ի նեղութեան իսկ չթողու 'ի սրտէ զչարութիւն միտելոյ։ Իսկ կապարն ծանր է քան զայլ մետաղս. և եւ կապարն այն 'ի հալոցի՝ որ այնպէս ձգիլ ծանրութեամբ մեղայ իւրոյ, զի և 'ի նեղութեան անդ ոչ թեթևանայ յերկրաւոր ցանկութենէ։ Այ ասն որոյ դարձեալ զրեալ է. "Խորոքեցաք, զի վատեսցի ջեռցի (բազում աշխատութեամբ), զի նուազեսցի ժանգ նորա, և ոչ եղև և հրով,,։ Խանդի հուր նեղութեան մատուցանէ 'ի մեզ տէր՝ 'ի մաքրել զժանգս ախտից. բայց և ոչ հրով մաքրիսք, երբ 'ի նոյն իսկ 'ի հարուածս ոչ յետս կասեմք յախտից։ Այրին վասն դարձեալ ասէ մարգարէն. "Օ՜ուր աշխատի արծաթագործն. և նոցա չարիքն ոչ հալեցան,,։

Գ.յլ արժան է գիտել, զի երբեմն յորժամ ընդ հա-

բուսածով կան մնան մեղուները խստասրտութեամբ անոստ և անուղղայ, պէտք են կակղել վնասս ամբոխիւք։ Օ՛ի զորս տանջանքն չաձեն յուղղութիւն, երբեմն մեղմ փաղաքշանք յետս կասեցուցանեն՝ ի գործոց ապիրատութեան. զոր օրինակ յոլովակի և զհիւանդս՝ զորս չկարաց բուժել զօրաւոր ըմպելի դեղոց, ջուր գաղջ՝ ի նախկին դարձոյց առողջութիւն. և վերբ ինչ զորս չէ մարթ հատմամբ բժշկել՝ սպեղանեաւք ձիթոյ ապաքինին։ Լա՛ կարծր անդամնոցն անդամ անտեղիտալի գծելոյ երկաթոյն՝ թեթև արեամբ նոխազաց կակղի։

ԺԴ. Լ՛յուղղ խրատել պարտ է զսակաւախօսս, և այլուղղ զշատախօսս. քանզի պէտք են ազդ առնել կարի լաւկայ եղելոց, զի այն ինչ յախտից ինչ զգուշանան անուղղոյ օրինակաւ, ծածկապէս վարակին՝ ի վատթարագոյնս։ Լ՛ ասն զի բազում՝ այն է զի յանչափս սանձելով զլեզուն՝ ի սրտի առաւել տեղի տան բազմախօսութեան. զի անչափ առաւել եռան զեռան խորհուրդք՝ ի միտս, որչափ բռնի պահպանութեամբ անխորհուրդ լռութեան ձնշեն զայն. որ և յոլովակի այնչափ առաւել զեղուն յորդութեամբ, որչափ անքոյթ կարծեին զինքեանս, զի անտեսանելի են առ արտաքս՝ ի պատրակողաց։ Լ՛ատի երբեմն միտք մարդոյ փքանայ ամբարտաւանութեամբ, և զնոսսելիսն լուեալ՝ անգամնէ որպէս տկարամիտս. և՝ ի խնամն զբերան մարմնոյն, ոչ զիտէ եթէ որչափ բացեալ բերան իւր կայցէ յամետս՝ ամբարհաւաճութեան։ Լ՛ ասն զի զլեզուն ձնշէ, զմիտս ամբառնայ. և զի զիւր անպիրատութիւն չաձէ զմտաս, այնչափ համարձակ զատախազ լինի զամենեցունց ընդ միտս իւր՝ որչափ ծածկագոյնս դատէ։

Լ՛ ասն որոյ պարտ է յուշ առնել տարապայմանն լուռ եղելոց, զի գիտասցեն խնամով փոյթ ունել՝ ոչ միայն այնմ թէ որպիսիս զանձինս ցուցանիցեն արտաքոյ, այլ և որպիսիս ընծայեցուցանիցեն զինքեանս՝ ի նեղքս. որպէս զի առաւել երկիցեն՝ ի գաղտնի դատաստանէ վասն խորհրդոց, քան՝ ի ստգտանաց այլոց վասն խօսից։ Լ՛ ասն զի գրեալ է. «Լ՛ ուրդեակ, խնդ խնամատութեան անսա, և խնդ բանիւ մատա զուշնին քո, զի պահեսցես զխորհուրդս (բարեաց)»։ Օ՛ի չէք ինչ՝ ի մեզ առաւել

խուսափող քան զսիրտ, որ այնչափ խոյս տայ 'ի մէնջ, որչափ առաւել ձգի 'ի խորհուրդս չարս։ "Լմին իրի ա-սէր սաղմոսերգուն. "Միրտ իմ եթող զիս"։ Ուստի և յինքն եկեալ՝ ասէ. "Լգիտի ծառայ քո՝ զսիրտ իւր՝ կալ առ քեզ յաղօթս". քանզի յորժամ խորհուրդք ամիտիին պահպանութիւն, յայնժամ գտանի և սիրտն զիւրախուսափ։

Այսպէս ևս յորժամ կարի լռակացք կրեն ինչ յանիւրաւի, և ցորչափ ոչ ինչ խօսին զայնմանէ զոր կրեին, սաստիկ յոյժ ցաւագնին. զի թէ լեզուն հանդարտութեամբ բարբառէր զնւր կիրս, 'ի խղճէ մնաց 'ի դուրս բղխեր ցաւն. վասն զի վերք թաքուցեալք առաւել չարչարեն. բայց յորժամ նեբբին փոութիւն 'ի դուրս գայ, կենսաւիթ լինի յայտնութիւն ցաւոյն։ Այսն որոյ քաջ գիտացին զայս տարադէպ լռակացք, զի մի 'ի վիշտս անդ զոր կրեն, պինդ ունելով զլեզուն՝ սաստկացուցեն զբռնութիւն ցաւոյն՝ և վասն այսորիկ հարկ է յուշ առնել նոցա, զի եթէ սիրիցեն զընկերս որպէս զանձինս, մի իւիք լռեսցեն՝ յորժամ իրաւամբք գնոսա ստգբտանիցեն։ Այսն զի 'ի ձեռն դեղոյ բարբառոյն՝ դարման լինի առողջութեան երկոցունց. քանզի յայնժամ նեղիչն սանձէ զվատթարութիւն իւր, և նեղեալն սիրտի բացմամբ վերին 'ի տապոյ ցաւոյն։ Այսպա թէ ոչ՝ ոչք տեսանեն զչարիս ընկերաց, և տակաւին լռեցուցանեն զլեզու, այնպէս են՝ որպէս եթէ 'ի տեսանելն զվերս 'ի բաց տանէին զսպեղանին. և պարտական մահու գտանին, քանզի չկամեցան բուժել զժանսն զոր կարէին։

Այսպա ուրեմն ընտրողութեամբ սանձել պարտ է զլեզուն, և ոչ անլոյծ կապել. քանզի գրեալ է. "Լյր ի-մաստուն լռեսցէ մինչև 'ի ժամանակ խօսից"։ քանզի յետ պահելոյ զօրէնս լռութեան՝ երբ տեսանէ զդիպող ժամ խօսելոյ զարժանն, վարեսցէ զայն յօգուտ։ Այս դարձեալ գրեալ է. "Ամանակ լռելոյ, և ժամանակ խօսելոյ"։ Այսն զի ընտրողութեամբ պարտ է դիտել զդէպս ժամանակաց, զի մի կամ ուր պէտք էին ունել զլեզու՝ 'ի բանս անշահս բերիցի, կամ ուր պէտք էին խօսել զօգտակարս՝ առ պղերգութեան անխօս կացցէ։

1 Սիրաք։

Օ՛ որ քաջ խորհելով սաղմոսերգուին ասէր . «Վիր տէր պահապան բերանոյ իմոյ , և դուռն ամուր շրթանց իմոց ,, . ուր ոչ պարիսպ հայցէ բերանոյն , այլ դուռն , զոր մարթի է բանալ և փակել։ Այսուհետև ասելոյ որոյ և մեզ պարտ է զգուշեալ ուսանել՝ եթէ երբ արժան է զի բացցէ ձայնն զբերան 'ի պատեհ ժամու և ընտրութեամբ , և դարձեալ լռութիւնն փակեսցէ զայն 'ի կարևոր պահու ։

Այսմիջոց հակառակ խրատել պարտ է զշատախօսս , զի արթնութեամբ դիտեսցեն , եթէ ուրչափ խոտորիցին յուղիղ շաւղայ՝ յորժամ դեգերին 'ի բազմադիմի բանս։ Այսուհետև զի եթէ միտք մարդոյ փակեսցի շուրջանակի , հանգոյն ջրոյ 'ի վերս կոյս հաւաքի , անդր դարձ առնելով՝ ուստի իջանէր . և 'ի թողուն արձակ՝ ընդ վայր կորնչի , քանզի ինքնին յանօգուտս ճանապարհ վայրաբերութեամբ . քանզի ցոլչափ ցնդի աւերըդաբանութիւն արտաքոյ քան զօրէնս լռութեան , իբրու ընդ վտակս բազումս 'ի դուրս երանէ յանձնէ . և անբաւական գտանի դառնալ 'ի ներքս յանձին ծանօթութիւն . վասն զի շատխօսութեամբ վայրավարին ծաւալեալ՝ արտաքս վարէ զինքն 'ի գաղանեաց ներքին տեսութեան ։ Այսպէս մատնէ զանձն բոլորովին 'ի կարեվէր խոցումն դառաձանող թշնամւոյն , զի չունի ինչ ամրութիւն պահպանութեան . վասն որոյ գրեալ է . «Որպէս քաղաք կործանեալ 'ի պարսպաց , նոյնպէս և այր՝ որ ոչ խորհրդով ինչ զործիցէ ,, . կամ որ չկարէ 'ի խօսելն արգելուլ զոգի իւր ։ Այս քանզի անպարիսպ է 'ի լռութիւն , բացեալ կայ առ նեռաձգութիւնս թշնամւոյ քաղաքն մտոց . և յորժամ բանիւք արտաքոյ իւր ձգէ զանձն իւր , բացերև ցուցանէ զինքն ոտիին . և նա այնչափ հեշտեաւ յաղթի նմա , որչափ և յաղթեալն կռուի ընդ իւրումն անձին շատխօսութեամբ ։

Այս շատ ևս այն է , զի ծայլ և յայլ միտք ընդ աշխարհս իմն մոլի յանկումն և 'ի գլորումն , յորժամ անփոյթ գտանիմք զգուշանալ 'ի դատարկաբանութենէ , և ժամանն լինիմք 'ի բանս մեստակարս . քանզի նախ ապորժելի ընծայի մեզ խօսել զօտարին իրաց , յետոյ բամբասանօք խածատել զվարս նոցա՝ զորոց է բանն , մինչև զկնի յարձակի լեզուն 'ի յայտնի եպերանս թշնամանաց ։ Այսուստ յառաջ գան խայթոցք բանից ,

ծագէն զրգեռք և վէճք, կազք և կռիւք, և բորբոքին ջահք ատելութեանց, և շինչանի անդորրութիւն սրտից. նմին իրի բարւոք ասէ Յովսէն. «Լշխանութիւն բանից տայ սկիզբն արդարութեան, և առաջնորդ լինի կարօտութեան հակառակութիւն և կռիւ»,. կամ «Որ արձակէ զջուր, գլուխ է կռուոյ»։ Օ՛ի թողուլն զջուր՝ ընդարձակել ինն է զէզու՝ի հոսանս խօսից։ Որպէս և՝ի լաւ կողմն դարձեալ ասի. «Զ՝ուր խոր է բան՝ի բերանոյ առն». ուստի որ թողացուցանէ զջուր, սկիզբն է կռուոյ. զի որ ոչն սանձէ զլեզու, ցրէ զմիաբանութիւն։ Որպէս և ընդ հակառակն գրեալ է. «Որ տայ լռել անմտի, ցածուցանէ զբարկութիւնս»։

Լակ թէ շատախօսն չկարէ երբէք պահել զուղղութիւն արդարութեան, երաշխաւորէ մարգարէն՝ ասելով. «Մ՝արդոյ լեզուանւոյ մի յաջողեսցի՝ի վերայ երկրի»։ Օ՛ր և Յովսէն երկրորդէ. «Դ՝ շատախօսութենէ ոչ ապրեսցիս՝ի մեղաց». վասն որոյ և Լ՝սայի ասաց. «Պաշտն արդարութեան՝ լռութիւն», յայտ արա՝ բեալ եթէ յաւէր դառնայ արդարութիւն մնաց, յորժամ՝ հանդարձակ յաձախէ շատախօսութիւն. վասն որոյ և Յակոբոս ասէ. «Լ՝նթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, և ոչ սանձահարիցէ զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւն»։ Որ և դարձեալ նշանակեալ զբռնութիւն լեզուին՝ ասէ. «Դ՝ատ զլեզու մարդկան ոչ ոք կարէ սանձահարել, զչարն և զանկարգ և զլի թունաւոր մահաբերին»։ Վասն այսորիկ և ինքնասաց բանիւ ազգ առնէ ՀՀմարտութիւնն, եթէ «Ընդ ամենայն դատարկ բանի՝ զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի»։ Դատարկ բան ինն ինձ զայն, յորում պակասի կամ պատճառ իրաւացի հարկի, և կամ դիտաւորութեան օգտի ըստ Լ՝ստուծոյ։ Լ՝ընդ եթէ ընդ դատարկ բանի համար պահանջիցի, ՝ի միտ առցուք եթէ որպիսի պատիժ պահեսցի շատախօսութեան, յորում՝ և մեղանչեմք մեսակար բանիւք։

ԺԵ. Լ՝այազգ պարտ է խրատել զծոյլս, և այլազգ զիուհնապոզս։ Օ՝նոսա զդաստացուցանել, զի մի՝ի դանդաղելն առնել զբարին՝ կորուսցէն. և զսոսա, զի մի՝ի կանխելն քան զժամանակ բարւոյն անխորհուրդ շտա-

պամ Եղծանիցեն զվարձ նորին. վասն որոյ պէտք են յոյշ առնել պղերգաց և յուլից՝ եթէ բաղում անգամ երբ 'ի դէպ ժամու չկամիցիսք առնել զոր կաբեմք, յետ պահու՝ յորժամ կամիցիսք չկարեմք. քանզի հեղգութիւն մտաց յորժամ չվառի կարևոր եռացմամբ 'ի ցանկութենէ բարւոյ հիմնոլին, 'ի զօրանալ ծածկապէս գաղջութեան՝ թմբրի 'ի քուն մահաւորութ։ Այրին վասն ասէ Սողոմոն. "Ա ատութիւն ունի զկանացին,,. կամ "Օտարութիւնն 'ի բերէ զթմբրութիւ,,։ Տրանզի ծոյլն թէպէտ և արթուն իցէ 'ի խորհել զուզին, այլ գործելով և ոչ ինչ՝ ընդարմացեալ կայ։ Զոսի եթէ ծուլութիւնն զթմբրութիւն բերիցէ, քանզի տակաւ կորնչի արթնութիւն ուղիղ խորհելոյ, յորժամ դադարէ զգ 'ի գործելոյ զբարին. վասն որոյ բարւոք յարի անդէն. "Ինձն գործատեաց կամ թուլացեալ քաղցիցէ,,. զի որ ոչն ուղղէ զանձն սնդելով 'ի վերինս կոյս, թողացուցեալ զինքն՝ վայրաբերի ցանկութենէքիւ. և յորժամ ոչ արիանայ ջանիւք բարձրագունից՝ սով կրէ վայրաբարշ ցանկասիրութեան. այնպէս զի որչափ զանդազի սնդել զանձն կապով խրատու, այնչափ քաղցեալ թողու զինքն 'ի հեշտասիրութիւն. վասն որոյ դարձեալ գրէ Սողոմոն. "Ցանկութիւնք սպանանեն զվատ,,։ Ուստի և ըստ ասից Ճշմարտութեանն, թէպէտ և յեղանել միոյ այսոյն պղծոյ՝ մաքրեալ ասի տունն, այլ 'ի կալն պարապորդ՝ 'ի բաղմութենէ այսոց անդրէն եկելոց գրաւի։

Օտարն յոլովակի յորժամ անհոգ լինի գործել զկարևորս, ազգի ազգի դժուարութիւնս յօդէ ինքեան, և յիրաց իրաց ևս ահաբեկ լինի. և յորժամ գտանէ մի ևեթ ինչ իրաւամբք երկիւղալի զոգցես, ցուցանէ եթէ ոչ յանիրաւի անդոյծ կայցէ։ Զայնպիսումն 'ի Ճահ ասեր Սողոմոն. "Լծէպէտ և նախատի վատ, ոչ ամաչէ. նոյնպէս և որ առնու ցորեան փոխ ամարանի,,. կամ "Օտարն 'ի պատճառս ցրտոյ ոչ վարէ. ապա մուրացի ամարանի, և ոչ տացի նմա,,։ Պղերգն 'ի սակս ցրտոյ ոչ վարէ, յորժամ կծկեալ թմբրութեամբ հեղգութեան՝ դանդաղի գործել զբարին զոր պարտի. կամ յորժամ զանգիտեալ 'ի զոգն չարէ՝ զանց առնէ գործել զմեծամեծս։ Այ 'ի դէպ ասացաւ. "Մուրացի

ամարտանի, և ոչ տացի նմա։» Օ՛ի որ այժմ ոչ քրտնի 'ի բարեգործութիւնս, ուր արեգակն արդարութեան ջերմացրն երևեսցի 'ի դատաստանի, նա 'ի զուր խնդրէ զմեւտս աղքայութեան, և այնպէս մուրանայ ամարտանի, և չառնու ինչ. վասն որոյ դարձեալ բարւոք ասէ Սողոմոն. «Որ խարէ զՏողոմն, ոչ սերմանէ. և որ հայի ընդ ամպս, ոչ հնձեսցէ։» Զարդ զինչ իցեն հողմք, եթէ ոչ փորձութիւնք այսոց չարաց. և զինչ ամպք հողմավարքք, բայց հակառակութիւնք մարդոց չարաց. իսկ, 'ի հողմոց վարին ամպք, յորժամ փչմամբ պիղծ ոգւոց զբերգութիւն վատթարք։ Ամին իրի որ խարէ զՏողոմ, ոչ սերմանէ. և որ հայի ընդ ամպս, ոչ երբեք հնձէ. վասն զի որ միանգամ երկնչի 'ի փորձութենէ զիւաց, և 'ի հակառակութենէ վատթար արանց, ոչ այժմ ցորենաց հատ մի բարի գործոյ սերմանէ, և ոչ յայնժամ զհասկս սրբոյ հատուցմանն քաղէ։

Ընդ հակառակն այսմ՝ յորժամ հասցէ խուճապողք անհապարեն յառաջ քան զժամանակ գործոց բաբեաց, խանդարեն զլաւութիւն կամ զվարձս իրաց, և բազում անգամ 'ի չարիս կործանին, յորժամ չընտրեն զբարիս։ Զայսպիսիքն ոչ հային՝ եթէ զինչ գործեսցեն կամ երբ, այլ ստեպ 'ի միտ առնուն, եթէ չէր պարտ նոցա այնպէս գործել։ Որոց բարւոք ասէ՝ Սողոմոն 'ի գէմն ունկնդիր աշակերտի. «Որդեակ, առանց խորհրդոյ մի գործեցես, և զկնի գործոյն մի տրտնջացիս։» Զի՞ «Զբաւականութիւնք քո արդար ակնարկեսցին (կամ կանխեսցին 'ի գնացս քո)։» Զբաւականութիւնք յառաջին քան զգնացս, յորժամ ուղղիլ խորհուրդք կանխեն նախ քան զգործս մեր. զի որ անհոգ լինի նախ խորհել և տեսանել զոր առնելոյն է, յառաջ ձգէ զգնացս ոտից աչօք փակելովք, և ուղղ հատանէ, այլ ոչ յառաջէ տեսութեամբ անձին, և վասն այն փութով անկանի. վասն զի ոչ դիտէ արտաքանամբք խորհրդոյ, թէ ուր պարտ իցէ գնել զոտս։

Ա.Զ. Զայլ օրինակ պէտք են խրատել զՀեղս, և այլ զցասկոտս։ Զանգի երբեմն հեղք՝ յորժամ կարգին 'ի վերակացութիւն, կրեն 'ի մեծոյ զմբրութիւն պղեր-

1 Ի գիրս Սիրաքայ։ 2 Գիրս Առակաց։

գութեան. և յորմէկի առ թուլամտութիւն կամ մեղմութեան՝ թուլացուցանէն զՀիշդ պահպանութիւն կարգաց։ Օ՝սորին հակառակն բարկասիրտք յորժամ անցանեն՝ի գլուխ զեկավարութեան, այնչափ՝ի սաղրելոյ բարկութեան յամառութիւն բերին, մինչև ցնդելով զանդորրութիւն հանգստեան՝ պղտորէն զկեանս հպատակաց։ Ա՝յնպիսիքն վարեալք՝ի բուռն ցասմանէ՝ ոչ գիտեն զինչ գործեն՝ի բարկութեան անդ, և անգիտանան՝ թէ զինչ կրիցեն յինքեանց հպատակք։ Լ՝ս որ ծանր ևս է, երբեմն զմտրակ բարկութեան՝ նախանձայուզութիւն արդարութեան համարին։ Լ՝ս յորժամ ախտն առաքինութիւն կարծի, աներկիւղ կուտակին յանցանք։

Լ՝ս այսպէս հեզք թուլամտութք գտանին ստէպ, և բարկացողք ստէպ խաբին նախանձու ուղղութեան. վասն որոյ՝ի նոցայն առաքինութիւն ծածկապէս շիտի ախտ, իսկ սոցա ախտ եռանդագին առաքինութիւն թուի ինքեանց։ Վ՝ասն որոյ խրատել պարտ է զՀեզն՝ խորշիլ յայնմանէ, որ առընթեր կայ ինքեանց. և զբարկացողն՝ միտ դնել այնմ՝ զոր յինքեանս ունին. նոքա զիտեսցեն զոր ոչն ունին, և սոքա զոր ինչ ունին։ Հեզք բուռն հարցեն՝ի փայթ ջանից, բարկացողք մերժեսցեն զամբոխումն։ Օ՝հեզս խրատել պիտի, զի փութասցին ստանալ զնախանձաւորութիւն արդարութեան. և ըզբարկասիրտս, զի՝ի նախանձաւորութիւնն զոր ունել կարծեն՝ յաւելցեն զՀեզութիւն։ Վ՝անզի և վասն այսորիկ Հոգին սուրբ՝ի նմանութիւն աղաւնոյ և՝ի տեսիլ հրոյ ցուցաւ մեզ. վասն զի զամենեսին զոգս ընտ՝ հեզս գործէ միամտութեամբ աղաւնոյ, և վառեալս հրով նախանձաւորութեան։ Ա՝յլս ուրեմն չէ որ հոգւոյն Ա՝ստուծոյ լցեալ, եթէ կամ՝ի հանդարտ հեզութեան անդ լքանէ զեռանդն նախանձաւորութեան, և կամ՝ի վառմանն նախանձայուզութեան կորուսանէ զառաքինութիւն հեզութեան։

Օ՝այս թերևս լաւ ևս յայտնաբանեմք, եթէ՝ի մէջ մնասցուցք զբրինակ վարժապետութեանն Պօղոսի. որ երկոցունց աշակերտաց միօրինակ սիրով Տիմոթէոս. զի՝ի մանչէն գՏիմոթէոս՝ ասէ. «Յանդիմանեա, սաս-

տեա՛, մխիթարեա՛ ամենայն երկայնամտութեամբ և վարդապետութեամբ։» Իսկ զՏիտոս այսպէս հրահանգէ. «Օ՛այդ խօսեաց, և մխիթարեա՛, և յանդիմանեա՛ ամենայն սաստիկ։» Օ՛ի է, զի այսչափ Հաստատութիւն կարդէ զտնտեսութիւն վարդապետութեան իւրոյ. միտումն հրամանատարութիւն, և միտումն երկայնամտութիւն առաջի դնելով. բայց զի տեսանէր զՏիտոս առաւել հեզահոգի, և զՏիմոթէոս փոքր մի աւելի եռանդնոտ, վասն որոյ զմին վառէ՝ ի փոյթ նախանձայուզութեան, և զմիւսն մեղմէ՝ ի ձեռն երկայնամտութեան։ Իսկ յաւելուլ զգակասորդն, ՝ի սմանէ յապաւէ զաւելորդն. զնա խիթանաւ ջանայ յառաջ վարել, և զսա սանձիւ չափաւորել։ Իանզի քաջ միանգամ եկեղեցւոյ զսմանս՝ ի մնաղ անկոց նմա յանձն եղելոց ուռոգանել յաճումն, զայլս ումեմեսն աճեցուցանս յապաւէ. զի մի անբարգաւաճք անպտուղ մնացցեն, և մի տարապայման ուռճացեալք կորուսցեն զբերս։

Լ. մի կարի օտար է բարկութիւնն՝ որ ընդ կերպարանաւ նախանձաւորութեան սղրդի, և այլ՝ որ պղտոր զսիրտ առանց պատճառանաց իսկ արդարութեան. զի առաջինն անդ ուր արժանն է՝ անկարգաւորէն ծաւալի, և երկրորդն միշտ ուր ոչն է պարտ՝ բորբոքի, վասն որոյ արժան է գիտել, զի այսութիւ զանազանին բարկացողք յանհամբերից, զի սոքա ոչ համբերեն իրաց՝ զորս այլք՝ ի վերայ ածեն, իսկ նոքա այլոց՝ ի վերայ բերեն զնիւթս համբերելոց։ Իանզի բարկասիրքաւ ստէպ՝ ի վերայ յարձակին խուսափելոցն յինքեանց, յուզեն պատճառս կրուելոյ, զուարճանան ընդ վաստակս վիճանն. այլ զայսպիսիս լաւ ևս յուզութիւն ածեմք, եթէ՝ ի գրգռութեան անդ բարկութեանն խոյս տամք յերեսաց նոցա. վասն զի՝ ի վրդովման անդ չգիտեն անասել. այլ յորժամ սեմափին յանձինս՝ հեշտեաւ ընդունին զբանս յորդորականս, քանզի ամենեն՝ ի հանդարտելն՝ զի այլք համբերեցին ինքեանց. իսկ արբեալքն մոլեգնութեամբ ցասման՝ զամենայն բան ուղղութեամբ ասացեալ՝ թիւր և շրջուն տեսանեն. վասն որոյ և առաջի Իարաղայ արքելոյ՝ զյանցանս նորա խմնաստութեամբ ընեաց Լ. քիգեա, և յետ սեմափելոյն՝ ի գլխոյ՝ խօսեցաւ նովին խմնաստութեամբ. քանզի վասն այնորիկ մարթացաւ նա

Հանապէտ զբարն զոր արար, զի ոչ լուաւ զայն յարբեցութեան մեղ իւրում։

Լ։ զկա եթէ այնպէս վառեալ լիցեն 'ի բարկութիւն, մինչև անմարթ իցէ խուսափել յերեսաց նոցա, յայնժամ պարտ է ընդ առաջ ելանել նոցա ոչ յայտնի դիմախօսելով, այլ զգուշական յարգանօք իմն կծանելով զնոսա. զոր պարզագոյնս բացատրեսցուք, եթէ 'ի միջ առցուք զարարուածն Լ։ բենեդեայ. զի յորժամ զհետ անդեալ էր նորա Լ։ սայել յանդուգն յարձակմամբ, ըստ բանի զրոյն՝ ասէ ցնա Լ։ բենեդ. "Լ։ բաց կաց յինէն, զի մի հարից զքեզ ընդ գետին. և ոչ կամեցար թափել. և եհար զնա Լ։ բենեդ նիզակաւն ընդ մնա կուշան, և էլ նիզակն ընդ զիստ նորա, և անկաւ անդէն և մեռաւ 'ի ներքոյ նորա..։ Լ։ ՀՀ այլ նման գտանի Լ։ սայելի, եթէ ոչ զոր անխորհուրդ բարկութիւն խարդանամ ընդ վինս. վասն որոյ և այնչափ զգօնութիւն պարտ է խուսափել 'ի նոցանէ, որչափ անմոռութեամբ ցնորեալք են. վասն որոյ և Լ։ բենեդ՝ որ Թարգմանի Հոյակ հօր, խոյս ետ զառաջինն. քանզի լեզու վարդապետաց՝ նշանակ վերնական լուսոյն Լ։ ստուծոյ՝ յորժամ տեսանէ զմիտս ուրուք բերեալ յանսանձ բարկութիւն, և ընդդէմ բարկացողին դանդաղի ձգել զնեռս բանից, իբրու չկամի խոցել զհետամուտն. այլ յորժամ ցասկոտը ոչ իւիք ամբոխն, և հանդգոյն Լ։ սայելի ոչ դադարին 'ի յարձակմանէ մոլեգնութեան, յայնժամ հարել է որոյ ջանայցեն սանձահարել զցասուցեալս կատաղի՝ ոչ եթէ զայրոյթ առ նոսա ցուցանել, այլ զարժանն հանդարտ սրտի. միանգամայն և Հարատար նրբութեամբ ասասցեն ինչ, որով և ոչ յայտ նապէս հարկանիցեն զսիրտ մոլեգնելոյն. վասն որոյ և Լ։ բենեդ այն ինչ զդէմ կալաւ սնդելոյն զինի իւր, ոչ ուղղակի՝ այլ կողմնակի եհար զնա նիզակաւն. վասն զի ուղղաձիգ սիրտաւ հարկանել՝ է զդէմ ունել ձգմամբ յայտնի կշտամբութեան. իսկ կողմնակի խոցելն է անդորր ոգւով կծանել զցասուցեալն, և իբրու խնայելով յաղթել։ Իսկ զի Լ։ սայել անդէն անկանի և մեռանի, այն է՝ զի վերովեալ անձն յորժամ խմնայ եթէ խնայեն յինքն, 'ի բանաւոր պատասխանւոյ անտի յոգի հարկանի, և իսկոյն ցածնու և շինջանի 'ի բորբոքեալ բար-

կուԹէնք իւրմէ, վասն որոյ որք միանգամ մեզմ հաղորդուածով 'ի բաց կան յեռացմանէ Թափոյ իւրեանց, իբր աներկիւղ մնացեան։

ԺԷ. Լոյսով ձեւով պարտ է խրատել զխոնարհս, և այլով զբարձրամիտս։ Խոնարհաց յուշ առնել պէտք են եԹէ քանի՛ Ճշմարիտ գերազանցութիւն իցէ՝ զոր ունին յուսով. և ամբարտաւանից, Թէ ոչինչ են ժամանակեան փառքն, զոր և ընդունողքն չունին։ Ուրիցեն խոնարհք եԹէ որպէս անանցք իցեն՝ որոց փառքն, և որպէս անցաւոր՝ զորս արհամարհեն։ Ուրիցեն հրպարտք, եԹէ որպէս վաղանցուկք իցեն յորս անկղիտանան, և որպէս յաւիտենական զորս կորուսանեն։ Ուրիցեն խոնարհք բարբառոյ Ճշմարտութեան վարդապետին. "Մինայն՝ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացուցի,,. և հպարտացեալքն, Թէ "Մինայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի,,։ Ուրիցեն խոնարհք, Թէ "Բաջի խոնարհաց երԹան փառք,,. և հպարտք, Թէ "Ցառաջ քան զբեկումն բարձրանայ սիրտ,,։ Ուրիցեն խոնարհք, Թէ "Լս յո՛ հայեցայց (կամ՝ հանգեայց), եԹէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և ոչ դողան 'ի բանից իմոց,,. և փքացեալք, Թէ "Օ՞ի հպարտանաս հող և մոխիր,,։ Խոնարհք լուիցեն, զի "Բստուած զխոնարհս տեսանէ,,. և ամբարտաւանք, զի "Օ՞ բարձունս 'ի հեռաստանէ Ճանաչէ,,։ Ուրիցեն խոնարհք, զի "Արդի մարդոյ ոչ էին պարտուն առնուլ, այլ պարտէր,,. և ամ բարտաւանք, զի "Ակիզբն ամենայն մեղաց ամբարտաւանութիւն է,,։ Ուրիցեն խոնարհք, զի փրկիչն մեր "Խոնարհեցոյց զանձն՝ լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի,,. և հպարտք վասն զլեոյ իւրեանց, "Ինքն է Թագաւոր ամենայնի որ 'ի ջուրսն են,,, կամ՝ ամենայն որդւոց ամբարտաւանութեան։

Բպա ուրեմն առիԹ կորստեան մերոյ եղև հպարտութիւն բանարկուին, և պատՃառ փրկութեան մերոյ գտաւ խոնարհութիւնն Բստուծոյ. քանզի Թշնամին մեր 'ի մէջ ամենայն եղակնաց հաստեալ՝ կամեցաւ գերամբարձ լինել քան զամենայն. իսկ փրկիչն մեր՝ որ գեր 'ի վերոյն էր քան զամենայն, արժան համարեցաւ փոքրկանալ քան զամենայն. վասն որոյ պարտ է ասել խոնարհաց, Թէ յորժամ ցածուցանեն զանձինս, 'ի նը-

մանութիւն Լ՝ստուծոյ 'ի վեր ելանէն. և փքացելոյ, թէ յորժամ բարձրավզին՝ կործանին ըստ նմանութեան ապստամբ հրեշտակին։ Լ՝որդ ո՞ր ցածութեն կայցէ քան զբարձրամտութիւն, որ 'ի ձգտիւն 'ի վեր քան զինքն՝ օտարանայ ամենայնիւ 'ի ճշմարիտ բարձրութենէ։ Լ՝ս զինչ երկնաբերձ քան զխոնարհութիւն, որ յորժամ ցածուցանէ զանձն 'ի վայր, միանայ 'ի գերագոյական հաստիչն իւր։

Լ՝ալ պարտ է զգուշեաւ նկատել 'ի նոսա զայս ինչ, զի ստէպ խաբին ոմանք կերպարանաւ խոնարհութեան, և ոմանք պատրին անգիտութեամբ հպարտութեան իւրեանց։ Ա՝ն զի յորմէկի ոմանց խոնարհ թուեցելոց յաչս իւրեանց՝ կից է երկիւղ ակնածու 'ի մարդոց, և բազում անգամ կից է հպարտաց հմարձակախօսութիւն։ Լ՝ս ուր նոքա լուեն առ երկիւղն՝ ուր պարսն էր կշտամբել զախտս, այլ կարծեն՝ թէ առ խոնարհութեամբ լուռ կան, սոքա խօսին անհամբերութեամբ բարձրամտութեամբ, և համարին եթէ ինքեանք խօսին առ համարձակ քարոզելոյ զուղղութիւն։ Օ՝նոսա ճ՝նշեն յանցանք վատասրտութեան կերպարանօք խոնարհութեան առ 'ի չյանդիմանելոյ զնոստորեալս. և զոսոսա ստիպէ փքացումն ոգւով ազատութեան 'ի յանդիմանել՝ ուր չէր պարտ, կամ՝ կշտամբել աւելի քան զարժանն։ Ա՝ռ որոյ զմեծամիտս պէտք են խրատել զի մի համարձակեսցին յանչափս. և զխոնարհս, զի մի ցածնուցուն 'ի վայր քան զարժանն։ Նոքա մի՛ շրջեսցեն զպաշտպանութիւն ազդարութեան 'ի պէտս հպարտութեան, և սոքա մի՛ 'ի յարգել բերիցին զախտաւորութիւն այլոյ՝ 'ի ջանալն խոնարհիլ և զնչանել առ մարդիկ աւելի քան զհարկն։

Լ՝րժան է և զայն ածել զմտաւ, զի բազում անգամ լաւ ևս օրինակաւ յանդիմանեմք զբարձրամիտս՝ եթէ 'ի կշտամբանս նոցա խառնեսցուք և զհայեցեալս զուվութեան. խմն յառաջ բերելով զայլ բարին որ 'ի նոսա. և յետոյ ուրեմն պարտ է հատանել զչարին որ մեզ դժպատեհ թուին, զի ամբիչ լիցին ըստ նոցա նախընթաց ախորժաբերք վասն լաւութեան իւրեանց։ Լ՝սաքէն և զերիվարս խստերախս նախ մեզմով ինն ձեռամբ շշոփեմք, զի յետոյ և զանիւք խիզ նուաձես-

ցուք զնոսա։ Այլ դուն դեղոց բաժակ քաղցրութեամբ մեղու օծանի, զի մի օգտակարն առողջութիւն ընդ նախկին ձաշակին զխիստ դառնութիւնն տայցէ խմանալ. և յորժամ՝ քիմքն խաբին քաղցրութեամբն, մնհատիթ հիւթն փարատի դառնութեամբ. վասն որոյ զսկիզբն խրատու և յանդիմանութիւն բարձրապարանոցաց՝ բարեխառնել արժան է գովութեամբ. զի յետ ընդունելոյ սիրով զհեշտալուրս՝ յանձն առնուցուն և զդժուարալուր կշտամբութիւնս։

Այլ յոլովակի իսկ կարեմք հաւանեցուցանել հպարտաց զօգտակարս, եթէ ասասցուք՝ թէ յառաջադիմութիւն նոցա առաւել մեզ քան ինքեանց օգտեսցէ, եթէ զլաւութիւն նոցա ժառեսցուք առաւել 'ի մեր սակս ծախել քան նոցա. քանզի դիւրաւ թեքի հպարտութիւնն 'ի լաւ անդր, եթէ հաւատայցէ հպարտն՝ թէ խոնարհիլն իւր շահեկան իցէ և այլոց. վասն որոյ Պ՝ովսէս՝ որ առաջնորդութեամբն Աստուծոյ և յառաջընթացութիւն սեան ամպոյ խաղայր ընդ Ճանապարհ անապատի, կամելով զՅոթոր զաներ իւր դարձուցանել 'ի հեթանոսութենէն, ասէր առ նա. "Եկա մեք չուեմք 'ի տեղին՝ զոր ասաց տէր տալ զնա մեզ. եկ ընդ մեզ, և բարի արասցուք քեզ, զի տէր խօսեցաւ բարութիւնս Իսրայէլի։ Այլ նա ասէ. ոչ երթայց անդր, այլ յերկիրն իմ և յազգն իմ գնացից։ Այլ ասէ ցնա. մի թողուր զմեզ. քանզի էիր ընդ մեզ յանապատին, և եղէցիս ընդ մեզ ծեր (ցուցանել զտեղիս բանակելոյ)..։ Եւ ոչ եթէ Պ՝ովսէսի դժուարութիւն կայր վասն Ճանապարհին, այն զի ունէր զհոգի մարգարէութեան և զայայտնութիւն աստուածային, և զսիւնն առաջնորդ արտաքոյ, և ներքոյ զամենայնէ առնոյր հրաւանգս ընտանի խօսակցութեամբ ընդ Աստուծոյ. այլ զի խորագէտ մտաք խօսելով ընդ առն բարձրամտի՝ խնդրէր սփոփութիւն նպաստ տիցս առ 'ի նմանէ, և կամէր որպէս առաջնորդ ունել զնա 'ի Ճանապարհի, որպէս զի մարթասցի առաջնորդ լինել նմա 'ի կեանս։ Այլ զայս այսպէս արար, զի մեծամիտ լսողն այնչափ հեշտեաւ լուիցէ բանից իւրոց բարեաց, որչափ թուէր հարկաւոր նմին. և որով զանձն նախամեծար քան համարէր զյորդորիչ իւր, նովին զէ ջանիցի 'ի բանս նորա յորդորականս։

ԺԸ. Ա.յլազգ խրատել պարտ է զյամառեալս, և տարօրինակ զյողդողդս։ Ա.ռաջնոյն ասելի է, եթէ առաւել քան զպաժանն մեծ համարին զանձինս, և վասն այն ամենան խորհրդոց այլոց. և վերջնոյն յուշ առնել հարկ է, եթէ կարի անիսկի գտանին 'ի վերայ անձանց նուաստախոհութեամբ. նմին իրի թեթևամտութեամբ փոփոխին 'ի մտաց իւրեանց ըստ դիպաց ժամանակաց։ Ա.ռ նոսա ասելի է, զի թէ չամարեին զինքեանս պատուական քան զայլս, ոչ երբեք նախատատիւ առնէին զիւրեանց կարծիս քան զամենեցուն։ Այսառ սոսա ասելի, զի եթէ իւիք ուշ ունէին անձանց՝ թէ որպիսի որ իցեն, ոչ երբեք տարուբերեալ լինէին յամենայն հողմոց այսր և անդր։

Ա.ռ նոսա բարբառի Պօղոս. "Ա՛ի լինիք իմաստունք յանձինս ձեր,,. և առ սոսա. "Ա՛ի լինիք երերեալ և տատանեալ յամենայն հողմոց վարդապետութեան,,։ Պ.ան նոցա ասէր Պողոսն. "Կերիցեն զպտուղս Աստուածպարհաց իւրեանց, և ամպարշտութեամբն իւրեանց յագեսցին,,. և վասն սոցա, "Պիրտք անմտաց ոչ են անսխալք,,. վասն զի սիրտ իմաստնոց է միօրինակ. զի որովհետև տեղի տայ ուղիղ բանի, անվրէպ ուղղէ զանձն 'ի գործ բարի. իսկ սիրտ անմտաց է այլայլակ և բազմասխալ, վասն զի փոփոխամտութեամբ սկսալիսայ նայ, և ոչ մնայ 'ի նմին կայի։ Այս քանզի ախտք զախտս ծնանին ստէպ, կամ՝ յայլոց ծնանին, քանզ պարտ է իրագէտ լինել, եթէ յայնժամ հնար լինի մեզ խրատս ուղղել զնոսին, յորժամ զաղբիւրն զառնութեան ցամաքեցուցանիցեմք. արդ յայտ է թէ յամառութիւնն 'ի հպարտութենէ ծնանի, և յողդողդութիւնն 'ի թեթևամտութենէ։

Այս զի այս այսպէս, պարտ է խրատել զնստապարանոցս, զի ծանիցէն զբարձրամտութի՛ն իւրեանց, և զուն գործեսցեն յաղթել անձանց. զի մի յորժամ ապախտ առնիցեն յաղթիլ արտաքուստ ուղիղ խորհրդովք այլոց, 'ի ներքուստ գերի լինիցին և կարանաւորեսցին 'ի հրապարտութենէ։ Այս և զքանզ խելամուտ լինիցին, զի որդի մարդոյ՝ որ կամք մի է միշտ ընդ հօր իւրում, առ 'ի տալոյ մեզ օրինակ խորտակելոյ զկամս մեր՝ ասէր. "Ես իմ ինդրեմ զկամս իմ, այլ զկամս հօրն՝ որ առաքեացն

զիս ,, ։ Եւ առ մեծացուցանելոյ զՆորՀ այսր առաքի-նութեան՝ կանխեաց և ծանոյց եթէ զայս և 'ի վերջ-նումն դատաստանի ցուցանիցէ , ասելով . “ Ես կարեմ ես յանձնել առնել և ոչ ինչ , այլ որպէս լսեմ՝ դատիմ ,, ։ Զոր որպիսի՞ մտօք գժուարի մարդ զիջանիլ 'ի կամս այլոց , ուր որդին Աստուծոյ և մարդոյ՝ եկեալն 'ի ցու-ցանել զփառս զօրութեան իւրոյ , վկայէ՝ թէ ոչ յանձ-նէ իւրմէ դատէ ։

Ամէն հակառակ պարտ է խրատել զյողդողդս , զի զօրացուցեն ծանրութիւն զմիտս իւրեանց ։ Զի յայն-ժամ չորացուցանեն յանձինս զբոյս փոփոխամտութիւն , յորժամ նախ խլեն 'ի սրտէ զարմանն թեթեւամտու-թիւն . քանզի և զկերտուած մեծարէն յայնժամ մարթ է կառուցանել , յորժամ նախ ընտրեսցի տեղի հաստա-պինդ 'ի պէտս հիմնարկութեան . վասն որոյ եթէ չլի-նիցի նախ զգուշութիւն 'ի թեթեւութենէ մտաց , ոչ յաղթի երբէք անհաստատութիւն խորհրդոց ։ Զորմէ անբաժ ցուցանէ զինքն առաքեալն յասել անդ . “ Մի՛-թէ թեթեւութիւ՞ ինչ գնացի . և կամ զոր խորհիմն , ըստ մարմնոյ՞ ինչ խորհիցիմ . այլ զի եղիցի յինէն կող-մանէ այոն այո , և ոչն ոչ ,, . որպէս այն թէ մեկնն ա-սիցէ . վասն այսորիկ ոչ տատանիմ հողմով փոփոխա-կանութեան , զի չեմ նեբբոյ անկեալ ախտի թեթեւա-մտութեան ։

ԺԹ . Աչալուզ պարտ է խրատել զորկորաժէտս , և այլազգ գժուժկալս ։ Զառաջնոցն ընթացակից են աւե-լորդաբանութիւն , անգործութիւն , և զեխութիւն . վերջնոց ստէպ անհամբերութիւն , և ստէպ հպարտու-թիւն ։ Զի թէ զորկրամոլս չգերէր անյագ շատխօսու-թիւն , խորտկաճաշ մեծատանն ուրախ եղելոյ առա-տապէս՝ ոչ այնչափ չարաչար տապացեալ լիներ լեզուն , ըստ իւրումն իսկ ասելոյ . “ Հայր Աբրահամ , ողորմեա՛ ինձ , և առաքեա՛ զԱղաղոս , զի թացցէ զծագ մա-տին իւրոյ 'ի ջուր և զովացուցէ զլեզու իմ , զի պա-պակիմ 'ի տապոյ սատի ,, ։ Այսու բանիւ քաջայայտ երևի , եթէ 'ի հանապազորեայ խնջոյս՝ յաճախագոյնս լեզուաւ մեղանչէր , քանզի բովանդակ անձամբ բոցա-կէզն առաւել զլեզուին ժտէր զզովացումն ։ Եւ ես ո-րովայնամոլք անշուշտ անգործ և դատարկապորտ գտա-

նին. որում վկայէ զիրն ասելով. «Լաստաւ ժողովուրդն ուտել և ըմպել, և յարեան 'ի խաղալ»։ Օգնոսին յոլովակի շուայտութիւնն ձգէ և յանառակութիւն. զի յորժամ որովայնն յափրութեամբ պարպատի, սրին խայթոցք վաւաշտութեան։ Ա ամն որոյ և խորամանկ թշնամւոյն, որ զառաջին մարդոյն զզգայութիւն ցանկութիւնք պտղոյ եբաց, այլ 'ի հաղթս մեղայ խեղդ արկ նմա, ասացաւ Լաստածոյ. «Ի վերայ լանջաց և որովայնի քոյ գնասցես»։ Եբրու յայտնապէս ասել. խորհրդով և շուայտութեամբ տիրեսցես 'ի վերայ մարդկան սրտից։

Լաւ թէ որովայնամոլից ընկերէ զեխութիւն անառակ, վկայէ մարգարէն, որ 'ի Ճառէն զլայնեխ՝ տայ խմանալ զգաղնեխ, ասելով. «Դահճապետն՝ (որ և խոհակերապետ ասի) քակեաց զպարիսպս Լրուսաղէմի»։ քանզի խոհակերապետ որովայնն է, յոր զնամ Ճիրն ծաքեն խահարաքը, զի նա ըստ հաճոյս լցեալ յափրացի. իսկ պարիսպք Լրուսաղէմի էն առաքինութիւնք հոգւոյ՝ ամրարձեալք ըստ բաղձանաց վերնական խաղաղութեան. և ահա դահճապետն զպարիսպս Լրուսաղէմի քակէ՝ յորժամ որովայնն շուայտութեամբ պարպատի, և զեխութեամբ քակէն առաքինութիւնք հոգւոյ։

Ամին հակառակ, եթէ զմիտս պահեցողաց յոլովակի վնասիտէր անհամբերութիւնն 'ի ծոցս անդորրութեան, Պետրոս յետ ասելոյն, «Զերովք հաւատովքն մնասա, կարարեսջիք զառաքինութիւն, և առաքինութեամբն զգիտութիւն, և գիտութեամբն զժուժկալութիւն», ջածեր արդեօք խորհրդով 'ի վերայ զայն, «Լաւ ժուժկալութեամբն զհամբերութիւն»։ Ա ամն զի յառաջատես գտաւ, եթէ ժուժկալք յետնին 'ի համբերութիւն. վասն որոյ ազդ առնէ նոցա չպակասել յայնմանէ։

Լաւ գարձեալ եթէ 'ի խորհուրդս ժուժկալաց կամ պահեցողաց չգտանէր տեղի երբեմն հպարտութիւն, ջասէր արդեօք Պօղոս. «Լաւ որ ոչն ուտէ՝ զայն որ ուտէն մի դատեսցի»։ Որ և վերստին 'ի խօսելն առ այլս, պախարակելով զկանոնս պարծելոցն ընդ առաքինութիւն պահեցողութեան՝ յաւելեալ ասել. «Որ յինամտութիւն ինն հանարէ՝ ինքնակամ կրօնիւք և խոնարհութեամբ և անխայութեամբ մարմնոյ, և ոչ 'ի պատիւ ինչ լու-

թեան մարմնոյ ,, ։ Որ արժան է միտ դնել, զի գերապանծ քարոզ բանին՝ 'ի կարգի խնդրոցն զկերպարան խոնարհութեան կցորդէ ընդ աւետարդ օրինակատիրս . զի յորժամ մարմնին ժուժկալութեամբ մարի աւելի քան զարժանն, արտաքուստ խոնարհութիւն երևի, այլ 'ի ներքուստ մեծապէս հպարտութիւն չիք ընդ այնպիսի խոնարհութեան։ Այլ յիրաւի, եթէ երբեմն չիր քանայր միտքն ընդ առաքինութիւն պահոց, չարկանէր զայն 'ի թիւ համարոյ մեծամեծ լաւութեանց ամբարհաւաք փարիսեցին՝ յասել անդ իւրում։ "Պահեմ երկիցս 'ի շաբաթու ,, ։

Ուստի զորկրամոլս խրատել պէտք են, զի մի 'ի յափրանալն կերակրովք՝ կարեվէր խոցեսցին 'ի բղջախտութենէ . և քաջ դիտեսցեն, եթէ որչափ դարանի ընդդէմ իւրեանց շատակերութեամբ շատախօսութիւն, և որչափ թեթևամտութիւնն . զի մի 'ի լինելն գերի պորտոյ և որովայնի՝ անողորմ խելդ ախտից սպարանեսցէ զնոսա։ Օ 'ի որչափ հեռանայ որ յերկրորդ ծնողէն, այնչափ տարադէպ ձգմամբ ձեռին 'ի կերակուր՝ նորոգի զլորումն նախածնողին։

Օ սորին հակառակն, պարտ է խրատել զպահեցողս, զի հանապազ խնամով դիտեսցեն, զի մի 'ի խորշել անդ յախտէ որկորոյ՝ չար ևս ախտք ծնանիցին 'ի կարծեցեալ առաքինութենէ, և մի 'ի մաշել անդ զմարմին՝ յոգի անհամբերութեան կրթեսցին . քանզի և ոչ առաքինութիւն ինչ լինի յաղթելն մարմնոյ, եթէ հոգին յաղթի 'ի բարկութենէ։ Այրբեմն ևս յորժամ միտք ժուժկալաց զսպէ զանձն 'ի բարկութենէ, եղծանէ զայն օտարոտի իմն ուրախութիւն 'ի վերայ եկեալ . և այնչափ առաւել խանգարի բարին ժուժկալութեան, որչափ չզգուշանայ 'ի հոգևոր ախտից։ Վասն որոյ ձա-հողակի ասացաւ 'ի ձեռն մարգարէին . "Զաւուրս պահոց ձերոց գտանին կամք ձեր կատարեալ ,, . և սուղ ինչ զինի, "Ի հակառակութիւնս և 'ի կռիւս պահէք, և կռիւքդ զանաւադն ,, . զի կամքն 'ի դէպ գայ ուրախութեան, և կռիւանքն բարկութեան։ Այլ արդ վայրապար լինի հաշումն և մաշումն մարմնոյ, եթէ յանկարգ կիրս թողացուցեալ ոգին յախտս վարակի։

Դարձեալ պարտ է յուշ առնել նոցա, զի 'ի միոյ

կողմանէ պահեսցեն միշտ զժուժկալութիւն իւրեանց անմուաղ, և 'ի միւս կողմանէ մի դիցեն 'ի մտի՝ եթէ գերապանծ առաքինութիւն իցէ այդ առաջի սրտագէտ դատաւորին. զի մի 'ի կարծէին մեծ ինչ լինել՝ սիրոն բարձրասցի 'ի փքացումն։ Վանզի և վասն այսորիկ ասացաւ մարգարէին. «Միթէ զայրպիսի պահս ընտրեցի. այլ բրդեա՛ քաղցելոց զհաց քո, և զաղքատս և զանյարկս տար 'ի տուն քո»։

Յորում սակի 'ի միտ առնուլ արժան է՝ եթէ հրչափ դուշնաքեաց ինչ համարեալ է առաքինութիւն պահոց, որ այլոքք և եթէ առաքինութեամբք գովելի ընծայի. վասն որոյ ասէ Յովել. «Արքեցէք պահս». քանզի սուրբ առնել զպահս՝ է կցորդութեամբ այլոց բարեաց արժանի Աստուծոյ երևեցուցանել զնարմնոյ ժուժկալութիւն։ Հանպա 'ի միտ առցեն ժուժկալք, զի յայնժամ աստուածահաճոյ ընծայեն զժուժկալութիւն, յորժամ զոր հատանեն յանձանց՝ բաշխեսցեն կարօտելոց. քանզի խնամով ուշ ունել պարտ է տիրական յանդիմանութեանն 'ի ձեռն մարգարէին. «Դեթէ պահ հիցէք և կոծիցիք 'ի հինգերորդս կամ յեօթնեերորդս ամոց՝ ահա եօթանասուն ամ, միթէ պահս պահեցիք ինձ. և եթէ ուտէք և ըմպէք, ո՞չ ապաքէն դուք ուտէք և ըմպէք»։ Օ՛ի ոչ Աստուծոյ, այլ անձին իւրում պահէ ոք, եթէ զոր ինչ կարէ յորովայնէ իւրմէ՝ չտայ աղքատաց, այլ պահէ առ 'ի տալ անդրէն իւրումն որովայնի։

Զոր զի մի որկորաժէտութիւնն օտարացուսցէ զնոսա 'ի մտաց զգաստութէ, և մի ծնողումն մարմնոյ հրպարտութեամբ դաւեսցէ զսոսա, առաջինքն լուիցեն 'ի բերանոյ ճշմարտութեան. «Օ՛գոյշ լերուք անձանց, զի մի ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ և հոգովք աշխարհականօք»։ Որ և ըզկարևորն երկիւղ արնեթեր դնէ. «Այս յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն այն. զի իբրև որոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն որ բնակեալ են յերեսս երկրի»։ Լուիցեն և ժուժկալքն. «Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ այն պղծէ զմարդ. այլ որ ելանէ 'ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ»։

Լուիցեն որկորաժէտք. «Վերակուր որովայնի, և

որովայն կերակրոյ. այլ Աստուած զսա և զնա խափանեսցէ ,, . և դարձեալ, "Մի անառակութեամբք (կամ շուայտութեամբք) և արբեցութեամբք ,, . և թէ "Կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ (գովելի) ,, . և ժուժկալք լուիցեն. "Մինոյն ինչ սուրբ է սրբոց. իսկ պղծոց և անհաւատից ոչ ինչ է սուրբ ,, : Լուիցեն նոքա. "Որոց աստուած որովայնն է, և փառք անթեղն իւրեանց ,, . և սոքա. "Չակեսցին ոմանք 'ի հաւատոցն ,, . և սակաւ ինչ զկնի. "Որ արգելուցուն յամուսնանալոյ, և մեկնիցեն 'ի կերակրոյ, զոր Աստուած հաստատեաց 'ի վայելել հաւատացելոց. մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին, և ոչ հասեալ իցեն 'ի ճշմարտութեանն վերայ ,, : Լուիցեն որկրամոլք. "Լաւ է ոչ ուտել զմիս, և ոչ ըմպել զգինի, և ոչ որով եղբայրն քո գայթագղի ,, . և պահեցողքն լուիցեն. "Պակաւիկ մի գինի խառնեսջիր վասն ստամքսի և ստէպ հիւանդութեանց ,, . որպէս զի նոքա ուսցին չցանկալ անկարգօրէն կերակրոյ մարմնոյ. և սոքա մի իշխեսցեն դատապարտ առնել զարարածն Աստուծոյ, եթէ չցանկան :

Ի. Լսլով Հանապարհաւ պարտ է խրատել զնոսա որ ողորմածութիւն բաշխեն զինչս իւրեանց, և այլով զնոսա՝ ոչք և զայլոցն Ջանան յապշտակել: Վասնզի յուշ առնել պարտ է ողորմած և առատաձեռն եղելոց, զի մի բարձրամտեսցին և վերագոյն զանձինս գրեսցեն քան զնոսա՝ որոց բաշխեն զերկրաւորս. և մի լաւագոյն այնու կարծիցեն զինքեանս՝ զի տեսանեն զայլս ողբ ինքեամբք կազդուրին. քանզի և տանուտէրն երկրաւոր տան 'ի մտեսել զկարգս ծառայից և պաշտօնէից՝ զոմանս կարգէ 'ի հրամանատարութիւն, և զայլս 'ի հնազանդութիւն. առաջնոցն հրաման տայ մատակարարել այլոց զկարևորս, և վերջնոցն՝ զի առցեն զպէտս յայլոց: Եւ սակայն շատ ևս այն է, զի յանցանէն հրամանատարքն, և կան մնան 'ի շնորհս տանուտեառն հնազանդելքն. ընդ ցասմամբ անկանին մատակարարքն, և անպատուհաս մնան եղեալքն ընդ մատակարարութիւնս այլոց: Վասն որոյ պարտ է խրատել զայնոսիկ, զի ողբ յայլոց ստացեալ ունիցին՝ բաշխեսցեն ողորմածութիւն, զի ծանիցեն զանձինս կարգեալս յերկնաւոր տեառնէ

մնտեսս ժամանակաւոր իրաց 'ի վերայ հպատակաց. և այնչափ առաւել խոնարհութեամբ մատակարարք լինիցին, որչափ իրագէտ են՝ թէ այլոյ էն իրքն զոր մատակարարեն. և ցորչափ խորհին եթէ ինքեանք կարգեալ էն 'ի պաշտել զնոսա՝ որոց են մատակարարք, ոչ փքացուցանէ զնոսա սիրտ իւրեանց հպարտութեամբ, այլ ՀՆՈՂ երկիւղիւ։ Այսն որոց հարկ է ըմբմտութիւն կրռեալ, զի մի զաւանդեալն տարադէպ բաշխեսցին. մի տայցեն ինչ որոց ոչ ինչ պիտի, և տայցեն որոց պէտք իցեն. ոչ շատ տայցեն որոց սակաւ ինչ պիտոյ իցէ, և ոչ սակաւս տայցեն որոց շատ տալ պէտք իցեն. մի անխորհրդաբար յանձգուտս ցրուեսցեն՝ զոր տանն, և ոչ դանդաղանօք ջարջարեսցին զնդրողս. մի սպրդեսցի յայս գործ իդձ հնարս գտանելոյ, և մի զձրագ տրոցն շինիցուսցէ ցանկութիւն անցաւոր գովութեան. մի տրտմութիւն կցորդեսցի 'ի տուրս անդ, և մի մտտի ուրախութիւն. և մի լիցի անձին ինչ ընծայել 'ի ընուլ զամենայն ուղղութեամբ, զի մի զամենայնն կորուսցէ զինի վաստակելոյ։

Այս զի մի ինքեանց գրեսցեն զառաքինութիւն առատաձեռնութեան, յեղյեղեսցեն զգրեալն. «Այթէ ոք մատակարարիցէ, իբրև 'ի զօրութենէ՝ զոր շնորհէ Աստուած»։ Այս զի մի յանչափս խնդամտեսցին ընդ բարեգործութիւնս, յիշեսցեն զգրեալն. «Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք»։ Այս զի մի տրտմութիւնն եղծիցէ զառատաձեռնութիւն, լուիցեն զգրեալն. «Օ տուրս զուարթառատս սիրէ Աստուած»։ Այս զի մի 'ի որոց անտի փառս խնդրեսցին, լուիցեն զգրեալն. «Մի զիտասցէ ձախս քո՝ զինչ գործէ աջ քո»։ այս ինքն 'ի բարեպարիշտ մտտեսութիւն անդր մի գոցէ մուտս փառք յաստի կեանս, այլ գործքն ուղղութեան անծանօթ կացցեն 'ի մարդահաճութենէ։

Այս զի մի խնդրեսցին փոխարէն զշնորհակալս, լուիցեն զգրեալն. «Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի կոչէր զբարեկամս քո, և մի զեղբայս քո, և մի զազգականս քո, և մի զդրացիս քո, և մի զմեծամեծս, զի մի և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ

հատուցումն։ Եւ յոլովամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս. և երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ։»։

Եւ զի մի անազան տայցեն՝ զոր պիտոյ է տալ փու-թով, լուիցեն զգրեալն. «Որ ասիցես, թէ երթ և ե-կեսջիր, և վաղիւ տաց. զի կարող ես իցես (փութա-պէս) բարի առնել»։ Եւ զի մի ընդ պատրուակաւ առատաձեռնութեան վատնեսցեն զինչս յանօգուտս, լուիցեն զասացեալն. «Իբրեւի ողորմութիւն 'ի ձեռին քում։ Եւ զի մի սակաւ տայցեն՝ ուր շատ պիտոյ իցէ, լուիցեն զգրեալն. «Որ ձշգիւ սերմանէ, ձշգելով և հնձեսցէ»։ Եւ զի մի շատ տայցեն՝ ուր սակաւ է պի-տոյ, և յետոյ 'ինքեանք կարօտեալ 'ի կարձմտութիւն անկցին, լուիցեն զգրեալն. «Օ ի ոչ եթէ այլոց հան-գիստ կամիցիմ, և ձեզ նեղութիւն. այլ հաւասարու-թեամբ՝ ձեր առատութիւնդ 'ի նոցա պակասութիւն (նպաստ լինիցի)։ զի և նոցա առատութիւնն եղիցի (սատար)'ի ձերում պակասութեանդ»։ Օ ի յոլովամ տուողն ոչ իցէ կրեալ զկարօտութիւն, եթէ շատ ինչ հանցէ յիւրմէ՝ պատճառ անհամբերութեան որոնէ անձին. քանզի նախ պարտի պատրաստել զոր զանձն 'ի համ բերութիւն, և յայնժամ թող շատ և կամ զոմսրն ևս բաշխեսցէ. զի մի յոլովամ յետոյ կարձամտիցէ, զվարձս առաջնոյ առատաձեռնութեանն կորուսցէ, միանգա-մայն և տրտունջն 'ի վերայ եկեալ՝ մի ջար ևս կորուստ բերցէ անձին։

Օ ի մի բնաւին զրկեսցեն 'ի տրոց զայնոսիկ՝ որոց սակաւ ինչ տալ պարտին, լուիցեն զգրեալն. «Մե-նայնի որ խնդրէ 'ի քէն՝ տուր»։ Եւ զի մի սակաւ ինչ անգամ տայցեն՝ որոց բնաւ չպարտին տալ, լուիցեն զգրեալն. «Տուր լաւին, և մի ընդունիր զմեղանչականն. բարի արա խնդարէին, և մի տար ամբարշտին»։ Եւ դարձեալ, «Օ հայ քո և զգինի դիր 'ի վերայ գերեզ-մանի արդարոյն, և մի ձաշակեր և մի ըմպեր անտի ընդ մեղաւորս»։ Ո՞ւ ասն զի զհայ իւր և զգինի մեղաւորաց տայ նա որ ձեռնտու լինի ապիրատաց յապիրատութեանն։ Որպէս և ոմանք 'ի մեծատանց աշխարհի թո-ղեալ զաղքատս Քրիստոսի յանսուաղութեան, շռայլ

առատութեամբ բուժանէն զնեղկատակս. իսկ նա որ զՀայ իւր տայ և մեղաւորի կարօտելոյ, տայ ոչ զի մեղաւոր է, այլ զի մարդ է. այնպիսին ոչ զմեղաւոր, այլ զարդար աղքատն դարմանել, վասն զի ոչ Հայի՝ի յանցաւորութիւնն, այլ՝ի բնութիւնն։

Պարտ է և և այս յուշ առնել ողորմած և առատաձեռն գտելոց խնամով զգոյշ կալ, զի մի յորժամ ողորմութիւն քաւէն զգործեալ մեղս, անդրէն գործեսցէն նորանոր մեղս. զի մի շահավաճառութիւն համարեսցին զարդարութիւնն Աստուծոյ, եթէ՝ի ջանալն զդրամն տալ փոխանակ մեղաց՝ զիցէն՝ի մտի, եթէ կարող են մեղանչել անպատուհաս. քանզի «Հոգի առաւել է քան զկերակուր, և մարմին քան զՀանդերձ»։ Զանն որոյ որ տայ աղքատաց կերակուր կամ՝ Հանդերձ՝, այլ սակայն պղծի անօրէնութեամբ հոգւոյ կամ մարմնոյ, ըզնուաղն մատուցանել արդարութեան, և զառաւելն մեղաց. քանզի Աստուծոյ տայ զինչս իւր, և սատանայի տայ զանձն իւր։

Զնդ հակառակն պարտ է խրատել զայնոսիկ՝ զոք և զայլոցն հնարին յափշտակել, զի ուշի ուշով միտ դիցէն զինչ ասէ տէր՝ի գալ իւրում՝ի դատաստան. «Զաղցեայ, ասէ, և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցի, և ոչ արբուցիք զիս. օտար էի, և ոչ ժողովեցիք զիս. մերկ էի, և ոչ զգեցուցիք զիս. հիւանդ էի և՝ի բանտի, և ոչ տեսիք զիս»։ Զանն որոյ և կանխէ ասէ առ նոսա. «Գրեցարք յինէն անիծեալք՝ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա»։ Այլ ոչ երբէք ունկն դնեն այսոցիկ զոք յափշտակողք են և հարստահարողք. վասն որոյ բանտարկել լինիցին՝ի յաւիտենական հուր գեհենոյն. և արդ ի մնստասիրել արժան է, զի եթէ ընդ այնպիսի դատաւորաւ անկանին զոք պինդ ունին զնուրեանց ինչս, որպիսեաւ դատապարտութեան նեբրոյ անկցին զոք զայլոցն յափշտակեն։ Օ մտաւ ածցէն այնպիսիք եթէ որչափ պատժապարտ կացուցանիցէ զնինքեանս յափշտակութիւնն՝ եթէ չտան զիւրան այլոց այնչափ պատժոյ պարտական առնէ. ՝ի միտ առցէն եթէ որքա՞ն պատուհասի արժանի իցէ անիրաւութիւնն գործեալ, եթէ այնչափ պատժոյ արժանի դատնիցի չգործեալ մարդասիրութիւն։

Յորժամ խորհին զօտարին յափշտակել, յուշ ածցեն զգրեալն. «Այ որ յաձախեմ անձին իւրում որ ոչ իւր իցէ. և մինչև ցերբ ծանրացուցանեմ զանուր իւր ծանրութեամբ»։ Զգահն ծանրացուցանեմ յիւր վերայ զանուրն ստուար բեռամբ կուսոյ և տղմոյ՝ կուտակելով 'ի վերայ մեղայ իւրոց և զգայոս զօշաքաղութեան երկրաւոր շահից։

Յորժամ ցանկան ընդարձակել զտեղիս բնակութիւնս, յիշեսցեն զգրեալն. «Այ այնոցիկ՝ որ յաբեն տուն 'ի տուն, և ագարակ առ ագարակ մերձեցուսցեն, զի զընկերին հանիցեն. միթէ միայն բնակելոց ի ցեքբ երկրի»։ Որպէս այն թէ մեկին ասիցէ. մինչև ցոր վայր ձգտեցուցանեմ զանձինս, ոչք չկարեմ ունել 'ի հասարակաց աշխարհի զընակակիցս. քանզի թող զայն զի զգրացիս նկուն առնեմ, այլ և միշտ հնարիք գտանել և զայլս զորս կարող իցեմ հարստահարել, և ընդարձակել զսահմանս ձեր։

Յորժամ ագահեն 'ի բազմացուցանել զգրաման, զմբատաւ ածցեն զգրեալն. «Որ սիրէ զարծաթ, ոչ յագեսցի արծաթով, և որ սիրեաց 'ի բազմութեան իւրում զարդիւնս (ոչ առնուցու պտուղս 'ի նոցանէ)»։ Զրանզի յայնժամ առնոյր զարդիւնս պտղոց նոցին, եթէ չափ ելեալ սիրէր զնոսին ըստ արժանւոյն. իսկ որ սիրելով պինդ պահէ՝ անշահ և անպտուղ թողու։

Յորժամ վառեալ բորբոքին ընուլ զանձինս ամենայն ձոխութիւնք միանգամայն, լուիցեն զրեցելումն. «Փութայ մեծանալ այր չարակն, և ոչ գիտէ՝ թէ ողորմանձն յաղթէ նմա»։ կամ՝ որ փութայ մեծանալ, ոչ եղիցի անմեղ։ Զրանզի անշուշտ արծաթասէրն անփոյթ լինի խորշել 'ի մեղայ. և հանգոյն հաւուց թռչնոց ըմբռնեալ յարձակելն զաչս 'ի կեր երկրաւորաց անյագութեամբ, չիմանայ եթէ յորպիսի խեղդ մեղայ անկանիցի։

Յորժամ տենչան ամենայն շահից կենցաղոյս, և անգիտանան զհանդերձեալ տուգանս, միտ դիցեն զրեցելումն. «Զ'ասն փութացեալ յառաջնումն՝ 'ի վախճանի ոչ օրհնեսցի»։ Զ'ասն զի յաստի կենաց սկսանիմք յառաջել՝ զի հասցուք զկնի 'ի մնան ժառանգութեան օրհնութեան. արդ ոչք փութան 'ի սիզբան անդ ժա-

ռանգել, զրկեն յետոյ զանձինս յօրհնութենէ անտի. զի երբ աստէն չարութեամբ ագահութեան կամին մեծանալ՝ անդ յաւիտեան անժառանգին 'ի հայրենի մեծութենէ։

Յորժամ զհետ պնդին յոլով իրաց, կամ ջանան 'ի ձեռս բերել զոր և կարեն, ունկն դիցեն ասացելումն. "Օ՞ ինչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ"։ Իբրու այն թէ յայտնի ասիցէ Ճշմարտութիւնն. զի՞նչ օգուտ լիցէ մարդոյ ժողովել զամենայն որ ինչ արտաքոյ իւր է, եթէ տուժեսցի զբուն զայն միայն՝ որ ինչ ինքն է։

Այլ բազում անգամ վաղագոյնս մարթ է ուղղել զյափշտակութիւն ագահաց, եթէ 'ի բանս անդ խրատու ցուցցի՝ թէ քանի՛ վաղանցուկ լիցէ կենցաղս. եթէ յուշ ածցի նոցա, թէ ոչք միանգամ շատ ջանացան մեծանալ յաշխարհի աստ, չկարացին յերկարել 'ի վայելս մեծութեանց. մահ յանկարծահաս եբարձ զամենայնն միանգամայն, զորս ոչ միանգամայն և ոչ յանկարծ ժողովեաց չարութիւնն. և ահա ոչ միայն աստ թողին զյափշտակեալսն, այլ և ընդ իւրեանս տարան զդատապարտութիւն։ Այդ զսոցայս լուիցեն զօրինակս, զորս և ինքեանք բերանով իւրեանց դատապարտ առնեն, զի յետ վկայութեան բերանոյն դարձցին 'ի սիրտս իւրեանց. զէթ ամօթ համարեսցին նմանող նոցա լինել՝ զորս դատապարտեն։

ԻԱ. Այլազգ պարտ է խրատ տալ այնոցիկ որ ոչ այլոցն ցանկանան, և ոչ զիւրեանցն բաշխեն, և այլազգ այնոցիկ, զոք թէպէտ և տան յորոց ունին, բայց ոչ կասին յետս 'ի յափշտակելոյ և զայլոցն։ Օ՞ առաջինն խրատել պիտի, զի խելամուտ լիցին խնամով թէ աշխարհս ուստի առան՝ հասարակաց է ամենայն որդւոց մարդկան, և ըստ նմին ամենեցուն առ հասարակ բերէ զպէտս կենաց։ Այ՝ ան որոյ վայրապար զանձինս անմեղս վարկանին՝ որք զհասարակաց պարգևս Աստուծոյ սեպհականեն ինքեանց, և 'ի չտալն զառեալս՝ զմահ նիւթեն ընկերաց. վասն զի այնչափ գոգցես անձինս սպանանեն օր ըստ օրէ, որչափ զկարևոր պէտս աղքատաց մեռելոց թաքուցանեն առ իւրեանս. քանզի և յորժամ զկարևորն տամք կարօտելոյ, զնոցայն նոցա հա-

տուցանեմք, և ոչ զմերն առատաձեռնեմք. զարդարութեան առաւել պարտս վճարեմք, քան եթէ զողորմութեան կատարեմք զգործ։ Ամին իրի և ինքն Ճշմարտութիւնն 'ի խօսելն առնել զողորմութիւն օրինօք՝ ասաց. "Զգոյշ լերուք ողորմութեան ձերում, մի՛ առնել առաջի մարդկան"։ Որում ձայնակից լինի և սաղմոսերգուն յասել անդ. "Սփռեաց և ետ աղքատաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեան"։ Զանգի 'ի Ճառելն կանխաւ զառատաձեռնութէ առ աղքատս, ընտրեաց առաւել արդարութիւն անուանել զայն՝ քան ողորմութիւն. վասն զի զտուեալն 'ի հասարակաց տեառնէ՝ իրաւացի է ամենայնիւ զի ո՛ք և առնուցու զայն՝ 'ի կիր արկանիցէ հասարակաբար. վասն որոյ և Սողոմոն ասէ. "Արդարն ողորմի և տայ առանց խնայելոյ"։

Պարտ է յուշ առնել նոցա և եւս՝ զի քաջ 'ի միտ առնուցուն եթէ զանպտուղ թզենւոյն անաչառ բողոքէ տէր այգւոյն, և վասն այն՝ զի զերկիրն խափանէ. քանզի անպտուղ թզենի գտանի խափանիչ երկրի միտք մարդոյ, յորժամ ուշդութեամբ յանօգուտս պահէ առ իւր զայն՝ որ կարէր օգտել յոգունց. կամ յորժամ զայն տեղի զոր կարէր ոք վարել 'ի պէտս 'ի ձեռն աւրևու բարեգործութեան՝ անմիտն ձգելով ստուերս պըղերգութեան իւրոյ խափանէ։

Այսպիսիքն սովոր են ասել երբեմն. զշնորհեալսն մեզ 'ի վար առնումք, զօտարինս ոչ խնդրեմք. և եթէ չառնիցեմք և եւս զարժանին ողորմածութեան՝ մասնաւորելով նոյնպէս յայլս, բայց և ոչ մի անողորմութիւն գործեմք։ Զայս այսպէս դնեն 'ի մտի, վասն զի խցեալ են զլսելիս սրտից իւրեանց ընդդէմ երկնաւոր բանից։ Այլ աչքէն և զմեծատանէ աւետարանին, որ զգենոյր բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս խորտկօք, ոչ ասացաւ եթէ յափշտակէր զայլոցն, այլ զի յանշահս վարէր անպտղութեամբ զինչս իւր. և յետ աստեացս մատնեցաւ 'ի վրէժխնդիր հուր գեհենի, ոչ զի անարժան ինչ գործեաց, այլ զի տարապայման 'ի կիր արկանելով զինչս իւր՝ մատնեաց զանձն յամենայն հաճոյս անձին։

Պարտ է դարձեալ խրատել զկծծի և զձղճիմ ընչեղս 'ի միտ առնուլ՝ զի նախ զայս անիրաւութիւն գոր-

ծեն հակառակ Ի՛ստուծոյ, զի տուողին ինքեանց զամենայն և ոչ մի պատարագ ողորմութեան մատուցանեն. քանզի և վասն այսորիկ իսկ ասէ սաղմոսասու

Բայց այլ ինչ է վասն մեղայ ողորմութիւն առնել, և այլ ինչ վասն ողորմութիւն առնելոյ մեղանչել. որ այնուհետև անմարթ է ողորմութիւն անուանել զայն երբեք. քանզի չօգտէ առ քաղցրութիւն պտղոյ դառնութիւն ժամտ արմատոյ։ Որոյն վասն զզՀս անգամ անարգէ տէր յասելն 'ի ձեռն մարգարէին. "Լաս եմ տէր, որ սիրեմ զարդարութիւն և ատեմ զյափշտակութիւն յանիրաւութենէ՝ յողջակէզս իսկ"։ Որպէս և զարձեալ գրեալ է. "Պատարագք ամբարշտաց գարշելիք, որ մատչին յանօրէնութենէ"։ որ և ստէպ 'ի կարօտելոց կորզէն՝ զոր կամին մատուցանել Աստուծոյ։ Աչինպիսեացն սաստիկ յանդիմանութիւն 'ի վերայ աՃէ տէր՝ ըստ ազգելոյ իմաստնոյն բանիւս. "Որ մատուցանէ պատարագ յընչից ազքատի, այնպէս է՝ որպէս եթէ որ զնետուցս զորդին առաջի աչաց հօր իւրոյ"։ Նա զինչ անբերելի քան զայդ, սպանումն որդւոյ յանդիմանն հօրն աչաց։ Ուստի յայտ է, եթէ որպիսի ցասմամբ հայի տէր յայնպիսի զոհ, որ ածաւ յօրինակ ցաւոց հօրն ընդ զենումն որդւոյն։

Նա սակայն յորմէկի որչափ ինչ տան՝ նոյնչափ և քաղէ. և թէ որչափ ինչ յափշտակէն, զանդաղէն 'ի միտ առնուլ։ Որպէս այն թէ զվարձս վաստակոյ իւրեանց 'ի համար արկանէն, և կշռել զյանցանս խուսափէն։ Թող արդ լուիցէն զոր գրեալն է. "Որ զվարձս իւր ժողովէր, 'ի ծրարս ծակոտեալս ժողովէր"։ Իբրու այն թէ 'ի ծակոտեալ քսակի տեսանի՝ ցորչափ դրամն անդր արկանի. այլ յորժամ կորնչի, չերևի. վասն որոյ ոչք հային թէ որչափ ինչ տան աղքատաց, և ոչ հային թէ որչափ ինչ յափշտակէն, զվարձս իւրեանց 'ի քսակս ծակոտեալս արկանէն. քանզի հայելով 'ի յոյս վստահութեան իւրեանց առնեն զոր առնեն, և ոչ յայն հային՝ եթէ զինչ կորուսանիցեն։

ԻԲ. Այլազգ խրատել պարտ է զերկպառակս, և այլազգս զՀանդարտս։ Քանզի պարտ է յուշ առնել անմիաբան եղելոյ՝ քաջ 'ի միտ առնուլ, եթէ որչափ և առաքինազարդք իցեն՝ չկարեն լինել իւիք հոգւոր անձինք եթէ չանեցին փոյթ միաբան լինել ընդ ընկերս. քանզի գրեալ է. "Պտուղ հոգւոյն է սէր, խնդութիւն, խաղաղութիւն"։ Բայց ուրեմն որ ոչն հո-

գայ պահել զխաղաղութիւն, չկամի տալ զպտուղ հոգւոյն։ Վասն որոյ ասէ Պօղոս. “Ուր և արդ են իսկ 'ի ձեզ հեռ՝և նախանձ, ոչ ապաքէն մարմնաւորք էք”։ Նոյնդարձեալ ասէ. “Զ՝խաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին, և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զտէր”։ Նոյնդարձեալ յորդորմատուցանէ “Զուարթալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօղիս խաղաղութեան. մի մարմին, և մի հոգի. որպէս և կոչեցարուք 'ի մի յոյս կոչման ձերոյ”։ Արդ 'ի մի յոյս կոչմանն ոչ յաջողէ ժամանելն, եթէ ոչ լինիցի 'ի նոյն ընթանալ միաբան ոգւով ընդ ընկերին։

Բայց յոլովակի ոմանք վասն ունելոյ առանձին ձիրս ինչ նովին ամբարհաւաճեալ՝կորուսանեն զմեծ և զնշորհ միաբանութեան. զոր օրինակ եթէ ոք գուցէ աւելի քան զայլս ճանչէ զմարմին՝ սանձելով զորկորն, արհամարհիցէ զայլս զորովք առաւելու պահեցողութեամբ։ Այլ որ զպահս զատանէ 'ի միաձայնութենէ, յիշեսցէ զբան սաղմոսերգուին. “Երկնեցէք զնա թմբկաւ և պարու”. քանզի 'ի թմբուկն ձայնատու լինի չոր մորթն բախեալ, իսկ 'ի պարու ձայնք միաբանութեամբ ձայնակիցս գտանին. և արդ որ ոք զմարմինն ճնշէ, այլ լքանէ զմիաձայնութիւն, գովել գովէ զԱստուած թմբկաւ, այլ ոչ պարու։ Նոյնստէպ և զյորժամ առաւելութիւն գիտութեան հպարտացուցանէ զոմանս, 'ի բաց տրոհէ 'ի միաբանութենէ այլոց. և որպէս թէ որչափ իմաստնագոյն լինին, անմտանան օտարանալով յառաքինութենէ միախոհութեան. և սոքա լուիցեն ինքնասաց բանի ճշմարտութեան. “Կալարուք յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս”։ Զանզի աղ առանց խաղաղութեան չէ պարգև առաքինութեան, այլ նշանակ դատապարտութեան։ Վասն զի որչափ ոք լաւ և զիտէ, և զոյն յանցանէ. և վասն այն անհրաժեշտ պատժոյ արժանի գտանի, վասն զի իմաստութեամբն, եթէ կամէր, կարող էր խորշել 'ի մեղաց։

Զ՝այնպիսիս 'ի դէպ ասէ Յակոբոս. “Զպա եթէ նախանձ և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք 'ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն։ Ոչ է իմաստութիւնս այս իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր, շնչաւոր և դիւական։ Իսկ վերին իմաս-

տութիւնն նախ զի սուրբ է, ապա խաղաղարար,, . սուրբ ասի, քանզի ողջմտութեամբ իմանայ . և խաղաղարար, վասն զի ոչ իւիք որոշէ զանձն հպարտութիւն 'ի միաբանութենէ մերձաւորաց ։

Պէտք են խրատել զանմիաբանս կամ զգժտեալս 'ի միտ առնուլ, թէ ցորչափ տարաձայնին յընկերսիրութենէ, և ոչ մի պատարագ բարի գործոյ զոհեն Աստուծոյ . քանզի գրեալ է . "Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ թէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո 'ի վերայ սեղանոյ, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում՝ և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո,, ։ Ի հրամանէ աստի արժան է խելամուտ լինել՝ եթէ որոց պատարագն մերժիցի, որպիսի յանցանաց տէր Ճանաչիցին ։ Օ՛ի թէ ամենայն չարիք ջնջին՝ բարեօք զկնի եղելովք, 'ի միտ առցուք եթէ քանի՞ մեծ իցէն չարիք երկպառակութեան, որ եթէ կանխաւ չջինջանիցին 'ի սպառ՝ չթողացուցանեն բարի ինչ յետոյ գործել ։

Եւ ևս պարտ է յուշ առնել երկպառակելոց, զի թէ խոտորեցուցանեն զլսելիս յերկնային հրամանաց, բացցեն զաչս մտաց հայել 'ի ստորինս . զի ահա բազումք 'ի համասեռ թռչնոց 'ի թռչել իւրեանց ոչ թողուն ըզմիաբանութիւն իւրեանց, և անասունք երամովին Ճարակին . զի արթուն մտօք դիտեսցուք, եթէ անբան բընութիւնն միաբանութեամբ իւրով ցուցանէ, թէ ո՞րչափ չար առնէ անմիաբանութեամբ բանական բնութիւնն, յորժամ սա յետնի 'ի բանաւոր կարգէ՝ զոր նա պահէ բնաւորական բերմամբ ։

Օ՛ստրին հակառակն խրատել արժան է զհանդարտաբարոյս, զի մի՛ յորժամ առաւել քան զարժանն սիրեսցեն զխաղաղութիւն զոր ունին՝ գուցէ ոչ ըղձանայցեն հասանել 'ի յաւերժականն խաղաղութիւն . վասն զի բազում անգամ ծանրագոյնս փորձէ հանդարտութիւն զտեսութիւն մտաց նոցա . որպէս զի որչափ չկան նեղութիւնք որ պինդ ունիցին զնոսա, այնչափ նուազ սիրելի լիցին որ 'ի լաւ անդր կոչեն, և որչափ զուարճացուցիչ են առաջիկայք՝ այնչափ յետնեսցին 'ի խնդրելոյ զմշտնջենաւորս ։ Վասն որոյ և Ճշմարտութիւն ինքնին խօսելով, կամեցեալ՝ որոշել զերկրաւորս խա-

զաղութիւն՝ի վերնոյն, և յորդոր տալ աշակերտաց բերել յառաջիկայս առ Հանդերձեալն, ասէր. «Օ խաղաղութիւն Թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»։ այսինքն Թողեալ զանցաւորն՝ զմնայունն տամ։ Ուստի եթէ սիրան յարեսցի՝ի Թողեալն, ոչ երբեք հաստատեալ՝ի տալի անդր։ Զայս ուրեմն այնպէս պարտ է ուսնել զառաջիկայս խաղաղութիւն, զի և՝ի սիրել անդ պարտ է արհամարհել. զի մի՝ի տարապայմանն սիրելն սիրտ սիրողին ընբռնեսցի՝ի մեղս։

Վասն իրի պարտ է յուշ առնել խաղաղիկ հանդարտելոյն, մի արդեօք՝ի ցանկալն մարդկային խաղաղութեան յանչափ՝ կասեսցին՝ի սպառ՝ի կշտամբելոյ ըզվատթար վարս մարդկան, և ձայնակից լինելով թիւրելոյն՝ հեռացուցեն զինքեանս՝ի խաղաղութէ հատչին. և մի գուցէ՝ի զանդիտելն յարտաքին թշնամանաց մարդկան՝ գնեալքինն քակեսցին զուխտ խաղաղութէ։ Օ զինչ է անցաւորս խաղաղութիւն, եթէ ոչ հեռք ինն յաւիտենական խաղաղութեան։ Զարդ որ անմոռութիւն կայցէ քան զայս, որպէս սիրել զհետս գծեալս՝ի փոշին, և ոչ սիրել զայն որ գնասին դրոշմեաց։ Վասն որոյ Դաւիթ՝ի սնդել զանձն անլուծանելի ընդ ուխտի նեբբին խաղաղութեան՝ վկայէ չուսնել միաբանութիւն ընդ չարս, ասելով. «Օ ատելիս քո տեր ատեցի, և՝ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ։ Յատելութիւն կատարեալ ատեցի զնոսա, և եղեն ինձ՝ի թշնամիս»։ Զանգի ատել զթշնամիս Յստուծոյ յատելութիւն կատարեալ՝ է զարարածս սիրել, զարարուածս նոցա ատել և յանդիմանել. զվարս վատթարաց կշտամբել, կենաց նոցա օգտել։

Զայս պէտք են ածել զմտաս, զի յորժամ կասիցիմք՝ի յանդիմանելոյ, ՝ի ծանր յանցանս զրի խաղաղութիւն ընդ չարախտավարս. զի և այնպիսի այր մարգարէ զայդ իբրու պատարագ մատոյց Յստուծոյ, զի ընդդէմ անձին իւրոյ զրգռեաց վասն տեառն զթշնամութիւնս չարաց։ Չէ այս իսկ է պատճառն զի և ցերն Պ և եաց սուր՝ի ձեռին անցեալ ընդ մէջ բանակի՝ կոտորելով անիմանց զանազանս, ասացաւ պատարագ մատուցանել Յստուծոյ, կամ սրբել Յստուծոյ զձեռս. և Փինեհէս յոչինչ զրելով զչարչ մեղաւորաց քաղաքա-

կցաց՝ Եհար զշաղախեալսն ընդ Մադիանացիս, և բարկութեամբ իւրով ցածոյց զբարկութիւնն Աստուծոյ։ Սորին վասն և Ճնմարտութիւնն ինքնին ասէր. «Մի համարիք, եթէ եկի խաղաղութիւն արկանել յերկիր. ոչ եկի խաղաղութիւն արկանել, այլ սուր»։ Օ ի յորժամ անխորհրդաբար բարեկամութիւն առնէք ընդ չարս, կապիք 'ի յանցանս։

Վասն այսորիկ Յովսափատ՝ որ այնչափ գովի յաւանդութեանց վարուք իւրովք, վասն բարեկամութեանն ընդ Աքաբայ սատակաղոյնս կշտամբի իբրու կորստական ոք։ Զանազի ասացաւ առ նա 'ի ձեռն մարգարէին. «Դթէ մեղաւորին դու օգնես, և կամ ատելոյն 'ի տեառնէ բարեկամ լինիս. վասն այդորիկ եղև 'ի վերայ քո բարկութիւն 'ի տեառնէ. այլ զի գտան 'ի քեզ բանք բարիք, և զի բարձեր զանտառսն յերկրէս Յուդայ»։ Զանազի 'ի կատարեալ ուղղութենէն Աստուծոյ խոտորին կենաց մեր միաբանելով 'ի բարեկամութիւն թիւրելոցն։ Վասն որոյ պարտ է խրատել զխաղաղասերս, զի մի զանգիտեսցեն խռովել զժամանակեան խաղաղութիւն 'ի յանդիմանել զարժանիս կշտամբութեանն։

Դ։ և ես պէտք են խրատ տալ, զի զնոցն խաղաղութիւն անձերի սիրով պահեսցեն 'ի ներքս՝ զոր արտաքուստ ամբոխեն ձայնիւ սատոյց կշտամբութեան։ Դ։ զերկոսին զայսոսիկ արձնութեամբ պահել ասէ զանձնէ Դաւիթ բանիւս. «Ընդ այնոսիկ ոչք ատեին զողջոյն (խաղաղութեան), ես էի խաղաղարար. յորժամ խօսէի, մարանչէին ընդ իս ('ի տարապարտուց)»։ Եհա և 'ի խօսելն մարանչէին ընդ նմա, այլ սակայն և յայն ժամ էր ինքն խաղաղարար. զի ոչ զգաղարէր 'ի յանդիմանելոյ զստահակս, և ոչ կասէր 'ի սիրելոյ զորս յանդիմանէր։

Վասն որոյ և Պօղոս ասէ. «Դթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալ ջիք ('ի ձեր կողմանէ)»։ Որ տես ինձ, զի յորդորել կամեցեալ զաշակերտս՝ խաղաղութիւն ունել ընդ ամենեսեան, կանխեաց ասել. «Դթէ հնար ինչ իցէ»։ և 'ի վերայ էած, «Ձեզ, կամ 'ի ձեր կողմանէ»։ քանզի դժուարին իսկ էր զի 'ի կշտամբէնն զաղագործս՝ մարթասցին խաղաղութիւն ունել ընդ ամենեսին։ Դ։ Լ

յորժամ 'ի կշտամբելոյ անտի մերմէ պղտորի ժամանակեան խաղաղութիւնն 'ի սիրտս վատթարաց, հարկ է անպղտոր պահել զայն 'ի մերում սրտի։ Այսոքն որոյ բարեաւ ասաց, "Զեզ, կամ 'ի ձեր կողմանէ ,,. որպէս թէ ասիցէ. որովհետև խաղաղութիւնն կախեալ կայ երկուստեք, եթէ յանդիմանեալքն 'ի բաց մերժէն զայն, 'ի միտս յանդիմանչացդ անվթար պահեսցի։ Այս այսորիկ վերատին յուշ առնելով աշակերտելոյն ասէ. "Այս թէ որ ոչ հնազանդեսցի բանիս մերում թղթովդ այդուիկ, զոր նշանակեսջիք զնա, և մի խառնակեսջիք ընդ նմա, զի պատկառեսցէ ,,։ Այս յարէ առին թեր. "Այսց մի երբև զթշնամի համարիջիք, այլ խրատեսջիք երբև զեղբայր ,,. յայտ առնելով այսու՝ եթէ զարտաքին զիսաղաղութիւն լուծէք ընդ նմա, այլ զներքինն սրտի մնոք պահեցէք առ նա. զի զմիտս մերոյ ցելոյն այնպէս խոցեսցէ ձերդ չմիաբանութիւն ընդ նմա, զի մի մեկնեսցի 'ի սրտից ձերոց և խաղաղութիւնն այն զոր ժխտեցիք նոցա։

ԻԳ. Այլով տարազու պարտ է խրատել զնոսովաբարս, և այլով տարսիս զիսաղաղարարս։ Այանզի զսերմանացանս կարգի և կուսոյ զգաստացուցանել պէտք էին, զի ծանիցեն՝ թէ այր աշակերտք իցեն. վասն զի յաղագս ապստամբողական թշնամւոյն որ ցանեաց զորոմն 'ի մէջ բարի ցորենոյ՝ գրեալ է. "Այր թշնամի արար զայն ,,։ Այ վասն գործակցի նորա ասէ Այոհաննն. "Այր անօրէն և անզգամ՝ գնայ զՀանապարհս թիւրս. քանզի նոյն ինքն անարիկ ակամբ, և նշանակ ոտամբ, և ուսուցանէ նշանացի մնատամբ. սիրտ խոտորեալ նիւթէ զաարիս. յամենայն ժամանակի այնպիսին խոտորութիւն առնէ քաղաքի ,,։ Այբ ահա զսերմանացանն կուսոյ նշանակել կամեցեալ կոչեաց զնա անօրէն և անզգամ, իմն ապստամբ. զի թէ չէր յառաջագոյն 'ի ներքուստ ըստ օրինակի ամբարտաւան հրեշտակին անկեալ յերեսաց արարչին՝ խոտորնակութեամբ սրտի և մտաց, ոչ գայր արտաքուստ յետոյ մինչև 'ի սերմանել զկաց և զկուրիս։ Օ որ և քաջ նկարագրէ. "Այնարիկ ակամբ, նշանակ ոտամբ, և նշանացի խօսի մնատամբ ,,։ Այ ասն զի ներքին պահպանութիւնն է, որ 'ի կարգի պահէ և արտաքոյ զանդամն. իսկ որ կորուսանէ զկայս մտաց, հար-

կաւ և արտաքոյ յողդողմն շարժմունք նորա. որովք ցուցանէ՝ թէ արմատն զվիսովն խախտեալ է 'ի նեղբոյ։

Լուիցեն խռովարարք զգրեալն. "Արանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին,,. արդ և զհակառակն 'ի միտ առցեն. զի թէ որդիք Աստուծոյ կոչին խաղաղարարք, անշուշտ որդիք սատանայի են խռովարարք և պղծարիւք։ Այս ամենայն երկպառակելոցն 'ի դալարութենէ սիրոյ՝ ջրայեալ գոսանան. որք թէ և պտուղ ինչ արասցեն 'ի գործս իւրեանց, ապաքէն յոչինչ գրին, վասն զի ոչ յառաջագոյնն 'ի միութենէ սիրոյ։ Այսն որոյ ծանիցեն սերմնացանք կուսոյ եթէ քանիպատիկ մեղանչիցեն. զի 'ի գործել անդ զմի ասէր բատութիւն, խլեն զամենայն առաքինութիւնս 'ի սրտից մարդկան. վասն զի միոմն եւեթ չարութեամբ զանհամար գործեն չարիս, որովհետև 'ի ցանելն զերկպառակութիւն՝ շինեցանեն զսէր, որ մայրն է ամենայն առաքինութեանց։ Այս քանզի չիք ինչ պատուականագոյն յաչս Աստուծոյ քան զառաքինութիւն սիրոյ, չիք և աւելի ցանկալի յաչս սատանայի քան զշինումն սիրոյ։ Այլա ուրեմն որ միանգամ սերմնացանութեամբ եղծանէ զընկերսիրութիւն՝ կարի մեծերմութեամբ ծառայէ սատանայի թշնամւոյն Աստուծոյ. զի զոր ինչ կորուսանելով անկաւ նա, զնոյն սա կապտելով 'ի սրտից խոցելոց՝ կարէ 'ի բաց զՀանասարՀ վերելոյ։

Օ սորին հակառակն պարտ է իրաւ տալ խաղաղարարաց, զի մի անպիտան կացուցեն զմեծութիւն այնպիսի գովելի գործոյ, յորժամ անդիտանայցեն եթէ յորոց միջի արժան իցէ հաստել զխաղաղութիւն։ Արանի զի զոր օրինակ ինքս մեծ հասանէ եթէ պակասեսցի միութիւնն առ լաւս, նոյնպէս զեան մեծ լինի՝ եթէ չգակասիցի նոյնն առ չարս։ Օ ի եթէ չարութիւն անզգամաց զօդեսցի խաղաղութեամբ, անշուշտ հզօրեղապէս ապրեսցէ չարութիւն գործոց նոցա. զի որչափ միաբան գտանին 'ի չարութեան, այնչափ ուժգին բերին 'ի տալ վիրաս լուսոյ։ Այմին իրի ընդդէմ անօթոց չարին, իսն քարոզչաց նեռինն, ասացաւ առ Յոբ ասատուածեղէն բարբառոմն. "Ընդամբ նորա մտածեալք,,. և օրինակաւ թեփոյ ասացաւ զարբանեկաց նորա. "Այն զմիոյ ինի կցեալ, և օդ ոչ անցցէ ընդ նա,,։ Օ ի

որչափ հետևողք նորա չբաժանին իւիք հակառակութեամբ յիրեբաց, այնչափ խուռն կուտակին՝ ի կորուստ ընտրելոց։ Այսպս ուրեմն որ ոք զանազանն միաբանել խաղաղութեամբ, ոյժ տայ անօրէնութեան. քանզի չարաչար ՀՀիլեն զլաւ՝ յորոց վերայ համադունդ յառնեն. վասն որոյ գերասպանք քարող բանին պարարեալ՝ ի հաճանս փարիսեցւոց և սադուկեցւոց՝ հնարեցաւ երկիւղել զնոսա, զորս տեսանէր ամենայնիւ համախոհս, և աղաղակեաց ասելով. "Այլք եղբարք, ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ. վասն յուսոյ և յարութեան մեռելոց դատիմ ես այսօր„։ Այլ քանզի սադուկեցիք յուրատ լինեին զայս և զյարութիւն մեռելոց, որում հաւատային փարիսեցիք ըստ պատգամաց տառիւ սրբոց, անկաւ հերձուած՝ ի մէջ հաճաձայց համախոհ եղելոց, և՝ ի պատառիլ բազմութեան՝ անվնաս պահեցաւ Պօղոս, զոր յառաջ անխնայ նեղէր համախոհութենէ նոցա։

Աղէր խրատել պարտ է զորս փութան՝ ի լինել խաղաղարար, զի՝ ի միտս վատթարաց նախ ջանասցին արկանել զսէր նեբբին խաղաղութեան, որպէս զի յետոյ կարասցէ օգտել նոցա արտաքինն խաղաղութիւն. վասն զի յոյժամ սիրտ նոցա՝ ի Ճանաչումն նորին յառեսցի, ոչ ըմբռնեսցի՝ ի չարութիւն արտաքին խաղաղութենէն. և մինչ՝ ի վերինս ակնարկեն, ոչ իւիք՝ ի սըտորինս բերիցին վատթարուք։ Այլ յոյժամ վատթարքն այնպիսի գոչեն, զի ոչ ևս սանանել կարասցեն առաքինեաց, թէ և կամիցին, յայնժամ պարտ է զերկրաւորն՝ ի նոսա հատանել խաղաղութի՝ յառաջ իսկ քան զաւարական լինել նոցա Ճանաչել զվերինն. որպէս զի զորս չարութիւն ամբարշտութեան նոցա վառէ ընդդէմ սիրոյն Աստուծոյ՝ գէթ՝ ի հեզութիւն զայցեն սիրով ընկերին. և որպէս թէ՝ ի մեծոյ՝ է լաւ անդր անցանիցեն, զի կարասցեն՝ ի խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ բացական է յինքեանց, ՝ի վեր եղանել։

ԻԴ. Աղաղակ պարտ է խրատել զայնոսիկ որ ոչն ուղիղ խնամն զբանս սուրբ օրինաց, և այլաղագ զայնոսիկ՝ զոք թէպէտ և ուղղութեամբ խնամեն, այլ ոչ խոնարհութեամբ խօսին զնոցին։ Զանզի յուշ առնել արժան է, ոչ ուղիղ խնայողաց զբանս օրինաց սրբոյ՝ զի խորհեսցին քաջ, զի զառողջարար ընկալելն զինուոյ՝ ի

բաժակ մահու յեղափոխեն անձանց, և 'ի ձեռն բուժիչ
երկաթոյ մահաւորեալ վերս տան անձանց. զի նովիմբ
խոցոտեն յանձինս զառողջ մասունս, որով պարտ էր
նոցա կորել 'ի բաց զխոցեալ մասունս 'ի պէտս առողջ-
ութեան։ Պարտ է յուշ առնել նոցա, զի խելամուտ
լիցին՝ եթէ սուրբ գիրն 'ի գիշերի կենցաղոյս եղեալ
է առաջի մեր որպէս ճշմարտ։ զորոյ զբանս եթէ ուղ-
ղութեամբ չիմանան՝ 'ի լուսոյ անտի խաւարազգեաց
լինին։ Լոյսիսեացս միտք ոչ ձգեին 'ի թիւր իմա-
ցուածս, եթէ չէր նոցա կանխաւ փքացեալ ամբարտա-
ւանութեամբ. զի ցորչափ զանձինս իմաստունս համա-
րին քան զայլս, անտես առնեն զՀետ երթալ որոյ բա-
ւուք իմանան, և առ 'ի ստանալոյ զանուն իմաստնոյ
յաչս տիմար ամբոխին՝ ջանան ամենայն հնարիւք ընդ
վայր հարկանել զուղիղ իմացուածս այլոց, և զիւրեանցն
պնդել զթիւրս։ Վասն որոյ բարւոք ասացաւ 'ի ձեռն
մարգարէին՝. "Հերձուին զյղիս Պաղատադայոց, զի
ընդարձակեսցեն զարհմանս իւրեանց"։ Պանղի Պա-
ղատ կարկառ վկայութեան թարգմանի։ Այս քանզի
բովանդակ համահաւաքումն եկեղեցւոյ խոստովանու-
թեամբ պաշտէ զվկայութիւն Ճշմարտութեան, ոչ ինչ
տարաղէպ Պաղատադաւ նշանակի եկեղեցի, որ 'ի բերա-
նոյ համբրէն հաւատացելոց վկայէ որ ինչ Ճշմարիտ իցէ
զԱստուծոյ։ Լակ յղի կոչին հոգիք որ զմիտս բանին
յղանան յաստուածային սիրոյ, ոյք 'ի հասանելն 'ի չափ
կատարեալ՝ ծնանին զյղացեալ իմացուածն ցուցակու-
թեամբ գործոյ։ Լակ ընդարձակելն զիւր սահման՝ է
ծաւալել զհամբաւ իւրոյին կարծեաց։ Լուրդ հերձուն
զյղիս Պաղատադայոց առ ընդարձակելոյ զսահմանս իւ-
րեանց հերեսիսվաք, որք թիւր վարդապետութեամբ
սպանանեն զառ 'ի հաւատացելոց յղացեալ զողջամիտ
իմաստս, զի տարածեսցեն զանուն գիտութեան իւրեանց։
Օ սիրտս փոքրկանց զծանրացեալս յղութեամբ բանին
հերձուն սուսերաւ մերկութեան, և որպէս թէ կար-
ծիս վարդապետութեան ստանան անձանց։

Լուրդ 'ի ջանալ մերում հրահանգել զսուտ՝ զի մի
տացեն տեղի խեղաթիւր իմացմանց, պիտոյ է զի նախ

1 Ամով։

խրատեսցուք մի լինել 'ի խնդիր մնոփառութեան. զի եթէ արմատն կտրեսցի ամբարտաւանութեան, չորա-նան ինքնին և ոստք մոլար կարծեաց։ Այլ և սարտ է յուշ առնել նոցա, զի մի 'ի ծնանելն զմոլորութիւնս և զհերձուածս, 'ի զոհ սատանայի դարձուցեն զօրէնս Աստուծոյ զտուեալս 'ի խափանումն դիւական զոհից։ Ա՛ սան որոյ բողոքեր տեր մարգարէիս, ասելով. "Այս եւ՝նս զգոլրեանն և զգինին և զձէթեն, և բազմացու-ցի նմա արծաթ, և նոս յաձախեաց Բահաղու.,։ Բան զի ցորեան առնումք յԱստուծոյ, յորժամ 'ի մթին բանս զրոց զկեղեն հանեալ տաւի՝ զնեբքին հոգւոյ խմանամք հոգւոյ զրոյն։ Զգինի իւր տայ մեզ տեր, յորժամ աղ-բեցուցանէ զմեզ խորին վարդապետութեամբ զրոց իւ-րոց։ Որպէս և զձէթ իւր տայ մեզ, յորժամ բացայայտ հրամանքք իւրովք զկեանս մեր սնօրինէ մեզմով և քաղցրութեամբ։ Իսկ զարծաթ բազմացուցանէ, յոր-ժամ մատակարարէ մեզ զլիակատար պատգամն իւր լուսով Հնմարտութեան։ Այլ ոսկւով զլխովին Ձոխա-ցուցանէ զմեզ, յորժամ Ձնառապայթեն 'ի սիրտ մեր զն-մաստս գերանշոյլ փայլման։ Ա՛յլ զայս ամենայն Բա-հաղու ձծնեն հերեսիովքք, յորժամ խեղաթիւր խմա-ցուածովք ապաւար վարեն 'ի սիրտս ունկնդրաց։ Այլ 'ի ցորենոյն Աստուծոյ, 'ի զինւոյ և 'ի ձիթոյ, որպէս և յարծաթոյ և յոսկւոյ զոհ մատուցանեն սատանայի. վասն զի 'ի մոլորութիւն հերձուածոյ և երկպառակու-թեան շրջին զանս խաղաղութեան։ Ա՛ սան որոյ պարտ է խրատել զնոսա քաջ խորհել, զի յորժամ խեղա-թիւր մտօք զխրատս խաղաղութեան վարեն 'ի խառ-վութիւն, արդար դատաստանաւն Աստուծոյ ինքեանք մեռանին 'ի ձեռն բանից կենաց։

Ա՛յլ ընդ հակառակն պարտ է ընդոստուցանել զայ-նոսիկ, այք թէպէտ և ուղղութեամբ խմանան զբանս օրինաց, այլ ոչ խմանարհութեամբ բարբառին զնոսին. զի 'ի բանս աստուածայինս՝ մինչ չէ խօսեցեալ զայնս առ այլ՝ զանձինս քննեսցին, մի արդեօք 'ի հետա-մաւան լինել գործոյ ընկերաց՝ զինքեանս մոռացեալ լը-քանիցին. և ուր ուղիղ խմանան զմիտս զրոց սրբոց՝ չդնիցին միտ այնմ եւեթ որ 'ի նոսին ասի հակառա-կողաց ամբարտաւանից։ Ա՛ սան զի անսղիտան և անհան

Հար բժիշկ է նա որ զայլս փութայ բժշկել և ինքն անդիտանայ զվէրս զոր յանձին կրէ։ Քրդ որ ոչն խօսին խոնարհութեամբ զանս Աստուծոյ, զայնպիսիս քաջիկ խրատել պիտի, զի ուր դեղ դարմանոյ մատուցանեն հիւանդաց՝ նախ 'ի ժանտ ախտս անձանց ակն դիցեն, զի մի 'ի բուժելն գնասս ինքեանք մեռանիցին։

Պէտք են աղդ առնել նոցա, զի մի 'ի լաւութենէ խօսից օտարանայցեն ձևով բանից, և մի այլ ինչ բերանով և այլ ինչ գործով քարոզեսցեն։ Ա՝ սան որոյ լուիցեն զգրեալն. "Աստ ոք խօսեսցի, իբրև զԱստուծոյ պատգամս"։ Քրդ քանզի զանս զոր խօսին՝ ոչ յանձանց ունին, առ ինչ փքանան իբրու ընդ իւրեանցն։ Լուիցեն և զգրեալն. "Իբրև յԱստուծոյ առաջի Աստուծոյ 'ի Քրիստոս խօսիք"։ Քանզի նա խօսի յԱստուծոյ առաջի Աստուծոյ, որ զանն քարոզութեան ի մանայ որպէս յԱստուծոյ առեալ, և նովին խնդրէ Աստուծոյ լինել հաճոյ, և ոչ մարդկան։ Լուիցեն և զգրեալն. "Պիղծ է առաջի տեառն ամենայն մեծամիտ"։ Քանզի յորժամ 'ի բանն Աստուծոյ զանձին խնդրէ զփառս, յափշտակէ զիրաւունս տուողին, և չերկնչի յետագաս առնել զանձին գովութիւն քան զնորայն, յորմէ էառն զայն՝ որով և գովի։ Լուիցեն զասացեալն 'ի Սողոմոնէ առ քարոզ բանին. "Աչք ջուր 'ի քոց ամանոց (կամ աւազանաց), և 'ի քոց ջրհորոց աղբերաց։ Աղխեսցին քեզ ջուրք քո 'ի քումմէ աղբերէ, և 'ի քո հրապարակս գնասցին ջուրք քո։ Լցեցին քեզ միայնոյ լինել, և մի ոք օտար հաղորդեսցէ քեզ"։ Օ՝ի քարոզ բանին յիւրոց ըմպէ ամանոց, յորժամ 'ի սիրտ իւր դառնալով՝ նախ ինքն լսէ զոր ասէն. և յաղբերաց ջրոց հորոց իւրոց ըմպէ, եթէ ինքն իսկ ոտոգանի ոտոգմամբ բանին զոր բարբառի։ "Աղխեսցին ասէ աղբիւրք քո, և 'ի քո հրապարակս գնասցին ջուրք"։ Ա՝ ան զի ի բաւացի է զի նախ ինքն արբցէ, և ապա այլոց յորդեսցէ քարոզութեամբ. քանզի այս է բղխեցն 'ի դուրս, զեղուլ և այլոց արտաքոյ զբարոզութեան զօրութիւն։ Իսկ 'ի հրապարակս գնացուցանել՝ է տնտեսել զպատգամն Աստուծոյ 'ի խուռն բազմութեան անդ ունկնդրաց ըստ իւրաքանչիւր վիճակի։

Քրդ քանզի յորվակի իրդ մատաւութեան սպրդի

ընդ ծաւալիլ բանին Աստուծոյ 'ի զիտութիւն բազմութեան, նմին իրի յետ ասելոյ զդնացս ջուրց ընդ հրապարակս, 'ի վերայ ած խորհրդով. "Լռիցին քեզ միայնոյ լինել, և մի ոք օտար հաղորդեսցէ քեզ,,։ Օտարս կոչէ զայսս չարութեան, զորոց ասի 'ի ձեռն մարգարէին 'ի բերանոյ անձին փոքձելոյ. "Օտարք յարեան 'ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ,,։ Այսոքանչ ասաց Սողոմոն. "Ջուրք քո խաղացեն ընդ հրապարակս, բայց քո լիցին միայնոյ,,. որպէս այն թէ մեկին ևս ասիցէ. այնպէս պարտ է քեզ պաշտել զբարոյութիւն, զի մի ամբարտաւանութեամբ կցորդ լինիցիս ոգւոց չարաց. զի մի 'ի պաշտամանն աստուածէդէն բանին հաղորդս քեզ ընկալցիս զԹշնամիս քո։ Այս ուրեմն և բաժանեմք զջուրս ընդ փողոցս, և միանգամայն մեք միայն տէր լինիմք նոցին, յորժամ և 'ի դուրս զեղումք յորդութեամբ զբարոյութիւն, և տակաւին չյաժարիմք բնաւ նովքն 'ի սէր փառաց և գովեստից մարդկան։

Դ. Այլազգ պարտ է խրատել զայնոսիկ, ոչք կարող գոլով ըստ արժանւոյն քարոզել զանձն՝ առ կարի խոնարհութեան զանգիտեն, և այլազգ զնոսա՝ որոց խափան լինի քարոզութեան անկատարութիւն իւրեանց կամ՝ հասակն, այլ անխորհուրդ յանդգնութեամբ 'ի նոցն ձեռնարկեն։ Զանազի զորս կարողն էն օգտակարութեամբ քարոզել, այլ տարապայման նուաստախոհութեամբ խուսափին, պէտք են խրատել զի խելամուտ լինիցին՝ եթէ այդու վատութեան խորհրդով որչափ մեծապէս յանցանեն. զի եթէ 'ի կարօտութեան մերձաւորաց ինքեանք թաքուցանէին զքանքարն դրամոյ զոր ունէին, անշուշտ պատճառս թշուառութեան լինէին նոցա, ապա 'ի միտ առցին եթէ որպիսի յանցաւորութեամբ մեղանչեն՝ յորժամ պակաս առնեն յեղբարց մեղուցելոց զբան քարոզութեան, զի զդեղս կենաց թաքուցանեն յուրոց առ 'ի մահ վատնգելոց։ Այսոքանչ ասաց ոմն իմաստուն. "Խմաստութիւն ծածկեալ, և գանձ անյայտացեալ. զինչ շահ յերկոցունցն իսկ,,։ Եթէ ժողովուրդն սովամահ լինէր, և ինքեանք պահէին զցորեան 'ի թաքնութեան, ապաքէն մահապարտ ցուցեալ լինէին. արդ խորհեսցին՝ եթէ որպիսի

պատժոյ ելեն արժանի՝ երբ հոգիք մեռանիցին 'ի սովոյ բանին կենաց, և ինքեանք չմատակարարեսցեն զհաց հոգեհայեաց զոր ընկալեալ էն։ Այսմ իրի բարւոք ասաց Յովսան. "Որ ձշդէ զցորեան, հրապարականէծ լիցի ,,. վասն զի ձշդել և պահել է զցորեան՝ առ իւր թաքուցանել զանս սրբոյ քարոզութեան. այնպիսին անէծս ընկալցի հրապարակաւ 'ի ժողովրդեան. զի պատժեսցի մեղօք ևեթ լռութեան վասն յանցանաց բազմայն, զորս կարող էր յուղղութիւն ածել։

Լեթէ իրագէտք արուեստի վիրահատութե 'ի տեսանելն զվերս հատանելիս հրաժարելին 'ի հատանելոյ, յուլութիւ ևեթ իւրեանց գործելին զմեզս պարտական լինելոյ մահու եղջօրն, ապա տեսցին եթէ ոչքան մեղապարտ գտանին՝ զոր ձանաչելով զվերս հոգւոց անփոյթ լինին բժշկելոյ զայնս հատմամբ բանից. վասն որոյ 'ի դէպ ասացաւ մարգարէին. "Նիզեալ լիցի որ վերայուսցէ զսուր իւր յարենէ նորա ,,. քանզի արգելուլ զսուր յարենէ՝ է կարձել զանս քարոզութեան 'ի մարմնոյ կենաց հարուածոց։ Լա յաղագս այսր սրոյ ասացաւ յօրէնս. "Սուր իմ կերիցէ միս յարենէ վերաւորաց ,,. և արդ որք միանգամ ծածկին յանձինս իւրեանց զանան քարոզութիւ, լուիցեն ընդդէմ իւրեանց զահագին վճռոս տեառն, որպէս զի այս երկիւղ հանցէ 'ի սրտից նոցա զվերհրոտ երկիւղն։ Լուիցեն, զի որ գքանարան չկամեցաւ յարգել մատակարարութեամբ՝ կրթոյս զատակնքով զատապարտութեան։ Լուիցեն, զի Պօղոս այնու համարեցաւ զանձն սուրբ լինել յարենէ այլոց, զի անինայ հարկանէր զախտս նոցա. քանզի ասէ. "Ա կայութիւն գնեմ ձեզ յաւուր յայսմիկ, զի սուրբ եմ յարենէ ամենեցուն. քանզի ոչ խորշեցայ 'ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ ,,։ Լուիցեն ձայնի բարբառոյ հրեշտակին առ Յովհաննէս. "Որ լսէ, ասասցէ թէ եկ ,,. քանզի յորժամ լսէ որ նեբբին ձայնի, անպէտ գոչելով ձգեսցէ և զայլս նովին ազդեցութեամբ. զի մի փակեալ զդուրս գոցէ և կոչեցեալն, եթէ գատարկ մերձենայցէ առ կոչողն։ Լուիցեն, զի ուր Լայի լռեալ կայր 'ի սպասաւորութենէ բանին, լուսաւորեալ վերնական լուսով մեծաձայն զղջմամբ ա պաշաւէ յանձին ասելով. "Ա՜յ է ինձ, ես այր սա-

ռապեալ զիմքդ կամս հիացեալ (լուութեամբ)։։։

Լուիցեն, զի 'ի ձեռն Սողոմոնի խոստումն եղև ՅԱստուծոյ բազմապատկելոյ զգիտութիւն քարոզութեան այնմ՝ որ զոր ունին չպահէ 'ի ծածուկ ախտիւ թմբիրութեան. «Ընձն որ օրհնէ՝ պարարտասցի, և որ արբեցուցանէ՝ ինքն ևս արբեսցի. (կամ ամենայն անձն օրհնեալ պարզամիտ է. և այր բարկացող տգեղ է կերպարանօք)։։։ Ամն զի որ զբ արտաքուստ քարոզելով օրհնէ, ընդունի՝ զպարարտութիւն նեղբին անձնեան. և յորժամ չդադարի արբեցուցանել զոգիս ունկնդրաց գինեաւ պատգամաց, արբեմամբ յանձախելոյ պաշտամանն ինքն ևս արբեալ անձն զանուն։ Լուիցեն և զոր Դաւիթ մատոյց ՅԱստուծոյ 'ի սին պաշտամանն, զի ոչ ծածկեաց զաստուածասարգև ընդոչն քարոզութեան. «ՅՀա, ասէ, շրթունս իմ ոչ արգելից 'ի քէն. տէր դու գիտացեր, զի զարդարութիս քո ոչ ծածկեցի 'ի սրտի իմում. զնշմարտուն քո և զփրկութիւն քո (ասացի)։։։

Լուիցեն զոր փեսայն ցհարսն. «Որ նստիս 'ի պարտէզս, այլք անսան քեզ. լսելի արա ինձ զբարբառ քո։։։ Դանցդ 'ի պարտէզս նստի եկեղեցի, որ պահէ զառաքինութեանց զտունկս մեկեալս առ նեղբին դարաբութիւն։ Լաւ անսալ բարեկամաց ձայնի նորա՝ է ցանկալի լսել ձայնի քարոզութեանն նորա ընտրելոց. և ահա զայն բարբառ լսել անձկայ փեսայն, քանզի առ քարոզութեանն նորա փափաքէ 'ի ձեռն հոգւոց ընտրելոց իւրոց։

Լուիցեն, զի յորժամ ետես Մովսէս զԱստուած բարկացեալ 'ի վերայ ժողովրդեան, և հրաման ետ սուր առնուլ 'ի վրէժխնդրութիւն, ծանոյց զի 'ի տեառնայ կողմն կոյս կացցեն այք պատրաստք իցեն անցապաղ հարկանել զչարիս յանցուցելոցն. ասէ. «Որ որ տեառն է՝ գէ, առ իս մատիցէ. զկնք իւրաքանչիւր զսուր իւր յաղդեր իւրում. անցէք և այսրէն զարձարուք զդրանէ 'ի դուռն բանակի, և կոտորեցէք իւրաքանչիւր զեղբայր և իւրաքանչիւր զընկեր իւր, և իւրաքանչիւր զմերձաւոր իւր։։։ Դանզի զնեղն զսուր յաղդեր՝ է նախատապատիս առնել զիսյեթ քարոզութեան քան զՀեշտալիս մարմնոյ. զի որ փութացի ասել զսուրբ բանս, հարկաւ փոյթ ունել պարտի 'ի նուաճումն անարժան թեղադրութեանց։

Իսկ զրանե 'ի զուն գնալ՝ է աղմկաւ անցանել յախտե յախտ ընդ որ մահ 'ի հոգին մնանե։ Իսկ ընդ մեջ բանակին անցանել՝ է այնչափ անվրէպ արդարութեամբ քաղաքավարիլ յեկեղեցւոջ, զի յանդիմանողն զյանցանս մեղուցելոյն մի խոտորեսցի կամ սակից լինել և ոչ միում ումեք։ Ամն որոյ և ուղիղ 'ի վերայ ածաւ. "Խոտորեսցէ այր իւրաքանչիւր զեղբայր իւր, զընկեր իւր կամ զաբեկամ, և զմերձաւոր իւր,,։ Զրդ նա հարկանե զսոսա, որ 'ի զտանելն զարժանիս պատժոց՝ ոչ խնայե զսուր յանդիմանութենէ և յաղագկցաց իւրոց սիրելեաց։ Զրդ եթէ նա որ վանի նախանձու սիրոյն Աստուծոյ հարկանել զախտս, տեառն համարի, ապա որ խորշի կշտամբել ըստ կարի իւրում զվարս մարմնաւորաց՝ յուրաստ կայ 'ի լինելոյ Աստուծոյ։

Զնդ հակառակն՝ ոչք խափանին 'ի պաշտամանե քարոզութեան 'ի պատճառս անկատարութեան կամ հասակի, և տակաւին ձեռներեց լինին 'ի նոցն յանդուգն յարձակմանէ, պարտ է խրատել զայնպիսիս, զի մի յորժամ յանդգնաբար բերին 'ի բեռն պաշտաման, 'ի բաց կտրեսցեն յանձանց զՀանապարհ առաքիկայ յառաքելութեան 'ի լաւ անդր. կամ յորժամ տարաժամ բուռն հարկանեն յոր չեն բաւական, կորուսանիցեն և զայն զոր յետոյ 'ի դէպ ժամու կարող լինէին 'ի զլուխ տանել. և իրաւամբք կորուսանել թուէսցին զգիտութիւն, զի յանդէպս ջանան զայն ցուցանել։

Պարտ է յուշ առնել այնպիսեաց, զի ձագք թռչնոց եթէ յառաջ քան զզօրանալ թևոցն թռչել ձգտիցին, փոխանակ վերաթևեալց՝ 'ի վայր խարդաւանին։ Պարձեալ յուշ ածցի նոցա, զի թէ 'ի վերայ նոր ակառուցոյ որմոց չև ամրացելոց հեծանք ծանունք ձգեսցին, ոչ լինի բնակարան, այլ է անկումն համակործան։ Պարձեալ 'ի միտ առցեն, զի եթէ յղի կանայք 'ի դուրս տայցեն զչև բարւոք կերպարանեալ զաւակս, ոչ երբեք նուն զտունս, այլ զգերեզմանս։

Ամն իրի ՀՇմարտութիւնն ինքնին թէպէտ և կարող էր զօրացուցանել փութով զորս կամէր, այլ որպէս զի յեանոց օրինակ տայցէ՝ չիշխել թերակատար բերիլ 'ի քարոզութիւն, յետ լիով հրահանգելոյ զա-

շակերտս 'ի մարդս քարոզութիւն անդէն 'ի վերայ էած. "Լա դուք նստարուք 'ի քաղաքիդ Լեմ, մինչև զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց,, : Իբրու զի 'ի քաղաքի Հանդարտեալ նստիմք, եթէ ամիսիսեմք զանձինս 'ի փակարանս մնաց, զի մի խօսելով արտաքոյ թափառիցիմք. որպէս զի յորժամ ամենայնիւ զգենուցումք զաստուածային զօրութիւնն, որպէս թէ յայնժամ 'ի դուրս ելեալ յանձանց՝ մարթասցուք և զայրս կրթել : Ա ան որոց ասաց ոմն իմաստուն. "Ա'ի փութով խօսեցիս երիտասարդ 'ի դատ քո. և եթէ կրկին հարցանիցիս, սկիզբն եղիցի պատասխանւոյ քո,, :

Ա ան այսորիկ և ինքն փրկիչն մեր, որ յերկինս է հասարէ և ուսուցիչ միշտ հրեշտակաց՝ հանդիսիւ զօրութեան իւրոյ, 'ի վերայ երկրի չկամեցաւ վարդապետ լինել մարդկան յառաջ քան զերեսնամեայ ժամանակ. որպէս զի տպացուցէ 'ի մեզ զփրկարար երկիւղ 'ի տաբաժամ բերմանէ, որ տանի 'ի զլորումն. որովհետև ինքն իսկ որում անհնար էր գթել իւրք սայթաքմամբ, զկատարեալ քաղաքավարութեան զնորհ ոչ հանդիսացոյց նախ քան զկատարելութիւն հասակի : Վանզի գրեալ է. "Իբրև եղէն նորա ամք երկոտասան, մնաց մանուկն Յիսուս Յերուսաղէմ,, : Լա յորժամ խընդրեցին զնա, ասէ, ծնողքն, "Գտին զնա 'ի տաճարին, զի նստեր 'ի տաճարի ընդ վարդապետս, լսէր 'ի նոցանէ, և հարցանէր ,, : Զայս պարտ է արթուն խորհրդով քննել զի Յիսուս երկոտասանամեայ նստեալ կայ ընդ վարդապետս՝ ոչ յուսուցանել, այլ 'ի հարցանել : Լա դովին օրինակաւ ցուցեալ է նորա քաջ, զի մի դեռաբոյս և տհաս ոք իշխեսցէ ուսուցիչ լինել. ուրեմն 'ի մանկութեան յայլոց ուսանել կամեցաւ հարցմամբ, որ զօրութեամբ աստուածութեանն զբան գիտութիւն տայր ուսուցչաց իւրոց :

Իսկ յասել Պողոսի առ աշակերտն, "Պատուէր տաջիր զայդ, և ուսուցանիջիր, զի մի ոք գբո մանկութիւնդ արհամարհիցէ ,, , գիտել արժանի մեզ, զի 'ի սուրբ գիրս երբեմն երիտասարդութիւնն մանկութիւն կոչի : Օ որ գիւրին է ցուցանել և սովին բանիւ Աոզամնի. "Ուրախ լեր երիտասարդ 'ի մանկութեան քում,, : Օ'ի թէ չկամէր յայտ առնել, թէ մի և նոյն

է այս և այն, 'ի խրատել անդ զերիտասարդն չտայր նմին զանուն մնանկութեան։

ԻԶ. Բ. Յլաղագ պարտ է խրատել զայնոսիկ որոց յաջողեալ են իրք առժամանակեայք ըստ մտի, և այլաղագ դարձեալ զնոսա՝ որք ցանկան իրաց աշխարհի, այլ կրեն զտառապանս ձախողուածոց։ Անգի պարտ է ազգ առնել խնդրոցաց զյաջողուածս, զի մի գուցէ 'ի յաջողել ամենայնի ըստ հաճոյս՝ անտես արասցեն խնդրել զպարգևատուն, և ոգով չափ յարեսցին 'ի տուրսն. մի արդեօք զպանդխտութիւնն սիրեսցեն իբրև զհայրենիս. մի արդեօք զնանապարհին պէտ չրջեսցեն 'ի խափանումն հասանելոյ. մի արդեօք զուարճացեալք ընդ գիշերային լոյս լուսնի՝ յետնեսցին 'ի տեսանելոյ զպայծառութիւն արեգական։ Ա ամն որոյ պէտք են յուշ առնել նոցա, զի զոր միանգամ գտանեն յաշխարհի աստ, սփոփանս համարեսցին թշուառութեան, և ոչ վարձս հատուցման. այլ հակառակ միսիթարութեանց կենցաղոյս վերամբարձ կացին զմիտս. զի մի 'ի նոսին անկղնտանայցեն սրտի մտօք 'ի սպառ. վասն զի որ զք զյաջողուածս յորս վայելէ՝ ոչ զսպէ 'ի խորհուրդս սրտին սիրով կենաց լաւագունից, զնպատաս անցաւոր կենացս պատճառս մնանջենաւոր մահուան իւրում գործէ։ Ա ամն որոյ որ միանգամ ըստ օրինակի Յդոմայեցւոց մնանեցին զանձինս 'ի պարտութիւն յերեսաց յաջողութեան իւրեանց՝ խնդալով ընդ դէպս աշխարհիս, կշտամբին մարգարէական սաստիւ. "Բարին, ասէ, զերկիրն իմ իւրեանց 'ի վտարանդի՝ ոմն հարութեամբ ուրախութիւն յամենայն սրտէ և յանձնէ։" Ուստի յայտ է եթէ կշտամբանաց արժանի են՝ ոչ միայն զի խնդան, այլ և յամենայն սրտէ և յանձնէ ուրախ լինին. վասն որոյ և Աստուծոյն ասէ. "Փոխանակ զի զրկեին զտղայս՝ կոտորեսցին, և կշտամբութիւն զամենարիշտս սատակեսցէ։"

Յայս սակս և Պօղոս խրատոյ. "Որ խնդանն՝ որպէս թէ չխնդայցեն, և որ ունին որպէս թէ չունիցին, և որ վարեին զաշխարհս՝ որպէս թէ չվայելեցեն։" Բ. յս է, այնպէս վարեսցուք արտաքուստ յաջողուածովքն, զի մի փութով 'ի վերին բարեաց խոտորեցուսցեն զսիրտ մեր, և մի սուգ մեզ առթեսս

ցեն նեբբին վտարանդութեան՝ զբօսանք մեր 'ի վայրս պանդխտութեան. և մի որպէս երջանկացեալք խրն-դասցուք յանցաւորս, որ տեսանեմք զմեզ տակաւին տարագիր 'ի յաւիտենականաց։

Սորին աղագաւ ասէ եկեղեցի 'ի բերանոյ ընտրե-լոյ. "Հեկեալ նորա զգլխով իմով, և աջ նորա պա-տեսցէ զիս"։ Օ ահեկան Աստուծոյ իմմ զաջոցու-թիւնս ստոյ կենացս՝ զոր իբրու զգլխով արկանէ, և զոր նկուն առնէ ակնարկութեամբ 'ի գերագոյնս էր. իսկ աջն Աստուծոյ պատէ զնա։ Ա ան զի բոլորովին պատ-սպարի ամենայն ջերմեռանդն ոգւով ընդ երանու-թեամբ նորա յաւիտենականս, վասն որոյ գարձեալ ասէ Սողոմոն. "Դրկայնաւուրք և ամբ կենաց յաջմէ իւրմէ, և յահեկէ իւրմէ փառք և մեծութիւն"։ Որ ընդ ահեկէ դասելով զփառս և զմեծութիւն՝ յայտ արար եթէ որպէս պարտ իցէ ունել զնոսին։ Որպէս և սաղմոսերգուն ասէ. "Փրկեաց զիս աջ քո"։ Ցասէ ձեռն, այլ աջ, ցուցանել կամեցեալ եթէ զփրկու-թիւն ինդրէ յաւիտենից։ Սորին վասն գրեալ է դար-ձեալ. "Աջ քո տէր խորտակեաց զթշնամիս"։ զի թշնամիք Աստուծոյ թէ և զօրասցին ձախոնին, այլ խորտակին աջոնին. վասն զի ստէպ զվատթարս բարձրա-ցուցանէ առաջիկայս կենաց, այլ գաղուստն երանութեան յաւիտենից՝ դատապարտ առնէ։

Պարտ է խրատ տալ որոց յաջողեալ իցէ յաստի կենաս, քաջ 'ի միտ առնուլ՝ զի յաջողութիւն կենցաղոյս երբեմն յայն սակս պարգևի՝ զի շարժեսցէ զմարդ 'ի լաւագոյն կենաս, և երբեմն զի առաւել դատա-պարտութիւն լիցի յաւիտենից։ Այս ըստ այսմ՝ երկիրն Ռանանու խոստացեալ եղև իսրայէլեան ազգին, զի յոր-դորեսցի 'ի յոյս կենացն յաւիտենից ըստ ժամանա-կին. քանզի տիմարն այն ժողովուրդ Հաւատացեալ առ յապաց խոստմանցն Աստուծոյ՝ եթէ չառնասնէր ինչ 'ի խոստացելոց անտի մերձ ընդ մերձ։ Արդ որպէս զի քաջալերս առնուցուն Հաւատաւոր առ Հաւատս յա-ւիտենից, ձգէն ոչ միայն յուսով առ իրս, այլ և իրօք առ յոյսն. զորմէ և սաղմոսերգուն յայտնապէս վկայէ. "Այս նոցա զգաւառս հեթանոսաց, 'ի վաստակս ժո-ղովրդոց ժառանգեցցոյ զնոսա, զի պահեսցին զվկայ-ութիւնս նորա, և զօրէնս նորա ինդրեսցին"։

Բ.ՅԼ յորժամ չառնէ մարդ Աստուծոյ պարգևաստուղին զարժանաւոր փոխարէն գործովք բարութեան, նովին իսկ բարեմասնութեամբ արդարապէս կրէ զդատապարտութիւն. վասն որոյ դարձեալ ասէ սաղմոսերգն. "Արդարանայցես զնոսա յամբարտաւանութեան իւրեանց,,։ Օ՛ի յորժամ ապիրատք ապաշնորհ գտանին առ պարգևս Աստուծոյ, ոչ փոխարինելով զգործս բարիս, և՛ ի սպառ անձնատուր լինին յերկրաւորս և՛ ի յորդութիւն յաջողուածոց, որչափ արտաքուստ ամբառնան՝ նոյնչափ՝ ի ներքուստ կործան անկանին։ Որոյ վասն ասացաւ առ մեծատունն տանջեալ՝ ի գժոխս. "Ընկալար զբարիս քո՝ ի կեանս քո.,։ Բ.անզի յայն սակս և չարն բարիս ընկալաւ յաստիս՝ զի առաջեալ չարիս անդ ընկալցի. վասն զի աստ ոչ դարձաւ և բարեաք՝ ի լաւ անդր։

Ընդ հակառակն՝ այք ցանկան աշխարհի իրաց, այլ տառապին ձախողակօք, պարտ է զնոսա իրատել զի մնադիւք խորհեսցին զայն եթէ հաստիչն և անօրէնն ամենայնի որպիսի շնորհս մեծամեծս առնիցէ որոց ոչ յաջողէ զիրեն հաճոյից նոցա։ Լաւ ահա հիւանդին, յորմէ անցոյս իցէ բժիշկն, թողացուցանէ առնուալ զամենայն ինչ զոր ցանկայ. բայց յորոյ վերայ կայ յոյս առողջութեան, արգելու բազում ինչ՝ ի ցանկալեացն. և՛ ի ձեռս մանկանց չտամք զդրան, այլ պահեմք տալ նոցա զժառանգութիւն լիուլի։ Լաւ զի այս այսպէս, պինդ ունիցին զյոյս յաւիտենից ժառանգութեան նոքա՝ զորս ձախողութիւն ժամանակեան կենացս խոնարհ առնէ. զի թէ չհամարիր զնոսա Աստուած արժանս փրկութեան յաւիտենից, չանձէր զնոսա կրթանօք խրատուց յաստիս։

Լաւ ևս յուշ առնել պէտք են այսպիսեացս, զի թէ յորվակի և զարդարս ամբառնայ առժամանակեայ ձոխութիւնն, իբրև՝ ի թակարդի փակի յանցաւորութիւնն։ Օ՛ի որպէս ասացաք յառաջնում մասին զործոյս, Դատիթ լաւ ևս սիրելի Աստուծոյ գտաւ՝ ի ծառայութեան իւրում, քան յորժամ՝ Եհաս՝ ի թագաւորութիւն. քանզի մինչդեռ ծառայ էր, առ սիրոյ արդարութեան երկեաւ հարկանել զընդհեռամբ անկեալ թշնամին. այլ թագաւոր եղեալ՝ առ հրաստ-

բանաց ցանկասիրութեան նենգաւ եւ սպանանել զիւր մտերիմ ծառայն։ Եւ արդ՝ ո՞ւր անվտանգ՝ ի խնդիր լեցի մեծութեան և իշխանութեան և փառաց, եթէ և նոքա եղեն՝ ի զեան՝ որ առանց խնդրելոյ ստացաւ զնոսին։ Ո՞ւր՝ ի մէնջ դիւրաւ փրկեցի նոքաւ՝ եթէ նա ըմբռնեցաւ՝ ի յանցանս նոքիսիք, որ ըստ Աստուծոյ ընտրութեանն կարգեալ էր յայնպիսի աստիճան։

Յուշ լիցի և այն, զի Սողոմոն որ յետ այնչափ իմաստութեան՝ ի կռապաշտութիւն անգամ՝ գլորեցաւ, յառաջ քան զգլորումն չկրեաց ձախողակս ինչ յաշխարհի. իսկ յետ ձոխանալոյ խնամութեամբ՝ ի սպառ անմտացաւ՝ թողեալ լքեալ՝ ի ձեռս հաճոյից զսիրտ իւր անկիրթ բնաւին և անփորձ՝ ի նեղութեանց ուստեք։

Եւ. Լալով օրինակաւ պէտք են խրատել զկապեալն օրինաւք ամուսնութեան, և այլով զազատս՝ ի կապոյ անտի լծակցութեան։ Զանազն յուշ առնել արժան է ամուսնաւորաց, զի որպէս պարտք նոցա է հոգալ զծակիցս իւրեանց, այնպէս ջանացին հաճոյ լինել միմեանց, զի մի անհաճոյասցին արարչին. այնպէս արասցեն զաշխարհի իրս, զի մի զանց արասցեն խնդրել և զՍտուծոյն. այնպէս խնդայցեն ընդ առաջնիկայ բարիս, զի միանգամայն երկիցեն ուշիմ մտաւ՝ ի չարեացն յաւիտենից. այնպէս սգայցեն զառժամանակեայ չարիս, զի միանգամայն անթերի միութեամբ բեւեռեսցեն զայս ակնկալութեան իւրեանց՝ ի մշտնջենաւոր բարիս։ Օ՛ի՝ զիտելն՝ եթէ անցաւոր են եղեալքն՝ ի ձեռին, և մնայուն որոց տեսանն, ոչ չարիք կենցաղոյս բեկանիցեն զսիրտ իւրեանց, զոր զոբացուցանէ յոյսն երկնաւոր բարութեանց, և ոչ բարիք առաջնիկայ կենցաղոյս պատրեսցեն զմնքեանս, ուր խիթալն չարիք հանդերձեալ դատաստանին վարանեսցեն զնոսա տրտմութեամբ։

Ասասի սիրտ քրիստոնեայ լծակցաց՝ տկար միանգամայն և հաստատուն, թէպէտ և չկարէ անտես առնել՝ ի սպառ զառժամանակեայս, այլ կարող է զոգիս փափաքանաւք ընդ յաւիտենականս. և թէպէտ ու ժամն ծառայէ հաճոյից մարմնոյ, այլ զօրասցի կազդուրմամբ վերնական յուսոյն։ Եւ եթէ ունիցի ևս զաշ-

խարհիս իրս 'ի պէտս Ճանապարհի , ակն կալցի և աս-
տուածայնոցն արդասեօք հասանելոյ 'ի կէտն վերին .
և մի տացէ զինքն բոլորովին յայն զոր վարէ , զի մի 'ի
սպառ անկանիցի յայնմանէ յոր պարտի սերտիւ յու-
սալ ։ Օրդ գեղեցիկ և սուղ բանիւ պարզէ Պօղոս
յասել անդ . " Որ ունիցին կանայս , որպէս թէ չու-
նիցին . և ոյք լանն՝ որպէս թէ չլայցին . և որ խնդանն՝
որպէս թէ ոչ խնդասցին ,, ։

Ա՛յդ նա ունի կին որպէս թէ չունիցի , որ այնպէս
վարի նովաւ 'ի մարմնաւոր սիրոփութիւն՝ զի միանգա-
մայն ոչ երբէք առ սիրոյ նորա խոտորի յուղղութենէ
խորհրդոց լաւագունից 'ի գործս վատթարութեան ։ Այ-
կամ նա , որոյ հայելով յամենայն իրս իբրև յանցա-
ւորս , զկարիս մարմնոյ 'ի հարկէ տանի որպէս զբեռն .
այլ երկնային խնդութեանց հոգւոյ տենչմամբ սրտին
սպասեալ մնայ . իսկ լանն որպէս թէ չլայցէ՝ է այն-
պէս ողբալ զարտաքին արկածս , զի միանգամայն գի-
տասցէ և խնդալ մխիթարութեամբ յաւիտենից յու-
սոյն ։ Կամ այնպէս 'ի ստորայնոց 'ի վեր ամբառնալ
զսիրտ , զի միանգամայն մի պակասեսցի յահէ վեր-
նոցն . վասն որոյ Ճահոլակի 'ի վերայ ածէ առաքեալն .
" Օ՛լ անցեալ է վայելչութիւն (կամ կերպարան)
աշխարհիս այսորիկ ,, ։ Որպէս թէ պարզագոյն ասէր .
Ա՛՝ի սիրէք 'ի սերտ սրտէ զաշխարհ , զի և այն զոր սի-
րէք՝ չկարէ սերտ լինել և կալ հաստատուն . վայրա-
պար բևեռէք զսիրտ ձեր իբրև 'ի մնայուն , յորժամ
խուսափելոյ վասն է այն զոր սիրէքդ ։

Պարտ է և ևս խրատել զլծակիցս , զի զոր ինչ դրժ-
կամակք գիպեսցին երբեմն 'ի մէջ իւրեանց , երկայն-
մտութեամբ տարցին երկոքեան , և յորդոր բանիւ
ապրեցուսցեն զմիմեանս . քանզի գրեալ է . " Օ՛մի-
մեանց բեռն բարձէք , և այնպէս կատարեցէք զօ-
րէնսն Ա՛Քրիստոսի ,, ։ Ա՛սան զի օրէնքն Ա՛Քրիստոսի
սէրն է . որպէս և ինքն առատաձեռնեաց մեզ զիւր
բարիս , և մնադիւր սիրով ըստանձնեալ եբարձ զմեր
չարիս ։ Ուրեմն և մեք յայնժամ նմանող լինելով
Ա՛Քրիստոսի՝ կատարեմք զօրէնս նորա , յորժամ զմեր
բարիս մարդասիրապէս մատուցուցեմք այլոց , և յո-
ռուձեանց մերայնոցն հանդուրժեմք զթասիրաբար ։

Պէտք էն և զայն յուշ առնել, զի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ոչ այնչափ զոր ինչ կրէ յամենակցէն՝ յայն հայեսցի, այլ ՝ի՛ զչափ ինչ նա կրեսցէ յիւրմէ։ զի եթէ խորհեսցի ոք, զոր այլք յիւրմէ կրեն, թեթև համար ի զոր ինքն յայլոց կրէ։

Դարձեալ պարտ է ազգ առնել լծակցաց, զի զմտաս ածցեն եթէ ինքեանք ամուսնաւորեալ են 'ի պէտս որդեծնութեան. և արդ եթէ անկարգ խառնակութեան զհետ լինիցին, զանխնայն սերմնդեան յեղափոխելով 'ի պէտս հեշտասիրութեան, քաջ 'ի միտ առցեն, զի թէ և չեմանիցեն պատաքոյ, այլ 'ի լծակցութենէ անդ զանցանեն զիրաւամբք լծակցութեան, վասն որոյ հարկ է նոցա ստէպ զդէմամբ և աղերսիւք ջնջել զայն, զի զպատուական օրէնս զուգակցութեան ապաքանեն խառն հեշտախտութեամբ։ Որոմն վասն Ճարտար բժիշկն հոգւոց առաքեալն՝ ողջոց և հիւանդաց միանգամայն դարման դեղոյ մատոյց՝ ասելով. «Բ.յլ վասն որոյ զրեցիքն առ իս, բարւոք է մարդոյ 'ի կին մարդ չմերձենալ. բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի, և իւրաքանչիւր ոք կին զիւր այր կալցի...։ Ուր 'ի նշանակէն կանխաւ զվատագ պոռնկութեան՝ յայտ է թէ ոչ եթէ յոտին կացելոց պատուէր 'ի վերայ եդ, այլ զի մի արդեօք յերկիր անկանիցին, զայթ 'ի զայթի եղելոց զանկողմնն եցոյց։ Ուստի և տկարաց վասն յաւել ասել առնին. «Կնոջ այր իւր զպարտսն հատուսցէ, նայնպէս և կին առն իւրում...։

Լաւ զի 'ի մեծի համեստութեան անդ լծակցութենէ ներքոյ ինչ նոցա 'ի հեշտութենէ, 'ի վերայ էած. «Օ այս ասեմ՝ ներելով, և ոչ հրաման տալով...։ Բ.ան զի զոր ինչ ներեմքն՝ յանցուած իմն 'ի նման նշանարեմք. որ այնչափ երթայ և թուլանայ և ընդարձակի, որչափ ոչ չափաւորեսցի և այս. ոչ եթէ անարժան գործն, այլ որ օրինաւորն իցէ։ Օ որ քաջ յայտ արար զանձնէն Պ ալտ, որ փախեաւ 'ի հրոյն Սոդոմայ, այլ ընդ գտանելն զՍեգովր՝ ոչ փութացաւ զերծանել 'ի լեռան։ Բ.անզի փախչել 'ի Սոդոմայ հրդեհելոյ՝ է խոյս տալ յանարժան հրոյ մարմնոյն. իսկ բարձրութիւն լերանց է մաքրարարութիւն ժուժկալաց։ Կամ թէ իբրու 'ի

լերին են, այլ թէպէտ և 'ի լծակցութեան մարմնոյ կան, բայց արտաքոյ օրինաց որդեծնութեան չլուծանին 'ի հեշտութիւն երբէք. քանզի 'ի լերին կալ է փնտրել զսերունդ մարմնոյ, այս ինքն է չյարիլ 'ի մարմին մարմնաւորապէս։

Զ.ԱԼ քանզի յոլովք են այլ թէպէտ և հեքքեն ըզմեղս մարմնոյ, այլ սակայն յամենատարութեան իւրեանց չպահեն զերաւունս և եթէ պիտոյից պարտեաց, ուստի և Պ ողոմ թէպէտ և 'ի Սողոմայ էլ, այլ ոչ եհաս փութով 'ի լեառն. քանզի թէպէտ և թողու զը զդատապարտելի վարս, այլ տակաւին չպահէ ճշդիւ զբարձրութիւն ամենասկան ժուժկալութեան։ Զ.ըդ քաղաքաւ 'ի միջավայրի է Սեգովր՝ 'ի պահել զփախուցեալ տկարն. իսկ յորժամ անժուժկալութեամբ վառին առ միմեանս լծակիցք, խոյս տան 'ի զլեռնանել չարութեանց, և սակայն ներողութեամբ ինն ապրին։ Սոդոմ այն թէ փոքրիկ քաղաք ինչ գտանին՝ յորում զերծանին 'ի հրոյ. քանզի ամենասկան կենաց թէպէտ և չէ զարմանալի յառաքինութիւն, այլ անբոյնթէ 'ի պատուհասէ։ Զ ան որոյ ասէր Պ ողոմ առ հրեշտակն. "Զ'հա քաղաքս այս մերձ է՝ անկանել 'ի նա, որ է փոքրիկ. անդ ապրեցայց. և չէ փոքր. և կեցցէ անձն իմ վասն քո (կամ 'ի նմին)"։ Զ.ըդ մերձ լինել ասէ, և սակայն է անբոյնթ ապրել. քանզի վիճակ ամենատութեան թէպէտ և չէ շատ հեռի յաշխարհէ, բայց և չէ օտար յուրախութենէ փրկութենն։ Զ.Ա յայնժամ լծակիցք պահեն զկեանս իւրեանց յայսմ վիճակի իբրև 'ի փոքրիկ քաղաքի, յորժամ անդադար աղօթիւք բարեխօս լինին 'ի վերայ միմեանց։ Զ.ինն իրի բարւոք ասաց հրեշտակն առ Պ ողոմ. "Զ'հաւասիկ արարի մեծարանս երեսաց քոց՝ (իսկ լսելով աղաչանացդ) և 'ի բանիդ յայդմիկ, չիրծանել զքաղաքն, վասն որոյ խօսեցար"։ Օ.լ յորժամ լինիցին անպակաս աղօթք առ Զ'ստուած պաղատանօք, ոչ երբէք դատապարտին կենանքն այնպիսի լծակցութեան։ Զ.ս վասն այսր աղօթակացութեան ազդ առնէ և Պ օ.ղոս՝ ասելով. "Զ'ի զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ 'ի միաբանութենէ առ ժամանակ մի, զի ուխտիցն (կամ աղօթից) պարապիցէք"։

Օ սորին հակառակին պարտ է խրատել զաղատս 'ի կապոյ լծակցութենէ, զի այնչափ լաւագոյն պարտեսցեն զկանոնս երկնաւորս, որչափ չմոնարհէ իւիք զնոսա 'ի հոգս աշխարհի լուծն մարմնաւոր զուգաւորութեան, և ոչ Ն'նշէ զնոսա իւիք ումեկտ բեռն երկրաւոր տատանութեան. այլ այնչափ պատրաստագոյնս գտցէ զնոսա օրն վերջին, որչափ և թեթեւընթացս. զի մի որչափ կարելին լաւագոյն կեանս վարել ընդ պղերգանալն անհոգութեամբ՝ այնչափ չար ևս պատուհասի արժանի գտցին։ Լուրիցեն, զի յորժամ առաքեալն կրթէր զոմանս 'ի հնորհս ամուրի կենաց, ոչ եթէ զլծակցութիւնն ընդ վայր եհար, այլ զհոգս աշխարհիս 'ի լծակցութենէ ծագեալս խոտեաց, յասել անդ. "Լայլ զայս վասն ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ, այլ վասն պարկեշտութեան և հպատակութեան տեսան առանց զբաղանաց"։

Վասն զի 'ի լծակցութեան երկրաւոր զբաղանքն յաճախեն, և վասն այնորիկ վարդապետն հեթանոսաց զաշակերտս իւր 'ի լաւագոյնս անդր յորդորեաց, զի մի կապեսցին 'ի զբաղանս աշխարհի. վասն որոյ եթէ զամուրի ոք խափանեն խոչընդոտք աշխարհական հոգոց, թէպէտ և չիցէ ընդ լծոյ ամուսնութեան՝ տակաւին չէ ազատ 'ի բեռանց նորա։

Լաւ ևս ընդոստուցանել պիտի զամուրիս, զի մի համարեսցին զանձինս անդստանպարտ մնալ 'ի խառնակիին ընդ ազատ կանայս։ Օ 'ի յորժամ Պօղոս զսիտ պոռնիկ կութեան թուեաց ընդ այլ ծանր ոՀիրս արանց, եցոյց զչափ ապիրատութեան նորին, ասելով. "Լոչ պոռնիկք, ոչ կռապարիշտք, ոչ շունք, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք, և ոչ յափշտակողք՝ զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն"։ Լաւ թէ "Օ շունս և զպոռնիկս դատի Աստուած"։

Վասն որոյ պէտք են ազդ առնել նոցա, զի թէ տանջին մինչեւ փորձութեանց վտանգաւ փրկութեան, 'ի նաւահանգիստ զիմեսցեն ամուսնութեան. քանզի գրեալ է. "Լաւ է ամուսնանալ քան զՁեռնուլ"։ Օ 'ի առանց յանցանաց գան նոքա յամուսնութիւն, միայն թէ չիցէ նոցա ուխտեալ զաւագոյն վարս։ Օ 'ի որ

միանգամ առաջադրեաց 'ի մեծ ևս բարի տալ զանձն իւր՝ հաստատել զի նուազ բարին որ ըստ ինքեան օրէն էր՝ ոչ ևս օրէն լիցի ինքեան. վասն զի գրեալ է. «Ոչ որ արկանէ ձեռն զմնձով, և հայիցի յետս, եթէ յաջող գեալ իցէ արքայութեան երկնից»։ Վասն որոյ նա որոյ բուռն հարեալ իցէ զառաքինի փութոյ, յետս իմն հայի, եթէ թողեալ լքեալ զառաւել բարիս՝ 'ի նուազ անգր դառնայ խոտորնակի։

ԻԸ. Լայազգ պարտ է խրատ զգուշութեան տալ զիտակ եղելոցն մեզայ մնրմնոյ, և այլազգագոյնս անզիտացն։ Վասնզի զորս փորձ են մեզայ մնրմնոյ՝ պարտ է ընդոստուցանել, զի գեթ զկիսի նաւաբեկութեան երկիցեն 'ի ծովէ, և զգուշացին 'ի վտանգէ կորստեան անձանց գտնեա յետ խելամուտ լինելոյ սարսափմամբ այսմ, զի մի որք մարդասիրութեամբն Աստուծոյ պատեցան յետ անցից չարեաց, ընդոյնս չարութեամբ երկրորդելով մեռանիցին։ Վասն որոյ մեզուցելոց անձին և ոչ երբեք դադարելոց 'ի մեղանչելոյ՝ ասացաւ. «Լրեսք կնոջ պոռնկի եղեն քո, և անառնթեցար առ ամենեսին»։

Վասն որոյ պէտք են խրատել զնոսա, զի ուր զընկալեալ բարիս ընուութեամբ չկամեցան ողջ և ամբողջ պահել, ջանայցեն գտնեա զպատառեալն կարկատել։ Վասնզի հարկ է այնպիսեաց զմնաւ ածել, զի յայնչափ բազմութեան հաւատացելոց կան բազումք իսկ, զոր և զանձինս անվնաս պահեն, և զայլս ևս 'ի մոլորութենէ դարձուցանեն։ Քաղ զինչ ինչ պատասխանի տայցեն դոքա, զի ուր այլք անարատք կան մնան՝ ինքեանք և ոչ յետ վնասու զպատանան։ Զինչ ինչ ասիցեն, զի ուր այլք բազումք և զայլս ընդ իւրեանց յաղբայութիւն տանին, ինքեանք և ոչ զանձինս ածեն առ Աստուած որ սպասեալ մնայ նոցա։ Քաղ պարտ է ազգ առնել նոցա, զի զանցեալ չարիսն խոկայցեն, և յապապայցն խորհեսցին։

Վասն որոյ 'ի գէմս Հրեաստանեայց տէրն 'ի ձեռն մնրգարէին յիշեցուցանէ ապականելոց մնաց յաստիս զչարիս նոցա, որպէս զի ամենի համարեսցին և առ յապաց պղծիլ, ասելով. «Պոռնկեցան յԱրգիպտոս 'ի մանկութեան իւրեանց, անդ անկան ստինք իւրեանց.

անդ արկան 'ի կուսութենէ իւրեանց ,, ։ Իբրու զի յԱ-
դիսոս անկանին ստինք , յորժամ անառակ ցանկու-
թեամբ աչխարհիս մարդկային միտք խանդարեսցէն
զկամս . և անդ անկանին 'ի կուսութենէ , մինչդեռ ան-
արատք իցէն միտք և զգայարանք , զրգռեալք 'ի ցան-
կութեանց՝ ելծանին ապականութեամբ ։

Այս ևս պարտ է խրատել զանցեալս ընդ փոքր մե-
ղաց մարմնոյ՝ արթուն մտօք խելամուտ լինել եթէ մեզ
դարձելոցս յետ մեղաց առ Աստուած՝ որպիսի զթով
բանայ զգիրկս ողորմութեան իւրոյ , յասել անդ 'ի ձեռն
մարգարէին . “Եթէ արձակեսցէ այր զկին իւր , և
գնասցէ 'ի նմանէ , և լինիցի առն այլում , եթէ դառ-
նալով դարձցի անդրէն 'ի նոյն , ո՞չ ապաքէն պղծելով
պղծիցի կինն այն . և դու պոռնկեցար ընդ հոմանիս բա-
զում . այլ դարձ առ իս , ասէ տէր ,, ։ Որ ահա 'ի պոռն-
կեալ և 'ի թողեալ կնոջէ տարացոյց առաջի եղեալ ար-
դարութեան . բայց մեզ 'ի դառնալ մերում յետ զլաբ-
մանն՝ ոչ եթէ արդարութիւն այլ բարեգթութիւն ցու-
ցանել Աստուած ։ Ուստի քաջ խմաստասիրել արժան է ,
զի եթէ յանցուցելոցս այսչափ մարդասիրութեամբ
խնայէ տէր , ուրեմն եթէ չդառնայցեմք յետ յանցանե-
լոյ մերոյ՝ որպիսի անզգամութեամբ մեղանչեմք , և
կամ որպէս նեռելոյ արժանի գտանիցիմք ապիրատքս
առ 'ի նմանէ՝ որ անդադար կոչէ զմեզ զկնի յանցաւ-
բութեան ։ Վասայայտ իսկ երևի 'ի բանից մարգարէին
այս ողորմութիւն կոչման յետ մեղաց՝ յասելն առ ան-
լուր ականջս . “Աչք քո տեսցեն 'ի խրատատուն քո ,
և ականջք քո լուիցեն զբանս ազդարարողին քո 'ի թիկ-
կանց ,, ։

Վասնզի Աստուած զաղգ մարդկան դեմ յանդիման
խրատեաց՝ յորժամ մարդոյն հաստելոյ 'ի զրախտին
հանդերձ անձնիշխան կամօք յայտ արար եթէ զինչ
ինչ պարտիցի առնել կամ չառնել . այլ մարդն թիկ-
նադարձոյց զտաւ յերեսաց Աստուծոյ յորժամ հպար-
տութեամբ առ ոսն եհար զպատուէրս նորա ։ Բայց
Աստուած ոչ եթող 'ի ձեռաց զամբարշտաձն , այլ
կամելով յինքն կոչել զնա անդրէն՝ օրէնս եհատ , հրեշ-
տակ առաքեաց խրատուս , և ինքն իսկ երևեցաւ 'ի
մարմնի մահկանացու բնութեան մերոյ . ուստի 'ի թիկ-

կանց անտի կալով յորդորիչ մեր ցուցաւ՝ և յետ կրեալց զարհամարհութիւն հրաւիրելով զմեզ 'ի վերստին ընդունելութիւն հնարհաց։

Զոգ զասացեալս վասն հասարակաց՝ հարկ է խնամել և 'ի վերայ իւրաքանչիւր մարդոյ առանձինն։ Զ ասն զի իբրու յանդիման երեսացն Աստուծոյ կալով, ընդունի իւրաքանչիւր զոր զանս ազգմանն նորա, յորժամ յառաջ քան զմեզանչելն իմանայ զՀրամանս կանց նորա. քանզի տակաւին առաջի երեսաց Աստուծոյ կալ ասի մինչև է ուրուք անարգեալ զնա մեղաք։ Իսկ յորժամ թողեալ զարին անմեղութեան կամաւ յարի յանօրէնութիւն, սովիսք թիկունս դարձուցանէ յերեսս կոյս Աստուծոյ։ Զ ամենայն վերայ նա 'ի թիկանց մարդոյ կալով անդադար խրատէ, յորդորելով զնա յետ յանցանաց առ ինքն դառնալ։ Զոչէ զթիկնադարձոյցն, ոչ հայի յայնս զոր գործեաց ապիրատն, այլ բացեալ տարածանէ զգիրկս զթութեան իւրոյ։ Զոգ լսող լինիսք մեք ձայնողին 'ի թիկանց, եթէ գէթ զկնի մեզաց դառնամք առ ազգաւարող տէրն մեր։ Զ ասն որոյ պարտիսք պատկառ կալ մարդասիրութեան կոչողին, եթէ չկամիսք սարսափել յարդարութենէ անտի նորա. վասն զի այնչափ ծանրագոյնս արհամարհեմք զտէր անզգամութեամբ, որչափ նա յետ արհամարհութիւն իսկ կրելոյ՝ ոչ անարժան համարի կոչել զմեզ։

Զոգ հակառակն պէտք էն խրատել զանգէտս մեզաց մարմնոյ, այնչափ առաւել զգուշութեամբ երկրնչել 'ի գահավէժ անկմանէ՝ որչափ 'ի բարձրութեան կան։ Զ ասն որոյ պիտոյ է յուշ առնել նոցա զի 'ի միտ առցեն եթէ ըստ բարձրագիր կայից իւրեանց ստէպ նեռատիպ լինի առ նոսա դաւաճանողն, որ որչափ տեսանէ զանձն չարաչար յաղթեալ, այնչափ աւելի գրգռոսի 'ի զայրոյթ, և այնչափ յանբերելի ցասումն բերի ընդ յաղթիւն՝ որչափ տեսանէ զի բովանդակ բանակ տկար մարմնոյ է իւր դիմամարտ։

Յուշ ածցի նոցա ակնարկել անդադար 'ի վարս սպակաց, որով անշուշտ կամսկար առ ոսն կոխեն ըզվիշտս փոքրութեանց զոր կրենն։ Օ՛ի եթէ լինիցի վերանել 'ի ժառանգութիւն անանց երջանկութեան,

թեթև զտանի անցաւոր աշխատութիւնն։ Լուիցեն զմարգարէական պատգամ։ “Բ. յսպէս ասէ տէր ցնեբ. քինսին որ պահիցեն զպահպանութիւնս իմ, և ընտրեսցեն զոր կամիմ, և կացցեն յուխտին իմում. տայ նոցա 'ի տան իմում և ընդ յարկաւ իմով տեղի անուանի առաւել քան զուստերաց և զդստերաց, և անուն յաւիտենական „։ Պանդի նեբքինիք են նոքա, որոց սանձեալ զկըրտմունս մարմնոյ՝ հատանեն յանձանց ըզ յօժարութիւն վատթարութեանց։ Լաւ եթէ որպիսի տեղի առ հօր ունիցին, ահա յայտնի իսկ ցուցաւ. զի 'ի տան հօր յաւիտենական բնակութեամբ նախամեծար գտանին և քան զորդիս։

Լուիցեն և զասացեալն 'ի Յովհաննէ. “Սոքա են որ ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք. և զհետ երթան գառին յո՛ և երթայցէ։ Լաւ երգեսցեն զերգ, զոր ոչ ոք կարէ գիտել, բայց միայն նոքա հաւրիւր և քառասուն հազարքն „։ Պանդի առանձին օրհնեսցեն երգ գառին նուագել՝ է յաւէժարար առաւել քան զամենայն հաւատացեալս ուրախ լինել անապական մարմնով։ Օ այն երգ թէպէտ և այլ ևս ընտրեալք կարեն ասել, այլ չկարեն նուագել. և 'ի ձեռն սիրոյ 'ի բարձրութեան նոցա ուրախացեալք գտանին, բայց 'ի չափ վարձուց նոցա ոչ ժամանեն.

Լուիցեն և զոր ինքնասաց բանիւ ասաց ճշմարտութիւնն վասն անարատ մաքրութեան. “Ոչ ամենեքին բաւական են այդմ բանի „։ Ուր զգեր 'ի վերոյն լինել իրացս այնու ծանոյց, զի ոչ է ամենեցուն. և յասել անդ՝ թէ դժուարին է յանձն առնուլ զկրդ, յայտ արար ունկնդրաց՝ թէ յանձն առուցն որպիսի զգուշութեամբ պարտի պահել։

Ուստի պէտք են յուշ առնել անփորձ եղելոցն մեզաց մարմնոյ, զի գիտասցեն՝ եթէ դեռաւանցեալ է կուսութիւն քան զամուսնութիւն, այլ մի բարձրամտեսցին 'ի վերայ ամուսնացելոց. որպէս զի հանդերձ կուսութեամբն և խնարհամիտք լինիցին. մի թողցեն 'ի ձեռաց զոր լաւագոյն ճանաչեն, և միանգամայն անձնապահ լիցին 'ի մնապարծութենէ։ Խելամուտ լիցին և այսմ՝ զի յոլովակի խառնի գործ աշխարհականաց ընդ վարս ժուժկալաց, յորժամ նոքա բուռն հարկա-

նեն 'ի գործս 'ի վեր քան զիւրեանց վիճակ, և սոքա ըստ բնիկ կարգի իւրեանց ոչ վատեն զսիրտս։ Ա՝ ասն որոյ 'ի գէպ բարբառի մարգարէն. «Յամենի լեր Ալի դոմն, ասէ Յով.»։ Դանդի իբրու ձայնիւ Յովու ամենահաճար լինի Ալիդոմն, յորժամ առ համեմատութիւն վարուց աշխարհականաց ծփելոց 'ի Յով աշխարհիս՝ յեմնեալ գտանի քաղաքավարութիւն նորա՝ որ ամբացեալն է պատսպարութեամբ, և հաստատուն տեսանի։ Ա՝ ասն զի բազում այն է զի ոմանք յետ մեղայ մարմնոյ՝ առ Ա՝ստուած դարձեալք՝ այնչափ առաւել ջերմեռանդն գտանին 'ի գործս բարիս, որչափ արժանի դատապարտութեանն տեսանեն զինքեանս վասն չարեաց իւրեանց։ Ա՝յլ բազում անգամ ոչք կացին մնացին յանապատութեան մարմնոյ, յորժամ ոչ տեսանեն շատ ինչ յանձինս արժանի լալոյ, զնեն 'ի մտի՝ թէ բաւական իցէ ինքեանց այնպիսի անմեղութիւն, և ոչ բոլ բոքեն զանձինս յեռանդն հոգւոյ Ջանիւ։ Ա՝յլ յոլով անգամ՝ առաւել աստուածահաճոյ գտանի կեանք վաղեալ սիրով յետ յանցանաց՝ քան զաներկեւանութիւն թմբեալ անմեղութեան։ Ա՝ ասն որոյ և 'ի բերանոյ դատաւորին լսեմք. «Ասոցեալ՝ լեցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց.»։ Ա՝յլ եթէ «Ուրախութիւն լեցի յերկինս 'ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ՝ առաւել քան 'ի վերայ ինանուն և ինն արդարոց, որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն.»։ Օ այս և 'ի փոքոյ ընդ փոյթ խնամասիրեմք. քանզի առաւել սիրեմք զգետին որ յետ քաղցան առնելոյ զփուշս՝ պտուղս բերէ առատս, քան զերկիր անփուշ՝ որ յետ մշակեալ գոլոյ անգամ ամուլ գտանի 'ի բերս իւր։

Ա՝յլ և սպառ է խրատել զանդգտս մարմնոյ մեղայ, զի մի նախապատիւ կարգաւ բարձրացին քան զայլս, յորժամ ոչ գիտեն եթէ ստորինք որչափ լաւագոյն գործս գործիցեն քան զինքեանս։ Ա՝ ասն զի 'ի քննութեան արդար դատաւորին փոխէ զվիճակ կարգին որպիսութիւն վարուց։ Ա՝՞ ոչ գիտէ 'ի տեսութեան անդ պատկերի իրացս, զի 'ի կարգի ակնոց պատուականաց նախապատիւ զնի կարկեհանն քան զյակինթ. այլ սակայն երկնագոյն կամ կապոյտ յակինթն նախամեծար գտանի քան զկարկեհան դեղին. քանզի զոր

պակաս առնէ յառաջնոյն կարգ բնութեան, յաւելու-
գեղն վայելչութեան. և զոմ զոր 'ի վեր եդ կարգն
բնական, որպէս գունոյն տգեղ ցուցանէ։ Պարա ըստ
այսմ օրինակի և 'ի մարդկան ազգի ոմանք 'ի լաւագոյն
կարգէ յոտիք գտանին, և ոմանք 'ի յոտեղունէն լա-
ւագոյնք. քանզի յետինքս վարուք լաւութեան զան-
ցանեն ըստ յետին բարեկարգութեան, իսկ առաջինքն
նուազեցուցանեն զյարգ վերին տեղւոյ՝ ոչ հաւասարե-
լով վինակին զարդիւնս գործոց։

Իթ. Պ.յլազգ խրատ տալ պիտի որոց լան զմեղս
գործոց, և այլազգ որոց զնորհրդոցն։ Զառաջինսն
պարտ է խրատել զի ընդէնցեն զչարիս արդեամբք
կատարեալ արտասուօք, զի մի առաւել փակեսցին ընդ
պարտեօք չար գործոցն՝ քան զոր վճարեսին լալեօք. որ-
պէս և զրեալ է. "Պ.ղբուցեր մեզ արտասուս չափով",
զի մաք իւրաքանչիւրոց ապաշխարութեամբ այնչափ
արտասուս արբցեն զդէնսն, որչափ յուշ լինի նոցա ցա-
մաքեին Պ.ստուծոյ յանցմանէ։ Այլ զի հանապազ ա-
ռաջի աչաց ունիցին զգործեցեալսն, և այնպէս քաղա-
քավարեսցին՝ զի ոչ ևս տեսցէ զնոսին անաչառն դա-
տաւոր։ Ասասի Դաւիթ 'ի խնդրելն Պ.ստուծոյ,
"Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց", կանխեաց ա-
սել. "Պ.երեալ իմ առաջի իմ են յամենայն ժամ", որպէս
թէ ասէր. մի հայիր 'ի մեղս իմ, աղաչեմ, զի ես անդա-
դար հայիմ 'ի նոսին։ Պ.ան որոյ և տէր ասէ 'ի ձեռն
մարգարէին. "Զ մեղս քո այլ ոչ ևս յիշեցից. բայց
քեզ յիշ լեցի"։

Այլ ևս պէտք են յիշեցուցանել, զի մի առ մի խոսաս-
ցեն զոր գործեցինն. և յորժամ ըստ միոյ միոյ ոգեան
զանօրէնութիւնս իւրեանց, միանգամայն և արտա-
սուօք մաքրեսցին։ Ասասի 'ի դէպ ասաց Այրեմիա 'ի
խորհելն զիւրաքանչիւր յանցուածս Յուդայ. "Դէն
իմ կամեսցէ 'ի վերայ անձին իմոյ", կամ "Դէն իմ
ինքոյց վասակս ջուրց"։ Դանզի յայնժամ վասակս ջուրց
ինքուցանեմք յաչաց, յորժամ ըստ միոյ միոյ 'ի մեղաց
հեղուցեալ արտասուս։ Զ և ոչ 'ի մի և 'ի նոյն ժամու
միայն ցաւանին 'ի վերայ ամենեցուն, այլ յորժամ
երբեմն զայս և երբեմն զայն մեղս խորագոյն յիշատա-
կեն. միանգամայն յաղագս ամենայնի յիւրաքանչիւր
նուազի փղձկեալ՝ մաքրի և սրբի ամենայնն։

Դարձեալ յուշ առնել պիտի նոցա, զի դայոց վստահութեան ընկալցին ողորմութենէն Աստուծոյ զոր ժառեն. զի մի յառաւելութենէ տարտմութեան ընկղմեսցին 'ի կորուստ։ Օ՛ի ոչ առաջի գնէր Աստուած մարդասիրութեամբ իւրով 'ի լալ յանցուցելոյ զմեզ իւրեանց, եթէ ինքնին կամէր անապատ պատուհասել. քանզի յայտ իսկ է զի կամեցաւ պահել յերեսաց դատաստանի իւրոյ զոր կանխեալ ողորմութեամբ դաւառս կացոյց անձանց իւրեանց։ Այսմն իրի գրեալ է. "Կանխեցուք առաջի տեառն (կամ յառաջ քան զերեսս տեառն) խոստովանութեամբ"։ Որպէս և Պօղոս ասէ. "Եթէ զանձինս քննէաք (կամ դատեաք), ապա ոչ դատապարտիք"։

Եւ ևս զգուշացուցանել պարտ է, այնպէս ևեթ վստահ լինել 'ի յոյսն, զի մի անզգոյշ ապահովութիւն ընդարձակեսցին։ Այսն զի բազում անգամ խորհանակ թշնամին զոգին զոր արկանէ ընդ մեզք՝ տեսեալ ցաւագնել ընդ գլուխն, մոլորեցուցանէ հրապուրանաք ապիրատ ապահովութեան։ Հօրինակ այսմ լիցին այն անպք Դաւթայի. զի որպէս գրի, "Եւ Դաւթա զուստր Լիայ 'ի գնին դատերաց աշխարհին. և եմուս գնա Սիւքեմ որդի Եմմորայ քառեցի, որ իշխանն էր երկրին. և առ գնա, և ննջեաց ընդ նմա, և տառապեցոյց գնա. և ուշ եդեալ սիրեաց զկոյսն, և խօսեցաւ ըստ մտաց կուսին"։ Զոր որպէս թէ Դաւթա էանէ 'ի տեսանել զկանայս օտար երկրի, յորժամ իւրաքանչիւր միաք օտարացեալ յիւրմէ փութոյ, և յօտարոտի գոլոցս բերեալ թափառի արտաքոյ կարգի և վիճակի իւրոյ, և Սիւքեմ իշխան երկրին տառապեցուցանէ գնա. վասն զի ատանայ լնկէ զգտեալն յարտաքին հոգս, և կապի ոգի նորա ընդ նմա. զի հայի 'ի նա իբրև միացեալ ընդ իւր անօրէնութեամբ։ Զայլ քանզի միաքն սեթափեալ 'ի մեզաց՝ սկսանի ատելանալ, և ջանայ ողբալ զբաղն զոր գործեաց, յայնժամ չարն առաջի գնէ աչաց նորա զմտասի յոյս և գլուսաւորութիւն աներկեան, զի անպիտան կացուսցէ զշահ տարտմութեան. այն է աչսէրն, սիրեաց գնա, և խօսեցաւ ըստ սրտի նորա ողբաւանաք բանիւք։ Զի զի յուշ առնէ զայլոյն մեզս ծանրագոյնս. և է զի ցուցանէ՝ թէ եղեալն չէ ինչ ծանր. է

զի Աստուած ողորմած է, ասէ, և է զի ժամանակ ապաշխարելոյ առ յապային խոստանայ։ Այլ յորժամ սքօք պատրեալ միտքն մոլորի, 'ի կամս մնայ դիտաւորութիւն ապաշխարելոյ. զի մի բարի ինչ յանձին կալցի զոր չարիքն ոչ տրտմեցուցանեն. և 'ի սպառ մատնեսցի 'ի պատուհաս՝ որ խնդայ 'ի մեղս։

Օ սորին հակառակն պարտ է խրատ տալ որոց լան զմեղս խորհրդոց, զի խնամով զննեսցեն 'ի խորշս մտաց, արդեօք ախորժակաւ և եթէ իւիք յանցուցեալ լցեն, եթէ և հաւանութեամբ։ Զայն զի քաղցմ այն է զի սիրան փոքրի, և ախորժէ ընդ չարութիւն մարմնոյ. և սակայն իսկ և իսկ բանականութեամբ հակառակ կայ չարութեան. մինչ զի յաչս խորհրդոց և տրտմեցուցանէ ախորժելին, և ախորժելի գտանի տրտմեցուցիչն. իսկ երբեմն այնպէս ընկղմին միտք 'ի խորս փորձութեան, մինչև չհակառակել նմին իւիք, այլ կամակարութեամբ զհետ երթալ այնմ՝ յորմէ գրգռի ախորժմամբ. և եթէ նպաստամատոյց լցին արտաքին կարողութեան, անդէն արդեամբք կատարէ զնեբբին յօժարութիւնն։ Որ այնուհետև ընդ դատաստանաւ անաչառ դատաւորին՝ ոչ ևս է մեղք մնածութեան, այլ գործոյ. զի թէպէտ և իրացն յապաղումն արտաքուստ յամեցոյց զմեղս, այլ կամքն եղից զայն գործով հաւանութեան։

Զպաքէն 'ի նախամարդոյն խելամուտ եղեաք, զի երիւք յեղանակօք կատարեմք զչարութիւն ամենայն յանցուածոց. այսինքն թելադրութեամբ, ախորժակաւ, և հաւանութեամբ։ Օ առաջինն 'ի գործ դնեմք 'ի ձեռն թշնամւոյն, զերկրորդն 'ի ձեռն մարմնոյ, զերրորդն հոգւով։ Զայն զդարանական թելադրէ զվատթարութիւն, մարմինն հպատակէ ախորժակին, և 'ի վախճանի հոգին վատթարեալ 'ի պարտութիւն՝ հաւանի ախորժման։ Զստի օձն թելադրեաց զչարն, Եւա որպէս մարմին տեղի ետ ախորժակին, իսկ Ադամ որպէս հոգի յաղթեալ յերեսաց թելադրութեան և ախորժակի՝ հաւան գտաւ։ Այլ այսպէս 'ի ձեռն թելադրութեան 'ի միտ առնումք զմեղս, ախորժակաւ յաղթիմք, հաւանութեամբ կապիմք կաշկանդիմք։

Զայն որոյ պարտ է ազգ առնել լայողաց զչարու-

թիւնս խորհրդոյն, զի ինամով ուշ ունիցին՝ եթէ որով չափով մեզաց գթեցին, զի և ըստ յեղանակի անկմանն զոր յանձինս զգան 'ի ներքուստ, նովին չափով ողոց կանգնեսցին. զի մի 'ի նուազ խոշտանգելն զչար խորհուրդն՝ հասանիցեն և 'ի կատարումն գործոյն։ Լ.յլ 'ի սմին սակի այնչափ եթէ պարտ է երկեղուկս արկանել, զի մի վհատեսցին։ Ա՝ան զի յոլովակի ամենողորմն Լ՝ստուած այնչափ աղագ արագ ջնջէ զմեզս սրտին՝ ցորչափ չթողու եւմեէ 'ի գործ, և չարութիւն մնացեալ այնչափ փութով քակի՝ ցորչափ չկապի պնդապէս արդեամբք գործոց։ Ա՝ան որոյ բարւոք բարբառի սաղմոսանուագն. "Լ՝սացի թէ պատմեցից ինձէն զմեզս իմ, և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեզաց իմոց"։ Ուր 'ի վերայ բերելով զամբարշտութիւն սրտին, յայտ արար թէ ցուցանել կամեցաւ զանիրաւութիւն խորհրդոյն։ Լ՝ս յետ ասելոյն, թէ "Լ՝սացի թէ պատմեցից", անդէն 'ի վերայ էած, "և դու թողցես", յայտ արար թէ որչափ դիւրին է թողութիւն իրացս։ Լ՝ս մինչդեռ տակաւին խոստանայր խնդրել զթողութիւն, ընկալաւ զինդրելն ըստ խոստմանն. զի որովհետև չէին 'ի գործ եդեալ մեղքն, չհասանէր և ապաշխարութիւնն մինչև 'ի խոշտանգանս. այլ մնաւոր տանջանն սրբէր զմիտս, զոր խորհրդով եւեթ ապականեալ էր չարութիւնն։

Ա.։ Լ՝ալագ խրատել պիտի զայնոսիկ որք ողորմն զգործեալ մեզս, այլ տակաւին ոչ 'ի բաց թողուն, և այլագ գնոսա որք 'ի բաց թողուն, այլ ոչ ողորմն զգործեալն։ Լ՝ուաջնոյն խրատ տացի ինամով խորհել թէ լալով 'ի զուր լուանան զանձինս, երբ տակաւին չարաչար վարուք պղծին. որպէս թէ վասն այն արտասուօք մաքրին զինքեանս, զի անդրէն դարձցին յախտս կենցաղոյս։ Ա՝ստի գրեալ է. "Շ՝ուն դարձեալ 'ի փսխած իւր, և խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ"։ Լ՝ուրս զի շունն 'ի փսխել իւրում ապաքէն 'ի դուրս ձգէ զկերածն որ ներեալ զսիրտ նորա. այլ 'ի դառնալ 'ի նոյն փսխածն՝ վերստին ծանրի ուստի թեթեւացեալն էր։ Այսպէս և որք լանն զգործեալ մեզս՝ յիրաւի խոստովանութեամբ արտաքս ընկենուն զանզգամութիւնն, որոյ չարաչար յաղեալ էին, և ՀՀիկէին 'ի ներքս

'ի յոգիս. այլ յորժամ երկրորդէն զկնի խոստովանութեան, դարձեալ վերստին յինքեանս ընդունին։ Որպէս և խոզն 'ի կամել անդ լուանալ զինքն 'ի խոհերս տղմոյ՝ կրկին ևս աղտեղեալ գտանի. նմանապէս և որ լայ զանցեալ մեղս, այլ ոչ թողու զնոսս, ևս ծանրագոյն պատժապարտ կացուցանէ զանձն։ վասն զի արհամարհէ զթողութիւնն զոր մարթացաւ լալով ընդունել. և իբրու յաղտաղտուկս թաւալի, վասն զի յարտասուս անդ անտես առնելով զորբութիւն վարուց՝ առաջի աչացն Աստուծոյ աղտեղի կացուցանէ և զարտասուս իւր զլնողին։ Սմին իրի դարձեալ գրեալ է. "Մի՛ կրկներ բան 'ի յուխտս (կամ յաղօթս) քո"։ 'Անգի կրկնել զբան յաղօթս՝ է գործել զկնի արտասուաց զայն, որ վասն հարկ է վերստին արտասուել։ Ուստի ասէր Աստուած. "Լուացարուք, սրբեցարուք"։ Վասն զի անփոյթ առնէ սուրբ լինել յետ լուացմանն՝ որ յետ արտասուաց չպահէ զանմեղութիւն վարուց։ Որբեմն և լուանան զանձինս, և ոչ երբեք սրբին՝ այլ ոչ դադարեն 'ի լալոյ զգործեալ չարիս, բայց դարձեալ գործեն զարժանիս լալոյ. վասն որոյ ասաց ոմն իմաստուն. "Որ մկրտի 'ի պատճառս մեռելոյն, և վերստին մերձենայ 'ի նա, զինչ շահ իցէ նման լուացումն նորին"։ յայր և նման այսմ է՝ որ սրբին լալեօք 'ի մեղաց, այլ յետ արտասուաց երկրորդէ զմեղս։

Բաղդ պարտ է յուշ առնել այսպիսեացս, զի գիտասցեն զանձինս լինել յայս անաչառ դատաւորին ոչ ինչ ընդհատ 'ի նոցանէ՝ որոց յանդիման եկեալ ոմանց 'ի մարդկանէ մեծաւ խանարհութեամբ քծնին և շողոմին, այլ յետ մեկնելոյ անտի՝ զամենայն թշնամութիւն և վնաս յոր ձեռնհաս իցեն՝ ցուցանեն նոցա չարաչար։ Վասն զի զինչ է ողբալ զմեղս, եթէ ոչ ցուցանել Աստուծոյ զնմանարհութիւն ջերմ սրտիւ. և զինչ իցէ յետ ողբոյն չար գործել, եթէ ոչ ամբարտաւան մնօք թշնամութիւն 'ի գործ դնել ընդդէմ նորա զոր արարչին. որպէս և Յակոբոս դնէ վկայութիւն ասելով. "Որ զք կամիցի սիրել զաշխարհ, թշնամի առնէ զանձն իւր Աստուծոյ"։

Դարձեալ յուշ ածել արժան է այսպիսեայ՝ քաջ խորհել, թէ այսու օրինակաւ յոլովակի չարքն յանօ-

գուտս 'ի զեղջ գան յարդարութիւն, որպէս յոլովակի բարիքն առանց վնասու փորձին առ 'ի մեզս, և ահա ըստ պահանջելոյ արդեանց զարմանալի իմն այս չափ զհետ գայ 'ի պատրաստութենէ նեբբին խորհրդոց. զի նոքա 'ի գործել իւրեանց զբարի ինչ առանց 'ի գլուխ հանելոյ, հպարտացեալք յանձինս վստահանան նաև 'ի կատարեալ չարիս անդ. իսկ սոքա 'ի փորձին 'ի չարէն առանց բնաւին հաւանութիւն տալոյ, որչափ տատանին յանձինս տկարութեամբ, այնչափ զգնացս սրտի առ արդարութիւն անշարժ հաստատեն խոնարհութեամբ։ Այսպէս և Դաղաամ յորժամ հայեցաւ 'ի խորանս արդարոց, ասէր. "Մեռցի անձն իմ ընդ անձինս արդարոցն, և եղիցի զաւակ իմ իբրև զզաւակ նոցա"։ Այլ իբրև էանց ժամն այն զղջութեամբ, խորհուրդ ետ հակառակ կենաց նոցա, որոց նման լինել խնդրէր և 'ի մեռանել իւրում. և յորժամ ժամ եգիտ արծաթասիրութեամբ իւրում՝ անդէն մոռացաւ զոր ցանկայր անձին յանմեղութեան անդ իւրում։

Աստի և հեթանոսաց առաքեալն Պօղոս ասէր. "Տեսանեմ զայլ օրէնս յանդամս իմ՝ զինեալ հակառակ օրէնսդ մտաց իմոց, և գերեալ զիս օրէնսդ մեղայն որ են յանդամս իմ"։ Որ և յայն սակս փորձի անշուշտ, որպէս զի և զնա զնա ամրապինդ հաստատեսցի 'ի բարին 'ի ծանօթութենէ անտի տկարութեանն։ Օ՛ի է ապա, զի մին թէպէտ և ապաշաւէ, բայց ոչ մերձենայ յարդարութիւն. իսկ միւսն կրէ զփորձութիւն, այլ ոչ աղտեղեն գնա մեղք. բայց զի սովիմբ յայտ յանդիման երևի՝ թէ ոչ չարաց օգտեն ինչ թերակատար բարեգործութիւնք, և ոչ զբարիս դատապարտ առնեն չարիք չկատարեալք։

Այսին հակառակ պարտ է խրատել գնոսա, զոր թէպէտ և 'ի բաց թողուն գնախկին չարագործութիւնս, այլ ոչ լսն 'ի վերայ նոցա, զի մի դիցեն 'ի մտի՝ եթէ թողեալ իցեն յանցանքն այն իւրեանց, զորս թէ և չյաձախիցեն գործելով՝ այլ չմաքրեն իւիք արտասուօք։ Օ՛ր օրինակ եթէ զրիչ զբ դադարեսցէ 'ի գրելոյ՝ այնու զի ոչ յաւելու գրել՝ Ջնջեաց զորս գրեացն. որպէս և որ նախատեաց զընկերն, եթէ լռեսցէ եթէ՝ ոչ վնարեաց զպարտս. ուր ամենայնիւ

հարկ է բառնալ զայն բանս ամբարտաւանութեան այլ-
ովք բանիւք խոնարհութեան . որպէս և ոչ պարտա-
պանն վճարել զիւր պարտիս վասն չբազմացուցանելոյ և
և , եթէ ոչ հատուսցէ զառաջինն ։ Այնպէս և մեք
յորժամ յանցանեմք առ Աստուած , ոչ երբէք առնեմք
հատուցումն նմին՝ դադարելով և եթէ 'ի չարեաց , եթէ
ոչ փոխանակ հեշտութեանց զոյս սիրեցաք՝ զհակա-
ակ նոցուն ողբս արտասուաց 'ի մէջ առցուք ։ Օ՛ի թէ և
ոչ մի յանցանք աղտեղէր գործովք զմեզ յաստի կեանս,
տակաւին չէր բաւական մեզ յաստիս դեղերելոցս ա-
պահով լինել 'ի մերս անմեղութիւն , ուր յոլով իրք
անպատեհք կուսին ընդ մեզ . ապա զնմրդ աներկեւան
գտցի միաք որ գործովք չարութեանց գործելոց յիւրմէ
վիպոյ է անձին թէ չէ անմեղ ։

Օ՛ի ոչ եթէ Աստուած պարարի խոշտանգանօք Ն-
գանց մերոց , այլ զցաւս մեզաց հակառակ դեղովք
բուժէ . զի որք մեկնեցաքս 'ի նմանէ հեշտութիւն մեղաց
մերոց , դառնութեամբ արտասուաց զարձցուք առ նա .
և որ յանպատեհս անկաք չարաչար մեղկութեամբ , 'ի
պատեհիլ անդամ զանձինս սանձելով կանգնեսցուք ,
և սիրտ անձնատուր յուրախութիւն անմտութեան՝
փրկարար տրտմութեամբ տուչութեսցի . և զոր վիրաւո-
րեաց ախտ ամբարտաւան փքացման , բժշկեսցէ խո-
նարհական նուաստութիւն կենաց ։ Այնզի վասն այ-
սորիկ իսկ գրեալ է . " Աստուած անօրինաց թէ մի ա-
նօրինիսք . և մեղաւորաց թէ մի բարձրացուցանիք
զեղջիւրս ձեր ,, ։ Օ՛ի մեղաւորքն եղջիւրս բարձրա-
ցուցանեն , եթէ չխոնարհեցուսցին երբէք զանձինս
յապաշխարութիւն ճանաչելով զապիրատութիւնս իւ-
րեանց ։ Լուսոյ դարձեալ ասի . " Օ՛ սիրտ բեկեալ և
զխոնարհ Աստուած ոչ արհամարհէ ,, ։

Այսն զի յորժամ՝ ողբալ ողբաց զմեզս , այլ ոչ
թողու զնոսա 'ի բաց , զսիրտ իւր բեկանել , այլ անփոյթ
առնէ խոնարհ առնել ։ Լակ որոց 'ի բաց թողեալ ի-
ցէ զմեզս , այլ ոչ ողբասցէ զնոսին , թէպէտ և խոնարհեցու-
ցանէ զսիրտ իւր , այլ չառնու յանձն բեկանել զայն ։ Այ՞
որոյ ասէ Պօղոս . " Լա դուք այնպիսիք ոմանք էիք , այլ
լուացայք այլ սրբեցայք ,, ։ Այն զի զնոսա սրբէ վարք
մաքրագոյն , զոր ապաշխարութեամբ լուացեալ մաք-

բէ յորդութիւն արտասուաց։ Ուստի և Պետրոսի տեսեալ զմանս ահաբեկս 'ի տեսութենէ չարեաց իւրեանց, խրախուսեաց սովին խրատու. «Պաշաւեցէք, ասէ, և մարտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ.,։ Ուր հանդերձեալ խօսել զմկրտութենէ, կանխեաց ասել զողջու�ապաշխարութեան. որպէս զի նախ ջրով զոչմանն ողողեսցեն զանձինս, և ապա խորհրդով մկրտութեան լուանայցեն։ Զոր որ միանգամ հեղգանալ զանցեալ զյանցանս, զիարդ կեան իբրու անելիկեանք 'ի թողութենէ, ուր նա ինքն հովուապետն եկեղեցւոյ կարևոր դատեցաւ յարել յայս խորհուրդ մկրտութեան և զապաշխարութի, որ շինչուցիչ է յոյժ մեղայ։

ԼԱ. Տարօրինակ պիտի խրատել զայնոսիկ ոչք գովեն և զանպատեհ գործս զորս գործեն, և այլօրինակ գնոսա՝ ոչք թէպէտ և բոզոքեն զվատթարութեանց, այլ ոչ խորշին 'ի նոցունց։ Օ առաջինն պարտ է իրաւէտ առնել եթէ յոլովակի բանիւ առաւել յանցաւորդտանին քան գործով. վասն զի գործով ինքեանք եւեթ չարիս գործեն, իսկ բանիւ 'ի ձեռն այնչափ մարդկան անօրինին՝ որչափ զմիտս լսողաց պղտորեն՝ գովելով զանպատեհս։ Պայս յուշ լեցի նոցա, զի թէ հեղգանան խլել զչարիս, գէթ երկիցեն 'ի սերմանելոյ. և թէ շատ է ինքեանց կորուստ անձանց իւրեանց. և յորժամ չզանգիտեն 'ի չար գոլոյ, գոնեա պատկառեսցին 'ի չար երևելոյ և յաչս այլոց. վասն զի բազում անգամ յորժամ ոք ջանայ ծածկել զյանցանս իւր, սկսանի և յետս կալ անտի. զի յորժամ ոք առնչէ երևել այնպիսի՝ որպիսի լինել չերկնչի, առնչէ և երբեմն լինել այնպիսի որպիսի երևել չկամի. իսկ յորժամ անզգամ ոք անամօթաբար յայտնի առնէ զինքն բոլորից, որչափ համարձակ գործէ զամենայն ապիրատութիւն, նոյնչափ և օրէն կարծէ ինքեան՝ զորմէ կասկածեր թէ չէ օրէն. որով անելիքայ բազմօրինակ ընկղմի 'ի խորս չարեաց։ Վասն որոյ գրեալ է. «Օ մեղս իւրեանց որպէս զՅուդայեցւոյն պատմեցին և յայտ արարին.,։ Օ՝ի եթէ Յուդայ ծածկէր զչարիս իւր՝ ահ ընդ ահ մեղանչէր. այլ 'ի սպառ թողեալ էր զանձն երկիւղն երբ և ոչ խաւար խնդրէր 'ի մեղանչել։ Վասն որոյ գրա-

ձեալ զրեալ է. «Լ՝ղաղակ Սողոմայեաց և Գոմորայեաց յաձախեաց»։ «Լանգի մեղք հանդերձ ձայնիւ՝ է գործ յանցանաց, իսկ մեղք հանդերձ աղաղակաւ՝ է յանցանք ամենայն համարձակութեան։

Ինդ հակառակն պէտք են խրատել զնոսա ոչ խորշին 'ի չարեաց զորոց դատախազեն, քաջ խորհել յանձինս եթէ յանաչառ ատենին Լ՝ստուծոյ զինչ ուներցին ասել 'ի չքմեղութիւն անձանց, յորժամ և ինքեանք չարահոս գտանին զչարեաց իւրեանց։ Ոչ ապաքէն այդպիսիք անձամբ զանձինս հրատարակեն որպէս մունետիկս, յորժամ ձայն արձակեն ընդդէմ յանցանաց իւրեանց, և գործոքք իւրեանց զինքեանս յանցաւորս լինել բամբասեն։

Յուշ լիցի նոցա և այն, զի այդ իսկ յայտնի պատիժ է 'ի գաղտնի դատաստանայն Լ՝ստուծոյ, տեսանել սոցա լուսաւոր մտաք զչարիս անձանց, և ոչ ջանալ յաղթել. որպէս զի որչափ քաջ տեսանեն՝ այնչափ չարաչար կորիցեն. վասն զի ընդունին զլոյս հանձարոյ, և ոչ թողուն զլուսաւոր գործոց չարութեան։ Զի յորժամ անիրաւթ առնեն զգիտութեամբ որ տուեալ է նոցա յօդնականութիւն, դարձուցանեն զնոյն 'ի վկայութիւն ընդդէմ անձանց իւրեանց. և 'ի ձեռն լուսոյ հանձարոյ բարդեն զանիրաւոն անձանց, ուր առեալ էր նոցա զայն 'ի ջնջել զմեղս, որպէս և յայտ է։ Լ՝սպիսեացս անզգամութիւն՝ գիտելով հանդերձ գործել զչար, այժմէն առնու զձաշակ հանդերձեալ դատաստանի. զի ձանաչէ եթէ պահեալ կայ պատուհասի յաւիտենից, այլ տակաւին չէ արձակեալ անդր. և այնչափ ծանրագոյն տանջանս ընկալցի, որչափ ատ չթողու 'ի բաց զմեղս զոր և ինքն դատապարտէ։ Ամէն իրի ասաց Աշմարտութիւնն ինքնին. «Օտառայ որ գիտիցէ զկամն տեառն իւրոյ, և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արդեաք գան բազում՞»։ Ա՝ն որոյ և սաղմոսերգուն ասէ. «Կենդանեայն իմացեն 'ի գժոխս»՝, զի կենդանիք գիտեն և իմանան զեղեալսն 'ի նոսա, իսկ մեռեալք չկարեն ինչ իմանալ. քանզի մեռելութեամբ իմանային 'ի գժոխս, եթէ չգիտելով գործէին զչարիս. բայց երբ գիտեն զչարիս, և տակաւին գործեն, 'ի գժոխս անօրէնութեան կենդանեայն իմանեն

չուառականք՝ զիտակ լինելով խոկութեան իրացն։

ԼԲ. Գայլազգ պարտ է խրատել զյեղակարծ ցանկութեամբ պարտեալս, և այլազգ զկամաւ կապեալս 'ի յանցանս։ Գուաջնոցն յուշ առնել պիտի, զի 'ի միտ առցին քաջ եթէ 'ի մարտի կան հանապազ 'ի կենցաղումն. և թէ զսիրտ որ չկարէ յառաջատես լինել վիրաց, պարտին վահանաւ պատսպարել զգուշական երկիւղի, և ահիւ մեծաւ զգոյշ լինել 'ի գաղտնածածուկ նետից դարանակալ թշնամւոյն. և յայսպիսումն մնառիալապատ կռուի անընդհատ արթնութեամբ ամրացուցանել զանձինս 'ի բուն բանակեցող մտաց։ Օ ի թէ յետնեացն միտքն 'ի պարահայեաց դիտողութենէ՝ դիւրաւ խոցոտի. վասն զի չարարուեստ թշնամին այնչափ համարձակ նետահար լինի 'ի սիրտ, որչափ գտանէ զայն մերկ 'ի զրահէ արթնութեան։

Լաւ ևս պէտք են խրատել զնոսա, զի սովորեացին թօթափել զաւերզդ հոգս կենցաղոյս. վասն զի յորժամ զբաղեցուցանեն զսիրտս յիրս երկրաւորս աւելի քան զչափ, անդիտանան թէ որովք նետիւք յանցանայ խոցին։ Ա ասն որոյ ասէ Սողոմոն 'ի բերանոյ հարուածելոյն իբրև 'ի քուն. "Հարկանէին զիս, և ինձ ոչ ցաւէր. այսն առնէին զիս, և ես ոչ գիտէի. երբ լեցի առաւօտ զի զարթեայց և խնդրեցից ընդ որոմ շրջիցիմ ('ի գտանել զգինի)"։ Վասնզի միտք յերեսսայ բազմապատիկ զմբաղաց իւրոց զքնով անկեալ՝ հարկանի, և ոչ զգայ ցաւոյն. զի որպէս ոչ է նախահայեաց զգուշաւոր 'ի մնոտալուտ չարեաց, նոյնպէս և անդիտանայ զչարիս զորս գործեաց։ Գայսպանի և ձգի այսր անդր, այլ չզգայ բնաւ. քանզի քարշի և վարի հրապուրանաքս ախտից, և ոչ զարթնու յանձին պահպանութիւն։ Լաւ այն զի կամի սթափիլ և արթնանալ, որպէս զի անդրէն գտցէ զգինարբուս. զի թէպէտ և ընկղմեալ է 'ի քուն թմբրութեան, և յետնեալ յանձին պահպանութենէ, այլ սակայն հնարի արթուն լինել 'ի հոգս կենցաղոյս, որպէս զի միշտ արբեսցի հեշտութեամբք. և երբ խոր 'ի քուն ննջէ յայնմ յորում պարտ էր նմա տքնել միշտ, ցանկայ արթուն գտանիլ յայն ինչ յորում արժան էր ննջել։ Ա ասն որոյ զրեալ է անդանօր 'ի նախընթաց բանս. "Գնկեալ

դնիցես (քնով) 'ի սիրտ ծովու, և իբրև գնաւավար 'ի մէջ բաղում մրրկի (կորուսեալ զղեակ)„։ Ա՝ սան զի 'ի մէջ ծովու զքնով անկանի՝ որ 'ի փորձանս աշխարհի գտեալ՝ անհոգ լինի ուշ ունել արթնութեամբ յարձակմանց ախտից իբրու ահագին կոհակաց յարուցելոց. և որպէս թէ կորուսանէ զեկավարն զքեղես, յորժամ միտքն կորուսանէն զփոյթ ջանից զեկավարելոյ գնաւ մարմնոյն։ Ա՝ սան զի կորուսանել զզեկ 'ի ծովու՝ է չուտնել գնախահոգակ դիտողութիւն 'ի մէջ մրրկաց աշխարհիս։

Օ՛ի եթէ զեկավարն պինդ ունի խնամով զուղղեանն, է զի ուղղէ գնաւն 'ի մէջ ալեաց 'ի հակառակն կոյս, և է զի խոտորնակի հերձու զհողմոցն բռնութիւն։ Ա՝մենապէս և միտքն 'ի զեկավարել զհոգին արթնութեամբ՝ է զի զերս ինչ յաղթահարէ կոխան առնելով, և է զի 'ի բաց խոտորի զգծնութեամբ, որպէս զի և զառաջիկայս ջանիս արկցէ ընդ իւրև, և ընդդէմ ասպագայ պատերազմաց լքմնութիւնք զօրասցի։ Ա՝ սան որոյ և յաղագս քաջ զօրականաց վերին հայրենեաց ասացեալ է. "Ա՝յր իւրաքանչիւր սուր յաղդեր յարհարաց գիշերոյ„։ Ա՝ սան զի այն իսկ է սուր յաղդեր կրել, յորժամ՝ այրիւ սուրբ քարոզութեան նկուն լինին վատթար հրապոյրք մարմնոյ։ Լոկ գիշերաւ յայտ առնէ զկուրութիւն տկարութեան մերոյ. վասն զի արկածք արհաւրաց 'ի գիշերի ջանկանին ընդ աչաց տեսութիւնք։ Ա՝ սան այսորիկ սուր յաղդեր իւրաքանչիւրոց կայ յարհաւրաց գիշերոյ. իբրու այն թէ սուրբքն Ա՝ստուծոյ երկնչին յիրաց զոր ոչն տեսանեն, և վասն այսորիկ ուշ ունին հանապազ մարտի պատրաստելոյ։ Ա՝յր աղագաւ դարձեալ ցհարսն ասի այս. "Ի՝նչ գունք քո իբրև զաշտարակն Լ իւանանու„։ Ա՝ սան զի զոր ոչն տեսանեմք՝ յոլովակի հոտոտելով իմանամք կանխաւ, և 'ի ձեռն ուրնգանց որոշեմք զանուշահոտութիւն և զժահահոտութիւն։ Ա՝ սան որոյ զինչ այլ գուշակիցի ուրնգամբն եկեղեցւոյ, բայց նախահայեաց ընտրողութիւն սրբոց։ Ա՝յ անուանեմք զնա իբրև զաշտարակն Լ իւանանու, վասն զի քաջ ընտրողական ըզգուշութիւն նորա 'ի բարձր վայրի է եդեալ, որպէս զի յառաջ քան զհասանել մարտից փորձութեանց տեսող

լեցի նոցուն, և 'ի զալ անդ նոցին՝ ամրացեալ գոցի հանդէպ նոցա։ Օ. ի յորժամ յառաջագոյն իրաղեկ լինի զգալոցս, և արձանանայ ընդդէմ նոցին, նուազեալ գտանի այժ նոցա. քանզի որ ոք պատրաստագոյն ցուցանի ընդդէմ բախման, թէ նեամին որ կարծէր թէ յեղակարծուց 'ի վերայ յարձակեսցի, ընդ խմանալն զի վազագոյն 'ի վերայ հասեալ էն այլք զալստեան իւրոց, ջղակոտոր լքանի։

Օ. սորին հակառակն պարտ է խրատել զայնոսիկ զոք խորհրդով և կամաւ զառաջանին 'ի ջարիս. զի քաջ քննութեամբ 'ի միտ առցեն, թէ յորժամ ջարիքն 'ի դատաստանէ մնաց և կամաց կատարին, սատակապէս բորբոքեն ընդդէմ իւրեանց զանաչառ դատաստանն Աստուծոյ. զի այնչափ խիստ վճիռ կարեվէր հարցէ զնոսա, որչափ կապանք կամակարութեան զնդագոյն կապեալ կաշկանդեցին զինքեանս։ Օ. ի թերևս փութով քաւէին զյանցանս ապաշխարութեամբ, եթէ անխորհուրդ գահավիժութիւն ևեթ խարդաւանեալ լինէին 'ի նոսին։ Ա. ան զի դժուարաւ քակին մեզք խորհրդով ամրապնդեալք։ Օ. ի եթէ չէր մնաց ամենայնիւ քամնհեալ զյաւիտենականսոք, ոչ անկղեստանայր 'ի կամակար մեղս։ Աղդ այս խտիր է ընդ անխորհրդաբար գահավիժեալս, և ընդ կորուսեալս կամակար խորհրդով, զի յետինքս անկանին 'ի վիճակէ արդարութեան մեղանչելով, և յողովակի խարդաւանին 'ի խորս յուսահատութեան։

Ա. ան այնորիկ տէրն 'ի ձեռն մարգարէին ոչ այնչափ զվատթարութիւն գահավիժ եղելոցն յանդիմանէ, որ չափ զկամակար մեղասիրութեի, յասել անդ. "Զուցէ եղանիցէ իբրև զՏուր սրտմտութիւն իմ։ բորբոքեսցի, և ոչ ոք իցէ որ շիջուցանիցէ, յերեսաց չար գործոց ձերոց (կամակար մնօք)"։ Այլ դարձեալ ասէր ցասմամբ. "Հաւասիկ ես խնդրեցից զվրէժս 'ի ձէնջ ըստ չարութեան գնացից ձերոց (կամակար փութով)"։ Աղդ քանզի յայլոց մեղաց տարբեր գտանին մեղք կամակար խորհրդով գործեցեալք, ոչ այնչափ վրէժխնդիր լինի տէր գործոց վատթարութեի, որչափ կամակար փութոյ վատթարութեան։ Ա. ան զի 'ի գործս անդ ստեպ գտանի տկարութիւն կամ անհոգութիւն, իսկ

'ի կամակար փոյթն կայ միշտ մեղք չարաչար դիտաւորութեան։

Որ ընդ հակառակն 'ի նշանակ երանելի առն բարբոք ասաց մարգարէն. "Յաւ յաթոռս ժանտից ոչ նըստաւ,,։ Զ ամն զի սովորակի աթոռ ունի դատաւորն կամ նախագահն, իսկ յաթոռս ժանտից նստել՝ է դատմամբ գործել զչարն, և միանգամայն 'ի վատթար մնաց առնել զորոշումն դատաստանի, և կամակար խորհրդով կատարել զչարն։ Որ այն թէ յաթոռ նստի խելացեալ իւր խորհրդոյ՝ որ ոք այնչափ բարձրամտի անբզդամութեամբ, զի հնարի կամակար գլխովին 'ի գլուխ հանել զչարն։ Յաւ զոր օրինակ գահագլուխ են մերձաւկայ բազմութեան՝ ոյք յաթոռ պատուոյ են եղեալ, նոյնպէս քան զմեղս յեղակարծ գլորելոց գեր 'ի վերոյ անցանէն մեղք կամակար ջանիւ և խորհրդով գործեցեալք։ Զ ամն որոյ յուշ արասցուք ինքնակամ կապելոց ընդ մեղս՝ զի 'ի միտ առնուցուն եթէ որպիսի վրիժուց նեղքոյ անկցին ոյք ոչ միայն համախոհ են անբզդամաց, այլ և նախագահ իշխան նոցա։

ԼԳ. Զ.յլով խրատու զգաստացուցանել հարկ է զայնոսիկ, ոյք թէպէտ և թեթեւս յանցանէն՝ այլ ստէպ ստէպ. և այլով զայնոսիկ, ոյք զգուշանան 'ի փոքունց յանցուածոց, այլ երբեմն 'ի ծանուցս սուգանին։ Զ.ամենայն յուշ առնել պէտք են, զի մի յայն հայեսցին եթէ որպիսիս գործեն, այլ թէ արչափ։ Օ ի թէ ելերնչիցին յորոց գործեցին յորժամ կշռեն ուրոյն ուրոյն, երկնչիցին 'ի թուէնը զհամար նոցա։ Զ.պաքէն զնորայատակ գեաս ընուն անձրևոյ շնթք փոքրիկք, այլ թուով անհամարք։ Յաւ զնոյն չարիս առնն ջրակոյտ նաւու ծածկապէս ընուլ քան անակնկալ ինչ հեղեղ յարուցեալ 'ի փոթորկէ։ Զ.անունք են և յանդամն սփռեալ քոսք և խաղաւարտք, այլ յորժամ անհամար թուով բազմութիւն նոցին գրաւեալ զմարմին, այնպէս 'ի մահ մնանել զայն՝ որպէս ահագին վերք հասեալք 'ի սիրան։ Զորին վասն գրեալ է. "Որ արհամարհէ զանաւս, առ փոքր փոքր կործանեսցի,,։ Զ.Օ ի որ անփոյթ առնէ զթեթև մեղսն լալ և խորհել 'ի նոցանէ, թէպէտ և համանգամայն չանկանիցի յարդարութիւն, այլ մնասամբ և մնասամբ բոլանդակ կործանի։

Դարձեալ յուշ լեցի նոցա զմոռաս ածել, զի երբեմն չար ևս մեղանչեմք փոքու քան մեծաս. վասն զի ծանր յանցանքն որչափ և փութթով ճանաչին, նոյնչափ ևս արագագոյն ուղղին. իսկ թեթևն որովհետև յոչինչ գրի, երբու անկասկածելի ինչ պէնդ պահի չարաչար։ Վասն որոյ դէպ լինի յոլովակի, զի միտք սովորեալք 'ի թեթև չարիս՝ և ոչ 'ի ծանուցց սոսկան, և մնեալ 'ի յանցանս՝ յետոյ ուրեմն հասանէն յաներկիւղ ապիրատութիւն. և այնչափ քամահէն զերկիւղիս մեծագունից, որչափ ուսան յաներկիւղս մեղանչել 'ի փոքունս։

Ընդ հակառակն, խրատել պարտ է զայնոսիկ ոչք 'ի փոքունց զգուշանան, և 'ի ծանունս ընկղմին, զի խնամով զգաստացուսցէն զանձինս. վասն զի յորժամ՝ բարձրանայ սիրտ նոցա վասն անձնապահ լինելոյ 'ի փոքունց, սովին բարձրամտութեամբ խարդաւանին 'ի վերՀ ծանունս մեղանչելոյ. և ուր արտաքուստ զփոքունս հնազանդէն ընդ ձեռամբ, այլ մնապարծ անձնահաճութեամբ փքանան 'ի ներքուստ, զամբարտաւանութեամբ ախտացեալ զմիտս 'ի ներքս՝ սկսանին և արտաքոյ նշաւակել մեծամեծ չարեաց։ Վասն որոյ զայս պիսիս որ զգուշաւոր են 'ի մանունս, այլ երբեմն 'ի ծանունս սուզանին, պէտք են խրատել զի մի արդեաք ուր արտաքուստ հաստատուն կալ կարծիցէն զանձինս, անդ կործանեսցին 'ի ներքուստ. և ըստ հատուցման սաստկապահանջ դատաւորին հպարտութիւն դոյզն արդարութեան ճանապարՀ բացցէ նոցա 'ի խորխորատ ծանր յանցաւորութեան։ Վասն զի որ միանգամ 'ի զուր ամբարհաւաճեալք՝ զփոքրիկ բարւոյ ունելութիւն անձանց իւրեանց ընծայեն, արդարապէս թողացուցեալք՝ 'ի մեծամեծ չարիս խարդաւանին. և կործանմամբ իւրեանց ուսանին եթէ անմարթ էր անձանց իւրեանց յոտին կալ, ուր անբաւ չարիք ձՀնէն զսիրտ նոցա, զոր թեթև ինչ բարիք 'ի վեր ամբառնային։

Դարձեալ յուշ լեցի նոցա խորհել, զի ոչ միայն 'ի ծանր յանցանս կապին չարաչար վարուք, այլ և յոլովակի 'ի փոքունս յորոց պահէն զանձինս՝ չար ևս մեղանչեն. վասն զի և 'ի նախկինս գործեն ապիրատութիւն, և վերջնովքս ծածկեն 'ի մարդկանէ զչարու-

թիւն իւրեանց։ Ա՝ ասն որոյ այն զի չարիս մեծամեծս գործեն յաչս Աստուծոյ՝ յայտնի անօրէնութիւն է. և այս՝ զի զոյն բարիս պահեն առաջի մարդկան, կեղծաւորեալ սրբութիւն։ Այր վասն ասացաւ առ Փարիսեցիս. "Օ մեղուկս քամէք, և զուղտս կլանէք"։ Այն իսկ է, փոքր չարեաց խտրող լինիք, և 'ի մեծամեծս անխտիր բերիք։ Ա՝ ասն որոյ զարձեալ կշտամբեին 'ի բերանոյ Հնմարտութեան՝ յասել նորա. "Ցանանորդեալ զանանուխս և զամիթ և զչամն. և թողեալ զծանր ծանր օրէնսս, զդատաստան և զողորմութիւն և զհաւատս"։ Օրդ չէ արժան հարեւանցի լսել զտասանորդութիւն փանաքի իրաց. զի թէպէտ զդուշնաբերեայս 'ի բանջարոց յիշեաց, բայց զհոտաւէտս յիշեցոյց, յայտնապէս ցուցանելով եթէ կեղծաւորք 'ի պահելն զզոյն բարիս՝ խնդրեն սիրել յանձանց զուրուսն համբաւոյ սրբութեան. և ուր զանց առնեն ընալ զմեծամեծս 'ի պատուիրանաց, ջանան պահել զփոքրունս, որ յաչս մարդկան հանապիսւ բուրեսցեն։

ԼԴ. Աչալզգ խրատու պէտս ունին այք և ոչ սկիզբն առնեն բարւոյ, և այլազգ այք սկսեալ ոչ կատարեն։ Ա՝ ասն զի չէ սկսելոյն յորդոր տալ պիտի՝ ոչ այնչափ վասն շինելոյ, զոր սիրել պարտ է 'ի շահ հոգւոց, այլ վասն աւերելոյ զիրս իրս յորս չարաչար զառածանեն. քանզի 'ի լսել անդ զայնպիսիս որոց են անխորձ ոչ գնեն 'ի գործ՝ եթէ ոչ նախ կշտամբեսցին վասն ինաբակարութեանց, զորոց առեալ է նոցա զփորձ։ Դ՝ անզի և ոչ յառնել յօժարի՝ որ ոչն գիտէ զանկումն իւր. և որ չզգայ ցաւոց վիրացն՝ ոչ խնդրէ զդեղ առողջութեան։ Ա՝ ասն որոյ նախ պարտ է ցուցանել նոցա եթէ քանի մնոտի իցեն իրքն՝ զորս սիրեն, և ապա քաջ յուշ ածել նոցա եթէ որչափ օգտակար իցեն զորովք զանց առնեն։ Դ՝ այս 'ի միտ առցեն զարժանիս իրաց խուսափելեաց զորս սիրեն, և ապա դիւրաւ խմացին զարժանիս սիրելի իրաց, յորոց փախչին։ Ա՝ ասն զի լաւ ևս ընդունին զանխորձ իրս՝ եթէ ստուգութեամբ Հանաչեն զվատթարութիւն փորձիւ խմացելոյ։ Դ՝ ահա յայնժամ՝ ուսանին սրտի մտաք խնդրել զՀնմարիտ բարիս՝ յորժամ հաւատեաւ հաստ լինիցին ստութեան իրացն զորս 'ի զուր պինդ ունէին։

Լ.ԷՂ լուիցեն, զի աստի բարիքս և հեշտալիք են վաղանցուկք, այլ պատիժք որ 'ի պատՀասս նոցին՝ են անանց յաւիտեան. քանզի և յաստիս բառնի ախորժելին 'ի նոցանէ յակամայս, և անդէն ցաւալին յակամայս պահի 'ի տանջանս։ Լ.ս այսպէս նուիրիք զահի հարկանիցին յօգուտ իւրեանց, որովք հեշտանան յանօգուտս. որպէս զի այն ինչ միտքն ընդոստուցեալ ակնարկեսցէ 'ի յետին տուգանս կործանման իւրոյ, և իմասցի եթէ հասեալ կայ 'ի գահաւանդս գլորման, ինքնին յետս ընկրկեսցի յընթացից իւրոց, և սարսափեալ յիրաց անտի զորս սիրէր, ուսցի սիրել զորս ատելիս։

Ա՞ն այսորիկ Լ.բեմիայի ասացաւ յառաքման իւրում՝ 'ի քարոզել. "Լ.հա կացուցի զքեզ այսօր 'ի վերայ ազգաց և թագաւորութեանց՝ խլել և բրել, կորուսանել և յատակել շինել և տնկել"։ Օ.ի թէ ոչ նախ քակէր զթիւրս, չկարէր շինել զուղիղս յօգուտ. և եթէ նախ չխլէր 'ի սրտից լսողաց զփուշս ունայնասիրութեան, վայրապար լինէր տնկել 'ի նոսա զանս սուրբ քարոզութեան։ Ամին իրի և Պետրոս նախ տապալէ՝ առ 'ի շինելոյ յետոյ, երբ ոչ յիշեցոյց Հրէից զոր արժանն էր նոցա առնել, այլ յանդիմանեաց զնոսա վասն իրացն զորս արարեալ էր նոցա, այսպէս ասելով. "Օ.Յիսուս նազովրեցի, զայր ցուցեալ յԱ.ստուծոյ 'ի ձեզ զօրութեամբ և նշանօք և արուեստիւք, զոր արար նոքա Լ.ստուած 'ի միջի ձերում, որպէս և դուք իսկ գիտէք. զնա նկատեալ խորհրդով և կանխագիտութեամբն Լ.ստուծոյ՝ մատնեալ 'ի ձեռս անօրինաց՝ բևեռեալ 'ի փայտի սպանիք. զոր Լ.ստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու"։ Որպէս զի խորհելով զանազորոյն արարս իւրեանց՝ քակեսցին քանդեսցին անտի, և անձկանօք խնդրելով զշնութիւն սուրբ քարոզութեան՝ մնադիւր լուիցեն յօգուտ։ Ա՞ն որոյ առ ետեղ ետուն պատասխանի. "Օ.ինչ գործեսցուք արք եղբարք"։ Լ.ս զայս լուան. "Լ.պաղաւեցէք, և մկրտեսցի իւրաքանչիւր որ 'ի ձէնջ"։ Լ.ս յայտ է թէ անպոնեին զայս բան շինութեան, եթէ ոչ տեսանէին կանխաւ յանձինս զկործանումն իւրեանց առ 'ի պաղաբեր առնելոյ։

Պաքէն և Սողոս 'ի փայլատակել լուսոյ յերկնից 'ի վերայ նորա՝ ոչ զայն լսէր զոր պարտն էր նմա առնել ըստ արժանւոյն, այլ զոր չարաչար արարեալն էր նորա. զի այն ինչ թաւալգլոր անկեալ հարցանէր, "Ո՞վ ես տէր", անդէն լուաւ պատասխանի. "Եմ Յիսուս Նազովրեցի, զոր դուդ հալածես"։ Եւ յասելն խօսին, "Տէր, զինչ հրամայես ինձ զի արարից", լսէր անդրէն. "Յոտն կաց, և մուտ 'ի քաղաքդ, և պատմեսցի քեզ զինչ պարտ իցէ առնել"։ Բազմիկ յերկնից տէրն խօսեալով, կշտամբեաց զգործս հալածչին իւրոյ, այլ ոչ նոցն ժամայն եցոյց նմա զինչ հարկ էր նմա առնել. և ահա իբրև կործան անկաւ ամենայն շինուած բարձրամտութեան նորա, յետ կործանմանն իւրոյ խոնարհեալ ինդրէր զշինութիւն. և թէպէտ քակտեցաւ բովանդակ ամբարտաւանութիւն նորա, այլ տակաւին յապաղեալ մնայ բան շինութեն. որպէս զի ամենի հալածիչն քանդեալ անկեալ կայցէ առ ժամանակ մի. զի յետոյ այնչափ հաստատիցէ կանգնեալ կառուսցի, որչափ նախ հիմնովին տապալեալ անկեալ էր 'ի նախկին մոլորութենէն։

Այս ուրեմն որոց չկցէ տակաւին սկսեալ բարի ինչ գործել, պարտ է քանդել տապալել զնոսա նախ 'ի խստութենէ չարութեան նոցա, որպէս զի յետոյ կանգնեսցին 'ի գործս ուղղութեան։ Որպէս և զարձրաբերձ փայտ անտառի յանդն սակս տապարահար հատեալ կործանեմք, որպէս զի յետոյ 'ի յարի շինուածոց կանգնեսցուք. բայց ոչ իսկ և իսկ 'ի կարգ շինուածոցն դնեմք, այլ մինչև ցամաքեսցի դալարութիւն նորա անպէտ. զի որչափ քամի խոնաւութիւն նորա 'ի գետնատարած անկմանն, այնչափ ամրապինդ կանգնի 'ի վեր։

Օ՜ սորին հակառակն պարտ է խրատել զնոսա, զոր զսկսեալ բարիս չկատարեն, յուշ առնելով նոցա զի քաջ խելամուտ լինիցին եթէ 'ի չհանել նոցա 'ի գլուխ զառաջադրութիւնս իւրեանց՝ խէն յարմնոցց և զսկզբսեալս. զի թէ ոչ ամէն փութալ խնամոց՝ զոր արժան սեսանէ զբ 'ի գործել, գոսանայ և կանխաւ գործեալ բարին։ Այսն զի յաշխարհի ասա հոգին մարդոյ է որպէս նաւակ 'ի վերայ վայրաբեր գետոյ 'ի վեր կոյս խաղացեալ, որում անմարթ է 'ի միում վայրի կալ

մնալ. զի թէ հնկրտի 'ի վերս անդր, ինչանէ 'ի ստոր. վասն որոյ եթէ զկսեալ բարին յամբառնայ 'ի կատարումն ձեռն զօրաւոր գործոնեայ, նոյն իսկ թուլութիւնն գործելոյ դիմամարտ գտանի այսմ որ յառաջն գործեցաւ։ Վասն այսորիկ ասէր Սողոմոն. «Որ զանձն իւր ոչ բժշկէ 'ի գործս իւր, եղբայր է նա այնորիկ՝ որ անձին առնիցէ։» Զի որ ոչ յառաջ վարէ սրտի մտաք զարին զորմէ բուռն եհար, նովին իսկ պղերգութեամբ գործելովն նման է ձեռին քակտողի, կամ անձնասպան եղելոյ առ հեղգալոյ 'ի դարման կենաց։ Վասն որոյ ասէր հրեշտակն առ Եկեղեցին Սարդիացւոց. «Եր արթուն, և հաստատեա այսուհետև. զի հանդերձեալ ես (կամ զոր հանդերձեալն) մեռանել. զի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի Աստուծոյ։» Զի որովհետև գտեալ չէին լի և կատարեալ գործք նորա առաջի Աստուծոյ, յուշ առնէ նմա՝ եթէ մեռանիցին և կանխաւ գործեալքն։ Զի եթէ որ ինչ 'ի մեզ 'ի մեռելոյ սակի գտանի՝ ոչ փութամբ 'ի կենդանութիւն անդր վերբերել, շինանի և այն որ դեռ կենդանի երևի։

Յուշ լիցի այսպիսեաց, զի թերևս լաւագոյն էր չձեռնարկելն նոցա 'ի Ճանապարհ ուղղութեան՝ քան յետս դառնալ յուղիղ ուղղոյ սկսելոյ. զի եթէ յետս կոյս չհայէին, ոչ թուանային յառաջիկայ փութոյ՝ յոր ձեռն արկին. հնարա լուիցեն զդրեալն. «Եաւ էր նոցա եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեն Ճանապարհ, քան՝ զի ծանեան և յետս կացին։» Որպէս և գրեալ. «Պարտ էր քեզ ցուրտ լինել և կամ ջերմ. այլ զու զաղջ ես, և ոչ ջերմ և ոչ ցուրտ. հանդերձեալ ես փսխել 'ի բերանոյ իմմէ։» Զի ջերմ է նա որ 'ի փոյթ բարի որպէս բուռն հարկանէ՝ նոյնպէս և կատարէ. և ցուրտ՝ որ չառնէ ձեռն 'ի գործ առ 'ի կատարել. և զոր օրինակ 'ի ցրտոյ նախ 'ի զաղջութիւն է անցանել և ապա 'ի ջերմութիւն, նոյնպէս և 'ի ջերմութենէ զաղջութեամբ է դառնալ 'ի ցրտութիւն։ Վասն որոյ որ միանգամ կորուսեալ զցուրտն անհաւատութեան՝ դեռ կենդանի կայ, այլ ոչ ջանայ յաղթել զաղջութեան եռանդեամբ, անշուշտ անցոյս մնացեալ 'ի ջերմութենէ՝ յամենալ 'ի վերասակար եղկութեան՝

ցրտանոյ։ Բայլ որպէս յառաջ քան զգաղջութիւնն ընդ յուսով է ցրտութիւն, նոյնպէս յետ ցրտութեան ընդ յուսահատութեամբ է գաղջութիւն։ Այսն զի որ տակաւին 'ի մեզ կայ՝ չկորուսանէ զյոյս դարձի. այլ որ յետ դարձին գաղջանայ՝ կարձէ և զյոյսն զոր ունէր 'ի մեղաւորութեան։ Այսն որպ պարտ է մարդոյ կամ ջերմ լինել և կամ ցուրտ. զի մի 'ի գաղջն գտանել փոխեսցի. զի կամ չէ դարձեալ՝ տակաւին բերցէ յանձին զյոյս դարձին, և կամ յետ դարձին եռասցի յառաքինութիւնս, զի մի փոխեսցի որպէս գաղջ. վասն զի գաղջութեամբ 'ի ջերմութենէ անտի սկսելոց դառնայ 'ի վնասակար ցրտութիւն։

ԼԵ. Բայլազգ պէտք են խրատել զայնոսիկ որք ըզչարն 'ի ծածուկ գործեն, և զբարին հրապարակաւ. և այլազգ վնասս որք թէպէտ և ծածկեն զբարին՝ զոր գործեն, այլ սակայն իւիք իւիք գործովք արտաքոյ տան չար կարծիս զանձանց։ Բզդ առաքինոյն յուշ առնել պէտք են զի խորհեսցին եթէ արչտի արագաթռիչ անցանիցեն դատաստանք մարդկան, և որչտի անշարժ կայցեն մնայցեն դատաստանքն Աստուծոյ. և զի զաչս մնայ իւրեանց հաստատեսցին 'ի կատարած իրացն. վասն զի անցանէ վկայութիւն մարդկային գովութեան. իսկ վերին վճիռն և գիտութիւնն՝ որ և 'ի գաղտնիս խորամուխ լինի, զօրանայ 'ի յաւէժական հատուցումն արդարադատ։ Այսն որոյ յորժամ զծածուկ կարիս իւրեանց դնեն առաջի դատաստանացն Աստուծոյ, և զբարիս առաջի աչաց մարդկան, ապաքէն անվկայ է բարին նոցա արտաքին, և չէ առանց վկայութեան յաւիտենից՝ զոր ինչ 'ի ծածուկ մեզանէն։ Բ. Այնպէս ծածկելով 'ի մարդկանէ զյանցանս, և յայտնելով զառաքինութիւնս, թաքուցանելով մերկանան զայն՝ որ վասն կրեսցէն զպատուհաս, և մերկանալով թաքուցանէն զայն՝ որ վասն վարձատրելոց էին։ Օ այսպիսիս իրաւամբք կոչէ Հնմարտութիւնն զերեզմանս զեղեցիկ բռեալս արտաքոյ, այլ ոսկերքք լիս մեռելոց. վասն զի զբարիս ախտից 'ի նեղքս պահէն, այլ յայտ մարդկան ցուցանելով քանի մի գործս՝ պատրէն անձամբ զանձինս զունով և ևեթ արտաքնայարդար արդարութեամբ։

Ոմն իրի պարտ է յուշ առնել նոցա, զի մի զբարիս

իւրեանց յոչինչ դարձուցին, այլ արժանի լաւ ևս վարձուց առնիցեն. վասն զի նոքա ձանաչեն զյարգ բարեաց իւրեանց, զի 'ի վարձ նոցին անբաւական դատին զգալ վեստ մարդկան. ապա թէ ոչ 'ի խնդրել զգովութիւն անցաւոր վասն լաւութեան՝ անարգ գնոց վաճառեմք զարժանին յաւիտենական փոխարինաց։ Այս է անսուտն այն բան ճշմարտութեան. "Զմէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա"։ Յուշ ածցի նոցա և ևս, զի յորժամ 'ի ծածուկ գործեն զչարիս՝ այլ արտաքոյ ցուցանեն բարիս, ինքեանք իսկ յայտ առնեն և աղաղակեն թէ պարտ է զՀետ երթալ յորոց խորշինն, և սիրել զոր ատեանն. որով որպէս թէ կենդանի են այլոց, և մեռանին անձանց։

Այնդ հակառակն պարտ է խրատ տալ այնոցիկ, զոր զչարիս իւրեանց 'ի ծածուկ ունին, այլ 'ի գործս ինչ արտաքոյ չար կարծիս տան զանձանց. քաջ 'ի միտ առցեն սոքա, զի մի յորժամ զանձինս կենդանացուցանիցեն զօրութեամբ գործոց բարեաց, զայլս սպանանիցեն յանձինս իւրեանց 'ի ձեռն օրինակաց չար կարծեաց. և զի մի նուազ սիրեսցեն զընկերս քան զանձինս. և ուր ինքեանք զառողջարար գինին ըմպեն, այլք որ տեսանեն զանպատեհ ինչ 'ի նոսա՝ քամեսցեն զմահաբերի բաժակ թունից։ Այսն զի այսպիսիք ոչ շատ օգտեն ումեք յընկերաց, և ոմանց մեծապէս զեան առնեն. զի ջանան զբարեգործութիւնս ծածկել, և միանգամայն օրինակ չար ցուցանեն. զի որով կարող է որ առ ոսն կոխել զփառասիրութիւն՝ նուազ առնէ զշնութիւն յորժամ ծածկէ զբարեգործութիւնն, և որպէս թէ 'ի սերմանէն արկելոյ քանցէ զարմատս ոչ ոչն ցուցանէ զգործ արժանի հետևելոյ։

Այսն որոյ ասեր ճշմարտութիւնն յաւետարանի։ "Ցենցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն ըզՀայր ձեր որ յերկինս է"։ որում զՀետ գայ և պատուէրն, որ այնպէս իմն թուի թէ այլ ինչ ուսուցանիցէ. "Օ գոյշ լերուք ողորմութեան (կամ արդարութեան) ձերում մի առնել առաջի մարդկան 'ի ցոյցս նոցա"։ Արդ զնարդ խցէ պարտ իմանալ՝ այնպէս առնել զմեր գործս, զի մի տեսցին, և միանգամայն զի տեսանիցին. բայց եթէ զոր ինչ առնեմքն, 'ի միոյ կողմա-

նէ ծածկեսցուք , զի մի փառաւորեսցէն զմեզ մարդիկ . և 'ի միասմէ կողմանէ ցուցցուք , զի փառաւորեսցէն զՀայրն երկնաւոր . վասն որոյ ըստ միումն պատուիրեաց տէր ջանալ որպէս թէ 'ի ցոյց ինչ մարդկան , և ըստ միումն՝ ցուցանել՝ զի փառաւորեսցի Հայր մեր որ յերկինս է : Յս ահա 'ի վախճանէն յայտնի կացոյց եթէ որպէս տեսցի և ոչ տեսցի գործն բարի : Զայն զի յայս հաստատեալ լեալ դիտաւորութիւն գործողին , զի վասն իւր մի տեսցի , այլ վասն փառաց երկնաւոր Հօրն յայտնեսցի :

Զայն որոյ ստէպ իսկ պատահէ , զի գործ բարի թաքուն լինի և 'ի հրապարակի , և յայտնի լինի 'ի թաքնութեան : Օ՛ի որ 'ի Հանդիսացեալ բարեգործութեան իւրում՝ ոչ զանձին փառս խնդրէ , այլ զՀօրն վերնոյ , զիւր գործածն թաքուցանէ . վասն զի զնա միայն ունի վկայ , որում Հոգացաւ Հաճոյանալ : Յս որ 'ի գաղտնի բարեգործութեն իւրում՝ ցանկայ զի ծանիցէն և գովեսցէն , թէպէտ և ոչ ուրուք տեսեալ իցէ զոր արար՝ սակայն առաջի մարդկան արար զայն . վասն զի այնչափ վկայս կուտեաց 'ի գործելն զբարին , որչափ մարդկային փառս խնդրեաց 'ի սրտի :

Խակ յորժամ չար կարծիքն՝ առանց յանցանաց իւրոց զօրացեալ՝ ոչ սրբի 'ի մտաց այլոց , ամենայն չարիս կարծողաց օրինակ չար ընծայի : Զայն որոյ և յոլովակի պատահէ , զի որք անհոգութեամբ թողացցանեն չար ինչ կարծել զնոքեանց , թէպէտ և ինքեանք ջանեն ինչ չար , բայց բազմապատիկ յանցանեն 'ի ձեռն այլոց՝ որ ինքեանց հետևեսցին : Զայն այնորիկ Պօղոս առ այնոսիկ ոչք ուտեն զանասուրբ՝ ինչ առանց պղծելոյ զանձինս , այլ պատճառս տան գայթակղութեան անկատարից , ասէ . " Օ գոյշ լերուք , զի մի ազատութիւն ձեր այդ գայթակղութի լեցի տկարաց ,, . և թէ " Յս կորիցէ տկար եղբայրն 'ի քում գիտութեան , վասն որոյ Քրիստոսն մեռաւ : Յս այնպէս յանցցուցեալ յեղբարս , և զնոսիկ մնաց տկարացն զայրացուցեալ՝ 'ի Քրիստոս մեղանչէք ,, : Զայդ և Զովսէս յետ ասելոյ , " Օ Համբն կամ զնուլն մի զզուիցես ,, , յաւել և զայս . " Յս առաջի կուրին գայթակղութիւն մի դնիցես ,, : Զայն զի զզուել զՀամբն կամ

անիծանել զխուզն՝ է բամբասել զՀեռաւորն և զոչ-
լսողն . իսկ առաջի կուրին գայթակղութիւն դնել-
թէպէտ և անվտանգ ինչ գործ համարիցի , սակայն
այնմ՝ որ ոչ ունիցի զլոյս ընտրողութեան՝ է պատճառս
տալ գայթակղութեան ։

Լ.Զ . Եհա այս են , զոր վերակացուն հոգւոց պարտի
պահել ըստ տեղւոյ յիւրաքանչիւր քարոզութեան ,
որպէս զի փութով խնամոց ըստ իւրաքանչիւր վիրաց 'ի
վերայ ածցէ զդեղ դարմանոյ ։ Եւ քանզի գործ մեծ
է յարմարել խրատս զանազանս առ զանազան անձինս ,
որովհետև տարժանելի է յոյժ զմի մի օրինաք հրա-
հանգել ըստ հարկի պաշտամանն , այլ առաւել աշխա-
տալի է զանթիւ ունկնդիրս այլ և այլ կրից նեբքոյ ան-
կեալս՝ 'ի մի և 'ի նոյն ժամանակի միով ձայնիւ զամե-
նեսին կրթել . վասն որոյ այնպէս պարտ է բարեխառ-
նել ճարտարութեամբ զնոյն բարբառ , զի ոչ միայն
պէսպիսութեամբ ախտից այլ և այլ ունկնդրաց 'ի ճահ պա-
տահեսցէ , այլ և ոչ հակառակ գոցի անձամբ անձին .
զի ընդ միջական կիրս միօրինակ ընթացիւք խաղայցէ ,
միանգամայն և հանդոյն երկսայրի սուսերի զուռոյցս
մտրմնաւոր խորհրդոց հատցէ յաջմէ և յահեկէ . և
այնպէս քարոզեսցէ ամբարտաւանից զխոնարհութիւն ,
զի մի վեհերոտաց յաւելցի երկիւղ 'ի վերայ երկիւղի ։
Լ.Ա այնպէս ահաւոր իշխանութիւն ցուցցի առ ցա-
ծումն , զի մի յաւելցի հպարտաց անսանձ համարձա-
կութիւն ։ Եւ,նպէս քարոզեսցի հեղգասրտաց և թու-
լամարթաց փայթ գործոց բարեաց , զի մի անհանդարտ
բարուց յաւելցի անկարգ յարձակումն 'ի գործս ։ Եւ,ն-
պէս չափ դիցի համարձակութեան անհանդարտից , զի
մի դատարկասունք առաւել 'ի թմրութիւն յուլութե-
բերիցին ։ Եւ,նպէս ցածուցանիցէ զբարկութիւն կար-
ճամտաց , զի մի գրաւեսցէ անհոգութիւնն զթոյլս և
զմեղկս ։ Եւ,նպէս վառեսցէ 'ի նախանձաւորութիւն
զմեղկութիւն թոյլ եղելոց , զի մի հրդեհ յաւելցի 'ի
բարկասիրտս ։ Եւ,նպէս ազդեսցէ կծծի գտելոց զա-
ռատաձեռնութիւն , զի մի շռայլքն սանձարձակ լինիցին
յառաւել վատնումն ընչից ։ Եւ,նպէս քարոզեսցէ շը-
ռայլից զինայութիւն , զի մի աձեսցի կծծեացն ագա-
հութիւն կորստական ընչից ։ Եւ,նպէս գովելի ցուցցէ

անժուժից զամբանութիւն, զի մի և ժուժկալք յօժա-
րեսցին առ մարմնասիրութիւն. և այնպէս գովելի
ցուցցէ ողջախոհից զկուսութիւն մարմնոյ, զի մի ան-
գոմսելի երևեսցի 'ի լծակցեալս արգասաւորութիւն
մարմնոյ։ Այնպէս հոչակեսցին դիւատեաք գործք
բարիք, զի մի և սակաւ ինչ նպաստ գտանիցեն և չարիք։
Այնպէս պիտի ներբողել զմեծամեծ լաւութիւնս, զի
մի վհատեսցին անյուսութեամբ և ոչք բերին 'ի դոյզն
բարիս։ Այնպէս պարտ է յանձանձել զչափաւոր բա-
րիս, զի մի բաւական համարելով զնոսին՝ յետնեսցի ոք
'ի զարգանալոյ յեւ մեծամեծս։

Լ.Է. Պարէն ծանր աշխատութիւն է քարոզի բա-
նին՝ 'ի խօսելն առ բազմութիւն տքնել 'ի վերայ ծա-
ծուկ շարժմանց և պատճառաց միոյ միոյ յունկնդրաց, և
զօրէն ըմբշամարտակաց այսր անդր շրջը ընել զանձն. այլ
առաւել տարժանելի այն է, յորժամ հարկեսցի քարո-
զել միում ումեք որ գերեալ եցէ 'ի հակառակ ախտից։
Վասնզի ստէպ իսկ պատահէ, զի այր խառնուած եցէ
յանչափս զուարթ, յանկարծակի 'ի դոյզն ինչ պատ-
ճառաց 'ի յետին տխրութիւն հասանի։ Այլ և փոյթ
քարոզչին այն պարտի լինել՝ զի այնպէս փարատեսցէ
զառժամանակեայ տրտմութիւնն, զի մի առաւելու-
ցու ընիկ զուարթութիւնն այն խառնուածոց. և այն-
պէս սանձեսցէ զզուարթութիւն խառնուածոյն, զի
մի ամբեսցէ առժամանակեայ տրտմութիւնն։

Այս ոք խուճապէ անչափ գահավիժմամբ. այլ եր-
բեմն ուր պէտք էին ամենապարել, խափան լինի նմա
յանկարծահաս ինչ վերերոտութիւն։ Այն ոք դանդ
դաղաշարժ է տարապայման երկչոտութիւն. բայց եր-
բեմն յայն ինչ՝ յոր յօժարի սրտիւ, յանդուգն յարձակ-
մամբ բերի։ Այն ասն որոյ յառաջնումն այնպէս պարտ է
փարատել զյեղակարծ վերերանս, զի մի զօրասցի 'ի
նա բնաւորեալ գահավիժութիւնն. և յերկրորդումն
այնպէս պարտ է սանձել զյանկարծաբորբոք յարձա-
կումն, զի մի զօրասցի 'ի նմա բնաւորեալ վատասրտու-
թիւնն։

Լաւ զինչ զարմանք եթէ զայդ զգծնութիւն պա-
հեսցեն բժիշկք հոգւոյ, ուր այնչափ ճարտարութիւն
վարին բժիշկք ոչ եթէ սրտից, այլ մարմնոյ։ Վասնզի

ստէպ պատահէ, զի տկարն մարմնով կրէ զխօթութիւն ինչ ուժգին, որում պէտք են մատուցանել դեղ ինչ զօրաւոր, այլ մարմինն տկար չտանի զայն դարմանն սաստիկ. յայնժամ բժիշկն գուն զօրծէ այնպէս զդէմ ունել վերահաս խօթութեան, զի մի տկարութիւն վշտացնելոյ մարմնոյն առաւելուցու, զի մի ընդ խօթութեան և կեանքն 'ի բաց գնասցեն։ Պատն այսորիկ այնչափ ընտրողութեամբ յարմարէ զդարմանն, զի միանգամայն ընդ առաջ ելցէ ցաւոցն և տկարութիւն։ Բդ եթէ մարթ իցէ մատուցանել մարմնոյ մի միայն դեղ՝ որ դէմ ընդդէմ կարեաց զանազանապէս ազդիցէ, (քանզի և յայնժամ ստուգապէս լինի դեղ, եթէ միօրինակ օգտեսցէ ցաւոցն և խառնուածոյն,) ընդէր չկարիցէ դեղն հոգւոյ մի և նոյն խրատտուութեամբ օգտել հիւանդացեալ բարուց զանազանեալ ոգով. զոր այնչափ նրբահայեաց տեսութեամբ հարկ է 'ի գործ արկանել, որչափ զի Ճիգն է 'ի վերայ աներևոյթի իրաց։

ԼԸ. Պէտք յոլովակի մին յերկուց ախտից յոյժ նեղէ, և միւսն սակաւ, յայտ է թէ արագ արագ զայն պարտ է դարմանել՝ որ Ճեպեցուցանէ առ 'ի մահ։ Եւ եթէ չիցէ մարթ դարմանն տանել մահաբեր եղելումն առանց զայրանալոյ միւսոյն, արժան է զի քաջոյզ բանին Ճարտար խրատու յանձն առնուցու զիսոբր մի անձուն այսր վնասու, որպէս զի մարթասցի ապրեցուցանել զհիւանդն 'ի մահուանէ։ Եւ զայս առնելով՝ ոչ եթէ մեծացուցանէ զխօթութիւնն, այլ կարևոր դեղով պահէ զկեանս ախտացելոյն, մինչև գտցէ զդէպ ժամանակ փրկութեան նորին։

Պատն զի յաՃախ պատահէ, զի յանզգոյշս շտապկերութիւնք՝ հոսպ ընդ հոսպ զրգռի յանառակութիւն ցանկութեան. այլ եթէ 'ի պատերազմէ ատտի երկուցեալ՝ ժուժկալութեամբ նեղէ զանձն, 'ի մնախառութեանն փորձութիւն ըմբռնի. ուր յայտ է թէ ոչ շինչանի 'ի սպառ մին յախտիցս եթէ ոչ միւսն փոքր մի յանձանձեսցի։ Բդ որում 'ի ժամտ ախտիցս սրտի մնօք ընդ առաջ ելանել է պարտ, եթէ ոչ այսմ՝ որ վտանգ բերէ մնատալուտ։ Պաքէն չէ արժան յանձն առնուլ զի առաքինութեամբ պահեցողութեան վտանգեսցին կեանք, բայց և մի շտապկերութիւնն զեղխութեամբ բարձցէ

զոր 'ի կենաց։ Որոն վասն խորհելով Պօղոս՝ զարկարութիւն լսողին, որ մարթի կամ յօժարել 'ի վատթար անդր, և կամ մնասարծել ընդ գործ լաւութեան, ասաց. "Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի՝ զբարիս գործեա, և ընկալցիս զգովութիւն 'ի նմանէ"։ Օ՛ի ոչ եթէ յայն սակս պարտ է բարիս գործել, որպէս զի մի՛ բնաւ երկիցէ որ յիշխանութենէն աշխարհի, և կամ զի նովին ընդունիցի զվարձս անցաւոր գովեստից. այլ տեսեալ առաքելոյն, զի խօթամիտն չկարէ ամենայն արիանալ զի համանգամայն հեռի լինիցի 'ի վատթարութենէ և 'ի գովութենէ, որպէս գերասպնած քարոզ բանին խրատելով զնա, ինչ մի առաջի եդ նորա, և եբարձ մի ինչ. քանզի ներելով զկամուրն 'ի բաց տարաւ զխիսան. զի որովհետև ոչ արիանայր տկարն 'ի Թողուլ զենանն, Թողացուցեալ 'ի միում Թերութեան ոգին բնաւորապէս՝ 'ի միամէն անաշխատ ազատեսցի։

ԼԹ. Լ՚ալ որ քարոզ բանի իցէ գիտասցէ՝ զի զոգի լսողին չէ արժան ձգել անդր քան զկար նորա. զի մի, որպէս կանքն են ասել իմոց բանից, յառաւել ձգտեցն հատցի լար մնացն։ Վ՚ասնզի զերս բարձունս կամ զխորինս պէտք են ծածկել 'ի բազմութենէ, և դուն ուրեք սակաւուց յայտնել։ Վասն որոյ ասաց Հնմարտութիւնն ինքնին. "Լակ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ (կամ տընտես) և իմաստուն, զոր՝ կացոյց տէր իւր 'ի վերայ ծառայից իւրոց (կամ գերդաստանի), տալ նոցա կերակուր (կամ բաժին ցորենոյ) 'ի ժամու"։ քանզի չափով ցորենոյ նշանակի եղանակ բանի. զի մի յորժամ տացի ինչ յանձուկ սիրտ անընկալուչ, 'ի դուրս թափեսցի. նմին իրի և Պօղոս ասէ. "Ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրև ընդ հոգևորս, այլ իբրև ընդ մարմնաւորս. իբրև տղայոց 'ի Քրիստոս՝ կաթն ջամբեցի ձեզ, և ոչ կերակուր"։

Վասն որոյ և Մովսէս յելանեալն 'ի գաղանեացն Աստուծոյ, քօղ արկանէր 'ի վերայ փայլակնացայտ երեսաց իւրոց առաջի ժողովրդեան. այս է՝ ոչ ցուցանէր ամենայնին զներքին պայծառութեան զծածուկս։ Վասն որոյ նա ինքն 'ի զիմաց տեառն պատուէր տայր, զի թէ որ արբէնայցէ, և անփոյթ լցի փակել զբերան ջրհո-

ըսյն, յանկանել անդը արքառոյ կամ իշոյ՝ հատուսցէ զդիմն. զի որոյ 'ի խորս գիտութեան հասեալ՝ ոչ ծածկէ առաջի գրաստամիտ լսելեաց, պատժապարտ գտանի՝ եթէ բանիւք նորա ըմբռնիցին 'ի գայթակղութիւն միտք ուրուք՝ սուրբ կամ անսուրբ։ Որպէս և առ երանելին Յոբ ասացաւ. "Որ ետ կանանց (կամ խօսնակաց) իմաստութիւն (կամ հանճար)..." քանզի սուրբ քարոզ բանին յորժամ խօսի 'ի միգապատ յայսմ ժամանակի, իբրու խօսնակ 'ի գիշերի խօսի. որպէս ասէ. "Լոյդ այսուհետև ժամ է մեզ 'ի քնոյ զարթնուլ..." և դարձեալ, "Աթափեցարուք արդարութիւն, և մի մեղանչէք..։

Լոյսն հանն բնաւորեալ է 'ի խոր գիշերի բարձրաձայն խօսել. իսկ 'ի մերձենալ պահու առաւօտուն՝ նուազ և մեղմ ձայնիւ խօսի. իբր զի որ ոք ուղղութեամբ քարոզ է բանին, տակաւին 'ի մթագին սիրտս զյայտնի բանս բարբառի, և ոչ մի ինչ 'ի գաղտնի խորհրդոց յերևան ածէ. որպէս զի յայնժամ յանկաւոր գտանիցին ըսել բանս նրբինս զերկնայնոց, յորժամ մերձենայցեն 'ի լոյս Հնմարտութեան։

Ի. Լոյսն մեք 'ի կարգի նախասացեալ բանից 'ի փոյթ սիրոյ գարձ արասցուք. զի քարոզ բանին ո՛ ոք և իցէ՝ առաւել գործով քան բանիւ ձայնատու լիցի, և առաւել բարի վարուք առաջնորդեսցէ հեաւղոց իւրոց, քան թէ խօսելով ուղեցոյց լիցի այլոց՝ եթէ յո՛ պարտ իցէ ընթանալ։ Որանզի և խօսնակ հաւս այս, զոր տեր 'ի ձեռս առնու յօրինակ քաջահնչող քարոզի 'ի խօսս իւր, այն ինչ պատրաստի խօսել, նախ թօթափէ զթեւս իւր, և հարկանելով զանձն յառաւել տքնութիւն ածէ. իբրու զի հարկ է այնոցիկ ոչ շարժեն զանս սրբոց քարոզութեան, նախ տքնել 'ի ջանս բարեգործութեան, զի մի ինքեանք գործով թմբրեալք զայլս զարթուցեն ձայնիւ. նախ զանձինս շարժեսցեն բաբախմամբ ինն թևոց 'ի գործս վսեմականս, և ապա զայլս յօժարամիտ կացուցեն առ բարի վարս. նախ թևօք խորհրդոց զանձինս հարցեն, և մտադիր քննութեամբ կշռամբեսցեն որ ինչ 'ի նոսա թմբրեալ կայցէ յանօգուտս, և ուղղեսցեն զանձինս անաչառ յանդիմանութեամբ, և ապա զայլոց վարս խօսելով յարդարեսցեն.

նախ փոյթ կալցին արտասուօք պատուհասել զանձանց թերութիւնս, և ապա բարբառեսցին զոր ինչ արժանի պատուհասի դատին յայլս. և մինչ չև հնչեցուցեալ զբանս խրատու և յորդորանաց, զամենայն զոր հանդերձեալ ի ցեն խօսել՝ յարգիւնս ածեալ գործովք աղաղակեսցեն։

ՄԱՍՆ ՀՈՐՈՐԴ

Այն, քանզի բաղում անգամ, յորժամ քարոզութիւնն վայելուչ յեղանակօք յորդառատ ծաւալի, սիրտ քարոզչին բարձրանայ ծածուկ ուրախութեամբ ընդ փառս անձին, պէտք են ամենայն փութոյ, զի ահիւ մեծաւ ընկճեսցէ զանձն, զի մի՝ ի բժշկել զվէրս այլոց՝ ինքն՝ ի կորուստ անձին փքանայցէ. և՝ ի ձեռն տալ այլոց՝ զանձն մոռանայցէ, և՝ ի կանգնելն զայլս՝ ինքն գլորեսցի։ Այսոսն զի ոմանց բաղում անգամ մեծութիւն առաքինութեան պատճառ լինի կորստեան. քանզի ուր յանձնապաստանութեամբ յանչափս վստահանան՝ ի զօրութիւն իւրեանց, անհոգութեամբ՝ ի մահ մատնին յեղակարծուց։ Այսոսն զի այն ինչ առաքինութիւնն դիմակաց լինելով ախտից յաղթող գտանի, խնդամտութեամբ իւիք զուարճանայ սիրտ, և դէպ լինի մոտաց բարւոք քաղաքավարելոյն՝ թողուլ զերկիւղ պարահայեաց յանձն լինելոց, և յանձնապաստանութեամբ կալ իբրու յապահովի. և այսպիսում ընդարմացելոյ՝ խոտամանկ թշնամին սկսանի յիրեցուցանել մի առ մի զամենայն բարեբաւութիւնս նորա, և ամբառնայ զնա ամբարտաւանութեամբ մոտաց իբրու գեր՝ ի վերոյ քան զայլս։ Որով առաջի արդար դատաւորին՝ խորխորատ հոգւոյ լինի յիշատակ առաքինութեանն. վասն զի յիշելով զոր արարն, յորժամ բարձրամտիցն յանձին յանդիմանն տեառն՝ խոնարհութեամբ կործանն անկանի։ Այսոսն որոյ ասացաւ առ հպարտացեալն. "Ի ջուրց վայելչութեան էջ ինձէա ընդ անթափաստս"։ Որպէս այն թէ մեկին ասիցէ. որովհետև բարձրամտեա ընդ գեղ առաքինութեանդ, նովին չքնաղութեամբ մղիս՝ ի գլորումն։

Այսոսն այսորիկ՝ ի դէմս Լրուսաղէմի հոգին հպար-

տացեալ ընդ առաքինութիւնս անարգի բանիւս այսուիկ. «Օ՛ի էր կատարեալ վայելչութիւն գեղոյ քո, զոր յօրինեցի՛ ի վերայ քո, ասէ աղոնայի տէր. և դու գեղապանծ եղեր՝ ի գեղ քո, և տարածեցեր զլուսնը-կութիւն քո առ ամենայն անցաւորս»։ Վանդի գեղապանծութեամբ գեղոյ իւրոյ բարձրանայ սիրտ՝ յորժամ խնդամտաբար պանծայ յանքոյթս ընդ արգասիս առաքինութեանց. և սովին յանձնապաստանութեամբ բերի՛ ի պոռնկութիւն. զի յորժամ պատրանք մտայ թագաւորէն զոր, յայնժամ չար ոգիքն պղծեն զնա մոլորեցուցանելով յախտս անթիւս։ Ի միտ առ և զասացեալն. «Պոռնկեցար ընդ ամենայն անցաւորս, կամ յանուն քո»։ զի յորժամ ոք՝ ի բաց թողու յանկարկելոյ՝ ի վերին տեսչութիւն բարձրելոյն, սկիզբն առնէ խրն-դրել զփառս անձին, և անձին ընծայել զամենայն բարի զոր ընկալաւ՝ ի ձեռանէ առատապարգև տեառն՝ ի սկզբան քարոզութե՛ն, և ցանկայ տարածանել զպարծանս մտայ իւրոյ, և գուն գործէ սքանչելի երևել յաչս ամենեցուն։ Այլ այնպէս յանուն իւր պոռնկի. զի թողեալ զօրինաւոր անկողին՝ պիղծ ոգւոյն մատնէ զանձն՝ ի շաղախումն փառասիրութեամբ։

Որոյ վասն ասէ Դաւիթ. «Մ՝ասնեաց՝ ի գերութիւն զզօրութիւն նոցա, և զգեղ նոցա՝ ի ձեռս թշնամեաց նոցա»։ Վանդի՝ ի գէրութիւն մատնի զօրութի՛ն և գեղեցկութիւն առաքինութեան, յորժամ իշխէ հին թշնամին՝ ի վերայ հոգւոյ պատրելոյ բարձրամտութի՛ բարեգործութեան։ Այս խորհուրդ հպարտութեան թէպէտ և ոչ միշտ զօրանայ՝ ի յաղթել, բայց ստէպ փորձէ զոգի ընտրելոյն. այլ յորժամ ամբարձեալն թողեալ եբեալ խոնարհի, մատես եղեալ խորհուրդն յահ և յերկիւղ ըմբռնի։ Վասն որոյ դարձեալ ասէ Դաւիթ. «Այս ասացի՝ ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան»։ Այլ քանզի՝ ի վատահութենէ առաքինութեան բարձրամտեցաւ, ՝ի վերայ բերի զոր յետոյ յանձին կրեաց. «Պարձուցեր, ասէ, զերեսս քո յինէն, և ես եղէ խռովեալ»։ Որպէս այն թէ յայտնապէս ասիցէ. կարծեցի զիս քաջ լինել յառաքինութիւնս, այլ՝ ի միտ առի՝ թէ յոր տկարութիւն կամ՝ յորժամ եբեալ թողայ։ Վասն այսորիկ վերասին

ասէ. «Լրդուայ և հաստատեցի պահել զիրաւունս արդարութեան քո»։ Դայց որովհետև չէր բաւական 'ի պահպանութեան կալ այնմ զոր երդնցր, իսկոյն խոովեալ եգիտ զտկարութիւն իւր. ուստի փութով դիմէ 'ի սատար աղաչանաց. ասէ. «Յոտնարկ եղէ մինչև յոյժ, կեցո զիս ըստ բանի քումմ»։

Լրբեանն ևս վերին տեսչութիւնն մինչ չև է ամբաձեալ զոր 'ի ձիրս պարգևաց կամ պաշտաման, յուշ առնէ նմա զընիկ տկարութիւնն, զի մի վրասցի ընդ ընկալեալ առաքինութիւնս կամ զօրութիւնս։ Ա՝ ան ուրոյ մարգարէն Լրդեկիել յորչափ վերառեալ լինէր յերկնային տեսութիւնս, յառաջագոյն որդի մարդոյ կոչէր. որպէս թէ յուշ առնէր նմա տէր՝ ասելով. առ 'ի չամ բառնալոյ սրտիդ բարձրամտութեամբ՝ արթուն մնօք տես թէ զինչ ես դու. որպէս զի 'ի խորամուխ լինելդ 'ի բարձրագոյնս՝ յիշեսցես զքեզ, զի մարդ ես. և 'ի գրատանել զանձն քո 'ի վեր քան զքեզ՝ սանձիւ տկարութեան անձինդ ցածուսցես զքեզ, և 'ի քեզ եկեսցես։

Ա՝ ան որոյ հարկ է զի յորժամ բազմութիւն առաքինութեան բերցէ մեզ զանձնահաճութիւն, ակն հոգայն դարձցի 'ի տեսութիւն տկարութեանց իւրոց, և ձնշեսցէ զանձն յօգուտ. և մի հայեսցի 'ի լաւութիւնս զոր արար, այլ յայնս զորոնք զանց արար. որպէս զի յորժամ սիրան ընկճիցի յիշատակաւ տկարութեան իւրոց, պնդապէս հաստատեսցի 'ի խոնարհութեան առաջի տեառն որ սիրէ զխոնարհս։ Ա՝ ան այսորիկ իսկ յոլովակի ամենակալն Աստուած 'ի վեր հանել անդ ըզմիտս առաջնորդաց 'ի կատարելութիւն՝ մեծաւ մտամբ տակաւին իւիք իւիք թերակատար թողացուցանէ զնոսա. զի մինչ փայլէին սիրալի առաքինութեամբք՝ հիւծեալ մաշեսցին տաղտկանօք յերեսաց անկատարութենէ իւրեանց, և մի երբէք մեծամտեսցին ընդ մեծամեծ իրս, տեսեալ թէ տակաւին դիմամարտութիւն կրեն 'ի փոքունս, և յանկարանալ յաղթել դուշնաքէից՝ մի իշխեսցեն հպարտանալ ընդ գործս վսեմս։

Ա՝ սասիկ, ով առաքինիդ, ընդոստուցեալ իմ 'ի հարկէ յանդիմանութեան անձինս, այն ինչ տքնիմ ցուցանել թէ որպիսի ոք հարկ իցէ լինել քաջի հովուին, զգեղանի նկարեցի քեզ մարդ նկարիչս անցաջողակ, և

զայլս ուղղեմ 'ի ծովային կատարելութեան՝ որ դեռ յալիս տատանիմ յանցանաց։ Լաւլ զքեզ աղաչեմ, զի 'ի նաւակոծութեան կենաց իմոց պատսպարեսցես զիս 'ի վերայ տախտակի աղօթից քոց. զի մինչ բեռն անձինս 'ի վայր զիս ձգէ, ձեռն արժանաւորութեան քո զիս 'ի վեր ամբարձցէ։

ՀՈՎՈՍ ԲՈՒՆԴԱՆ Ս. ԸՆԿ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ ՀԻՄՆ. 1909 ԵՐԵՎԱՆ
основ. 1909 нов. пер. 1909 Тифл.
ՀԱՅԿ.

ՀՈՎՈՍ ԲԵՐԻՏՈՐԻ Ս. ԸՆԿ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ ՀԻՄՆ. 1894 ԵՐԵՎԱՆ
основ. 1894 нов. пер. 1909 Тифл.
БИБЛІОТЕКА
Дѣйств. Благотв. О-ва на Кавк.